**Բագին** 3-4/88

# ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

## ԽՈՀԵՐ

ԵՒ

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

digitised by A.R.A.R.@

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

●


1 — * * * . . . . . . . . . . Հրապարակայնութեան յոյսով…

4 — Գ. ԷՄԻՆ . . . . . . . Սիրելի ընկերներ

14 — Ս. ՓԱՐԱՋԱՆՈՎ . . . . . «Հայ ֆիլմ»ն իմ ապագան է

16 — Ա. ՍԱՀԻՆԵԱՆ . . . . . . . Ինչո՞ւ ենք լռում

25 — Է. ՄԵԼԻՏՈՆԵԱՆ . . . . . Զոհուած երգեր

26 — Վ. ԴԱՒԹԵԱՆ . . . . . . . Ձայն բազմաց՝
ձայն ճշմարտութեան

35 — Է. ՄԵԼԻՏՈՆԵԱՆ . . . . . Ճշմարտութիւն

35 — Լ. ԴՈՒՐԵԱՆ . . . . . . . Մաքուր երկինք

36 — Բ. ՅՈՎՍԷՓԵԱՆ . . . . . Վերակառուցման ոգիով

38 — Զ. ԲԱԼԱՅԵԱՆ . . . . . . . Հիմա՞ էլ լռենք

42 — Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ . . . . . Ուշացած կարօտախտ

50 — Ա. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ . . . . Պայքարել այն ամէնի դէմ,
ինչը ծնում է պէտքը չարագործ

53 — * * * . . . . . . . . . . Վկայութիւններ…

54 — Ս. ՍԱՐԳՍԵԱՆ . . . . . . . Ծառը՝ ծարաւ

65 — Ա. ՅԱԿՈԲԵԱՆ . . . . . . . Վերակառուցման ալիքը…

66 — Ա. ՌԻԲԱԿՈՎ . . . . . . . 37 թուականը

67 — Մ. ՈՒԼԵԱՆՈՎ . . . . . . . Հայաստան իմ սրտում

71 — Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ . . . . . . Կրկնութիւնը մահ է

72 — Էդ. ԱՒԱԳԵԱՆ . . . . . . . Անհրաժեշտ է նաեւ յետ նայել

75 — * * * . . . . . . . . . . Վկայութիւններ

76 — Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ . . . . . Գրական կեանքի վերակառուցման
հոգսերն ու խնդիրները

93 — Ա. ԴԱՒԹԵԱՆ . . . . . . . Մեղսակցութիւն ի պէտս ազատութեան

94 — Դ. ԳԱՍՊԱՐԵԱՆ . . . . . Անհրաժեշտութեան թելադրանքը

104 — ԱՂԱՒՆԻ . . . . . . . . Խաղաղութիւն եւ գրականութիւն

106 — Մ. ՂՈՒԿԱՍԵԱՆ . . . . . Ահա եկել է ժամանակը

114 — Ռ. ԴԱՒՈՅԵԱՆ . . . . . . Հայ միտքի մշակոյթի փենոմենը

120 — Վ. ԱՐԱՄԵԱՆ . . . . . . . Ես թատրոն գնում եմ, բայց

126 — Ս. ԿՈՍԵԱՆ . . . . . . . Վերակառուցման ջիղը

128 — Գ. ՄԱՀԱՐԻ . . . . . . . Զգո՛յշ եղէք, մարդի՛կ…


digitised by A.R.A.R.@

# Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻԷ. ՏԱՐԻ, ԹԻՒ 3–4 ՄԱՐՏ–ԱՊՐԻԼ 1988 ՊԷՅՐՈՒԹ

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՅՈՅՍՈՎ...

*Մեկնելով անտեսական, գաղափարական ու բարոյական նահանջներու եւ ամուլ ու ամլացնող իրավիճակներու փաստերէն, համայնավար աշխարհի այսօրուան թիւ մէկ իշխանաւորը, Միխայիլ Գորբաչով, կուսակցութեան 27րդ համագումարին լայնօրէն արծարծեց այն հարցը, որ Խորհրդային Միութիւնը կը գտնուի արմատական վերափոխութեան մը հրամայականին առջեւ եւ հնչած է ժամը հրապարակային քննարկումներով վերջ դնելու համատարած խաթարումներուն, այլասերումներուն, մթագնումներուն, մարդոց հոգեբանութեան ու մտածելակերպին մէջ տեղ գտած հիւանդագին երեւոյթներուն, չափանիշներու խախտումներուն, բոլոր մարզերուն ու յարաբերութիւններուն մէջ նկատուած խօթութիւններուն: «*Գարուն*» երիտասարդական ամսագրին մէկ խմբագրականին համաձայն՝* «Ամէն ինչ անել՝ անցեալի բեռը թօթափելու, լիարժէք շնչելու, ազատ եւ անկաշկանդ ստեղծագործելու համար»:

*Համայնավար 27րդ համագումարը կայացաւ 1985ին. կը նշանակէ, որ հոն հրապարակուած գորբաչովեան հրապարակայնութիւնը արդէն երեք տարուան կեանք ունի, բայց հայրենի մեր մամուլին մէջ ու մտաւորականներուն շրթներուն միայն երրորդ տարուան սեմին սկսաւ նիւթ դառնալ անիկա, երբ, կ'իմանա՞նք*

digitised by A.R.A.R.@

հայաստանեան թերթերէն, ուր գրողները յանդգնած են արդէն առաջին օրէն օգտուիլ ստեղծուած ազատական հնարաւորութիւններէն, բանալ իրենց սիրտը, պարզել միտքը, վերցնել վարագոյրը նախորդ տասնամեակներուն կատարուած ֆիզիքական ու բարոյական ոճիրներուն վրայէն ու պոռալ նոր շնչառութեան ներշնչած բերկրանքը։

Հաշուի առնելով նոր երեւոյթին մասին ստորագրած հայրենի մեր մտաւորականներուն գրութեանց խիստ շահեկան բովանդակութիւնը, հաշուի առնելով մանաւանդ անոնց խոստովանական բաժիններուն ճշմարտութիւնները, խմբագրութիւնս նպատակայարմար համարեց «Բագին»ի ներկայ թիւով կազմել փնջող նոր շունչին անդրադարձող այդ վկայութիւններուն մէկ թղթածրարը, աւելի ամբողջական գաղափար մը կազմելու հնարաւորութիւն ընձայելու համար հայ մարդուն։

Հրապարակայնութեան առիթով փորձառութիւններ ստորագրած դէմքերէն ոչ մէկը, բնական է, փորձ կ'ընէ ուրանալ ցարդ իրագործուած արժէքները, բայց հիմնական հարցը այդ մասին չէ, հարցը առաւելաբար կը վերաբերի յումպէտս վատնումներուն, կամայականութիւններու հետեւանք կորուստներուն,— մարդկային կորուստ, ժամանակի կորուստ, կարելիութիւններու կորուստ, խղճմտանքի կորուստ, ողջմտութեան կորուստ, որոնց փոխարէն ու տասնամեակներու վրայ երկարելով սանձարձակ գործած են «նախանձը, չարութիւնը, ընչաքաղցութիւնը, դաւաճանութիւնը, ստորաքարշութիւնը, կեղծաւորութիւնը»։

Հրապարակայնութեան ժամանակաշրջան է հիմա, երեք տարիներէ ի վեր, բայց կը թուի, թէ խորհրդային քաղաքացին դեռ չէ ազատագրուած ներքին հարստահարիչներէն, «տխուր տասնամեակների վերապրուկները» կը գործեն դեռ, «ստալինեան մամլակը» դեռ բոլորովին անհետացած չէ, դեռ մասամբ ի զօրու կը մնայ «ամէն տեսակ անհատականութիւն ու նախասիրութիւն ստնահարող կոլեկտիւ մտածողութեան շաբլոնը» եւ, վերջապէս, «Իմ մէջ էլ կամայ թէ ակամայ նստած է եղել ու հաւանաբար դեռ նստած է հոգեբանական գրաքննիչը»։

Եղած են ասոնք, դեռ եւս յամառօրէն կը գործեն, բայց գերակշիռ է միւսը, տրուած ազատութեան մասին տիրող լաւատեսութիւնը։ Հիմա, կ'ըսեն, վախը յաղթահարելու պահ է, կասկածը յաղթահարելու պահ, զգուշաւորութիւնը, սխալելու սարսափն ու անտարբերութիւնը յաղթահարելու ժամանակ, ճշմարտութիւնը մինչեւ վերջ ըսելու ողջունելի անկիւնադարձ։

Համայնավար աշխարհի բարքերուն քիչ-շատ ծանօթ մար-…քը, անշո՛ւշտ, քիչ մը վերապահութեամբ կը դիմաւորէ ընդհա-…ուր վերափոխութեան մը հաւաստիքը տուող այս ճիչերը։ Դառն …րձառութիւններ կան այս մասին եւ դիւրին չէ մոռնալ արձա-…գրեալ վկայութիւններէն գոնէ ոմանք։ Ստալինեան դաժա-

20234-ԱԿ digitised by A.R.A.R.@-2000

*նութեան երկրորդ փուլին ամէնէն մռայլ օրերուն, Հայաստանի գրողներու երկրորդ համագումարին մասնակցող թղթակից մը կը գրէր Շիրազի մասին.* «Շատ պատկերաւոր ասաց ընկ. Շիրազն իր ուրախ խօսքի մէջ, թէ կարծես բացուած պատուհաններից թարմ օդ ներս եկաւ: Իսկապէս որ այդպէս էր: Կենտկոմի որոշումները եւ ընկեր Ժդանովի զեկուցումը թարմացրին մեր գրական կեանքը»:

*Իր «ուրախ խօսքը» արտասանած օրը Շիրազը գիտէր ու ամէն ոք գիտէր, որ այդ «իսկապէս»ը բնաւ ալ այդպէս իսկապէս չէր, ստալինեան շրջան էր, երբ «կարմիր գծից» ներս ամէն ոք կը ստորագրէր չնչելիք օդին պակասէն:*

*Ուղիղ քսան տարի ետք, Հայաստանի գրողներու հինգերորդ համագումարին, այս անգամ Պարոյր Սեւակն էր, որ կը յայտարարէր, թէ՝* «Մեր հանրապետութեան նոր ղեկավարութիւնը, որ ընդամէնը կէս տարի է ղեկի առաջ, այս կարճ ժամանակաշրջանում մեզ համար արեց շատ աւելին, քան մենք պահանջում էինք ամբողջ տասը տարի»:

*Հայ մարդը հեռուէն կը կռահէր, իսկ Պարոյր Սեւակ իր մորթին վրայ կը զգար, որ այդպէս չէր իրականութիւնը, Ստալինի ժառանգորդներէն պրեժնեւեան շրջան էր, լոյսի խիստ կարիք կար ու բանաստեղծներուն լոյսը մթագնող հայաստանեան գործակալները տէրն էին կացութեան ու աշխոյժ էին յոյժ:*

*Աւելի ուշ, իր երիտասարդութիւնը Սիպերիոյ սառնամանիքներուն զոհ տուած Վաղարշակ Նորենց, խօսելով Հայաստանի երիտասարդական արձակի ներկայացուցիչներուն «լիաթոք շունչ»ին մասին, կը գրէր.* «Այդ կենսալի շունչը միայն նրանց երիտասարդութիւնից չէ, այլ՝ ժամանակի առողջութիւնից, մթնոլորտի մաքրութիւնից, նեղմիտ յուշարարների անյայտացումից»:

«Բագին»*ի հետագայ էջերուն Հայրենի գրողներուն կատարած ախտաճանաչումներուն մէջ ընթերցողը առանց դժուարութեան պիտի նկատէ, որ Նորենց այնքան ալ ապահով իրականութեան մը վրայ չէր խարսխած իր լաւատեսութիւնը:*

*Հիմա, անշուշտ, ո՛չ ստալինեան երկարատեւ գիշերին մէջ կը գտնուի խորհրդային աշխարհը եւ ոչ ալ պրեժնեւեան մութին մէջ: Ճշմարտութիւնը ըսելու այսօրուան թոյլատուութիւնը անբաղդատելիօրէն մեծ է, արդիւնքը՝ արդէն կիսով շօշափելի, բայց բաղձանքը ուժի մէջ կը մնայ դարձեալ եւ, վերը ուրուագրուող յիշատակեալ փորձառութիւններէն թելադրուած՝ հարկ կ՚ըլլայ փոխ առնել հաշուիչ մեքենաներուն ուղղած Պարոյր Սեւակի աղերսանքը, փոխադրել զայն մտածող մարդոց աշխարհը ու նոյն ուժգնութեամբ աղաղակել՝*

Դո՛ւք՝ նո՛ր աստուածներ նոր ժամանակի,
Սուտ դուրս չգայիք, գէթ դուք, գոնէ դո՛ւք…

digitised by A.R.A.R.@



## ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

*Բանաստեղծ, թարգմանիչ, արձակագիր եւ հրապարակագիր Գէորգ Էմին (աւազանի անունով՝ Կարլէն Մուրադեան) ծնած է 30 Սեպտեմբեր 1919ին, Աշտարակ։ 1940ին կ'աւարտէ Երեւանի Կ. Մարքսի անուան պոլիտեխնիքական հիմնարկի հիդրոտեխնիքական ճամբաճիւղը։ 1942–1944 կը ծառայէ խորհրդային բանակի մէջ։ 1949–1950 կ'ուսանի Մոսկուայի գրական հիմնարկի կից հայ գրողներու սթիւտիոյին մէջ, իսկ 1945–1956 կը հետեւի ՍՍՀՄ գրողներու միութեան տարբեր գրական բարձրագոյն դասընթացներուն։*

*1951–1954 կ'աշխատակցի* «Լիտերատուրնայա գազետա» *թերթին՝ իբրեւ Հայաստանի սեփական թղթակից։ 1968–1972 կը պաշտօնավարէ* «Լիտերատուրնայա Արմենիա» *ամսագրի մէջ՝ իբրեւ պատասխանատու խմբագիր։ 1973էն ի վեր մաս կը կազմէ ՀՍՍՀ ԳԱ արուեստի հիմնարկի անձնակազմին՝ իբրեւ աւագ գիտաշխատող։*

*Գ. Էմին հրատարակած է 30է աւելի գեղարուեստական հատորներ, որոնց նշանաւորներն են* «Նախաշաւիղ», «Նորք», «Խօսիր, Հայաստան», «Սառուցների պարը», «Ախ, այս Մասիսը» *քերթողագիրքերն ու* «Յոթը երգ Հայաստանի մասին» *արձակ հատորը։ Ան նաեւ թարգմանած է շուրջ 12 հատոր, իսկ իր քնարական ստեղծագործութիւնները թարգմանուած են տասնէ աւելի լեզուներու։*

*1967ին, Գ. Էմինի բեմադրումով, «Հայ ֆիլմը» կը ներկայացնէ* «Յոթը երգ Հայաստանի մասին» *ժապաւէնը, որ կ'արժանանայ խորհրդային մէկէ աւելի մրցանակներու։*

*1969ին, Գ. Էմին կը պարգեւատրուի Ժողովուրդներու բարեկամութեան շքանշանով։*

Ո՞ւմ յայտնի չէ, որ տարիներ ու տասնամեակներ շարունակ, երբեմն կադրերին բնտրում, կամ որեւէ պաշտօն էին վստահում ո՛չ թէ ըստ նրանց խելքի, տաղանդի, հմտութեան ու սկզբունքայնութեան, այլ՝ ըստ յարմարւողականութեան, կարիերիզմի, ծնունդի, բարեկամական ու ազգակցական կապերի…

Դժբախտաբար, ընդհուպ մինչեւ 50ական թուականների վերջը, մենք, մի կողմ թողած Սփիւռքի տաղանդաւոր եւ խիզախ գրողներին եւ նրանց գրքերը, հայրենիքում հրատարակում էինք միայն մէկ-երկու այնպիսի գրողների գրքեր, որոնք, իրաւամբ, նոյնիսկ գրո՞ղ էլ չէին համարւում ո՛չ հայրենիքում, ոչ էլ՝ Սփիւռքում:

Մեր կեանքի այս եւ բազում այլ վտանգաւոր, եւ 27րդ համագումարի հզօր լուսարձակի լոյսի ներքոյ աւելի անհանդուրժելի դարձած անարդարութիւնների, սխալների ու թերութիւնների դէմ պիտի պայքարենք մենք բոլորս, եւ առաջին հերթին՝ գրողները:

digitised by A.R.A.R.@

Գ. ԷՄԻՆ

# ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ

*

*«Բագինի» ներկայ թիւի էջերուն մէկտեղուած գրութիւններուն մէջ՝ Գէորգ Էմինի ստորագրածը այն միակ գրութիւնն է, զոր հայրենի մամուլէն չենք արտագրած։ 1986ին կայացած Հայաստանի Գրող Համագումարին արտասանած բանախօսութեան խօսքն է անիկա, որ, որքան մենք գիտենք, տեղ չգտաւ հայրենի գրական մամուլի եւ ոչ մէկ անկիւնի մէջ։ Առաջին անգամ Մոնրէալի «Հորիզոն»ին մէջ երեւցաւ անիկա եւ երկար ժամանակի վրայ գործած հակասութիւններ ու ցաւագին իրադարձութիւններ բաց սրտով արձանագրած ըլլալու իր համարձակութեամբ՝ արժանացաւ մասնաւորական խումբին լուրջ ուշադրութեան։*

*Գէորգ Էմինի համագումարեան այս խօսքը յայտնապէս կը կրէ գորբաչովեան հրապարակայնութեան ազդեցութիւնը եւ անցեալի գործուած աղէտալի արարքներուն ու գէշ կառավարման վերջերուն վրայ ձայն գնելու իր յանդգնութեամբ սերտօրէն կ'առընչուի յաջորդող գրութիւններուն առողջ ու առողջարար ոգիին։*

*Սիրելի ընկերներ,*

*Ես խնդրում եմ, ինձ վեհանձնաբար ներել, որովհետեւ ես լաւ գիտեմ, թէ մեր համագումարի երէկուայ նիստից յետոյ դուք ինչ էք սպասում ինձանից. բայց, դժբախտաբար, պիտի յուսախաբ անեմ ձեզ, որովհետեւ կան շատ աւելի կարեւոր եւ լուրջ հարցեր։*

*Մեր ժողովրդի ու մտաւորականութեան ազնիւ, բանիմաց ու սրտացաւ խաւը տարիներ ու տասնամեակներ շարունակ տառապում ու տագնապում էր մեր կեանքի յաճախակի վերջին տասնամեակներում երեւան եկած, կամ խորացած ու որակ դարձած անարդարութիւններից, սխալներից ու թերութիւններից։*

*Այդպիսի երեւոյթների դէմ, ինչքան կրքոտ ու անկեղծ, նոյնքան՝ անարդիւնք պայքարը քիչ էր մնում արդէն լիովին յուսահատեցնէր ու թեւաթափ անէր մեզանից շատերին— աւելին՝ սպանէր մեր հաւատն առ այն, թէ այդ անարդարութիւններն ընդհանրապէս կարելի է ուղղել ու վերացնել։*

*Ուստի եւ՝ հասկանալի է այն բուռն խանդավառութիւնը, որով մեր ժողովուրդն ու մտաւորականութիւնը դիմաւորեցին 27րդ համագումարի բերած թարմ շունչն ու, այդ սխալներն ու անարդարութիւնները վերացնելու վճռական ու մարտական (եւ բարեբախտաբար՝ երկարատեւ) ծրագիրը, — ա՛յն, ինչ Լենինն անուանել է «Վսերյոզ ի նադոլգո՛» — այսինքն՝ «լրջօրէն եւ երկար ժամանակի համար...»։*

digitised by A.R.A.R.@

Որո՞նք են այն անարդարութիւնները, կամ մեր կեանքի ցաւոտ կողմերը, որոնց վրայ մատը դրել, կամ իր լուսարձակն է ուղղել համագումարը, — ա՛յն, ինչ տարիներ շարունակ, եւ գնա այսօր էլ, կաշկանդում է մեր հզօր երկրին արժանի առաջընթացը եւ ստեղծում այնպիսի' մի վիճակ, երբ խելացի, հզօր ու տաղանդաւոր մի երկիր աշխատում ու ստեղծագործում է իր եռանդի, ձիրքերի ու տաղանդի 10–15 տոկոսով միայն...

Թող մեզանից ամէն մէկը — ինչ մասնագիտութեան տէր էլ որ նա լինի — ձեռքը խղճին դրած յիշի իր աշխատանքը, իր հիմնարկը, վերլուծի իր անձնական գործն ու ստեղծածը եւ կը համոզուի, որ այդ թուականը այդպէս է։

Ինչպէս ասում էին հնում, թող առաջինը քար նետի ինձ վրայ նա', ով միամտութիւն ունի կարծելու (եւ գնա ուրիշներին էլ համոզելու), թէ ինքն արդէն, աշխատում ու ստեղծագործում է իր սեփական եռանդին, ձիրքին ու հմտութեանն արժանի չափով ու նուիրումով...

Այդ, մեր կեանքի առաջընթացը պայմանաւորող կարեւոր հարցերից յիշենք միայն մի քանիսը' աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացման, մեր աշխատանքի տեմպերի արագացման եւ հրապարակայնութեան հարցերը:

Չմոռանանք, որ մենք գրողներ ենք, եւ մեզ պիտի մտահոգեն ո՛չ միայն մեր գրական տնտեսութեան, այլեւ' երկրի ու ժողովրդի ճակատագրական հարցերը: (Մանաւանդ' որ գրականութեան ամէնից կարեւոր ու սկզբունքային հարցերի մասին ես բազմիցս խօսել ու գրել եմ,— իմ առաջին ելոյթներից սկսած, մինչեւ վերջերս հրատարակուած «Մաշտոցից մինչեւ մեր օրերը» գիրքը...):

Սկզբից եւեթ — Նիհիլիզմի մէջ չմեղադրուելու համար — յիշեցնեմ նաեւ, որ մեր երկրի գրականի ու լաւի մասին ես լաւ գիտեմ եւ նրանց մասին նոյնպէս բազմիցս խօսել ու գրել եմ — իմ առաջին բանաստեղծութիւններից եւ հրապարակախօսական գործերից սկսած, մինչեւ «Եօթ երգ Հայաստանի մասին» գիրքը, բայց այսօր պիտի խօսեմ միայն կամ մեծ մասամբ մեր կեանքում տեղ գտած սխալների, թերիների ու վատ կողմերի մասին:

Աշխատանքի արդիւնաւէտութեան հարցը մեր երկրի զարգացման հարցերի հարցն է — ձգտումը, անել այնպէս, որ մեզանից ամէն մէկն աշխատի իր ձիրքերին ու խելքին վայել նուիրումով: Իսկ կարո՞ղ էր նա այդ անել եւ կարո՞ղ է անել հիմա, երբ, մեր կեանքի շատ ու շատ ասպարէզներում, ո՛չ միայն չի ջոկւում կամ չեն ջոկում թացը' չորից, խելական մասնագէտին' բութ ու անտաղանդ խոտանաբարից, եռանդուն աշխատողին' ծոյլից ու պորտաբոյծից, այլեւ, վերջիններս աւելի շատ իրաւունքներ ունեն, եւ ո՛չ միայն աւելի լաւ պայմանների մէջ են գտնւում, այլեւ... հնարաւորութիւն ունեն զաանցել ու նեղել ազնիւ, նուիրուած աշխատողներին ու մասնագէտներին:

Այդ գալիս է առաջին հերթին նրանից, որ մենք մոռացել ենք մեր կեանքի սրբազան օրէնքը, «ամէն մէկից ըստ իր կարողութեան, եւ ամէն մէկին' ըստ նրա կատարած աշխատանքի», ինչպէս նաեւ' կադրերի [2] սխալ ընտրութիւնից ու տեղաբաշխումից:

Ո՞ւմ յայտնի չէ, որ տարիներ ու տասնամեակներ շարունակ, երբեմն կադրերին ընտրում, կամ որեւէ պաշտօն էին վստահում ո՛չ թէ ըստ նրանց խելքի, տաղանդի, հմտութեան ու սկզբունքայնութեան, այլ' ըստ յարմարւողականութեան, կարիերիզմի, քծնանքի, բարեկամական ու ազգականական կապերի...

Ամէն մասնագէտ ու աշխատող — ինչպէս շախմատիստը — ունի իր աշխատանքի ու ընդունակութիւնների օգտակար գործողութեան գործակիցը, կամ «ռէյ'տինգը», որը կարող է մէկի մօտ ասենք 9 լինել, միւսի մօտ' 1, կամ

digitised by A.R.A.R.@

նոյնիսկ... Ու ես, եթէ օրինակ, որեւէ կարեւոր ապարատի, կամ հիմնարկի գլուխ դրուած է ո՛չ թէ նա, ում աշխատանքի արդիւնաւէտութեան գործակիցը 9 է, այլ ասենք թէ 1, ապա այդ հիմնարկի աշխատանքի արդիւնաւէտութեան գործակիցը լինում է 19, այնինչ կարող էր 4–5 անգամ աւելի բարձր լինել–ասենք 91, եթէ հիմնարկի ղեկավար նշանակուէր 9ը եւ նրան յաջորդէր 1ը:

Ես էլ չեմ խօսում այն հիմնարկի պետ նշանակուած «կադրերի» մասին, որոնց օգտակար գործողութեան գործակիցը... զրօ է, որովհետեւ նա՛, ով քիչ թէ շատ ծանօթ է տարրական թուաբանութեանը, չի կարող չիմանալ, որ եթէ զրոյից յետոյ նոյնիսկ միլիոն կամ միլիարդ դնես, միեւնոյնն է, արդիւնքում կը ստացուի ընդամէնը 0,1:

Բայց կադրերի սխալ ընտրութեան հետեւանքով որեւէ հիմնարկի պետի բարձր աթոռին դրուած այդ փուչիկը կամ զրոն վտանգաւոր է ոչ միայն դրանով...

Այսպիսի զրոյին, իր բարձր աթոռից ներքեւ նայելիս թւում է, թէ իր հիմնարկում կամ աշխատանքի ասպարէզում ոչ մի արժանաւոր ու արժէքաւոր մարդ ի միաւոր չկայ եւ բոլորն էլ իր պէս զրօ են: (Դուք երեւի յաճախ լսած կը լինէք այն յայտնի արտայայտութիւնը, թէ՝ «ի՞նչ անենք ո՞ւմ նշանակենք այս կամ այն պաշտօնին, երբ մարդ չկայ, կադր չկայ...»:

Բացի դրանից, այդ զրոն, իր, դէպի վերադէք միաւորները, տասնաւորները կամ հարիւրաւորները տանող բնական նախանձի ու ատելութեան պատճառով, աշխատում է իր հերթին առաջ քաշել եւ պաշտօններ տալ ուրիշ զրոների՝ քծնողներին, կարիերիստներին, իսկ վատագոյն դէպքում, նաեւ՝ ծծող ու յամառող գողերին ու կաշառակեր – զափողներին,– լրիւ քանդելով հիմնարկն ու մեծապէս վնասելով գործին: Իսկ եթէ նա – ինչպէս այդ յաճախ է պատահում, ոչ թէ սովորական, շարքային զրօ է, այլ այսպէս կոչուած «նոմենկլատուրային[3] զրօ», ապա քաջ գիտի նաեւ, որ ի՛նչ ասպարէզ էլ որ ինքը ձախողի կամ ի՛նչ հիմնարկ էլ քանդի,– մէ՞կ է, եթէ իրեն հանեն էլ՝ կը տանեն մի ուրիշ, թերեւս, աւելի՛ բարձր պաշտօնի:

Բնական է, որ որեւէ հիմնարկի այդպիսի «զրօ»–պետը չի՛ կարող կարգ ու կանոն սահմանել իր հիմնարկում, կամ կռուել պորտաբոյծների, գողերի ու կաշառակերների դէմ, քննադատել նրանց կամ հեռացնել ու դատի տալ, որովհետեւ ինքը կախման մէջ է գտնւում, եւ ուստի վախենո՛ւմ է նրանցից:

Այդ կերպ եւ այդ պատճառով են ստեղծւում որոշ հիմնարկների ա՛յն, այսպէս կոչուած «պետերը», որոնք շատ ձեռնտու են գողերի, կաշառակեր–ների ու զափողների համար, որովհետեւ այդպիսի «պետի» կողքին – ի՛նչ գողութիւն – եթէ նոյնիսկ մա՛րդ էլ սպանես, նա ոչ մի ձայն չի հանի...

Բնորոշ է, որ հենց այդպիսի վա՛յ–ղեկավարներն են, անձամբ կամ իրենց քծնող–մանկլաւիկների ձեռքով հալածում այդ հիմնարկի ու ասպարէզի ամէնից պէտքական, ազնիւ ու հմուտ մասնագէտներին՝ աւելի՛ եւս իջեցնելով այդ հիմնարկի աշխատանքի արդիւնաւէտութիւնը:

Չեմ ուզում օրինակներ բերել, որովհետեւ այս դահլիճում նստածներից ոչ մէկը Լուսնից կամ Մարսից չի իջել եւ կարող է բազմաթիւ նման փաստեր բերել իր սեփական կամ իրենց հարեւան հիմնարկներից ու ասպարէզից:

Կադրերին ոչ թէ ըստ նրանց խելքի ու ընդունակութիւնների, այլ՝ ըստ քծնելու եւ յամառատապաշտութեան առաջ քաշելու եւ բարձր պաշտօններ տալու վնասակար պրակտիկան երբեմն յանգեցնում էր նրան, որ մեր երկրում քիչ էր մնում ստեղծուէր երկու դասակարգեր՝ հաւատացողների եւ որոշողների դասակարգեր, եթէ, նորմալ դէպքում, այդ երկուսը պէտք է միաձուլ–ւած լինէին մի անձի մէջ, այսինքն՝ հիմնարկի պետը, կամ հարցեր որոշողը

digitised by A.R.A.R.@

լինէր հասկացողը, *կամ այդ գործի լաւագո՞յն մասնագէտը…*

*Այդ տեսանկիւնից, այսօրուայ մեր որոշ հիմնարկների վիճակին նայելիս, ինչպէ՞ս չյիշես անմահ Չիւանու երգի յայտնի տողերը առ այն, թէ՝*

Խելօք մարդիկ մի կո՛ղմ քաշուած,
Ասպարէզը… խամբակներո՛ւն են տուած…

*Կրկնում եմ, ես գիտեմ, որ մեր երկրում կան նաեւ բազմաթիւ օրինակելի հիմնարկներ, եւ հիմնարկների, ճիշտ առաջ քաշուած, ազնիւ, սկզբունքային եւ իրենց գործն իմացող ղեկավարներ, բայց գիտամամբ վերապահութիւն չեմ անում եւ չեմ ասում, թէ՝* «Վատ են միայն որո՛շ հիմնարկների որո՛շ ղեկավարներից ոմանք, որովհետեւ այդ լաւ օրինակները այն բացառութիւններն են, որոնք աւելի են ամրացնում իմ նշած վտանգաւոր ու վնասակար օրէնքն ու երեւոյթը…

*Դեռեւս 1930 թուականին, Իլյա Իլֆը*[4]*, այդ երեւոյթը նկատի ունենալով, իրեն յատուկ սրամտութեամբ, յայտնել էր գիտուկ մի միտք, որը դժբախտաբար հրատապ է հնչում նաեւ մեր օրերում: Նա գրել էր,* «Հիմնարկներից մէկում, խոշոր սխալների ու թերութիւնների կողքին, կային նաեւ… պատասխանատու ղեկավարներ»:

*ԱՐԱԳԱՑՈՒՄ.– Արագացումը վերաբերում է ո՛չ միայն գիտա-տեխնիկական առաջընթացին, այլեւ՝ մեր երկրի ժողովրդական տնտեսութեանը, մշակոյթին եւ բոլոր այն ասպարէզներին, որոնց զարգացման արագացումն ապահովելու համար անհրաժեշտ է վերացնել այն ամէնն, ինչ կաշկանդում է մեզ եւ դանդաղեցնում, կամ լճացնում մեր կեանքի ընթացքը:*

*Բայց* արագացման *համար – բացի այլեւայլ միջոցներից – հարկաւոր է նախ եւ առաջ* բեռնաթափել կառքը, *դէն նետել նրա միջից աւելորդ* բեռն ու խալասար[5]:

Թոյլ տուէք, որպէս գրող դիմել հիպերբոլայի կամ չափազանցութեան հնարքին: Ինչպէ՞ս կարող է, օրինակ, տեղից շարժուել, էլ չեմ ասում՝ արագ շարժուել… *հաւաբուծական ա՛յն ֆերման, որի ղեկավարման, հսկողական եւ այլ հաստիքներն աւելի շատ են, քան… նրա պահած հաւերի թիւը…*

*Նորմալ դէպքում եւ շատ երկրներում, մի ֆերմեր, մեն-մենակ, կամ միայն իր ընտանիքի ուժերով, կարող է պահել եւ պահում է հաւաբուծական մի մեծ ֆերմա եւ ձու է մատակարարում ո՛չ միայն իր երկրին, այլեւ՝ արտահանում է ուրիշ երկրներ:*

*Իսկ ի՞նչ անել այն խեղճ հաւաբուծական ֆերման, որ, չհաշուած միւս ուռճացած հաստիքները (ամէն մի հաւին՝ մէկ կամ երկու հաւաբոյծ), դեռ,* վարիչից բացի, ունի նաեւ վարիչի բազմաթիւ տեղակալներ, այդ թւում՝ տեղակալ ձուի դեղնուցի գծով, սպիտակուցի գծով, ձուի կճեպի գծով, թաղանթի եւ բազում այլ գծերով…

*Չէ՞ որ այդ բոլորի աշխատավարձերն ու աւելորդ ծախսերը գումարւում են այդ ֆերմայի արտադրած ձուի ինքնարժէքի վրայ, եւ եթէ մեր պետութիւնը բարի չլինէր եւ այդ ձուն վաճառէր ժողովրդին* ո՛չ թէ պետական կայուն գնով, այլ՝ նրա իսկական ինքնարժէքով, *ապա այդպիսի ամէն մի ձուի գինը երեւի առնուազն մէկ-երկու ռուբլի լինէր…*

*Դժբախտաբար այդպիսին, կամ դեռեւս այդպիսին է վիճակը մեր որոշ հիմնարկ-ձեռնարկութիւններում,* որտեղ 5–10 անգամ աւելի շատ աշխատող կայ, քան պէտք է՝ այդ աշխատանքը կատարելու համար:

*Ես այս մասին նոյնպէս օրինակներ չեմ բերում, որովհետեւ ձեզանից*

digitised by A.R.A.R.@

ամէն մէկը կարող է աւելի շատ, եւ աւելի,— ինչքան ուզում, նոյնքան զաւեշտական օրինակներ բերել իր սեփական կամ հարեւան հիմնարկից: Բերեմ մեր ասպարէզին վերաբերող մի երկու օրինակ:

Սովետական Միութիւն այցելած մեր արտասահմանեան բարեկամները յաճախ շշմո՜ւմ են զարմանքից, իմանալով, որ մեր որեւէ լրագրի՛կ թերթ, որտեղ, մեր մէջ ասած, բացի պաշտօնական նիւթերից ուրիշ բա՞ն էլ չկայ կարդալու — հրատարակւում են 60–70 աշխատողներ ա՛յն դէպքում, երբ արտասահմանում եւ ժողովրդական դեմոկրատիայի երկրներում, որեւէ հետաքրքիր, պատկերազարդ եւ մեր շաբաթաթերթի ծաւալն ունեցող թերթ սովորաբար հրատարակւում են հինգ-վեց հոգով…

Պարզ չէ՞, որ այդպիսի հիմնարկներում — իսկ դրանք զգալի թիւ են կազմում — աշխատանքային ժամերը պիտի վերածուեն պինգպոնգի մրցումների, սուրճի գուշակութեան, բամբասանքի, ֆուտբոլի վերջին նորութիւնների զանգուածային քննարկման, խաչբառերի լուծման կամ շախմատի խաղի…

Երեւի դրանով կարելի է բացատրել նաեւ շախմատային ուժեղ դպրոցի առկայութիւնը մեր երկրում – դժուա՞ր է, ամէն օր, աշխատանքային ժամերին ութ ժամ շարունակ շախմատ խաղացող 150 միլիոն մարդկանց միջից ջոկել առնենք 20–30 լաւ շախմատիստ…

Իմ այս ասածը լիովին վերաբերում է նաեւ՝ ՍՍՀՄ գրողների միութեանը, բաւական է յիշել, որ ես գրողների միութեան անդամ եմ 1942 թուականից եւ սակայն իմ տոմսի համարը 18 հազար 716 է…

Ինչի՛ եւ ո՞ւմ է պէտք գրողի բա՛րձր կոչման այս ինֆլյացիան եւ, «գրողների» այդ վիթխարի՛ բանակը. – մի՞թէ միայն նրա՛ համար, որպէսզի մենք, որեւէ հերթական զեկուցման մէջ հպարտութեամբ ասենք, թէ «1913 թուականի համեմատ, մեր երկրում ինչպիսի՛ չէչտակի վերելք է ունեցել գրողների աճը…»:

Եթէ յիշում էք, ժամանակին Շոլոխովը ծաղրել էր ՍՍՀՄ գրողների միութեան Տուլայի մարզի բաժանմունքի ղեկավարի մեծադղորդ առաջարկն ա՛յն, որ տեսէ՛ք-նախանձէ՛ք, կամ «CMOTPNTE N 3ABNIIYNTE'» «Նախայեղափոխական շրջանում Տուլայի մարզում կար միայն մէկ գրող, բայց այժմ նրանց թիւը հասել է տասնեակների՛ եւ հարիւրների՛»: Այո՛, ինչ որ ճիշտ է, ճի՛շտ է,— աւելացրել է Շոլոխովը,— նախայեղափոխական շրջանում, Տուլայի մարզում միայն մի գրող կար, բայց… այդ գրողը… Լեւ Տոլստո՛յն էր…

Հարցը միայն գրողների միութեան ուռճացմանը չի վերաբերում, այլեւ նրան, որ գրական այդ առատ մոլախոտը, երբեմն աւելի լաւ պայմանների մէջ գտնուելով, փորձում է խեղդել բերքը…

Տարիներ առաջ, երբ ես ջահել էի ու միամիտ, հպարտօրէն ասում էի. «Ես բանաստե՛ղծ եմ, իսկ այսինչ կամ այնինչ անտաղանդն ու խառնակարարը՝ ո՛չ…»:

Հետագայում մեծանալով եւ տեսնելով, թէ ի՞նչ գրական միջավայրում ենք ապրում մենք եւ հաշտուա՞ծ այդ աննորմալ վիճակի հետ, ես սովորուած էի ասել. «Չէ՛ լա՛ւ, համաձայն եմ,— ե՛ս էլ եմ բանաստեղծ, եւ այնինչ կամ այսինչ անտաղանդն ու խառնակարա՛րն էլ…»

Բայց արի ու տես, որ հիմա էլ նա՛ չի համաձայնում, որ ե՛ս էլ գրող կոչուեմ,— եւ իրաւունք ունի, որովհետեւ, որպէս քննող, ինձանից աւելի լաւ պայմանների մէջ է գտնւում … եւ նոյնիսկ կարող է «քննադատել» ինձ համագումարի բարձր ամբիոնից:

Դրանի՞ց չէ, որ տարիներ շարունակ, մեր գրախանութներում համարեա՛ անհնար է գտնել ուէ լաւ գրողի լաւ գիրք,— ա՛յն ժամանակ, երբ գրա-

digitised by A.R.A.R.@

խանութները պայթու՞մ են գորշ, անտարբեր, սառը եւ՝ չվաճառուող գրքերի առատութիւնից…

Հապա՞ էն խեղճ գրախանութները կամ ամէն գիրքերը հաւաքուած գրքերը, ապրուստարկումը եւ ամփոփուածութեան յանձնել այդպիսի գրքերը, երբ առաջանում է այդ նո՛յն, չվաճառուող գրքի նո՛ր, աւելի չքեղ ու բազմատիրած հրատարակութիւնը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԻՒՆ, կամ երկրի ու ժողովրդի (կամ թէկուզ որեւէ աւագերէցի ու հիմնարկի) համար կարեւոր ու էական հարցերի հրապարակային քննարկում եւ լուծում:

Այս բացակայութիւնը մեր հասարակական կեանքի ամենամե՞ծ չարիքն է եւ ամէնից շատ փորձանքներ ու աղէտներ է բերել մեզ տարիներ ու տասնամեակներ շարունակ: Բերենք միայն մի քանի, համեմատաբար պարզ ու բոլորին ատանելի օրինակներ ա՛յն տարբերակներից, որոնց ո՛չ միայն կարելի, այլեւ՝ պարտադի՛ր էր հաշուի նստել մասնագէտների կարծիքի հետ, փոխանակ այդ հարցերը լուծելու ամէն, ոչ-մասնագէտ կամ ոչ-կոմպետենտ «մեծաւորի» ինչքան քմահաճ, նոյնքան սխալ եւ վնասակար վճռով…

Ցիրաւի, եթէ ժամանակին մասնագէտներին վերաբերող հարցերը լուծուէին նրանց կարծիքի հետ հաշուի նստելով եւ նրանց հետ խորհրդակցելով (էլ չեմ ասում՝ ընդգծեմ նրանց բազմաթիւ հիմնաւոր կարծիքներն ու բողոքները) – մի՞թէ 30ական թուականներին Երեւանում կը քանդուէին ու բարբարոսաբար կ'ոչնչացուէին մեր քաղաքի այնպիսի կոթողներ, ինչպէս Պօղոս-Պետրոս եկեղեցին, Կաթողիկէն, Գրիգոր Լուսաւորիչը, միջնադարեան փիլիսոփայ Յովհաննէս Կոզեռնի գերեզմանն ու մատուռը եւ Երեւանի ժողովրդական ճարտարապետութեան բազմաթիւ փայլուն կոթողներ ու շէնքեր ա՛յն տարածքում, որպէսզի այսօր մեր, բառ ծննդեան վկայականի 2780 տարեկան Երեւանը պիտակների ու Հոկտեմբերեանի[8] տարիք ունենար եւ զրկուէր, նոյնիսկ 19րդ դարում գոյութիւն ունեցող փոքր հատուածող կոթողներից:

Ձեռներդ դրէք ձեր խղճին եւ ասէք, մի՞թէ հնարաւոր կը լինէր Սեւանայ լճի դէմ գործադրուած հանցանք՝ անուղղելի՛ ոճիրը, եթէ ժամանակին այդ հարցը լուծուէր ո՛չ թէ այս կամ այն «մեծաւորի» փակ կաբինետում, այլ՝ մասնագէտների քննարկմանը դնելով եւ նրանց կարծիքը հաշուի առնելով: Չէ՞ որ, այդ նոյն տարիներին, Սեւանի ոչնչացման ոճրագործ ծրագրի նախագծերից մի քանի անգամ աւելի բողոքներ ու զեկուցումներ են գրուել, որպէսզի կանխուէր այդ ոճիրը…

Վերջապէս, ամօթ չէ՞, որ դեռ այսօր էլ, մեր աչքի առջեւ, քանդւում են հին Երեւանից մնացած մի քանի կոթողներից շատերը, եւ Թամանեանի նախագծած Երեւանը, 50–60ական թուականներին վերածուեց «վարդագո՞յն ձանձրոյթի» – գորշ ու անդէմ շէնքեր ու թաղամասեր ունեցող քաղաքի:

Ամօթ չէ՞, որ Կառավարական տան եւ Օպերայի հրաշալի շէնքերի կողքին վեր ցցուեն այնպիսի, անյուսալիօրէ՞ն անտաղանդ շէնքեր, ինչպէս «Ռոսիա» կինոթատրոնի մօտի բնակելի բազմայարկ շէնքը («Երկաթուղային ամսարկղը»), իսկ Սասունցի Դաւթի պէս արձան ունեցող քաղաքում կառուցուեն քաղաքի տեսքը փչացնող արձաններ՝ իրենց ո՛չ պակաս անտաղանդ ճարտարապետական լուծումներով, պատերով ու պատուանդաններով…

Մի՞թէ դա էլ չա՞փ մեծ ու դժուար հարց էր, եւ չէ՞ր կարելի, կամ պարտադիր չէ՞ր այդ շէնքերի կամ արձանների նախագծերն ու մակէտները դնել հասարակական լայն քննարկման:

Դեռ լա՞ւ է, որ վերջին տասնամեակներում, այդ գորշ ու անդէմ շէնքերի ու թաղամասերի ֆոնի վրայ, որպէս մխիթարութիւն եւ գալիքի յոյս, վեր խոյացան այնպիսի, յիրաւի՛ տաղանդաւոր եւ մեր ժամանակին արժանի կա–

digitised by A.R.A.R.@

ռույցներ, ինչպես Եղեռնի հուշարձանը, «Երիտասարդական պալատը», «Զուարթնոց» օդակայանը և այլ կառույցներ ու կոթողներ, որոնք իրենց մակարդակի թերություններով հանդերձ, պատիվ կը բերեն ցանկացած երկրին ու քաղաքին:

Հրապարակայնության բացակայության, և հարցերը որևէ խմբագրությունում քննարկելու ձևով լուծելու եւս մի փաստ,– այս անգամ Հայրենիք—Սփյուռք հարաբերությունների ոլորտից:

Չնայած Սփյուռքի ծա՜նր պայմաններին, որտեղ հայ մնալը հերոսու-թյուն է, իսկ հայ գրող լինելը և հայերէն գրելը՝ կրկնակի՝ հերոսություն,– Սփյուռքում կային և կան բազմաթիվ տաղանդավոր ու ինքնատիպ գրողներ և հիանալի գրքեր՝ Շահան Շահնուրի և Համաստեղի գրքերից մինչև մեր օրերում ստեղծված գրքերը:

Դժբախտաբար, ընդհուպ մինչև 50-ական թվականների վերջը, մենք, մի կողմ թողած Սփիւռքի տաղանդաւոր եւ իսկական գրողներին եւ նրանց գրքերը, Հայրենիքում հրատարակում էինք միայն մեկ-երկու այնպիսի գրողների գրքեր, որոնք, իրավամբ, նույնիսկ գրո՞ղ էլ չէին համարվում ո՛չ Հայրենիքում, ո՛չ էլ՝ Սփյուռքում...

Ինձ սխալ չհասկանա՛ք, – հարցը անձերին չի՛ վերաբերում, և ես, օրի-նակ, բա՛րձր եմ գնահատում Կարապետ Սիտալի ծառայությունները մեր երկրին (մանավանդ 20–30-ական թվականներին): Բայց մի՞թե նորմալ երևույթ էր, որ Սիտալի նման, շա՜տ համեստ շնորհքի տէր մի գրող, տարիներ շարունակ տպագրուէր Հայրենիքում և ամէն տարի Հայրենիք այցելէր այն դէպքում, երբ Համաստեղի պէս տաղանդավոր մի գրողից ո՛չ միայն մի տող չէ՞ր հրատարակւում, այլև, նա այդպես էլ մեռավ՝ իր հայրենի հողի կարոտը սրտում...

Որպեսզի ասածս ավելի՛ հասկանալի լինի, մի պահ պատկերացրէք, թէ յանկարծ Հայրենիքը Բէյրութը լինէր, իսկ մենք Սփիւռքը··· ի՞նչ կը զգայինք մենք, եթէ այնտե՛ղ, մեր պաշտելի՛ Հայրենիքում, տարիներ ու տասնամյակ-ներ շարունակ, Չարենցի, Տէրեանի, Շիրազի ու Սեւակի գրքերը մի կողմ թողած, հրապարակէին միայն մեր մէկ-երկու կասկածելի շնորհքի տէր գրողների գրքերը···

Երբ ժամանակին, 50-ական թվականներին, մեր մտաւորականները և Սփյուռքի գրականության մասնագետները իրավամբ դժգոհում էին այս վի-ճակից, այդ հարցը փակ կաբինետներում որոշող, բայց գործից անտեղ-եակ մարդիկ մեզ խրատում էին, թէ հարկավոր է այդ հարցերին «դասակար-գային մոտեցո՛ւմ» ունենալ,– այդ «մոտեցումը» հասկանալով համարելով միայն իրենց մենաշնորհը···

Բայց, այդպիսի պարզունա՛կ «դասակարգային մոտեցման» դէպքում, յանկարծ կարող էր օրինակ ի յայտ գալ այնպիսի զաւեշտակա՜ն մի փաստ, ինչպէս այն, որ տարիներով մեզ մոտ խե՛ղճ, աղքա՛տ, «շահագործուող պրո-լետար» համարուած Սիտալը··· պարզապէս սեփականատէր էր, իսկ «խոշոր բուրժուազիայի տիպիկ ներկայացուցիչ» Համաստեղն աշխատում էր այդ տպարանում որպէս··· խեղճ ու կրակ սեւագործ բանուոր···

Հիմա, փա՛ռք Աստծոյ, անցել են այդ ժամանակները և մենք Հայրենի-քում տպագրուած գրքերում և պատմագրքերում տեղ ենք տալիս Սփիւռքի բազմաթիվ տաղանդաւոր, տարբեր ու ինքնատիպ գրողների՝ այդ թւում նա-և՝ Համաստեղին և Արամ Հայկազին:

Բայց այդ հարցում մենք երբեմն նմանւում ենք այն նշանաւոր «կար-միր կովին», որը մի մեծ դոյլ իւղալի կաթ է տալիս և հենց ինքն էլ, ոտքի

digitised by A.R.A.R.@

*անգգո՞յլ մի հարուածով, չո՞ւտ է տալիս ու թափում այդ կաթը՝* մի փոքրիկ սխալով փչացնելով իր առած մեծ ու լաւ գործի տպաւորութիւնը…

*Այլապէս ինչո՞վ բացատրել, որ մենք այսօր, ապագրելով նոյն Համաստեղի ու Արամ Հայկազի գործերը եւ նոյնիսկ մեծ ու արժանի տեղ յատկացնելով նրանց* «Սփիւռքահայ գրականութեան պատմութեան» *մէջ, յանկարծ,* որեւէ գրական օրգանի խմբագրութեան աշխատողի քմահաճ կամքով, հասնում ենք հայրենիքի վարկը սփիւռքահայութեան աչքում զգաղ այնպիսի մի սրբապի՛ղծ արարքի, ինչպէս նրանց մահից յետոյ մեր մամուլում զէթ մի փոքրիկ… մահախօսական տպագրելը զլանալը…

Մեր կեանքի այս եւ բազում այլ վտանգաւոր, եւ 27րդ համագումարի հզօր յուսարձակի լոյսի ներքոյ աւելի անհանդուրժելի դարձած *անարդարութիւնների, սխալների ու թերութիւնների դէմ պիտի պայքարենք մենք բոլորս, եւ առաջին հերթին՝ գրողները։*

*Այդ պայքարն անհնար է, առանց մեր գրականութեան, յատկապէս վերջին տասնամեակներում խիստ թուլացած քաղաքացիական ոգին բարձրացնելու (յատկապէս երիտասարդ գրողների մէջ)։ Իսկ կարծում էք հե՞շտ է այդ քաղաքացիական ոգին բարձրացնել, երբ մեր քննադատներից ոմանք, օրը-ցերեկով, սեւով սպիտակի վրայ գրում են, թէ օրինակ,* «Այսինչ բանաստեղծի առաւելութիւնը կայանում է նրանում, որ նրան չեն հետաքրքրում հասարակական հարցերը»:

Մեր գրական բարձրագոյն օրգանում տպագրուած այդպիսի ուղենիշ կոչերը, քաղաքացիական կրքոտ ոգի ունեցող գրքերը եւ գրողների հալածանքն ու անտեսումը, ինչպէս նաեւ՝ «անշառ»-մոմերով, հրեշտակներով, Քրիստոսներով ու խաչերով լցուած զործ ու ապեկուատեւ գրքերի անսանձ փառաբանումը (ընդհուպ մինչեւ նրանց Հայկական ՍՍՀ Պետական մրցանակ տալը), հասցրին նրա՛ն, որ քաղաքացիական ոգու իմաստով իներտ ու անտարբեր դարձան մեր երիտասարդ գրողներից շատերը:

*Կարո՞ղ էք համաշխարհային ամբողջ գրականութեան մէջ ցոյց տալ թէկուզ եւ մի* իսկական գրող՝ *Դանթէից մինչեւ* «Դանթէական առասպելի» *հեղինակը, որին չհետաքրքրէին իր ժամանակի ցաւոտ հարցերը եւ որը կրքոտ չպաշտպանէր իր ժամանակի ազնիւն ու վեհը՝ նոյնքան կրքոտ պայքարելով վատի, կեղծիքի, արատի ու աղբի դէմ…*

*Բայց չկարծէ՞ք, թէ վատի ու աղբի դէմ մղուող պայքարը հեշտ է ու անարգել, երբ* շատ-շատերը, նոյնիսկ մի փո՛քր հիմնարկի մի փո՛քր սխալ ու թերութիւն քննադատելու համար… ինֆարկտ ու ինսուլտ[9] են ստանում…

*Ստորը, կեղծը, արատն ու աղբը ինքնին[10] չե՛ն, եւ ո՛չ միայն ատամներով պաշտպանւում են, այլեւ ունեն իրենց քննադատութիւնից պաշտպանելու խորամա՛նկ, գեղագուշակ լոզունգները, եւ իրենց դէմ կռուողներին ահաբեկող այնպիսի՝ մեղադրանքներ ու յորդորներ, ինչպէս օրինակ,— «անյարմա՞ր է աղբը տնից հանել», «իսկ ի՞նչ կ'ասեն մեր թշնամիները», եւ այլն…*

*Վերջերս դրան աւելացրել է եւս մի ուրիշը — դեռ մեր կուսակցութեան 27րդ համագումարի լոյսը գրողների միութեան եւ գրական մամուլ չհասած, արդէն իսկ նշած սխալները քննադատողների բերանը փակելու համար,— խօսում են ա՛յն մասին, թէ մեզ մօտ «չա՛փ են քննադատում», «հիմա քննադատելը մոդա՛ է դարձել», եւ այլն։*

*Ես կարծում եմ*, որ այդ բոլոր դիմազուրկ յայտարարութիւնները՝ թարմ օդի հոսանքից վախեցած ու սահարեկուած բորբոսի դիրքերից են

digitised by A.R.A.R.@

գալիս եւ մենք պիտի առաջին հերթին կռուենք հենց այդ վտանգաւոր դիմագոգայի դէմ, եւ ինչպէս 27րդ համագումարն է պահանջում, իրերը «կոչենք իրենց անուններով»:

*Այդ ինչպէ՞ս է, որ դեռեւս քաղաքացիական պատերազմի, սովի, աւերի եւ միջազգային բարդ իրադրութեան պայմաններում, Լենինը կարող էր հրապարակայնօրէն, ի լուր աշխարհին ձաղկել ու քննադատել մեր կեանքի թերութիւնները (եւ նոյնիսկ յայտարարել, թէ «մեռնում են միայն մ՛յն կուսակցութիւնները, որոնք անզօ՞ր են քննադատել իրեց սեփական սխալները»:* Այդ ինչպէ՞ս է, որ կուսակցութիւնը կարող էր 1956 թուականին, ո՛չ մի վտանգի ու դժուարութեան առջեւ կանգ չառնելով, քննադատել անհատի պաշտամունքն ու նրա բերած ահաւոր աղէտները, *իսկ մենք, 1986 թուականին, մեր հզօր երկրի ու ժողովրդական դեմոկրատիայի նո՛յնքան հզօր դաշինքի առկայութեան պայմաններում, պիտի դեռ մտածե՞նք, թէ կարելի՞ է քննադատել մեր կեանքի այս կամ այն մասնակի սխալն ու թերութիւնը, թէ՞ ոչ…*

*Չմոռանա՛նք, որ թէեւ, ինչպէս Լենինն է ասել,* այս պայքարը ժամանակաւոր կամ անցողիկ չէ, այլ՝ «երկա՛ր ժամանակի համար», բայց այդ պայքարը նո՛յնպէս արդիւնաւէտութիւն եւ արագացում է պահանջում, *եւ ինչքան աւելի արագ ուղղուեն իմ նշած սխալները, այնքան աւելի շատ կը շահի մեր երկիրն ու ժողովուրդը…*

*Իսկ ո՞վ պիտի պայքարի այդ անարդարութիւնների, սխալների ու թերութիւնների դէմ, եթէ ոչ՝ մե՛նք եւ ե՞րբ, եթէ ոչ հենց այսօ՛ր, հենց հիմա՛, հենց այս ամբիոնի՛ց…*

*1986 Թ. ԱՊՐԻԼ*

*ԳԷՈՐԳ ԷՄԻՆ*

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Վսերյազ ի ծագայգս».
2. Հատուածների («կադրերի»).
3. «Նոմենկլատուրային» պաշտօնեաներին, որոնք էլ թերանան իրենց պարտականութիւնների մէջ, աշխատանքից չեն վտարւում, այլ փոխադրւում են մէկ պաշտօնից միւսը՝ «հորիզոնական» տեղաշարժով:
4. Ռուս արձակագիր-երգիծաբան:
5. Աւելորդ, անգործածական իրերի քաշք:
6. «Ամօտրիւն ի գավիդուլտ». այսինքն «տեսէք եւ նախանձէք»: Մայակովսկու «Ամերիկեան անձնագրի մասին» բանաստեղծութիւնից վերցրուած տող է:
7. Թուղթը վերամշակւում եւ կրկին օգտագործւում է:
8. Հոկտեմբերներ 6-ից 10, պիոներ՝ 10–16 տարեկանների պարտադիր կազմակերպութիւններ:
9. Կարուած:
10. Չէզոք:

digitised by A.R.A.R.@



## ՍԵՐԳԷՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ

*Շարժապատկերի բեմադրիչ եւ գեղանկարիչ Սերգէյ Փարաջանով (Փարաջանեան) ծնած է 9 Յունուար 1924ին, Թիֆլիս։ 1942–45 կ'ուսանի Թիֆլիսի երաժշտանոցին մէջ, իսկ 1951ին կ'աւարտէ սինեմատոգրաֆիայի Համամիութենական Հիմնարկի բեմադրութեան բաժանմունքը (Ի. Սավչենկոյի արուեստանոց)։*

*1947ին, Սերգէյ Փարաջանով կը մասնակցի Ի. Սավչենկոյի* «Երրորդ հարուածը» *եւ* «Տարաս Շեւչենկօ» *(1952) ժապաւէններու ստեղծման։ 1954ին կը նկարահանէ իր առաջին լիամեթրաժ ժապաւէնը՝* «Անդրիէշ» *(Եւ. Բազելեանի հետ), ապա՝* «Առաջին տղան» *(1958),* «Ուկրաինական ռապսոդիա» *(1961),* «Ծաղիկը քարի վրայ» *(1962)։* «Մոռացուած նախնիների ստուերները» *1965ին կ'արժանանայ Ֆիկեի Համամիութենական եւ Մար Դել Պլատայի փառատօններու մրցանակներուն, Սալոնիկի ոսկի մետալին եւ բրիտանական ակադեմիայի մրցանակին։ 1969ին, «Հայֆիլմ»ի մէջ կը նկարահանէ իր* «Նռան գոյնը» *ժապաւէնը, որ կը հաստատէ Փարաջանովի արուեստի ինքնատպութիւնը եւ մեծ համբաւ կ'ապահովէ իրեն։*

*Աւելի քան տասնամեակ մը իբրեւ մեղադրեալ, միասեռական եւ այլախոհ բանտարկուեցաւ եղբ. 1980ական թուականներուն կը վերահաստատուի Ս. Փարաջանովի վարկն ու բեմադրիչի իրաւունքը։ 1984ին, «Վրացֆիլմ»ի մէջ, Դ. Աբաշիձէի հետ կը նկարահանէ* «Լեգենդ Սուրամի բերդի մասին»*, 1985ին, Թիֆլիսի մէջ, կը կատարուի բացման հանդիսութիւնը իր գեղանկարչական գործերու անհատական ցուցահանդէսին։*

*Սերգէյ Փարաջանով ստեղծած է նաեւ շարք մը կարճամեթրաժ ժապաւէններ։*

**... Ցանախ քարեացակամութիւնը չի շաղկապւում օպեկտիւութեան հետ, փարքամօրէն անում է վնասաբեր խնամիութեան որոմը՝ արգիլելով սկսնակների ճանապարհը։ Եւ չեմ խօսում այն մեծ վնասի մասին, որ նման վարմագիծը հասցնում է ազգային մշակոյթին։**

**... Աւելի լաւ է ունենալ դժուար խառնուածքի տէր տաղանդաւոր արուեստագէտներ, քան յարմարուող, «լաւամարդ» ռեժիսորներ՝ գորշ ու միջակ արտադրանքով։**

**Վերջապէս ո՞վ է պատասխան տալու, որ 20րդ դարը զրկեց ինձ *«Սասունցի Դաւիթ»*ը նկարահանելու հնարաւորութիւնից, որ լաւագոյնս արտացոլում է հայ ժողովրդի ոգին, խառնըւածքը, էութիւնը։**

digitised by A.R.A.R.@

# «ՀԱՅՖԻԼՄ»Ն ԻՄ ԱՊԱԳԱՆ Է

[illegible]

Զրոյցը վարեց՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՐԲԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆԵԱՆ

*Արձակագիր եւ հրապարակագիր Անահիտ Սահինեան ծնած է 20 Յունիս 1917ին, Պետրոգրադ (ներկայիս՝ Սանկտ-Պետերբուրգ քաղաքին մէջ) գիւղը։ 1935ին կ'աւարտէ Ալ. Թամանեանի անուան շինարարական տեխնիկումը, իսկ 1941ին՝ Երեւանի պետական համալսարանի բանասիրական հիմնարկը։ 1942–1947 եւ 1953–1958 կը պաշտօնավարէ Հայպետհրատի մէջ՝ իբրեւ մանկապատանեկան գրականութեան խմբագրութեան վարիչ, իսկ 1968–1969՝ իբրեւ «Արարատ» [illegible] թերթի խմբագիր։ 1963էն սկսեալ կը պաշտօնավարէ «Պիոներ» ամսագրին մէջ՝ իբր խմբագիր։*

Անահիտ Սահինեան հրատարակած է աւելի քան 10 գիրքեր, որոնց գլխաւորներն են «Խաչուղիներ», «Մարաւ», «Ուշացած ծամադրութիւն», «Կարօտ» եւ «Կնոմաններ»։ Առաջին երկուքը լոյս տեսած են նաեւ ռուսերէնով։

… Այսպէս էլ կեանքի միւս բնագաւառներում՝ չհասկացողն ու հասկացողը տարիներ ի վեր նոյնն են արել, մէկը՝ չհասկանալով, մէկը՝ հասկանալով։

… Այսպէս՝ բանը հասել էր այնտեղ, որ մեր յիշողութիւնն անգամ խմբագրւում էր, ինչպէս որ խմբագրւում էր պատմութիւնը…

Մենք, հայ գրողներս, քիչ դառնութիւններ չունենք մեր հոգում ամբարուած, ո՞վ մեզանից յիրաւի չի ճաղկուել, ոչ թէ մէկ անգամ, այլ՝ բազմիցս։

digitised by A.R.A.R.@

Ա. ՍԱՀԻՆԵԱՆ

# ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ԼՌՈՒՄ

173-2000

Մեր կեանքում դեռ երբեք մամուլը այնպիսի տեղ չէր գրաւել, ինչպէս այս օրերին: Ալեկոծումից շնչահեղձ լինելով կարդում ենք (խօսքը միութենական մամուլի մասին է) եւ չենք համբերում, որ իրար հանդիպենք, հենց հեռախօսով շտապում ենք մեր մտերիմներին հաղորդել. «Այսօրուայ այսինչ թերթում տպագրուած այսինչ յօդուածը եթէ դեռ չես կարդացել, վերցրու կարդա՛, մի ուշացնիր»: Այսպիսի հրապարակայնութի՜ւն, այսպիսի սուր հարցադրումնե՜ր, այսպէս անվախօրէն մատը տանել ու դնել ցաւոտ վէրքի վրայ, ցաւ, որ տարիներ, տասնամեակներ ի վեր մեզ հետ էր, ամենուր, այրում էր մարդկանց, բայց ասես դրանց մասին քար լռութիւն գոյութիւն ունէր, ասես դրանք չկային, մեզ սովորեցրել էին դրանց մասին լռել, եւ մենք «բարեխղճօրէն» լռում էինք:

Հիւսիսային գետերի բախտը բերեց. մամուլը այնպէս հիմնաւորուած ու վճռաբար հանդէս եկաւ նրանց պաշտպանութեամբ, ընդդէմ պլանաւորող եւ նախագծող մարմինների, որ հարցը վերջնականապէս լուծուեց յօգուտ գետերի:

Մամուլը երկար ու ջանադիր աշխատանք տարաւ Բայկալ լճի գլխին կախուած աղէտը վերացնելու գործում, եւ ահա վերջերս մամուլի հրապարակումներից իմացանք, որ Բայկալի ափերին կառուցուած ցելյուլոզի կոմբինատը հեռացուած է այնտեղից:

Վերացուեց Եասնայա Պոլեանայի հարեւանութեամբ տասնամեակներ ի վեր գործող քիմկոմբինատը, որից, ըստ մամուլի հրապարակումների, շատ էր տուժել ո՛չ միայն Եասնայա Պոլեանայի բնակչութիւնը, այլեւ՝ Տոլստոյի տուն—թանգարանում սրբօրէն պահպանուող հոգեւոր անգնահատելի հարստութիւնը:

Ո՞ր մէկը յիշենք:

Իսկ հայ ժողովուրդը, երեւում է այնպիսի բախտաւոր աստղի տակ է ծնուած, որ դատելով մեր հանրապետական մամուլից, մենք մեզ այրող այդպիսի սուր ցաւեր չունենք:

Այդպէ՞ս է արդեօք:

Արդէն շատ տարիներ է, ինչ խօսւում է այն մասին, որ աշխարհի ամենաաղտոտուած օդն ունեցող քաղաքներից մէկը մեր մայրաքաղաքն է, ու

ՀԱՄԱՐ

digitised by A.R.A.R.@

հաւաքուած է հանրապետութեան բնակչութեան մէկերրորդից աւելին…։ Մի-ջանից ո՞վ է, որ չի զգում երբեմն-երբեմն աչքերի կծկծոցը, որն այլ բան չէ, քան քիմիական գործարանների արտանած վնասաբեր գազերի ազդեցութիւն, ո՞վ երբեմն-երբեմն չի զգում օդի մէջ սրտխառնոց առաջացնող գարշահոտու-թիւն, որ դարձեալ նոյն գործարանների արտածումների «պարգեւներն» են մեզ։

Վաղուց ի վեր փոշին վերացել է մեր մայրաքաղաքից, շնորհիւ ստեղծը-ւած կանաչ տարածութիւնների՝ բազում պուրակների, շատրուանների, քա-ղաքամերձ անտառակների…։ Փոշու փոխարէն մենք հիմա մուր ենք շնչում, մեր տներում՝ կահոյքի ու սեղանների վրայ, սրբիր-չսրբիր, մուր է նստած, մեր ձեռքերից, լուսանալիս, մուր է կաթում, մրով յագեցած է օդը, մենք մուր ենք շնչում։

Եթէ ոչ հիմա, հապա էլ ե՞րբ պէտք է բարձրաձայն, հրապարակով քննարկուի այս հարցը, եւ մամուլը հանգամանօրէն տեղեկացնի իր ընթեր-ցողներին, թէ ինչ է կատարուել մեր այնքան սիրուած, բազում երգերով մե-ծարուած մայրաքաղաքի մթնոլորտի հետ, եւ ինչ ուղիներ կան այդ վիճակից դուրս գալու համար։

Այո, «Նաիրիտի» վնասակար արտադրամասը վերացուեց։

Բայց դրանից յետոյ էլ Երեւանը շարունակում է մնալ աշխարհի ամե-նաաղտոտուած օդն ունեցող քաղաքներից մէկը։

Մենք պարբերաբար, ամէն օր, մեծ ուշադրութեամբ հաղորդումներ ենք լսում Չեռնոբիլի մթնոլորտի, հողի, ջրի, մարդկային օրգանիզմի վրայ սահմանուած վայրկեան իսկ չդադարող վերահսկողութեամբ ու տուեալ-ներով ճշգրտուած իրավիճակի մասին։

Համեմատելի չէ Չեռնոբիլի աղէտը Երեւանում տիրող իրավիճակի հետ, բայց ինչո՞ւ չկան երեւանցիների օրգանիզմի վրայ էլ Երեւանի աղտոտ-ւած օդի ազդեցութեան վերաբերեալ վերահսկողութիւն, ամէնօրեայ քննու-թիւն եւ արդիւնքների հրապարակում։

Իսկ ինչո՞ւ չկան պարբերական հաղորդումներ Սեւանի մասին, ճիշդ այնպէս, ինչպէս ժողովրդի մեծ ու թանկ զաւակի ծանր հիւանդութեան դէպ-քում հրապարակուող բժշկական բիւլետէններն են լինում։

Ոտքի վրայ, բերանից բերան անցնող ցնցող լուրերի փոխարէն, ինչո՞ւ չունենք ճշգրիտ, պարբերական հաղորդումներ, թէ Ալավերդի քաղաքի եւ Արարատեան դաշտում տեղադրուած ատոմակայանի մերձակայ բնակավայ-րերի կանանց սերնդատուութիւնը վիճակագրական ինչ պատկեր ունի։

Այն ամէնը, ինչ վերաբերում է ժողովրդական կեանքին ու բախտին, այսօր գոնէ ժողովուրդը պէտք իմանայ, եւ դարձնի հասարակական քննարկ-ման առարկայ։ Հրապարակայնութիւն, իրերն իրենց անունով կոչել սովորել, ուրիշ բան չի կարելի համարել։ Մեր կեանքին այսպիսի թոյն ու ընթացք տուողները յստակօրէն պատկերացնում են եւ գիտեն, որ դա հեշտ չէ, պէտք է յաղթահարուի բազում տարիների սովորութեան ուժը, տարիներ, երբ ղեկա-վարելուց հեշտ բան չկար, խելքից կարածն արա եւ ձեռքդ բռնող չկայ, մի կողմից շինէր, մի կողմից քանդէր, եւ կարող էիր շինելու փոխարէն միայն քան-դել, ինչպէս կատարուել էր Ուզբեկստանում, որի մասին ամենայն մանրա-մասնութեամբ իմացանք դարձեալ միութենական մամուլի հրապարակում-ներից։ Տասնամեակներ ի վեր, չթողնելով, որ հողը շունչ քաշի, վիթխարի հո-ղատարածութիւններ այնտեղ դրուել են բամպակի մշակութեան տակ, հա-րստահարելով, հիւծելով, ուժազրկելով հողը, որը այլեւս ի վիճակի չի եղել

digitised by A.R.A.R.@

պլաններով սահմանուած բերքը տալու, եւ հողի վրայ տէրերը բռնել են կեղ-ծիքի, խարէութեան, յաւելագրումների ճանապարհը։

Այսօր ամենադժուարը ազնուութեան ուժն է, մէկ անգամ արդէն կաղա-պարուած աշխատանքի, մասնագիտութեան ու հոգեբանութեան յաղթահա-րումն է, համարեա՛ անհնարին մի բան, այդ իսկ պատճառով այն, ինչ կատար-ւում է մեր երկրում, իրաւամբ համարւում է յեղափոխութիւն, յիրաւի յեղա-փոխութիւն, եւ Թերեւս աւելի դժուարին պայմաններում կատարուող յեղա-փոխութիւն, քան մեզ յայտնի յեղափոխութիւններն են եղել։

Անցեալ յեղափոխութիւնների Թշնամիներն ակներեւօրէն կանգնած յե-ղափոխութեան ճանապարհին, նրա դէմ գործում էին բացայայտ, գրեթէ բոլոր ասպարէզներով, յեղափոխութեան լոզունգների դէմ ու հանելով իրենց լոզունգ-ները։

Այսօր մեր երկրում կատարուող յեղափոխութիւնը բացայայտ Թշնամի չունի երկրի ներսում, գուցէ նոյնիսկ երկրից դուրս։ Բոլորս՝ երկրի ներսում, միաձայն, միաբերան, առաւօտից մինչեւ առաւօտ հոլովում ենք «վերակա-ռուցում», «արագացում», «հրապարակայնութիւն», «դեմոկրատացում»...։ Իսկ ազնուութեան ուժը, գուցէ եւ իրենց կամքից անկախ, շատերին տանում է այսօր արդէն դատապարտուող ճանապարհով։

Բոլորովին վերջերս կողքս կերպով առանձնացել էր Հեռաւոր Արճիշ գիւղի աշխատաւորութեան իրաւունքները, Շրջանի ղեկավարութիւնն ինչ-ինչ պարտաւորութեամբ որոշել է մէկին նշանակել տնտեսութեան գործկա-տար...։ Ո՞ր տնտեսութեան...։ Շրջանում գոյութիւն ունեցող բոլոր տնտեսու-Թիւնները ղեկավար ունէին, պատճառ չկար մէկնումէկին հանել, տեղը նորին դնելու համար...։ Եւ, սակայն, հնարը գտնւում է՝ Արճիշի տնտեսութիւնը կի-սել, դարձնել երկու տնտեսութիւն, որպէսզի նորընծայ գործկատարն իր գործկա-տարութիւնն անելու տնտեսութիւն ունենայ...։ Արճիշի մի տնտեսութիւնը երկուսի դարձնելու ուրիշ, հիմնաւոր պատճառ չկար։ Արճիշցիները բողոքեցին այդ որոշման դէմ, Շրջանի ղեկավարութիւնը կարեւորութիւն չտուեց, պնդեց իր որոշումը...։ Ինչքա՞ն ջանքեր պահանջուեցին գիւղից, քանի՛ խումբ մարդիկ ուղարկեց գիւղն իր բողոքը վերեւներին հասցնելու, մինչեւ որ ամիսներ լար-ուած եւ յուզումնալից պայքարից յետոյ, Արճիշը երկուսի բաժանելու անի-մաստ որոշումը փոխուեց մէկ այլ որոշումով. Արճիշից մի քիչ, Զէյթունի եւ «Ցաղթանակ» տնտեսութիւններից մի քիչ, մի քիչ կտրել, միացնել իրար, որ-պէսզի այնուամենայնիւ մի նոր տնտեսութիւն առեղծուէր եւ նոր նշանակուած գործկատարը գործկատարութիւն անելու տեղ ունենայ։

Ահա Թէ ինչ անորսալի, անտեսանելի չար ուժեր են խութերի պէս ծա-ռացել այսօրուայ յեղափոխութեան ճանապարհին՝ անխնայ ազնուութեան ուժը։

Այդ ազնուութիւնը կոտրեց, կոփուեց, ցեմենտուեց իմ իսկ սերնդի տառա-պանք, սերունդ, որի լռութիւնը ծանրաբեռնուած է որքա՜ն ցաւալի իրա-դարձութիւններով։

Գրական հերԹական աղմկալից ժողովներից մէկն է։ Ամբիոնի մօտ է Դերենիկ Դեմիրճեանը...։ Բոլորը լարուած լսում են, իսկ նա խօսում է ու խօ-սում, դարձի գնելով իր յատուկ համեստութեամբ հարցերի ողջ չափազանցու-մը...։ Ունկնդիրները ճիգ են անում Թափանցելու նրա ասածի էութեան մէջ, ու մէկ կարծես զանում, կորցնում են նրա մտքի հետեւելու Թելը...։ Եւ այս-պէս ժամերից աւելի...։ Ծաղրի վերջում մի խումբ ըմբոստանում է Դեմիրճեանին եւ խոստովանում, որ նրա ասածից բան չհասկացան։ Դեմիրճեանը զգաց եւ ծաղրով, քրթմնջում է. «...Ես հենց այդ էլ ուզում էի, որ ասածիս բան չհաս-

digitised by A.R.A.R.@

կացութ»...։ Լռելը այնքան մեղք է համարւում, ամէնքից պահանջւում էր հանդէս գալ եւ հրապարակով, ամբիոնից հաւանութիւն տալ կատարուող այնպիսի իրադարձութիւնների, որոնց դէմ ծառանում է հոգին։ Ահա եւ Դեմիրճեանը գտել է գլուխ-պրծացնելու մի ձեւ, որից օգտուել ամէն մէկը չի կարող՝ խօսել այնպէս մանուածապատ, որ ամէն նախադասութիւն կարծես առանձին-առանձին իմաստ է պարունակում, բայց բոլորն իրար հետ մի ծիածանակոյթ կազմելով, տակը թաքցնում են ծաւալուն մի դատարկութիւն։ Դեմիրճեանն այդպէս պաշտպանւում էր այն բազում կարիերիստներից, որոնք մասնագիտացել էին ասուած գրաւոր ու բանաւոր ամէն մէկի, ամէն խօսքի մէջ փորփրել, գտնել «հակա» գաղափարներ, ներկայանալ «թշնամիների» դէմ պայքարող առաջամարտիկի ու վեր մագլցել...

Այդ «առաջամարտիկները» չեն վերացել, չէ՞ չեն, ապրում են ու նստած են այստեղ ու այնտեղ, աւելի վարում, աւելի վերում եւ առաջին հերթին սրանք են, որ պէտք է փոխեն հոգեբանութիւն ու մտածողութիւն...։ Տայ Աստուած, որ կարողանան այդ անել։

Նայիրի Զարեանը մի օր վրդովուած խօսում էր հրատարակչութեան իր գրքի պաշտօնական խմբագրի մասին, պատմելով, թէ ինչ անհեթեթ պահանջներ է ներկայացրել իրեն՝ անուանի բանաստեղծին ու ամենակոփուած կոմունիստին՝ այս տողը ջնջէք, այն հատուածը հանէք...։ Երբ հեղինակը խնդրում է հիմնաւորել իր պահանջը, բացատրել, թէ ինչո՞ւ ջնջել այս տողը կամ այն հատուածը հանել, աղջիկը չի կարողանում, եւ սկսում է լաց լինել. «Եթէ չանէք, ինձ աշխատանքից կը հանեն», ասում է նա, եւ խեղճ հեղինակ, խեղճ Նայիրի Զարեան, որ ամենեւին էլ խեղճ չէր, ընդհակառակը, հզօր անհատականութիւն էր, ստիպուած տեղի է տալիս, զիջումների գնում։

Այսօր էլ, ոչ թէ մէկ, այլ բազմաթիւ այսպիսի խմբագիրներ են նստած հրատարակչութիւններում։ Ինչպէ՞ս պէտք է նրանցով վերակառուցում կատարուի հրատարակչական, խմբագրական գործում։

Բայց արդար լինենք չհասկացողների նկատմամբ եւ ասենք, որ հասկացողների եւ խելահասների գործելակերպը նոյնն է եղել, ինչ որ չհասկացողներինը, այդ պատճառով չհասկացող ու հասկացող կողք կողքի, ներդաշնակ գոյութիւն են ունեցել, ջուր լցնելով միեւնոյն, չգիտես թէ ում պատկանող ջրաղացին։

Մեր հանրապետութեան շրջաններից մէկում տնտեսութիւններն սկսեցին մասսայաբար դեղձի այգիներ տնկել, ոչնչացնելով մինչ այդ ունեցած միւս կուլտուրաները՝ խաղողը, տանձը, խնձորը, կեռասը, որ լաւ բերք էին տալիս, ա՛նգամ դժուար աճեցրած նուշն ու ձիթապտուղը։ Տնտեսութեան ղեկավարներն այդ անում էին իրենց կամքից անկախ, դեղձն ամենաեկամտաբերն էր, մշակւում էր հեշտ, ստացւում էր շատ բերք, եւ բերքը հաւաքելն էլ աւելի հեշտ էր, քան ասենք կեռասինը...։ Գլխաւորող մարմինները պարտադրել էին տնտեսութիւններին զօռ տալ դեղձի մշակութեանը, յանուն դրամական մեծ եկամուտի...։ Իսկ դեղձն աստիճանաբար սկսեց իջեցնել բերքատուութիւնը, համարեա՛ կատարուեց այն, ինչ Ուզբեկստանում՝ բամբակացան հողերի հետ։

Այսպէս էլ կեանքի միւս բնագաւառներում չհասկացողն ու հասկացողը, տարիներ ի վեր նոյնն են արել, մէկը՝ չհասկանալով, մէկը՝ հասկանալով։

Տարիներ առաջ, եթէ յիշում էք, մեր հանրապետութիւնում սկսեց ծաղկել ռեստորանաշինութիւնը, թէ՛ բնակավայրերում, թէ բնակավայրերից դուրս ծաղկել սկսեց ան, ամարանոցաշինութիւնը անհատական, նաեւ գերա-

digitised by A.R.A.R.@

*տեսչական: Փոքրիկ Հայաստանում համարեա՝ չմնաց բնութեան մի գողտրիկ անկիւն, որտեղ չկանգնէր մի գերատեսչական ամարանոց:*

*Այդ ժամանակ էր հենց, որ ես մեր գրական հանդէսին ներկայացրի իմ «Սեփական ստեղծագործութիւններով» ինքնակենսագրական վիպակը: Հանդէսի բազմամեայ եւ բազմափորձ խմբագիրը, որ անցել էր պատերազմի եւ այլ ծանր փորձութիւնների միջով, իրեն համարում էր խիզախ մարդ, արդարութեան ատաղձամարտիկ, ժողովներում հանդէս էր գալիս այնպիսի ելոյթներով, որոնք կարելի էր ըմբոստ համարել, բայց ահա իմ վիպակից շատ էջերի հետ հանեց նաեւ մի հատուած, ուր ներկայացուած էր տակաւին դպրոցահասակ երկու աղջկայ միջեւ տեղի ունեցող մի խօսակցութիւն. նրանք լսել էին, որ Հանրապետութեան ղեկավարը Թոյլ է տուել յատուկ իր համար ամարանոց կառուցել Դիլիջանում, դպրոցահասակ աղջիկներից մէկը զարմացած միւսին էր հարցնում այս լուրը, ինչպէ՞ս թէ յատուկ ամարանոց միայն իր համար, հապա ո՞ւր մնաց յեղափոխութեան խոստացած հաւասարութիւնը…*

*Փորձառու խմբագիրն այս հատուածը հանելով, մտածուած ըսէց. «Դու ուզում ես դրանով ասել, թէ այն ժամանակ այսպէս էր…: Իսկ հիմա, տե՛ս ինչ է կատարւում…»:*

*Այսպէս՝ բանը հասել էր այնտեղ, որ մեր յիշողութիւնն անգամ խմբագրւում էր, ինչպէս որ խմբագրւում էր պատմութիւնը, դուրս նետւում այնտեղից այն, ինչը կարող թէ ակամայ յիշեցնում էին մեր կեանքում տեղ գտած ու արմատաւորուած մերժելի երեւոյթները, դրանք դարձնում աւելի տեսանելի:*

*Ահա թէ ինչից ծնուեց գրականութեան մէջ մանրաթեմայնութիւնը: Դա միակ ճանապարհն էր գլուխը ցաւի տակ դնելուց խուսափելու: Ինչպէս Պարոյր Սեւակն էր ասում՝ գլուխը պատին խփելով պատը չես ծակի, քո սիրուն գլուխը միայն կը ջարդես:*

*Բայց ինչո՞ւ Պարոյրն ինքը չէր հետեւում իր խրատին եւ ամբողջ ձայնով աղաղակում էր այն, ինչի առջեւ շատերը սովորեցին աչք փակել.*

«Ով նստեց աթոռի վրայ
(կամ այլ կերպ ասած՝ գրաւեց աթոռ,
կամ արժանացաւ բարձր աթոռի)
օրէնքի ուժով պարտաւոր է նա յիշել,
որ ինքը երկոտանի է,
այն էր բարձրագոյն,
եւ ոչ մի դէպքում իրաւունք չունի
վերստին դառնալ ձոր չորքոտանու (աթոռի – Ա. Ս.) ճորտ»:

*Աթոռի մի ճորտ, որ աթոռի բերումով իրաւասուած էր ներկայ գտնուել գրողների ժողովներին, բայց իր իսկ խոստովանութեամբ այնքան էր խորշում գրողների ժողովներից (անհանգստութիւն էին պատճառում), որ փշաքաղւում էր այնտեղ՝ գրողների մօտ գնալու հենց միայն մտքից… ահա ներկայ է գրողների հերթական ժողովին, ամբիոն է բարձրացել եւ անսխալ գրելու հերթական դասն է տալիս Պարոյր Սեւակին եւ միւսներին…: Ինչպէս եղաւ դահլիճից հարցրին, թէ ինչո՞ւ Սեւակի «Եղիցի լոյսը» տպագրուելուց յետոյ վաճառքի չի հանւում: Յայտնի էր, որ այդ արուել էր խօսքի իսկ կարգադրու-*

digitised by A.R.A.R.@

թեամբ։ Եւ ի՛նչ, նա չշփոթուեց, չկարմրեց, հանգիստ ասաց. «Ես դեռ չեմ կարդացել, ծանօթ չեմ գրքին… կը կարդամ… եւ… հարցը կը լուծենք»։ Մենք ապշահար նայեցինք իրար, զգացինք, որ գրքի մի օրինակը, ամէն տողի տակ իր ձեռքով, կարմիր մատիտով ընդգծած, պահուած է սէյֆում, ցոյց է տուել ոմանց, փորձել հրահրել, որ հանդէս գան գրքի դէմ։ Բարեբախտաբար գրողների մէջ չէր գտնուել մէկը, որ յանձն առնէր կամակատարի դեր…։ Բացայայտ այդ սուտը լուռ կուլ տալով, նա զգաց, որ այդպէս էլ լինելու է, իր ձեռքերն ազատ էին, մերը կապած։ Ինքը իր առանձնասենեակի չորս պատի մէջ փակուած, վերցնում էր հեռախօսը եւ հրատարակչութեան պետին կարգադրում՝ կանգնեցնել այսինչ գրքի տպագրութիւնը, եւ հրատարակչութեան պետը հլու-հնազանդ անում էր ասուածը, իրաւունք չունենալով նոյնիսկ հրապարակել, թէ ումից եկաւ կարգադրութիւնը։ Աթոռի ճորտը իր ասածի եւ արածի համար հաշուետու չէր ոչ մէկի առաջ, նա վերահսկողութիւնից դուրս էր գտնւում, նա վախենում էր միայն գաղափարական ահաբեկիչներից, որոնք, իրօք, հանգիստ չէին տալիս նրան, քրքրում էին լոյս տեսած գրքերը, որ գաղափարական «վրիպումներ» գտնեն ու գրե՛ն, գրե՛ն, գրե՛ն…։ Աթոռի ճորտը, ճորտն էր նաեւ այդ ահաբեկիչների, եւ «ղեկավարւում էր» նրանց ուղեղով, միայն թէ «մի բան դուրս չգայ», աթոռը չկորցնի։

Ես ուզում եմ հաւատալ նոյն այդ աթոռին նստած մէկ ուրիշին, որ գաղափարական ահաբեկիչների [illegible] գրոհներից այնքան էր յոգնել, որ, երբ եկաւ ժամանակը այդ աթոռը թողնելու եւ նստելու մէկ այլ համազօր, ի հարկէ, աթոռի, նա խնդրեց գաղափարական աշխատանքի ասպարէզից առհասարակ հեռացնել իրեն, տանել, տեղն էլ տալ, թէ ում…։ Չմերժեցին, տարան՝ իբրեւ հատուցում ահաբեկիչների ձեռքին քաշած տառապանքի։

Ահա թէ ինչեր ծնուեցին հրապարակայնութեան բացակայութիւնից, որից օգտուեցին կեղծարարներն ու ստախօսները…։ Երանելի վիճակի մէջ էին նրանք, եւ նրանց համար այսօր հեշտ չէ հրաժարուել այդ երանութիւնից, սովորոյթ ուժով նրանք շարունակում են գործել առաջուայ պէս եւ նոյն սովորութեան ուժով ամէնից բարձր աղաղակում են՝ վերակառուցում, հրապարակայնութիւն, իրերն իրենց անունով կոչել, կոչել սուտն ու կեղծիքը…։ Նրանք խութերի պէս կանգնած են երկրի կենաց ու մահու պայքար հանդիսացող, օդի ու ջրի պէս անհրաժեշտ, նորացման, ինքնամաքրման, առանց այն էլ դժուարին, դժուարագոյն ճանապարհին։

Դժուարագոյն, այո՛, որովհետեւ իւրաքանչիւրիս մէջ նստած է մեր իսկ դէմ գործող, ուժեղ կամ պակաս զօրաւոր մի թշնամի, որ սովորութեան ուժով մեզ տանում է հին, դատապարտուած ճանապարհով, սովորութեան ուժով թոյլ ենք տալիս, որ խանութ մտնելիս մեզ խաբեն հաշուի մէջ, կշռքի մէջ…։ Օրուայ ընթացքում, քանի՛ անգամ, տասից ինը եթէ սուտ, ապա մէկը գուցէ եւ ճիշդ, լսում ենք՝ «Այսինչն այսքան տուեց ու նշանակուեց այսինչ պաշտօնին», «Այսինչն այս յանցանքի մէջ բռնուեց ու այսքան տուեց, ազատուեց»։ Բուհերի ընդունելութեան քննութիւնների ընթացքում, փողոցներում, տներում, հիմնարկներում, բարձրաձայն, հանգիստ խօսում էին. «Այսինչ ինստիտուտ ընդունուելն այս արժէ, այնինչ ֆակուլտետը ընդունուելն այն արժէ»։ Չէ՞ն վիրաւորւում արդեօք այն դասախօսները, որոնք գտնւում են իրենց բարձրութեան վրայ…։ Հաւանաբար վիրաւորւում են, բայց սովորութեան ուժով հանդուրժում են իրենց կողքին անարժան, անմաքուր, դրամին ճորտացրուածների գոյութիւնը։

Այսօր էլ շարունակւում են փակ դռների յետեւում լուծուել հարցեր,

digitised by A.R.A.R.@

որոնք համաժողովրդական, համակողմանի քննութեան առարկայ պէտք է լինեն։ Եւ կամ շարունակում են չլուծուած մնալ հարցեր, որոնք վաղուց լուծուած պէտք է լինէին, այդ թւում մի շարք գրողների գրական ժառանգութեան հարցերը, ժառանգութիւն, որ մեր գրականութեան մնայուն արժէքներից են, մեր գրականութեան անբաժանելի մասն են կազմում։

Այսօր էլ փակ դռների յետեւում բազմաթիւ անպարկեշտութիւններ են արւում, տարակուսանք ու զարմանք յարուցելով։

Հրապարակայնութեան բացակայութեան պայմաններում, տարիներով բարձր դիրքերի վրայ գտնուողների անուններ ենք լսում, որոնց անհատականութեան մասին ոչ մի պատկերացում չունենք, անուններից զատ ուրիշ չգիտենք, անհասկանալի է, թէ ինչ լծակների շարժումով են հրապարակ իջել, տարիների ընթացքում նրանց ո՛չ կազմակերպչական ձիրքն է դարձել տեսանելի, ո՛չ անհրաժեշտ առանձնայատուկ խելքը, տեսնում ենք նրանց ամբիոնի մօտ, կարդում են նոյն շաբլոնով ձեւաւած ճառը, ինչ որ նախորդը եւ յաջորդը կարդացածն էր։ Դէմք ունեցող մարդիկ մի՞թէ կարող են այդքան իրար նման ու գորշ լինել։

Գործիչին պէտք է տեսնենք իր դիմագծերով, ճանաչենք, տարբերենք միմեանցից, սիրենք…

Սովորութեան ուժի դէմ խօսելով, ինքս էլ այժմ այս յօդուածը գրելիս շարունակ վերահսկում, բռնանում եմ ինձ վրայ, որ սխալ բան ասած չլինեմ։

Իսկ մեր աւանդն ամէնից շատ քանդել է սխալուելու վախը։

Իմաստուն Դերենիկ Դեմիրճեանից բազմիցս լսել եմ՝ «սխալուելու իրաւունք տուէք», այսինքն՝ «մտածելու իրաւունք տուէք»։ Ափսո՛ս, որ նա այսօր մեզ հետ չէ, որ տեսնէր ո՛չ միայն թոյլ է տրւում, այլեւ պահանջւում է մտածել, կարծիք ունենալ, կարծիքներ փոխանակել, այդ ճանապարհով միայն երեւան կը գան ճիշդն ու սխալը, իւրաքանչիւրի մտքի ուժն ու տկարութիւնը։

Բայց սա ինչ կախարդանք է, սա ինչ հիպնոտուած վիճակ է, որից մեր հանրապետական մամուլը, ինչպէս որ պէտք է դուրս գալ չի կարողանում, իրաւացիօրէն արժանանալով միութենական մամուլի կշտամբանքին։

Միութենական մամուլում երկրի գրեթէ բոլոր խոշորագոյն գրողների, արուեստագէտների, գիտնականներից շատերի լիցքացած խօսքը հնչեց եւ շարունակում է հնչել նորանոր ուժով, արտայայտելով մարդկանց հոգում տարիներ կուտակուած դառնութիւնները։

Մենք, հայ գրողներս, քիչ դառնութիւններ չունենք մեր հոգում ամբարուած, ո՞վ մեզանից յիրաւի չի ձաղկուել, ոչ մէկ անգամ, այլ բազմիցս։

Ի՞նչ են մեզ կեանքին մերձենալու համար ձաղկել, եւ միաժամանակ յայտարարել, թէ կեանքը չենք ճանաչում։ Պատերազմի ահեղ տարիներին ամբիոններից յայտարարւում էին, թէ հայ գրողները արագ են գրում, այն ժամանակ, երբ մեր գրականութիւնը իւրայատուկ վերելք էր ապրում, երբ մէկը միւսի յետեւից գրքեր էին գրւում հայրենասիրական, այժմ արդէն դասական ճանաչուած երկեր՝ «Վարդանանք», «Պապ թագաւոր», «Արա Գեղեցիկ»… եւ համանուագն էր հնչում ասպարէզ իջած բանաստեղծների եւ գրողների երիտասարդ մի սերունդի՝ Շիրազ, Գուրգէն Մահարի, եւ այլ անունների, որոնք այսօր երիտասարդական աւիւնով շարունակում են ստեղծագործել։

Ցաւօք, մեր գրականութեան նկատմամբ այսօր էլ վերաբերմունքն արդար չէ, ինչ-ինչ պատճառներով, միութենական հարկաւոր հնչեղութիւնը չի ստացել, պատելով ազգային գրողների միութենական վերլին համագու-

digitised by A.R.A.R.@

*մարում միութեան նախագահ Մարկոսի եւ վերջերս միութեան առաջին քարտուղար Կարպոսի կարդացած զեկուցումներից, որոնց մէջ մեր գրականութիւնը չի ներկայացուած ըստ արժանւոյն: Բայց մենք գիտենք, որ միութիւնով մէկ չափ տուած չեն այնպիսի բանաստեղծներն ու գրողները, որպիսիք մեր գրականութեան առաջատար ուժերն են:*

*Ամէն մի գրող եւ գրականութիւն, այո՛, առաջին հերթին, կոչուած է ծառայելու իր ժողովրդին:*

*Այսօր ժամանակը գործում է գրողի եւ գրականութեան, երկրի եւ ժողովրդի օգտին:*

*Այսօր, առաւել, քան երբեւէ, հարկաւոր է, հետեւելով չարենցեան պատգամին,*

Ժամանակի շունչը դառնալ...

*ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆԵԱՆ*

*19 Յունիսի 1987*

*(«Գրական թերթ», թիւ 25, 1987)*

digitised by A.R.A.R.@

# ՋՈՀՈՒԱԾ ԵՐԳԵՐ

★★★★★

Պոետներից շատ երգ է սպանուել
Եւ անհետացել եւ բարձրացել խաչ,
Ընկել իշխողի կրունկների տակ
Եւ զինաթափուել մատնութեան առաջ:

Կրակն է յաճախ ընթերցել նրանց,
Բորբոսը՝ սերտել բառերի ոգին
Եւ առնէտների ակռաները են սուր
Փորձարկել խօսքի կարծրութիւնը հին:

Իսկ փոշին, փոշին խոր նկուղների,
Որպէս դահիճի փէշը թաւշախաւ,
Այնպէս է ծածկել մատեանների դին,
Որ յարութիւն իսկ չերազեն բնաւ:

Յոբելեաններ ենք տօնում ուշահաս,
Յիշատակն յարգում զոհուած քերթողի,
Սակայն ինչո՞ւ ենք մոռանում սգալ
Մորթոտուած երգի կորուստը լեղի:

Մոռացութեան դէմ արցունքը պարզիր,
Նրա ցոլանքի դրօշով կապոյտ
Ջնջիր պետական վախերը անցեալ
Եւ սրբագործիր ներկան մաքրագիւտ:

Թող որ ապագան մեր աչքերից բարկ
Առնի արցունքի աղը բիւրեղեայ
Եւ ոչ՝ հիմների շիրան մածուցիկ,
Զարկելու հզօր ու փքուն ծնծղայ:

Ողորմի ասենք երգերին կորած,
Երգերին զոհուած՝ հազար ողորմի:
Թող այս անամոք բառերը դաջուեն
Սրբազան խղճի երկնահաս որմին:

ԷԴՈՒԱՐԴ ՄԻԼԻՏՈՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@



## ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

*Բանաստեղծ, հրապարակագիր, թարգմանիչ եւ թատերագիր Վահագն Դաւթեան ծնած է 15 Օգոստոս 1922ին, Արեւմտեան Հայաստանի Արաբկիր քաղաքը։ 1926ին ծնողքին հետ կը հաստատուի Երեւանի Արաբկիր արուարձանը։ 1941–1943 կը ծառայէ Կարմիր բանակին եւ կը մասնակցի Հայրենական մեծ պատերազմին։ 1948ին կ'աւարտէ Երեւանի պետական համալսարանի բանասիրական հիմնարկի հայկական բաժինը։*

*1954–1959 ժամանակաշրջանին Վ. Դաւթեան մաս կը կազմէ «Աւանգարդ» թերթի խմբագրութեան, իսկ 1954–1959՝ «Գրական թերթ»ի խմբագրութեան։ 1962–1965 տարիներուն կը գործէ իբրեւ պատասխանատու խմբագիր «Գրական թերթ»ի, իսկ 1965–1967՝ «Հայրենիքի ձայն»ի։ 1967ին կը նշանակուի Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահի տեղակալ։*

*Վահագն Դաւթեան ցարդ հրատարակած է 25 անուն գիրք, որոնց գլխաւորներն են՝ «Թոնդրակեցիներ», «Ամառային ամպրոպ», «… Բայց ծնուեցի», «Գինու երգը», «Ծուխ ծխանի», «Ասք ոսկրոյ եւ սրի», «Անկէզ մորենի», «Կապոյտ գիրք», «Լոյսն իբրեւ հաց» եւ «Լոյս առաւօտի» անուն քերթողագիրքերը։*

*Վ. Դաւթեան թարգմանած է 15 անուն հատորներ, իսկ Գ. Սունդուկեանի անուան թատրոնի դրամատիքական թատրոնը բեմադրած է իր «Մհերի դուռը» եւ «Միրանի ծառը» թատերախաղերը։ Վ. Դաւթեան թարգմանուած է ռուսերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի, սպաներէնի, լեհերէնի, չեխերէնի, ուկրաիներէնի, վրացերէնի, պարսկերէնի եւ այլ լեզուներու։*

Ո՞վ հետաքրքրուեց, առնենք, թէ ինչ «պարականոն» գործեր են մնացել Ա. Իսահակեանի, Դ. Դեմիրճեանի, Ստ. Զորեանի, Գ. Մահարու, Ե. Չարենցի, Պ. Սեւակի եւ այլոց արխիւներում։

Եւ եղան տարիներ, երբ նացիոնալիզմի պիտակ դրուեց անգամ մեր ժողովրդի ազգային – ազատագրական պայքարի վրայ, մի բան, որ բովանդակազրկեց, եղծեց 19րդ դարի եւ 20րդ դարի սկզբի մեր պատմութիւնը…

Քիչ չեն անպիտանները, որ բարձր պաշտօնների նշանակուելով, դառնում են այնքան անտարբեր, որ կարծես պաշտօնի հետ իրաշխով իրենց է շնորհուել աշխարհի գիտելիքների ամբողջ պաշարը։

digitised by A.R.A.R.@

Վ. ԳԱԻԹԵԱՆ

# ՁԱՅՆ ԲԱԶՄԱՑ՝ ՁԱՅՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Նամակ եմ ստացել Թղթի վրայ, «Գրական թերթ»ի խմբագրութեանը ուղղուած եմ յօդուած գրել մեր երկրում կատարուող յիշուելի յեղափոխական, յիշուելի կենսարար իրադարձութիւնների՝ վերակառուցման, հրապարակայնութեան, որ լոյսը ծաւալող գեղեցկագրական մասին ու երկմտում եմ…: Կարողանա՞մ պիտի արդեօք այդ ամէնի մասին խօսել լիաձայն, արդեօք հենց ինքս հոգեբանօրէն լիովին պատրաստ ե՞մ այն ամբողջ հետ, որով տարիներ շարունակ լցուած է եղել մեր մթնոլորտը եւ որն, ինձանից անկախ, մարմնիս ծակոտիներով ներթափանցել է իմ մէջ ու անտեսանելիօրէն բնաւորուել: Չէ՞ որ ես երկար տարիներ խմբագիր եմ եղել ու թէեւ անցկացրել «անհարմար», «անհարկի» (չասելու համար «համարձակ») յօդուածներ ու նիւթեր տպագրելու համար յաճախ եմ կանգնել համապատասխան ատեանների առաջ, բայց, այնուամենայնիւ, իմ մէջ էլ կամայ թէ ակամայ նստած է եղել ու հաւանաբար դեռ նստած է հոգեբանական գրաքննիչը, Մայակովսկու խօսքերով ասած, «խայտառակ խելամտութիւնը»…

Ամէնից դժուարն, այո՛, հենց այդ ներքին գրաքննիչից, այդ «խայտառակ խելամտութիւնից» ազատագրուելն է, որ երեւի ժամանակ ու հոգու դժուարին աշխատանք է պահանջում: Բայց վերյիշելով, որ անգամ այս օրերին տանձրին խմբագրութիւններում դեռ շարունակում են «խմբագրել» ու կրճատել նաեւ իմ, հին խմբագրիս, յօդուածներն ու ելոյթները, մտածեցի, որ հաւանաբար ինչ-որ չափով կարողացել եմ ազատագրուել ներքին գրաքննիչից եւ համարձակութիւն առայ գրելու այն յօդուածը, խօսելու միայն մի քանի խնդիրների ու ինձ յուզող հարցերի մասին:

Միութենական մամուլում (որն ի դէպ վերջերս այնքան հետաքրքիր, այնքան համարձակ ու պայծառ է դարձել, որ չես հասցնում ամէն ինչ կարդալ) յաճախ է ընդգծւում այն միտքը, որ վերակառուցման, հրապարակայնութեան, դեմոկրատացման արդիւնքներն առայժմ առաւել ակնյայտ են մեր ժողովրդի հոգեւոր, մշակութային կեանքում: Եւ դա հասկանալի է. եթէ լճացման տարիների հետեւանքով ժողովրդական տնտեսութեան մէջ կուտակուած բացասական երեւոյթները յաղթահարելու համար նիւթական մեծ միջոցներ ու առաւել երկար ժամանակ է պահանջւում, ապա մշակութային կեանքը համեմատաբար արագ վերակառուցելու համար բաւականին շատ նախադրեալներ ունէր: Գրողների արխիւներում, խմբագրութիւնների ու հրատա-

digitised by A.R.A.R.@

րակչութիւնների պահարաններում, ի պատիւ գրողների եւ յամօթանս հրատարակիչների, կուտակուել էին այս կամ այն պիտակով ու մեղադրանքով խարանուած ու փակի տակ դրուած ճշմարտացի գործեր, որ պէտք պարզապէս հանուէին ու յանձնուէին տպագրական գրին: Հանուեցին ու տպագրուեցին կամ շարունակում են հանուել ու տպագրուել: Չեմ ուզում թուել դրանք, որովհետեւ ամէնքին են յայտնի: Կինոդարաններում տարիներ շարունակ փոշոտում էին արգելուած կինոնկարների սկաւառակներ, որ շարժման մէջ դրուեցին, արտացոլուեցին ներքին եւ միջազգային էկրաններում ու բարձր մրցանակներ բերեցին: Գրական ու մշակութային ժառանգութեան շատ օղակներ, դարձեալ այս կամ այն պիտակով խարանուած, պոկուած էին ընդհանուր շղթայից ու դուրս մղուած ժողովրդի հոգեւոր կեանքից: Այդ օղակները եւս բերուեցին ու դրուեցին իրենց տեղը: Դարձեալ չեմ ուզում անուաներ թուել, քանի որ դրանք էլ են լայնօրէն յայտնի: Ռուս մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչների լայնախոհութիւնը, ճշմարտացիութիւնը, խիզախութիւնը, արթուն խիղճը գործեց արագ ու անվրէպ...

Իսկ ի՞նչ արեցինք մենք...

Համարեա՛ թէ ոչինչ:

Ո՞վ հետաքրքրուեց, ասենք, թէ ինչ «պարականոն» գործեր են մնացել Ա. Իսահակեանի, Դ. Դեմիրճեանի, Ստ. Զօրեանի, Գ. Մահարու, Յ. Շիրազի, Պ. Սեւակի եւ այլոց արխիւներում: Ոչ ոք: Չխօսելով Իսահակեանի ազգային-ազատագրական պայքարին նուիրուած մի շարք բանաստեղծութիւնների մասին, որոնք ժամանակին մէկ անգամ տպագրուելուց յետոյ այլեւս լոյս աշխարհ չեն եկել, կ'ուզէի յիշեցնել, որ իր կեանքի վերջին տարիներին Իսահակեանը մի ցնցող բանաստեղծութիւն է գրել Սեւանի սպառնացող ողբերգութեան մասին, հնչեցրել տագնապի առաջին ահեղ զանգը, որի ղօղանջները սակայն խլացուեցին ու չհասան ժողովրդին:

Ո՞վ գիտէ, եթէ ժամանակին տպագրուէր այդ բանաստեղծութիւնը, ուր նկարագրւում է, թէ Սեւանի այնքան շռայլօրէն բացուած երակը ի՞նչ արհաւիրքներ է բերելու Հայաստանին, եթէ հրապարակայնութիւնը յարգի լինէր, եւ ժողովրդին ողջ ճշմարտութիւնն ասուէր Սեւանի մասին, գուցէ Արարատեան դաշտի գիւղացին լսէր իր մարգարէ որդուն, լսէր տագնապի ձայնը եւ Սեւանից հոսող ջրի իւրաքանչիւր կաթիլի տէրը դառնար, թոյլ չտար, որ ջուրն այնքան յաճախ անօգուտ հոսէր ու թափուէր Արաքսը, մի բան, որ շարունակւում է մինչեւ օրս...

Եւ ո՛չ միայն դա: Գիտեմ, կան անտիպ գործեր, որոնց մէջ պատմութիւն է՝ ուսանելի ո՛չ միայն այսօրուայ, այլեւ՝ վաղուայ համար: Պատմութիւն, որ մեր կուտակուած փորձն է, հետեւաբար՝ մեր աջակիցը: Բայց ո՞ւր է. ինչո՞ւ չհրատարակուեցին, ասենք, Գ. Մահարու, Յ. Շիրազի, Ս. Խանզադեանի, Բ. Ուլուբաբեանի անտիպ գործերը: Եթէ նոյնիսկ այդ գրքերում որոշ վիճելի բաներ կան, ոչինչ, թող տպագրուեն, թող ուրիշներն էլ իրենց կարծիքներով, տեսակէտներով հանդէս գան: Ճշմարտութիւնն ինչպէ՞ս է ի յայտ գալիս, եթէ ոչ տեսակէտների բախումից: Չէ՞ որ հենց վերջերս ՍՄԿԿ կենտկոմում տեղի ունեցած խորհրդակցութեան ժամանակ Մ. Ս. Գորբաչովն ընդգծեց.

«...Պէտք է բացայայտօրէն ասել ամէն ինչ, թէեւ ես կարծում եմ, որ բանավէճերի կուլտուրան պէտք է բարձրացնել: Եւ գանգատներով չվազել կենտկոմ, ինչպէս առաջ էր: Կայ խմբագիր: Կայ քաղաքական գիծ, կան սկզբունքներ, կան պահանջներ, կան չափանիշներ, յանուն սոցիալիզմի, յանուն վերակառուցման, ի շահ ժողովրդի՝ հենց սրանով պէտք է ղեկավարուել, հանդէսների աշխատանքներում»:

Շատ յստակ ցուցում: Այո՛, ասենք ամէն ինչ ու վիճենք: Եւ ոչ թէ ասե-

digitised by A.R.A.R.@

*լեզը գնենք պահարան եւ բանալին նետենք ծով, մոռանալով, որ այն ի վերջոյ ինչ-որ ձկան փորից դուրս կը գայ, ինչպէս լինում է հեքիաթներում, իսկ հեքիաթը իմաստութիւններից մեծագոյնն է...*

*Կինոյի՞ մասին...*

*Կինոյի մասին, դժբախտաբար, ասելիք չունեմ, որովհետեւ որքան ինձ յայտնի է, մեր կինոդարանում ոչ մի «պարականոն» ժապաւէն չկայ: Վերջերս մէկը նոյնիսկ հպարտանում էր այդ փաստով, մինչդեռ ամաչենք պիտի մեր համարձակութեան պակասի, կինոարուեստի միջոցով ճշմարտութեան որոնման ճանապարհին ոչ մի լուրջ քայլ չանելու մեր «խայտառակ խելամտութեանը» համար:*

*Իսկ մեր մշակութային շղթայից այլազան պատճառաբանութիւններով հանուած եւ մինչեւ օրս իրենց տեղը չգտած օղակնե՞րը...: Բայց այդ մասին խօսելուց առաջ ես ուզում եմ քաղուածքներ բերել Վ. Ի. Լենինի 1921 թուին* «Պրաւդա» *թերթում տպագրուած, այնուհետեւ նրա երկերի հատորների մէջ մտած* «Տաղանդաւոր գրքոյկ» *յօդուածից.*

«Դա համարեա՛ խելացնորութեան չափ զայրացած սպիտակգուարդիական Արկադի Ավերչենկոյի *«Տասներկու դանակ յեղափոխութեան թիկունքին»* գրքոյկն է: Փարիզ. 1921: Հետաքրքրական է դիտել, թէ ինչպէս եռման աստիճանի հասած ատելութիւնն այդ բարձրատաղանդ գրքոյկի մէջ առաջ է բերել թէ՛ զարմանալի ուժեղ եւ թէ զարմանալի թոյլ տեղեր»...: *«Հրապուրիչ ատելութիւնը Ավերչենկոյի»* պատմուածքները երբեմն, եւ մեծ մասամբ, ապշեցուցիչ կերպով վառ է դարձնում: Կան ուղղակի զերազանց բաներ»...

*Սեղմ, բայց համապատասխան վերլուծութեան ենթարկելով գրքոյկը, նշելով նրա ուժեղ եւ թոյլ էջերը, հմուտ գրականագէտի խորաթափանցութեամբ բացայայտելով այդ ուժի ու թուլութեան պատճառները, Լենինը այսպէս է աւարտում իր յօդուածը.*

«Մի քանի պատմուածք արժէ վերահրատարակել: Տաղանդը պէտք է խրախուսել»:

*Լենինի հանճարին վայել լայնախոհութիւն ու իմաստութիւն:*

*Հնարաւո՞ր է, արդեօք, աւելի յստակ, աւելի դիպուկ ու պարզորոշ ձեւակերպել մեր գաղափարական հակառակորդների կամ ոչ-համակիրների գեղարուեստական ստեղծագործութիւնների նկատմամբ մեր ունենալիք դիրքորոշման հարցը: Կարծում եմ՝ ոչ: Ամէն ինչի սպառիչ պատասխան է տրուած.* «Տաղանդը պէտք է խրախուսել»...

*Բայց եթէ Լենինն այսպէս էր մտածում գաղափարական պայքարի ամենասուր տարիներին, հապա ինչի՞ց ենք վախենում մենք այսօր:*

*Տուած հարցերիս պատասխանն, անշուշտ, ունեմ: Եւ այդ պատասխանը կարելի է ձեւակերպել ընդամէնը երկու բառով՝ մտավախութիւն եւ ինքնապահովագրութիւն...: Ինքնապահովագրութիւն այն մարդկանցից, որոնց ուղեղը կաղապարուելով 30–40-ական թուականների մթնոլորտում, ոչ մի լուսանցք չի թողել, որ այնտեղ մուտք գործի յուսոյ գէթ նոր մի ճառագայթ: Եւ ո՛չ միայն նրանցից, այլեւ՝ այն գրպարտիչներից, որոնց «գաղափարական» ահաբեկչութիւնը սեփական ոչնչութիւնը պաշտպանող վահան ու միջոց է:*

*Լուսահոգի Հրաչեայ Քոչարն ինձ այնպիսի մի պատմութիւն արեց. այն օրերին, երբ ինքը հակառակութեան մէջ է եղել մեր հանրապետութեան ղեկավարներից մէկի հետ, մի տխրահռչակ գրպարտիչ մօտեցել է նրան ու այսպիսի խորհուրդ տուել.* «Իսկ դու ինչո՞ւ Մոսկուա չես գրում, որ նա նացիոնալիստ է»: «Բայց նա բոլորովին էլ նացիոնալիստ չէ, ինչպէ՞ս գրեմ»...: Դա

digitised by A.R.A.R.@

ի՞նչ նշանակութիւն ունի, դու գրիր, եթէ չհաստատուի էլ, մէկ է, կասկածը կը մնայ, մէկ է, կը վարկաբեկուի, ու ձեզանից կը վախենան»...

*Այսօր էլ կան այն տարիներից մեր օրերը հասած նոյն տխրահռչակ գրպարտիչները, այսօր էլ գործում են նոյն ձեւերով, կան նաեւ նրանց ժառանգները, կարծր ուղեղներով մարդիկ, որ գլխի էլ չեն ընկնում, թէ իրենց ժամանակը սպառուած է եւ շարունակում են մարդկանց ահաբեկել: Բայց դժբախտաբար, մեր ղեկավար աշխատողների, մեր հրատարակիչների, խմբագիրների մէջ էլ դեռ կան մարդիկ, որ լրջօրէն վախենում ու զգուշանում են նրանցից, իրենց հերթին մոռանալով, որ մեր երկրում օրէցօր լայն ծաւալ ընդունող հրապարակայնութիւնն ու ու դեմոկրատիան իրենց համար ամուր եւ յուսալի գրաւականներ են:*

*Մէկընդմիշտ պէտք է ամէնքին եւ յատկապէս նրանց, ովքեր հակում ունեն հաճոյքով ականջ դնելու այդ գաղափարական «ահաբեկիչներին», հասկացնել այն ճշմարտութիւնը, որ ե՛ւ հայ ժողովրդի, ե՛ւ նրա մտաւորականութեան համար նացիոնալիզմը միշտ էլ խորթ ու անյարիր է եղել...: Եւ դա ոչ թէ նրանց ինչ-որ իւրայատուկ բացառիկութեամբ է բացատրւում, այլ թելադրուած է մեր ամբողջ դժուար ու դաժան պատմութեամբ: Մեր ժողովրդի ձեռքը միշտ էլ պարզուած է եղել բարեկամական սեղմումի համար...: Բայց միշտ չէ, որ դիմացինն ընդունել է դա, ընդհակառակը, շատ յաճախ եաթաղանով են հատել այդ ձեռքը...*

*Եւ եղան տարիներ, երբ նացիոնալիզմի պիտակ դրուեց անգամ մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վրայ, մի բան, որ բովանդակազրկեց, եղծեց 19րդ դարի եւ 20րդ դարի սկզբի մեր պատմութիւնը, մեզ ներկայացրեց իբրեւ թուրքական բռնապետութեան լուծը հեզ ու հլու կրած, խեղճ ու կրակ, ըմբոստութեան կայծից իսկ զուրկ ժողովրդի: Մինչդեռ այդ պայքարի հերոսական էջերը, նրա հերոսների լեգենդանման կեանքն ու գործը, որ փառաբանուել էր բազում ժողովրդական երգերով, նոր սերնդի համար քաղաքացիական պարտքի ու բարձր բարոյականութեան դասեր պիտի լինէին: Պատմութեան մոռացութիւնը ծանր հիւանդութիւն է, որ խեղանդամում է հոգին, այնտեղից դուրս մղում սրբացած աւանդութիւնների, բարոյական բարձր ու ստուգուած արժէքների կենարար ուժը եւ ուզածդ ժողովրդի շատ արագօրէն կարող է վերածել մի անկազմակերպ, սպառողական հոգեբանութեամբ ապրող, հայրենի հողի, մայրենի լեզուի նկատմամբ անտարբեր ամբոխի:*

*Եւ երիցս փա՛ռք մեր կառավարութեանը, որ Ծիծեռնակաբերդի բարձունքին վեր խոյացրեց մեր մեծ ողբերգութեան, մեր ցաւի ու տառապանքի, մեր հերոսական պայքարի ու վերածնութեան յուշարձանը, մի կոթող, որ մեր ամբողջ պատմութիւնն է խորհրդանշում: Անհնար է որեւէ չափ ու կշռով որոշել այդ յուշարձանի բերած նպաստը մեր ժողովրդի հոգեւոր կեանքին: Անտեսանելի, անշօշափելի նպաստ է դա, քանի որ նիւթական չէ, բայց բաւական է ամէն անգամ Ապրիլի 24ին քայլել դէպի այդ յուշարձանը ձգուող թափօրի հետ, զգալու, թէ այդ վեհ արարողութիւնն ինչպիսի խորին խորհրդով է համակում իւրաքանչիւրին: Կայ նաեւ վիճակագրութիւն, ըստ որի աւելի քան միլիոնանոց Երեւանում այդ օրը համարեա՛ ոչ մի հակահասարակական, ոչ մի քրէական արարք չի կատարւում:*

*Եւ ահա մեր դարաւոր թշնամին, մեր մեծագոյն ողբերգութեան հեղինակը, մեր պատմական հողերն ու նրանց հետ մեր սրբազան Արարատը սեփականացրած թուրքական ռեակցիան տեսնելով, որ մենք չենք մոռացել իր ոճրագործութիւնը, որ թէեւ կիսաձայն, բայց խօսում ենք այդ մասին, սկսեց միլիոններ նետել աշխարհի պրոպագանդիստական մեքենայի երախը, կաշառել*

digitised by A.R.A.R.@

պետական անձանց, ծախու գրչակների՝ հերքելու լոյսի պէս յստակ ճշմարտութիւնը, որ, աւա՜ղ, տարիների մեր լռութեան հետեւանքով աշխարհում հիմա քիչերին է միայն յայտնի: Ծայր առաւ ստայօդ գրքերի, յօդուածների, կինոնկարների մի փարար հեղեղ, որի նպատակն է ապացուցել, թէ 1915ին ո՛չ միայն հայկական ցեղասպանութիւն չի եղել, այլ, ընդհակառակը, հենց հայերն իրենք են թուրքերի ցեղասպանութիւն կազմակերպել...: Եւ ո՛չ միայն դա, սկսեցին սեփականացնել նաեւ մեր պատմութիւնը, մեր ինքնութեան դրոշմով կնքուած մշակոյթը, հասնելով այնտեղ, որ ուզեցին ապացուցել, թէ իրը իրենք են Վանի թագաւորութեան, այսպէս կոչուած Ուրարտուի, տէրն ու ժառանգորդները: Բայց դա նոր երեւոյթ չէ թուրքական պատմագրութեան ու քաղաքականութեան մէջ: Ահա թէ ինչ է պատմում ռուս նշանաւոր գրող Լեւ Նիկուլինը, որ 1933 թուին մի պատուիրակութեան կազմում այցելել է Թուրքիա եւ ընդունուել Քեմալի կողմից: Նախ մտնելով նրա աշխատասենեակ-դրադարանը, պատուիրակութեան անդամները նրա պատերին խեթական հնագարեան քանդակների մեծադիր լուսանկարները են տեսել: «Ու,– գրում է Նիկուլինը,– սկսուեց երկժամեայ զրոյց Միջերկրական ծովի աւազանի, Յունաստանի, Ստամբուլի թուրքական մշակոյթի յուշարձանների մասին, յուշարձաններ, որ, Քեմալի կարծիքով, նախորդել են յունա-լատինական անտիկ մշակոյթին եւ հին յունական ու լատինական լեզուների կազմաւորմանը»:

Հաւանաբար հիւրընկալութեան կանոնները պատուիրակութեան անդամներին, որոնց մէջ է եղել նաեւ աշխարհի ամբողջ պատմական անցուդարձին քաջատեղեակ մեծն Մառը, թոյլ չէին տուել թուրքական պետութեան ղեկավարին ասելու, որ դա ո՛չ միայն անհեթեթութիւն է, այլեւ՝ մշակութային աւազակութիւն, քանի որ միջնադարի գիրքերի աշակերտին իսկ քաջ յայտնի է, որ թուրքական քոչուոր ցեղերը Փոքր Ասիա եւ Միջերկրական ծովի աւազան են ներխուժել ընդամէնը ուշ միջնադարում: Եւ եթէ թուրքական զաւթիչները որեւէ առընչութիւն էլ ունեցել են այդ հին մշակոյթների հետ, ապա դա այդ մշակոյթների հետքերը հետեւողականօրէն ոչնչացնելն է եղել...: Վկան՝ կիսաւեր Պարթենոնը, վկան՝ մեր Ցկոնքի տաճարների անհետացած համայնքը, վկան՝ իմ ծննդավայր հին Արաբկիրի եռայարկ եկեղեցին, որի հիմքերն են միայն մնացել (հիմքերն այնքան են ամուր, որ չեն կարողացել քանդել), վկան՝ հենց վերջերս Կիպրոսում տեսած յունական հնագոյն յուշարձանի յատակի սքանչելի խճանկարները, որոնցից թուրքական ռմբակիրների արշաւից յետոյ ծուէններ են մնացել, վկան՝ Հիւգոյի՝ աշխարհի յայտնի բանաստեղծութիւնը. «ԱՅՍՏԵՂԻՑ ԹՈՒՐՔՆ Է ԱՆՑԵԼ»...

Պատմութիւնը եղծելն ու կեղծելը, այո՛, Թուրքիայի պետական քաղաքականութեան բաղկացուցիչներից է եղել: Հենց վերջերս չէ՞ր, որ սովետական մամուլը հաղորդեց, թէ Թուրքիայում մի պատմաբան չորս ու կէս տարով բանտարկութեան է դատապարտուել միայն այն բանի համար, որ իր գրքում նշել է, թէ միջնադարում գոյութիւն է ունեցել Կիլիկիայի հայկական պետութիւն...

Բայց ի՞նչ ենք արել եւ ի՞նչ ենք անում մենք, այդ քստմնելի սուտն ու կեղծիքները հերքելու, աշխարհին (աւա՜ղ, կարճ է նրա յիշողութիւնը) ճշմարտութիւնն ասելու, մեր անհերքելի իրաւունքները պաշտպանելու համար:

Քիչ, շատ քիչ բան:

Այդ քչի մէջ են առաջին հերթին պիտի յիշատակել ակադեմիկոս Մ. Ներսիսեանի կազմած ու հրատարակած «Հայկական ցեղասպանութիւն» ստուար ու ծանրակշիռ հատորը, որ հրատարակուելով ու վերահրատարակուելով ռուսերէն, ռուս հասարակութեանը վերայիշեցրեց մեր մեծ ողբերգու-

digitised by A.R.A.R.@

թիւնը, յարուցելով նշանաւոր գրողների, գիտնականների, հրապարակախօսների սրտում, չգտած արձագանքը: Այդ քչի մէջ պիտի յիշատակեմ, աւա՜ղ, Մեզանից անժամանակ հեռացած Ջոն Կիրակոսեանի ուսումնասիրութիւնները, որոնք անհերքելի փաստաթղթերի ու վաւերագրերի վրայ յենուած, ապացուցում են պատմական ողջ ճշմարտութիւնը: Էլ ի՞նչ... Երեւի նաեւ մի քանի ուրիշ գործեր, որոնք, հիմնականում հայերէն տպագրուած լինելով, հանրապետութեան սահմաններից դուրս չեն եկել: Դժբախտաբար այդ քիչ արուածին չեն հետեւում նորերը. ժողովրդական առածով ասած, կարծես մազմանի աշկերտի նման յետ-յետ ենք գնում:

Մինչդեռ այնքա՜ն բան կարելի էր անել:

Որքան նպատակայարմար կը լինէր, օրինակ, եթէ մեր գիտական հիմնարկներն ու հրատարակչութիւնները միութենական համապատասխան հիմնարկների հետ համագործակցելով, հենց բնագրերով հրատարակէին, ասենք, Լեփսիուսի եւ Մորգենթաուի, Բրայսի եւ Ջորջի, Եանսենի ու Նանսենի, Լիբկնեխտի ու Կիրոսի, բազում ուրիշների յուշագրութիւնները, յօդուածները, ճառերը՝ 1915 թուի իրադարձութիւնների մասին, որոնցից ժամանակին սահմռկել է աշխարհը:

Յայտնի է, որ Սփիւռքում այդ իրադարձութիւններին վերաբերող հսկայական քանակութեամբ փաստաթղթեր ու վաւերագրեր կան կուտակուած զանազան արխիւներում եւ անհատների հաւաքածուներում: Ես եղել եմ լրագրող, հանգուցեալ Լեւոն Քէշիշեանի՝ ՄԱԿի աշխատասենեակում, եւ նա ինձ ցոյց է տուել յատակից մինչեւ առաստաղ ձգուող եւ մի ամբողջ սենեակ զբաղեցնող փաստաթղթերի կապոցներ, որոնք սպասում են հրապարակայնութեան: Կարծում եմ, որ Հայկական Բարեգործական ընկերութիւնն ունի այդ եւ շատ ուրիշ փաստաթղթեր աշխարհին ներկայացնելու միջոցներ, բայց հաւանաբար չունի դրանց գիտական հրատարակութիւնը իրականացնելու հնարաւորութիւն:

Նպատակայարմար չէ՞ր լինի, արդեօք, որ մեր գիտական հիմնարկները, սերտացնելով իրենց կապերը Սփիւռքի հետ, հետաքրքրուէին այդ կուտակուած նիւթերով, գտնէին համապատասխան միջոցներ՝ դրանք դարձնելու համաշխարհային ինֆորմացիայի սեփականութիւնը եւ հնարաւորին չափ փակէին կեղծիքի, ստի, զրպարտութեան ճանապարհները:

Բայց մեր կապերը Սփիւռքի հետ, դժբախտաբար, դեռ ցանկալի ծաւալն ու ուղղուածութիւնը չեն ստանում: Ճիշտ է, վաղուց են անցել այն տխուր ժամանակները, երբ մենք սփիւռքահայ բարեգործի դրամներով ամբողջ աւան էինք կառուցում, նախապէս կոչում նրա անունով, յետոյ ջնջում այդ անունը, ակնաբուժական կլինիկա էինք կառուցում, ճակատին բարեգործի անունն էինք դրոշմում, յետոյ քերում այն, բայց տառերի հետքը մնում էր ու դեռ մնում է, որպէս մեր ամօթալի արարքի խարան...

Անցել են, այո, այդ տխուր ժամանակները, մեր կառավարութեան նախաձեռնութեամբ սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէ է ստեղծուած, որ իր գոյութեան աւելի քան քսան տարիների ընթացքում հսկայական գործունէութիւն է ծաւալել, բայց այն տխուր օրերի հոգեբանական արձագանքները դեռ շարունակում են ապրել առանձին անձերի, դժբախտաբար, նաեւ առանձին պետական անձերի մէջ:

Ես ուզում եմ պատմել մի փաստի մասին, որ վերջերս զարմացրեց, ու զայրացրեց առնուազն մի հինգ հազար հոգու՝ հայրենիքում ու հաւանաբար մի այդքանի էլ Սփիւռքում:

Այդ փաստի հեղինակը ՀՍՍՀ կենցաղսպասարկման մինիստր Ս. Թումանեանն է, որ օրերս «իր դիմումի համաձայն» դարձաւ «նախկին»... Ես հեռուից

digitised by A.R.A.R.@

տեսնում եմ ընթերցողի քմծիծաղը. էլ ի՞նչ համարձակութիւն, երբ «նախիկ-ների» դէմ ես խօսում... Ընթերցողն իրաւացի է, բայց մասամբ, քանի որ խօսքս ոչ այնքան «նախիկների» դէմ է, որքան այնպիսի մի երեւոյթի, որը ո՛չ «իր դի-մումի համաձայն», ոչ էլ մա՛նաւանդ մեր երկրում ծաւալուած դեմոկրա-տիայի տրամաբանութեամբ չի ուզում «նախիկին» դառնալ»...

Ինչպէս յայտնի է, 20-ական թուականների կեսերին Ամերիկայում գոր-ծող Արաբկիրի հայրենակցական միութեան նախաձեռնութեամբ եւ Սովետա-կան Հայաստանի կառավարութեան լիովին աջակցութեամբ ու հովանաւորու-թեամբ ստեղծուեց Նոր Արաբկիր աւանը: Հայրենական պատերազմից յետոյ Երեւանն այնքան ընդարձակուեց, որ իր մէջ առաւ Նոր Արաբկիրը: Հայրե-նակցական միութիւնն իմանալով հանդերձ, որ Հայաստանն այլեւս նիւթա-կան օգնութեան կարիք չունի, բայց իր կապերը արաբկիրցիների հետ չխզելու համար, հոգու պարտքը համարեց հանդէս գալ նոր նախաձեռնութեամբ՝ օգ-նելու, որ Նոր Արաբկիրի տարածքում հիմնուի քիմիական մաքրման ֆաբրի-կա: Հիմնուեց: Աշխատողները հիմնականում արաբկիրցիներ էին, արաբկիր-ցի էր նաեւ տնօրէնը՝ Մարի Կերիբեկեանը: Եւ ահա Կերիբեկեանը թոշակի էր գնում: Դա համընկել էր ֆաբրիկայի հիմնադրման 25-ամեայ տարելիցին, եւ հանդիսաւոր երեկոյ էր: Երեկոյին ներկայ էր նաեւ մինիստրը: Շատերը ելոյթ ունեցան, ցանկութիւն յայտնեցին, որ նոր տնօրէնը դարձեալ արաբկիրցի լի-նի, որպէսզի չկտրուի կապը հայրենակցական միութեան հետ: Ես եւս այդ ոգով ելոյթ ունեցայ: Ելոյթ ունեցաւ նաեւ մինիստրը, մի քանի յաւուր պատ-շաճի խօսքեր ասաց, բայց ծպտունով իսկ չարձագանգեց աշխատաւորների առաջարկութիւններին ու ցանկութիւններին: Գոնէ ասէր՝ լաւ, կը մտածենք: Փոխարէնը մի քանի օր յետոյ իմացանք, որ տնօրէն է նշանակուել Արաբկիրի եւ ֆաբրիկայի հետ ոչ մի առընչութիւն չունեցող մի կին: Ես չեմ ճանաչում այդ կնոջը, գուցէ նա՛ իրօք մի շատ արժանաւոր անձնաւորութիւն է եւ հիա-նալիօրէն կը ղեկավարի ֆաբրիկան: Բայց խօսքն այդ մասին չէ, այլ այն, որ մինիստրը չուզեց լսել աշխատաւորների ձայնը, նաեւ այն, որ մի՞թէ մօտ հինգ հազար արաբկիրցիների մէջ չգտնուեց մէկը, որ եթէ չասենք ընտրուէր, ապա դարձեալ նոյն մինիստրի կամքով նշանակուէր տնօրէն:

Ենթադրում եմ, որ, երբ նա թուացեալ ուշադրութեամբ լսում էր ելոյթ ունեցողներին, մտքում պարզապէս ծիծաղում էր նրանց վրայ, դուք ինչ ու-զում էք ասէք, հրաման տուողը ես եմ...

Գիտեմ, տգեղ է «նախիկների» դէմ խօսելը, առհասարակ տգեղ է պետա-կան անձի դէմ խօսելը: Ես խորապէս գիտեմ այն ճշմարտութիւնը, թէ ժողո-վրդին իսկական, միաձոյլ, միակամ ժողովուրդ դարձնելու գործում որքան կարեւոր են յարգանքն ու ակնածանքը պետական անձի նկատմամբ: Ես հա-մոզուած եմ, որ մեր պատմական շատ ձախորդութիւնների մէջ իր զգալի դերն է կատարել հենց դրա բացակայութիւնը:

Ես չեմ ուզում երկար խօսել այն մասին, թէ դարերով պետականու-թիւնը կորցրած եւ վերջերս միայն այն վերագտած մեր ժողովրդի համար որ-քան է կարեւոր պետական մտածողութիւնը, բայց չեմ կարող չխօսել նաեւ այն մասին, թէ այդ մտածողութիւնը որքան առաւել կարեւոր, ո՛չ, պարտադիր է հենց պետական անձի համար: Մինչդեռ նրանցից ոմանք ժողովրդի ձայնին ունկնդրելու իրենց անկարողութեամբ, կամայականութիւններով, անօրինա-կան արարքներով որքա՞ն են վնասում հենց իրենց հեղինակութեանը եւ դրա-նով իսկ՝ ժողովրդի պետական մտածողութեանը: Քիչ չեն այնպիսիները, որ բարձր պաշտօնների նշանակուելով, դառնում են այնքան անտանելի, որ կարծես պաշտօնի հետ հրաշքով իրենց է շնորհուել նաեւ աշխարհի գիտելիք-ների ամբողջ պաշարը: Եւ [illegible] կարծես պաշտօնի հետ շնորհուել է

digitised by A.R.A.R.@

նաեւ մարդկանց արհամարհելու, կոպտելու իրաւունքը, «Ինձ ամէն ինչ թոյլատրելի է» կարգախօսը:

Ժողովուրդը սուր աչք, զգայուն ականջ ու անվրէպ բնազդ ունի, զուր չէ հնում ասուած. «Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ»...: «Աստուած» այստեղ ճշմարտութեան իմաստով է գործածուած: Ասել է. «Ձայն բազմաց՝ ձայն ճշմարտութեան»...: Եւ յաճախ է այդ «ձայն բազմացը» սկսում խօսել այս կամ այն անձի ու երեւոյթի մասին, խօսել յամառօրէն: Իսկ այն, ինչի մասին ժողովուրդն այնքան յամառօրէն խօսում է, ի վերջոյ պարզւում է, որ ճշմարտութիւն է:

Անշուշտ, այդ ձայներին երբեմն խառնւում են նաեւ բանսարկուների բամբասանքները...: Բայց եթէ դրանք իրական հիմք չեն ունենում, շատ շուտով լռում են...: Իսկ այն ձայների, այն աղաղակների, այն կարծիքների հետ, որոնք յամառօրէն շարունակւում են ու չեն լռում, պէտք է հաշուի նստել:

Մեզանում, այո, դեռ քիչ չեն այնպիսիները, ովքեր ոչ մի կերպ չեն կարողանում ընտելանալ այն մտքին, որ մտածողութեան նոր որակ է կեանք մտել՝ դեմոկրատիայի նոր չափումներով: Ախ, ինչպէս կ'ուզէին նմանները մի օր արթնանալ ու տեսնել, որ այդ ամէնը երազ է եւ ամէն ինչ իր հին տեղում է:

Կան նաեւ այնպիսիները, որ իրենց մտքում պարզապէս քմծիծաղում են մեզպէսների վրայ, տեսէ՛ք, այս գրողները նորից սին պատրանքներով ու զգացումներով են տարւում...: Ոչ մի բան էլ չի փոխուի: Այդպիսի արհամարհանքով խօսելով զգացմունքի մասին, նմանները միամտօրէն կարծում են, թէ զգացմունքը ինչ-որ վերացական, դատարկ բան է եւ ոչ թէ զարգացման բազմադարեան ճանապարհին մարդու ձեռք բերած մեծագոյն ուղենիշներից եւ ճշմարտութեան որոնման միջոցներից մէկը...: Նոյնքան զօրեղ, որքան բանականութիւնը:

Իսկ զգացմունքն ու բանականութիւնը յուշում են, որ այն, ինչ կատարւում է մեր երկրում, կատարւում է ո՛չ միայն ինչ-որ բարի կամքի, այլեւ՝ դժուար կեանքի, անհրաժեշտութեան, կարիքի, մեր կուտակած ամբողջ փորձի թելադրանքով, որը յուշում է, թէ այլեւս անհնար է առաջուայ պէս ապրել:

Այդ նոյն զգացմունքն ու բանականութիւնը թելադրում են նաեւ, որ կարելի է դժուարացնել, բայց անհնար է կասեցնել այն, ինչ կատարւում է դժուարին կեանքի, մանաւանդ կարիքի թելադրանքով, երկընտրութեան բացակայութեան թելադրանքով:

Ի սկզբանէ էր բանն...: Ազատ բանը, ազատ խօսքն է այսօր ծաւալւում մեր երկրով մէկ: Իսկ երբ ազատ խօսքը դառնում է «ձայն բազմաց», ճշմարտութեան ձայն է դառնում: Եւ այդ դէպքում արդէն դժուար է փակել այն ճանապարհները, որոնք խօսքից տանում են դէպի գործ:

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@

# ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ճշմարտութիւնն է համբարձւում
Արխիւների ճկուղներից,
Կողը՝ խոցուած, գլխին՝ պսակ,
Փշէ պսակ երկիւղների:
    Ճշմարտութիւնն է համբարձւում
    Բանտանման հոգիներից,
    Մէջքի վրայ ճաղերի հետք,
    Դէմքին եղեամ աքսորների:
Ճշմարտութիւնն է համբարձւում
Անկիզելի *սէյֆ* ու *մէյֆից*,
Ազատւում է թեւատարած
Սուտ խոստումի շքեղ *միֆից*:
    Ճշմարտութիւնն է համբարձւում
    Եւ անձրեւի նման արբած
    Մերւում է մեր ճաքած կաւին
    Ներդաշնութեան քանքարով պարզ:
Ճշմարտութիւնն է համբարձւում
Քո անունից քեզ խաչ հանել,
Այս խաղի մէջ մենք՝ սատանայ,
Իսկ դու՝ մանուկ մի հանճարեղ:

Երեւան, 1988

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼԻՏՈՆԵԱՆ

# ՄԱՔՈՒՐ ԵՐԿԻՆՔ

Վերափոխուե՞լ, վերափոխուե՞լ —
Պահանջ ու տենչ հրաշալի:
Այդ բառերը թռիչք են նոր,
Ճիշտ ամրութեան ողնաշարի:
Այդ բառերը ուղղում են արդ
Ամէն շեղում, ամէն սխալ —
Պահանջում են սուրալ խիզախ,
Ոչ թէ սահել, ոչ թէ սողալ:
Պահանջում են դուրս վտարել
Ճառասացին կեղծարարայ,
Որ ամէն մի նուագի տակ
Հեշտ դառնում են ուրախ պարող:
Պահանջում է, որ հետ մղուի
Շրջապատող շահն յեղյեղուկ,
Որ խելքն իրոք գնահատուի,
Մարդը լինի իր ճիշտ տեղում:
Որ չդառնայ չարը հզօր,
Որ չդառնայ բարին տկար,
Որ չնետեն նորից արմատ
Քարացումի կուռքերը քար…

ԼՈՒԴՎԻԳ ԴՈՒՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@



## ԲԱԳԻՇ ՅՈՎՍԷՓԵԱՆ

*Արձակագիր եւ հրապարակագիր Բագիշ Յովսէփեան ծնած է 18 Հոկտեմբեր 1922ին, Մարտունի շրջանի Ներքին Ալաշալու (Ներկայիս՝ Արծուանիստ) գիւղը։*

*1938–1940 Բ. Յովսէփեան կը զբաղի ուսուցչութեամբ, ծննդավայրի գիւղին մէջ։ 1940–1943 կը ծառայէ խորհրդային բանակին մէջ, ապա կը դառնայ Մարտունի շրջանի «Կոլխոզ ուղի» թերթի պատասխանատու քարտուղար։ 1945ին կ'ընդունուի Երեւանի պետական համալսարան, որուն բանասիրական հիմնարկի հայկական բաժինէն շրջանաւարտ կ'ըլլայ 1950ին։ 1950–58 մաս կը կազմէ «Գրական թերթ»ի խմբագրութեան՝ իբրեւ բաժնի վարիչ, ապա՝ 1958–1975 մաս կը կազմէ Հայաստանի գրողներու միութեան անձնակազմին՝ իբրեւ խորհրդական։ 1975–1980 կը պաշտօնավարէ «Սովետական գրականութեան» ամսագրի մէջ՝ իբրեւ արձակի բաժնի վարիչ։*

*Բ. Յովսէփեան հրատարակած է հինգ հատորներ, որոնց նշանաւորներն են՝ «Սերմնացանները չվերադարձան», «Դու հասկացա՞ր ինձ» եւ «Ընտիր երկեր»։ Անոր «Սերմնացանները չվերադարձան» վէպը լոյս տեսած է նաեւ ռուսերէնով, լեհերէնով եւ էստոներէնով։*

**. . . Այս գործում իմ միակ առաջնորդը ճշմարտութիւնն է: Դժբախտաբար, իմ կամքին հակառակ՝ իրատարակչութիւնը տեղ - տեղ աղճատեց ճշմարտութիւնը կամ պարզապէս հանեց, որ ե՛ւ զարմանալի է, ե՛ւ ցաւալի, յատկապէս այս օրերին, երբ երկիրը ճշմարտութիւն է պահանջում:**

---

**Վերակառուցումը այլ բան չէ, քան ճշմարտութեան, ազնուութեան, արդարութեան, օրինականութեան, մարդասիրութեան, բարութեան, բարօրութեան, նաեւ մարդու մարդկայնացման սուրբ պահանջ:**

---

**Կար ժամանակ, որ Նարեկացի, Րաֆֆի, Զարենց, Բակունց, Մահարի, Նորենց, Եսայեան, Շանթ կարդալը մահացու յանցանք էր: Բայց հետագայում մենք տպագրեցինք նրանց, եւ աշխարհը չկործանուեց: Ճիշդ նոյն ձեւով աշխարհը չի կործանուի, եթէ տպագրենք Համաստեղ եւ Ահարոնեան:**

digitised by A.R.A.R.@

# ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈԳԻՈՎ

— Ժանրային առումով ի՞նչ զարծ է [illegible] ստեղծագործութիւնը:

— 1960 թ. [illegible] Սարոյեանը [illegible]

[illegible]

— [illegible]

— [illegible] Սարոյեանը: — [illegible]

— Ի՞նչ գործ է, [illegible]

— [illegible]

[illegible] «Սերմնացաննե-րը չվերադարձան» [illegible]

[illegible] «Որբ այս աշխարհը եկայ» [illegible]

—Բայց ձեր կեանքը շարունակել եւ շարունակւում է, մտադիր չէ՞ք շարունակելու Ձեր կեանքի պատմութիւնը.

— [illegible]

— Ձեր գրոցի աշխատանքը զուգակցում էք գրական-հասարակական աշխատանքին. Սե-ւանի ուազանի գրական բաժանմունքի քարտուղարն էք: Երբեմն հանդէս էք գալիս հրապարակախօսական յօդուածներով: Մի՞թէ գրանք են պատճառը, որ ռահւագիր էք:

— [illegible]

— Ստեղծագործական ի՞նչ ծրագրեր ունէք:

— [illegible]

— Վերակառուցման մեր ժամանակներում ի՞նչ մտահոգութիւններ ունէք թէ՛ ձեր ասպարէ-զում, թէ՛ առհասարակ:

— [illegible]

— Ի՞նչ գործեր կ'ուզենայիք տեսնել վերա-հրատարակուած:

— [illegible]

[illegible]
«Գրքերի աշխարհ» [illegible]

digitised by A.R.A.R.@



## ԶՈՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

*Արձակագիր, բժիշկ, լրագրող, ծովագնաց եւ ճանապարհորդ Զորի Բալայեան ծնած է 10 Փետրուար 1935ին, Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքը։ 1953–57 կը ծառայէ Բալթիկեան նաւատորմին մէջ։ 1963ին կ'աւարտէ Ռեազանի Ի.Պ. Պաւլովի բժշկական հիմնարկի բուժական մասնաճիւղը։ 1963–73 երբեմն բժիշկ կ'աշխատի Կամչատկայի մէջ։ 1967ին, երկու ընկերներու հետ, «Վոլկան» եւ «Հէյլքէր» նաւակներով Կամչատկայէն կը հասնի Օդեսա, կտրելով 22 հազար քիլոմեթր։ 1970ին, Կամչատկայէն կը կտրէ Սառցապատ ովկիանոսը եւ կը հասնի Ատլանտեան ովկիանոս։ 1973ի ձմեռը, շնասահնակով, կը կտրէ-կ'անցնի Կամչատկայի եւ Չուկոտկայի տունդրաները եւ կը հասնի մինչեւ Հիւսիսային ովկիանոս։*

*1973–1975, կ'աշխատի Երեւանի բուժական Ֆիզկուլտուրայի հանրապետական բուժարանին մէջ։ 1975ին կը նշանակուի* «Լիտերատուրնայա գազետա» *թերթի Հայաստանի սեփական թղթակից, պաշտօն մը՝ զոր կը պահէ մինչեւ օրս։*

*Հայկ Ղարաբաղցի գրչանունով իր գրական առաջին փորձերը կատարած Զորի Բալայեան կը ստորագրէ ռուսերէն եւ հայերէն լեզուներով։ Ան հրատարակած է հինգէ աւելի ռուսերէն եւ շուրջ 10 հայերէն հատորներ, որոնց նշանաւորներն են՝* «Երկնագոյն ճանապարհներ», «Գոտեմարտ», «Խիղճը», «Ցաւ», «Երկու կրակի մէջ», «Օճախ» *անուն արձակ գործերը։*

---

**Ինչպէ՞ս է եղել, որ հայ գրողների թղթապանակները դատարկ են հենց այն ժամանակ, երբ ժողովուրդն ու ժամանակը զգում են ճշմարտացի ու կրքոտ խօսքի կարիքը:**

---

**Ո՞վ է մեզ իրաւունք տուել լռելու: Հիմա՞ էլ լռենք, երբ կուսակցութիւնն ամբողջ ձայնով իր համագումարում բարձրացրել է լենինեան դրօշը, որը կրում է յեղափոխութեան առաջնորդի բառերը. «Մեր ուժը ճշմարտութիւնն ասելու մէջ է»:**

---

**Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ 37 թիւը շրջանցել է մեր ժողովրդին: Ասես անցել է մեր կողքով: Ասես տեղի չի ունեցել այն, որից առաջին հերթին տուժել է բոլշեւիկ - լենինեանների հին գվարդիան:**

digitised by A.R.A.R.@

Զ. ԲԱԼԱՅԵԱՆ

# ՀԻՄԱ՞ ԵՒ ԼՌԵՆՔ

*Ինչքա՞ն հեշտ էր ընթերցողի կյանքը դեռ բոլորովին վերջերս: Ստանում էիր, ասենք, քսան անուն թերթ ու հանդես: Գալիս էիր տուն, դժուարութեամբ փոստարկղից դուրս քաշում թերթերի առատ կապոցը եւ ձեռաց աչքի անցկացնում գորշ ու տաղտկալի տողերը: Եւ... քիչ յետոյ մի կողմ նետում: Ճիշդ է, որոշ թերթերում ու հանդէսներում դէպքից դէպք հանդիպում էին որոշ բացառութիւններ, որոնք ստիպում էին կարդալ ու խորհել: Ոչ հեռաւոր ժամանակների բացառութիւնները (որոնց դասին է պատկանում, ի դէպ, նաեւ «Ոզնի»ն), թողնենք մի կողմ: Մեզ աւելի շատ օրինաչափութիւններն են հետաքրքրում:*

*Իսկ հիմա աչքի են զարնում այնպիսի օրինաչափութիւններ, որ կարելի է ուրախ զարմանալ: Մոսկովեան ու կենտրոնական այլ պարբերականներն արդէն դժուար է առանց յուզմունքի վերցնելը, որովհետեւ նախազգում ես, որ դրանց էջերում սրտիդ, հոգուդ մօտ, մտածելու տեղիք տուող որեւէ բան ես գտնելու: Եւ յուսախաբ չես լինում:*

*Վերջերս Երեւանում հանդիպեցի ռուսական յայտնի գրող Ալեքսանդր Բեկի զաւակը՝ Տատեանա Բեկին: Նա ինձ պատմեց տառապանքների մասին, որ «բաժին էին ընկել» հօրը. նա դեռեւս վաթսունական թուականների սկզբներին գրել էր «Նոր Նշանակում» խորագրով վէպը: Զարմանալի չէ, որ նոյնիսկ Ալեքսանդր Տվարդովսկին չէր կարողացել ժամանակին տպագրել այդ տաղանդաւոր ստեղծագործութիւնը: Զարմանալի է, թէ ինչպիսի՛ համբերութիւն ու ներշնչանք է ցուցաբերել Բեկն իր գործի նկատմամբ: Սպասել է յանուն իր սկզբունքների: Նա, վերջապէս, հրաժարուել է դրամից, չի համաձայնել, որպէսզի իր վէպը խմբագրուի «կողմնակալօրէն», որը աղաւաղելու հնարաւորութիւն կ'ընձեռէր: Այդպէս էլ նա վախճանուեց՝ չտեսնելով իր զաւակին: Իսկ ժամանակը, որ մեզ բերեց սթափութիւն ու թարմութիւն, դեմոկրատիա ու հրապարակայնութիւն, մոռացութեան փոշուց սրբեց նաեւ Բեկի վէպը, որը տպագրուեց 1986 թուականին:*

*Սակայն պարզուած է՝ նոյնիսկ հիմա այն մարդիկ, որ ժամանակին ջանք չէին խնայել տապալելու վէպի հրատարակման գործը, վերեւ ու ներքեւ նամակներ, բողոքներ, զրպարտագրեր են գրում՝ նոյնը կրկնելու միտումով (ի՞նչ տարօրինակ կենսունակութիւն ունեն այս կարգի անձնաւորութիւնները): Նրանց սրտովը չէ, որ դժնդակ 1937 թուականի մասին գրում է*

digitised by A.R.A.R.@

*ճշմարտութիւնը։ «Վտանգաւոր երկարակեացներին» դուր չի գալիս, որ գրողը մերկացրել է նրանց, ովքեր երկրում ստեղծել էին ստալինականութեան ու բիւրոկրատութեան ծանր մթնոլորտ։ Դուր չի գալիս, որովհետեւ զգում են իրենց մեղաւորութիւնը…*

*Վերջերս Երեւանում հիւրընկալուել էր ռուս անուանի գրող Վլադիմիր Ամլինսկին։ Նա Հայաստանի գրողների տանը ելոյթ ունեցաւ, պատմեց, թէ ինչպէս է աշխատել* «Արդարացուելու է իւրաքանչիւր ժամը» *գրքի վրայ, որը լոյս տեսաւ 1986 թուականին։ Այդ ստեղծագործութիւնում նա պատկերել է իր հօրը՝ ընդդիմութեան պատմաբանին, որը զոհ էր գնացել ստալինեան բռնութեանը։*

«Նովի միր»*ի առաջին եւ երկրորդ համարներում լոյս տեսաւ Դանիլ Գրանինի* «Զուբր» *վիպակը, որը պատմում է անհատի պաշտամունքի մղձաւանջն ապրած երեւելի գիտնականի տառապանքների ու յաղթանակների մասին։*

«Նեւա» *հանդէսի առաջին չորս համարներում տպագրուեց Դուդինցեւի* «Սպիտակ հագուստներ» *վէպը, ուր հեղինակը շօշափել է ստալինեան գաղափարի հիմունքում ընկած իշխանութեան տենչը, անասնական վախը, առաջընթացի ու լոյսի նկատմամբ սարսափը, տաղանդի հանդէպ ատելութիւնը։ Յիշեցնենք, որ Վ. Դուդինցեւը յիսունական թուականներից, երբ հրատարակել էր* «Ոչ միայն հացիւ» *վէպը, գործնականում զրկուեց գրողական աշխատանքով իր հացը վաստակելու հնարաւորութիւնից։ Չնայած դրան, խիզախ գրողը տքնաջանօրէն աշխատել է Ստալինի, Բերիայի եւ ուրիշների կամայականութիւնները բացայայտող թեմայի վրայ։*

*Անտարակոյս, չկայ կենտրոնական որեւէ հրատարակութիւն, ուր չրջանցուեն այսօր մեզանից իւրաքանչիւրին յուզող հարցերը։* «Դրուժբա Նարոդով» *ամսագրում Անատոլի Ռիբակովը տպագրել է խոշոր մի գործ, որ կրում է* «Արբատի երեխաները» *վերնագիրը։ Թողնենք հեղինակի խղճին հայի ընդհանրացուած կերպարը, որ վէպում ներկայացուած է որպէս մատնիչ։ Մատնիչներ, ինչ խօսք, ունեցել են թէ՛ հայերը, թէ՛ ռուսները եւ թէ միւս ժողովուրդները՝ առանց բացառութեան։ Սակայն այսօր մենք խօսում ենք այն մասին, թէ ինչպէս են ամսագրերը տպագրում սուր ստեղծագործութիւններ մեր պատմութեան մասին, որը չի կարելի ջնջել մեր կենսագրութիւնից։ Եւ ես խօսակցութիւն բացեցի այս մասին, որովհետեւ մենք՝ հայ գրողներս, զարմանալի կերպով ժամանակի ու ժողովրդի առաջ կանգնել ենք տառացիօրէն դատարկաձեռն։ Մինչեւ այժմ նոյնիսկ հարկ չեն համարել որեւէ ամսագրում տպագրել Սուրէն Ղազարեանի գիրքը, որը ժամանակին երաշխաւորել է Ալեքսանդր Տվարդովսկին՝ գրելով այդ գրքի առաջաբանը։*

*Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ երեսունեօթ թիւը չրջանցել է մեր ժողովրդին։ Ասես անցել է մեր կողքով։ Ասես վագոնից, որ վերածել էին խժդժութիւններ կատարելու իւրօրինակ շարքի, հրամաններ չէին արձակուել՝ ում յայտարարել ժողովրդի թշնամի, ում առանց աղմուկի ընդհանրապէս վերացնել։ Ասես տեղի չի ունեցել այն, որից առաջին հերթին տուժել է բոլշեւիկ-լենինեանների հին գուարդիան։ Ասես հնարաւոր է գտնել մէկ ուրիշ ժողովուրդ, որն ապրել է մի ճիւաղի կազմակերպած ցեղասպանութիւնը եւ մտաւորականութեան ջարդերը հետագայում։ Ինչո՞ւ չենք այդ մասին ազատ գրում։*

*Ինչպէ՞ս է եղել, որ հայ գրողների թղթապանակները դատարկ են հէնց այն ժամանակ, երբ ժողովուրդն ու ժամանակը զգում են ճշմարտացի ու*

digitised by A.R.A.R.@

կրցող խօսքի կարիքը։ Մի՞թէ չի եղել Կուսակցութեան XXVII համագումարին տրուած քաղաքական զեկուցումը, որ ընդգծուած էր՝ «Մեր նուաճումները չպէտք է այնպիսի տպաւորութիւն ստեղծեն, թէ ազգային պրոցեսները զերծ են պրոբլեմներից»։ Մի՞թէ յունուարեան պլենումը կոչ չի արել՝ «տեսնելու երկրում ազգային յարաբերութիւնների զարգացման հեռանկարները եւ իրական պատկերը»։ Եւ, վերջապէս, մի՞թէ մեզ յայտնի չէ, որ ազգային հարցը մեր երկրում խեղաթիւրուել է անձամբ Ստալինի կողմից, որը կամայականօրէն որոշել էր, թէ ո՛ր ժողովուրդն ի՛նչ սահմաններ պիտի ունենայ եւ նոյնիսկ՝ ինչպիսի՛ պատմութիւն։ Կարո՞ղ է, կուսակցութեան XX համագումարից յետոյ երեւանում լոյս չի տեսել «Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ յեղափոխութիւնը եւ սովետական կարգերի յաղթանակը Հայաստանում» գիրքը։ Եւ կարո՞ղ է այդ գրքի 81րդ էջում չի հրապարակուած մի փաստաթուղթ, ուր ասուած է՝ «Ադրբեջանը՝ ոչ մի տերիտորալ հարց.– 1920 թ. Դեկտեմբերի 1ին Բաքուի սովետի անունից ունեցած իր ելոյթում ասաց Ն. Նարիմանովը,– չի կարող դառնալ երկու դարաւոր հարեւան ժողովուրդների՝ հայերի եւ մուսուլմանների միմիեանց արիւն թափելու պատճառ։ Զանգեզուրի եւ Նախիջեւանի գաւառները Հայաստանի անբաժանելի մասն են կազմում, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատաւոր գիւղացիութեանը տրւում է ինքնորոշման լրիւ իրաւունք»։ Եւ մի՞թէ Ստալինը չէր խանգարողը, որ իսկական լենինեան ոգով իրականանար այդ որոշումը։ Այս հարցի շուրջը կան հարիւրաւոր փաստաթղթեր։

Բայց հայ գրողների թղթապանակը դատարկ է…

Ո՞վ է մեզ իրաւունք տուել լռելու։ Չիմա՞ էլ լռենք, երբ կուսակցութիւնն ամբողջ ձայնով իր համագումարում բարձրացրել է լենինեան դրօշը, որը կրում է յեղափոխութեան առաջնորդի բառերը. «Մեր ուժը ճշմարտութիւնն ասելու մէջ է»։

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ



Սփորտային մեկնաբան Օդերովի բարեացակամ տոնը «Արարատ»ի փլուզուող կազմի մասին մեզ աւելի շատ էր ցնցում, քան մեր իսկ շինարարների կառուցած բազմամասերի, կամրջի, կենսոլորտի փլուզման փաստը։

## ԱԼՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

*Արձակագիր Ալվարդ Պետրոսեան ծնած է 4 Հոկտեմբեր 1946ին, Երեւան։ 1968ին կ՚աւարտէ Երեւանի պետական համալսարանի բանասիրական հիմնարկի հայկական բաժինը։ 1968–1975 տարիներուն կը պաշտօնավարէ պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի երիտասարդական հաղորդումներու բաժնին մէջ՝ իբրեւ խմբագիր։ 1975–1978՝ «Հայաստանի աշխատաւորուհի» ամսագրի մէջ՝ իբր գրականութեան եւ արուեստի վարիչ։*

*Ալվարդ Պետրոսեանի առաջին գործը՝ «Երեւանեան մանրանկարներ», լոյս կը տեսնէ «Գարուն»ի մէջ, 1967ին։ 1978ին, «Երկրի պապերը» խորագրով իր առաջին գիրքը կ՚արժանանայ ՀԼԿԵՄ կեդրոնի «Լաւագոյն առաջին գիրք» մրցանակին, իսկ իր «Մենախօսութիւն մոլեգնութեամբ» պատմուածքը՝ Հայաստանի գրողներու միութեան եւ «Գարուն» ամսագրի 1978ին կազմակերպած արձակի մրցանակի առաջին մրցանակին։ Նոյն տարին, Երեւանի մէջ տեղի ունեցող ՍՍՀՄ VIII շարժապատկերի փառատօնը «Մանուկներու համար լաւագոյն քնարական ստեղծագործութեան» յատուկ մրցանակով կը պարգեւատրէ Ա. Պետրոսեանի բեմագրութեամբ նկարահանուած «Կար չկար մի ազնիւ» անուն ֆիլմը։*

Խնձորի զողացիր, խնձորի խափիր, խնձորի քանդիր, խնձորի ծիծաղիր, բամբասիր, ուզո՞ւմ ես՝ մի քիչ էլ գրիր, մի քիչ էլ նկարիր, երգիր, հաշուիր…

Նիւթի պաշտամունքը մե՛նք դարձրինք գերակշիռ ոգու նկատմամբ, տոհմի, արեան կապը փոխարինեցինք գործնական, օգտակար ծանօթութիւններով, վաստակի չափը գնահատեցինք վաստակած ռուբլիներով…

digitised by A.R.A.R.@

ԱԼ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

# ՈՒՇԱՑԱԾ ԿԱՐՕՏԱԽՏ

*Ալվարդ Պետրոսեանին անուն ու հեղինակային ստորագրութիւնը վերջին հասածն է «Ուշացած կարօտախտ» անունով իր մէկ գրութեան, որ հատուածի ձեւով լոյս տեսաւ «Սփիւռքահայ գրականութեան» ամսագրի անցեալ տարուան թիւ 4ի մէջ։*

*Տեղի անձկութեան պատճառով մենք հարկադրուեցանք միայն մէկ հատուածը տալ, բայց լիովին կը յանձնարարենք ամբողջին ընթերցումը, որովհետեւ, ինչպէս քանիցս ընդգծուած է այս սիւնակներուն մէջ, Ալվարդ Պետրոսեան արհեստավարժ գրող մը չէ, խանդավառուած գրող է ան, այսինքն՝ բանալիք ունի եւ բանալի ան, ազգային ու մարդկային բազմաշերտ չափազանցութիւններէ առաջացած ներքին բախումներ, որոնց բացով կը դնէ այն ամբողջին, կը լիովինաւ պատկերներ, էջեր, ընդգրկումներ։*

Ճնշիչը գմուռ մը է։ Առաջ աւելի հեշտ էր, ցուրտն էլ էր տանելի, շոգն էլ, անձրեւն էլ։ Հիմա տանելու բան չի։ Մի տարօրինակ մշուշ պատելով մեզ բաժանել է մեզ արեւից, օդից, ապրելու ընդհանրական փայլերից։ Առաւօտեան ցուրտ, հիւանդ արթնացումները, երբ մարմինդ անդամ է անզոր, թափառիկ, ամենակուլ ու տարտամ ցաւից, ապրելու փառքը սկսում ես գիտակցել ցաւի միջով ու կեցութեան թաշնային, միամիտ փայլերը հեռանում, կորչում է արտի ծակոցի, աչքերի մռմռոցի, յօդացաւի կոկծի մէջ։ Ամէն ինչ կարծես առաջնուանն է, նոյն Մասիսը, նոյն Զանգուն, նոյն քաղաքը, մենք ենք մնացել։ Բայց ՍՄՈԳը մեծ ու փոքր չի հարցնում՝ զանգազ սպանում է։ Այնքան էլ գեղեցիկ են այս նոր մթնոլորտում ծնուածները՝ երկարոտն, բարակիրան, համաչափ մարմնակազմով, նրբացած դիմագծերով, խնամուած, բայց շատ, շատ են ուրախ։ Զարմանալի ուրախ սերունդ է։ Իր կառավարի ուրախութեամբ, իր կառավարի հումորով, իր կառավարի արհամարհանքով մեր միամիտ ու անզօգուտ հաւատքն է սպանում։ Չի հաւատում մեր սիրուն խօսքերին, մեր լացին, մեր «Նրբացուցիչ դէպքը յանցանացքին»։ Չի հաւատում, որովհետեւ հենց իրենց խնամքով ու կուշտ մեծացնելու ձգտումի «ոլացքներում» էր, որ նրանց ամենատես աչքերի առաջ մեր խեղճ իդէալները տապալեցինք։

digitised by A.R.A.R.@

Գողացանք:
Խաբեցինք:
Նուաստացանք:
Չարացանք:
Շատ խօսեցինք:

Օ՜հ, որքան ենք խօսել, Աստուա՜ծ իմ, եւ ի՜նչ սիրուն ու փուչ, անհիւթ, անամէջ: Ոգեզրկութեան ՍՄՈԳՆ էլ, ապակու պէս, մեզ մեր զաւակներից է անջատել: Թափանցիկ է անջրպետը, իրար տեսնում ենք, հեռւում, ծրագրաւորում վաղուայ օրը՝ համակեցութեան կանոնները պահպանելու համար, բայց իրար հետ ապրելու, իրար հետ ուրախանալու եւ լալու բոյլն է կորել: ՍՄՈԳը բաժանել է մեզ: Չէ, ի՜նչ եմ ասում՝ քո բանաստեղծի Թաղմանը ո՜նց էինք ագրոմիին՝ ահել ու ջահել հաւաքուել իրար գլխի ու ծով առած առնում էինք նրա մահկանացու մարմինը՝ համախումբ սիրով ու լացով:

Բա ովկիանոսներից անդին մեռնող Գրողը ինչո՞ւ մեզ ու զարկեց իր մեծ սիրան ու վերջին յիշողութիւնը: Բա մեծ հրդեհի ժամանակ ինչո՞ւ էինք նստում կրակի մէջ մէն-մի չինութիւն փրկելու: Բա ո՞ւմ համար իրենց ասնչապարների հզօր բանակը հաւաքեցին Խաչիկն ու Մուշեղը, իր Աւարայրը ոգեկոչեց Գրիգորը, որ կոպէկ-կոպէկ, ծառ առ ծառ, թիզ առ թիզ Թալանուող հողը, եւ նրա տիրոջը մոռացումի, ծաղր ու ծանակի, թշնամանքի, գեխութեան փոշու միջից հանեց Հրանտը:

ՍՄՈԳը կայ, բայց յետո՞յ ինչ, ախր, մենք էլ կանք: Ցաւով ապրում ենք, ցաւով չնչում, բայց ապրում ենք ու չնչում, ինչպէս բոլորը մեծ աշխարհում: Տան տէրը մառանում է, յիշելով ու կռուելով անեցիների հետ: Բոլորը տան օրինածին ժառանգներն են, մենակ տան տիրոջ օրինածնութիւնն է կասկածելի ու հենց որ ուզում է Թոռամ Սարգսեանը իրաւունք բանեցնել, ո՜նց են տալիս գլխին, սրտին, մաքին...

Տանը բոլորը ազգ ու տակ են, միայն նա է օտար ու նրա հողեզաւակը՝ քաղաքից եկած գնդապետի որդին:

Մեծ անտառն ուտում են, եղնիկին ուտում են, յիշողութիւնն ու պատմութիւնը, ուտում են ու տան տիրոջը, հզօր կաղնուն, կռտած խող են դարձրել, այդ անուանն էլ գաջել են ճակատին, թիկունքին, կենսագրութեանը: Դարձրել են օպերետային ծիծաղաշարժ պերսոնաժ: Գետնաքարշ մի գրպանահատ, տանխաթերին ձգուած, թիթփացնում է տանտիրոջ ուսին, կնահաճ շարժուձեւերով շոյում է նրա այտը. այդպէս է սպանելու նրան ու նրա ոգին՝ տանը տէր դառնալու համար:

Այդպէս է՝ ներսից ու դրսից, դրսից ու ներսից: Այդպէս էլ Նոյը Նուէ, խաչքարը՝ խաչգող, Արարատը՝ Աթաղաղ են դարձնում, հանգիստ, ժպիտով, քիչ-քիչ: Երբ գողը անից է, եզը երդիկից էլ կ'հանի: Մերը ներսից էլ է, դրսից էլ:

Ու ինչ խոհեմօրար ենք տարիներ ի վեր, փակել աչքներս, մանաւանդ, ներսի գողերի վրայ: Դրսինը՝ ճարներս ինչ՝ սիրտներս լցրը, լեզուներս փակ, իսկ ներսինը՜ը: Այդ ո՞վ էր մեզ խանգարում մեր տան սարքն ու կարգը հաստատուն պահելու, մաքուր պահելու...: Այդ ինչո՞ւ յանկարծ այդքան մեծահոգաբար, հեշտ սկսեցինք ներողամտութիւն խաղալ, երբ անհրաժեշտ էր կենսական բոլոր ուժերը լարել սեփական գոյնն ու դիմագիծը պաշտպանելու համար: Սպորտային մեկնարան Օզերովի անբարեացակամ տոնը «Արարատ»ի փլուզման կազմի մասին մեզ աւելի շատ էր ցնցում, քան մեր իսկ շինարարների կառուցած Թաղամասերի, կամրջի, կենսոլորտի փլուզման փաստը: Աչքներիս առաջ ճահճածաղիկի պէս խաղաղ ու ամենակուլ յամառութեամբ բազմանում ու բարգաւաճում էին մեր քրտինքն ու վաստակը կլանող Թափթփուկները, վիզներս ծուռ, նրանց չանսի գեխութեանն էինք նայում: Նրան-

digitised by A.R.A.R.@

ցին համակերպուած էինք նայում, մէկս միւսին՝ լարութեամբ ու մաղձով։

Մի քանի շահատակների պատեհապաշտ քմահաճոյքով ժառանգու-թեան, պատմութեան անխաթար շղթան դարձել էր կայի պէս դիւթաթեք մի-բան։ Մենք նրանց անպարտելիութեան առասպելին էինք հաւատում մեր խեղճ ու կրակ, օրապահիկ բամբասանքներով, նրանք թալանում էին մեր տանջուած ժողովրդի արիւն-քրտինքով կառուցած տունն ու կուտակած հարստութիւնը։ Միրաններն ու գած պաշտօնեաները նուէր էլ էին տալիս հարեւանին՝ նրանց խաթրը շա-հելու, նրանց բարեացակամութիւնը չկորցնելու համար։

Դասային մի նոր տեսակ առաջացաւ աչքներիս առաջ, որ մեր սրտի ցաւի, արեան ցաւի, յիշողութեան ցաւի անդրիկաւփունը ակսեց իր կամեցողու-թեամբ անօրինել՝ եթէ պէտք չէ գոռալ՝ պիտի լռես, եթէ պիտի ծափ տաս՝ պի-տի ծափ տաս, թէկուզ սրտիդ արիւն կաթի։

Կիսատառուածների, ընտրեալների իրենք իրենց տուած իրաւունքով նրանք անցեալի, ներկայի, ապագայի մասին մտածելու քո իրաւունքը վերցը-րին ու արեւտ մի օր դարձրին իրենց մենաշնորհը։ Նրանք մտածում էին՝ դու կարող ես չմտածել այլեւս, դու, միայն երբ պէտք է լռել՝ լռիր, երբ պէտք է ծափ տալ՝ ծափ տուր։

Որպէս ցուցանմոյշ, այդ ոգով վարժեցուած խոնարհներից մի քանիսին էլ ակսեցին շնորհներով, երկրային բարիքներով օծել, որպէսզի հասկանաս խո-նարհ կեցութեան օգտակարութիւն ու գլխիդ դուրս վանես անտանք քամի-ները։

Խոնարհութիւն, խոնարհութիւն...

Խոնարհ գողացիր, խոնարհ խաբիր, խոնարհ քանդիր, խոնարհ ծխա-գիր, բամբասիր, ու գո՞ւմ եւ՝ մի քիչ էլ գրիր, մի քիչ էլ նկարիր, երգիր, հաշ-ւիր...։ Բայց խոնարհ...։ Այդպէս տան ժառանգներից փոխակերպուեցինք ան-հոգի ու հեզ անուարների։

Տէրտէրի ու սարկաւագի նշխարը մեր ախտածին պալարներին ուղղելու, բուժելու փոխարէն անտեսանելի մի ձեռքի գրգռումով ուղղեցինք հիւսիսային սառոյցների մէջ հերոսի պէս ու մանկան պէս մաքուր, միամիտ ապրող ինչ-որ ցեղի։ Անեկզաների ի՞նչ նշդրախ չարքեր հիւսեցինք նրանց մասին՝ սեփա-կան ու փոխառնուած, մոռացած Գրիգորուղի, Գոլոզ Մուկուչ...։ Նրանք վտանգաւոր են, շատ մօտ են։ Նրանց նշաարն էլ է մօտ, հարուածն էլ ապանիլ։ Նրանց պիտի մոռանալ։ Անուշադրութեան, անտարբերութեան մէջ մէկմէկու մոռացած, չգիտակցելով, որ դրանից խեղւում են իւրաքանչիւրիս արիւն ու ցեղը, արժանապատուութիւնն ու երազը, անհոգի յարահոսի անընդմէջու-թեամբ ու կազմակերպուածութեամբ նորատեսքը սարքթուէր ու անունները էինք վկայակոչում։

Ախր, ինչո՞ւ է հայերէն այդքան կատարեալ հնչում. «Գնա՛ մեռի, արի սիրեմ» անէծուած բառակապակցութիւնը։ Այնքան կատարեալ է, որ թւ-աած՝ թաղում, թւաւոր խօսք է դառնում՝ սրէ որ, գալէ գար։ Ու մեռնելուց յետոյ սիրելի դարձողներն էլ հենց նրանք էին, անկատարելիները, կարճակ-եացները, խեղկատակ տանուտէրերը։ Երբ Բագրատ Ուլուբաբեանի «Տէրը» կի-նանկարում Թուման Սարգսեան — Խոյէն Արքահայեանը կիսատառուած տը-րանկայի — խաղէինք ակղանը տախտակի վրայ արեց, ջարդեց, փշրեց, ծեծեց խո-նարհներին, ծեծուեց խոնարհներից ու վիրաւոր առիւծի պէս ղէպի իր անտառն էր գնում մեռնելու կամ լաց լինելու, կամ խելօքանալու, մէջքին երեխէքի խո-տակցութիւնն էր՝ իր երեխով, իր նմանողութեամբ, իր մաքերով։ Խաղէինինը չէր...։ Տէրը Թուման Սարգսեանն էր։ Երեւի դրա համար է շարունակում մեռնել աշունից, գարունը ձմեռուանից, ամառը գարնանից յետոյ գալ։ Հեռուստներն էլ շարունակում են մայթերով քայլել, մեքենաները՝ ճանապարհներով, բայց

digitised by A.R.A.R.@

նրանց օրընթաց, արորող վազքը զարդող լուսատուներ կան, երեխաներն էլ ծնւում են սիրուց, մեռնողի հետեւից էլ դեռ լաց են լինում, դեռ հեռախոսով գոնէ իրար ողջութիւնն են հարցնում, դեռ որդին այսպիսի մի երկխօսութիւն է ունենում հետը.

— Որ Անին նորից մերը լինի, կը գնամ, այնտեղ կ'ապրեմ։

— Իսկ Երեւա՞նը։

— Երեւանում շատ մարդ կայ։ Իսկ որ Մասիսը հենց հիմա ազատ լինի՝ ամէն–ամէն ինչ կը թողնե՞ս, հետս կը գա՞ս։

— Կը գամ։

— Բայց որ ոտքս Մասիսի փէշին դնեմ, ինձ թւում է կը ցնդի ծխի պէս։

... Դեռ արեւը արեւելքից ծագում, արեւմուտքում մայր է մտնում, մենք էլ, որքան էլ ցաւում են մարմինները ու հոգիները, դեռ ուրախանում ենք իրերի եւ երեւոյթների այդ յարատեւութիւնից, ու որքան էլ ծիծաղելի է ու հնաոճ, առանց որեւէ հաշուի, այնուամենայնիւ, սիրում ենք մեր մերձաւորներին, որովհետեւ անքննելի է բանն Աստծոյ, այս լեռ–ապառաժի մէջ, մեզ ստեղծել ու մարմիններիս մէջ բարի, կարեկից սիրտ, յիշողութիւն է դրել, որ պատմութիւնն ու աւանդ ենք ունեցել, որ ժառանգ ունենք եւ նրանց մեր հնամենի, թանկ նկարագիրը (որ բարի էր ու կարեկից, ստեղծող էր ու համբերատար, դիմացկուն էր ու դիմացող) պիտի փոխանցենք առանց խոստումների։ Յիշողութիւնը պատասխանատուութիւն է ու պարտք ժամանակի առջեւ ու նաեւ առհմիկութեան վկայաթուղթ։ Մենք էլ մանկուրտ չենք։

●

Ասում են, երբ անդամահատում են մարդուն, հին ցաւի զգացողութիւնը երկար ժամանակ մնում է նրա մէջ, թէեւ ցաւի աղբիւրը վաղուց վերացել է։ Այդպէս էլ ժամանակն է երեւի։ Անցնում–գնում է, բայց նրա բարի ու չար յիշատակները երկար ժամանակ մնում են, որպէս սովորութիւն, որպէս եղելութիւնը հաստատող փաստի զգացողութիւն։ Մեր կարճատեւ կեանքի մի քանի տասնամեակն էլ անցաւ ու հիմա արտահարուած ի՞նչ հատուածներ են անդամահատուում այդ ժամանակից։

Հասու, օրընթաց փոխւում են մեր պատկերացումները, թարմ արիւն է ներարկւում մեր կեանքի զարկերակին, իսկ ցաւի յիշողութիւնը եւ սիրոյ յիշողութիւնն էլ դեռ անմարելի են, եւ վա՜յ մեզ, թէ մարեց՝ այսօրը չենք կարողանայ գնահատել. չենք յուսայ, չենք պայքարի, չենք պաշտպանի։

Չենք ապրի։

●

Իսկ նրանք գալիս են։ Արդէն քանի տասնամեակ՝ գալիս են ու գալիս...։ Ամէն մէկը իր գաղթավայրի լեզուն ու բարքերը իւրացրած, իր տաղանդը, ջանքը, ուժն ու եռանդը, գաղթավայրի տանտէրերին թողած, ելնում գալիս են երջանկութեան կապոյտ թռչունի ետեւից՝ ահել ու ջահել։

Մեզնից վատ չգիտեն, որ այդ թռչունի կապոյտ գոյնը կապոյտ չէ՝ խանձուած քարագոյն է, որ նրա շնչած օդը նոսր է (վերեւներում օդը նոսր է), խմած ջուրը քիչ է, անունը՝ սակաւ, որ տարածութիւն չունի, թեւերը հանդիստ փռելու, բայց, մէկ է, գալիս են նրա թեւերի տակ ծուարելու։

Ու հեռուները բերած գաղթավայրի յուշը, որ վերադարձից յետոյ սկսում է քաղցրանալ (գուցէ եւ իրենց նոր նկարագրի ինքնատիպութիւնը պահպանելու բնազդից), գումարած կորուսեալ բնիկ երկրից պահած ցաւը, գումա-

digitised by A.R.A.R.@

րած վերադարձի, նորի հետ հանդիպման անակնկալները, զզվանքը մընեքի ու համակերպումը, եկուորի, օտարի, բարդոյթից ազատումը, բախումների մէջ տապակուելով, մի նոր մթնոլորտ ու չէրա են ստեղծում Տանը։

Տունը տարօրինակ տոհմածառ ունի, ուր կորուսեալ որդիների անուններով է կոչել նորերին՝ Նոր Արաբկիր, Նոր Արէշ, Նոր Հաճըն, Նոր Մուսա լեռ, Նոր Զէյթուն եւ այսպէս շարունակ…։ Հներին էլ չի մոռանում։ Նոր, Հին, Հին, Նոր…

Սրանք էլ իրենց անցը դրուեցին տանը։ Ու թէեւ կրտսեր ծնունդներ են, բայց ժառանգական ծրագրի ողջ պատկերը պահպանած՝ ու ազգների համն ու հոտն էլ են տալիս տանը, իրենցն էլ են աւելացնում, օտարամուտն էլ։ Երբ տանը վէճ է (տուն կա՞յ առանց դրա) ու այդ ժամանակ էլ, պարզ է, չափից չեն բաժանում, ինչ են իրար երեսով տալիս սխալ ու վատ սովորոյթ, արատ ու խոտորում։

Մոռացած դրանց ծնունդ տուած պատճառները, հետեւանքների փոքրիկ վրիպումներն էլ չեն ներում իրար։

Ոմանք նեղացած ու ճալըրուն, հեռանում են, եղուկ, գնացողին գտնել չես պահի, միւսներն էլ, խաղաղուելուց յետոյ զարմացած, իրար են նայում՝ բաժանելու ի՞նչ ունեն, սէր, միացնելո՞ւ ունեն, բաժանելու չունե՞ն, ինչո՞ւ են վիճում…

Ինչո՞ւ այս բանը չիչեցի։ Արդէն վաղուց, «տխրալուր» բարի բառը կորցրել է իր երկրորդ «նախնական» իմաստը, որ որպէս միամիտ կատակ առուեց տարիներ առաջ ու դարձաւ վիրաւորական մականուն տուն վերադարձողների համար։

Հա՛, մոսկովեան օդանաւակայանում անցք ունեցած մի տեսարան եկաւ աչքիս առաջ։

Մաքսատան երիտասարդ, շիկամազ, վարդայտն ջահելը, տարիներ շարունակ մշակուած արհամարհանքով նայում էր Երեւանից Ամերիկա մեկնող հայ զբօսաշրջիկների ճամպրուկների պարունակութիւնը՝ եկեղեցիների ու ճարտարապետական այլ յուշարձանների գաղուածքներով անճաշակ անձեռոցիկներ, էժանագին դրուագանկարներ, երեւանեան արտադրութեան արճամաններ, կոշիկներ, պատառաքաղներ, լուսանկարներ, բացիկներ, գրքեր, գրքեր, մի բուռ հող, մի փոքրիկ քար, մի սրուակ ջուր եւ էլի, Աստուած գիտէ, թէ ինչ։

Փերեզակի մի տարօրինակ ապրանքակոյտ։ Ու ջահելը, կարծես աչքերը զարմանքով ու զզուանքով բաց ու խուփ անելով, տակն ու վրայ էր անում այդ «էմիգրանտների» ճամպրուկները։

— Ինչո՞ւ էք այդպէս կոպիտ վարւում նրանց հետ,— կատաղած ու շացակուած հարցնում էր հայկական ինտուրիստի աղջկից թարգմանչուհին։
— Սրանք ձեր իմացած էմիգրանտները չեն, սրանք Մեծ Եղեռնի զոհերն են՝ նրանց զաւակները, ու տուժողներն են։ Հայրենիք են եկել վերապատրաստման, որ Սփիւռք պահեն։ Սրանք, որ այս էժանագին ապրանքակոյտով, իրենց գզրոցներում, անկերում, հայրենիքին նուիրուած թանգարան են սարքում, սրանք Մեծ Հայրենականի ժամանակ տանկային շարասիւներ տուեցին մեր բանակին, սրանք…,— կուում, ապացուցում ու ողբում էր թարգմանչուհին՝ տիպիկ հայկական կենսավիճակ, իսկ մաքսատան ջահել աշխատակիցը շփոթահար ու ձանձրացած՝ փորձում էր այդ հեղեղի առաջն առնել, բարեխղճօրէն աւարտել իր գործը…

Ա՜խ, ոնց էի ամաչում այդ տղայից, այդ տղայի համար, մեզ համար։ Մինչեւ հիմա էլ յիշում եմ անօթի տարափը, որ բռնել էր սիրտս ու քամում, ապանում էր ինձ։

digitised by A.R.A.R.@

Թափառականի, գաղթականի, փոքրութեան, խեղճութեան, պարտութեան, կորստի, մաքառումի, պնդաճակատութեան, կենսունակութեան համաշխարհային ողջ ակորդաշարը հաւաքած՝ այս ո՞ւր ենք գնում, ինչի՞ ենք հասնելու։ Բայց ինչու, արդէն քանի տարի է, չեմ մոռանում մաքառման այն ադայի անգիտութիւնը։

Անպարծութեան ու վիրաւորանքի բեկումների ժամանակ մէկ առ մէկ տարէթուեր ու անուններ ենք յիշում՝ հանճարների, հերոսների, գործիչների, գեներալների ու մարշալների, ծովակալների...

Աշխատութիւններ ու վէպեր են գրւում մեր պատմութեան ու պայքարի մասին, կորուստների ու յաղթանակների մասին, իսկ հենց մեր զաւակները՝ սեւամազ ու ցորնամորթ, սեփական պատմութիւն ու կենսագրութիւն չգիտեն։

Նրանց մեղքը չէ՛ է, մեծ մեղքը մերն է։ Արժէքների տխուր անզաշարժէքը մե՛նք արեցինք ու հրամցրինք նրանց։

Նիւթի պաշտամունքը մե՛նք զարգացրինք գերակշիռ ոգու նկատմամբ, տոհմը, արեան կապը փոխարինեցինք գործնական, օգտակար ծանօթութիւններով, վաստակի չափը գնահատեցինք վաստակած ռուբլիներով, ազգայինը փոխարինեցինք ձեռներէցութեամբ, համեստութիւնը՝ խոնարհութեամբ, սէրը՝ կեղծաւորութեամբ, գիտելիքները՝ ինֆորմացիայով, ձգտումները՝ նպատակայարմարութեամբ։

Իսկ սեւամազ ու ցորնամորթ մեր զաւակները իրենց մեծ ու տխուր, լուսածիր ու ամենատես աչքերով տեսնում էին այդ ամէնը։

Նրանք տեսնում էին ու հիմա էլ տեսնում են, լսում էլ են, կարդում էլ են, հասկանում էլ են, որ ինչ-որ բան սխալ է, որ իրենց հայրը ամենաուժեղն ու քաջը չէ, որ իրենց ուսուցիչը ամենագէտն ու ամենասուրբը չէ, որ խօսքն ու գործը նոյն բանը չեն՝ գնալով հեռացել են իրարից, որ «սէրն ու խաղէրը» ո՛չ միայն օտար լեզուներով են տարբեր, այլեւ իմաստով էլ։

Հետաքրքիր է, երբ ալքը՝ Թոսսամ Սարգիսեանը ծեծում էր խաղէրներին ու նրա խոնարհներին, երեխաները տեսնո՞ւմ էին վիրաւոր գազանի այդ հալւէյարգարը, իսկ որ նրան էին ծեծում խոնարհները, նրանք այդ է՞լ էին տեսնում...

Թէ դա այլեւս կարեւոր չէ՝ մենք բոլորս ծեծկուած հօր զաւակներ ենք՝ հայ ժողովուրդ, ու մեր յիշողութիւնն էլ ծեծկուածի ժառանգի յիշողութիւն է, հայեացքներս ու չափանիշներս այդ տեսանկիւնից նետած այս մեծ աշխարհին։

Բայց Աւարա՞յրը, Սարդարապա՞տը, Բեռլինի պատերն ու Պրագայի ոսկէ գմբէթնե՞րը, որ մեր հայրերի քայլերի յաղթական թնդիւնով թնդացին։

Մի օր, մի երեւանեան գիտուն, քմծիծաղով ասաց, թէ Պարսկաստանի պատմութեան դասագրքերում իսկի նշուած էլ չի Աւարայրի ճակատամարտի մասին։ Ասաց՝ Նիւսալաւուրտի անուան, այդ նոյն տարում նրա մղած այլ ճակատամարտերի մասին յիշատակութիւններ կան, Աւարայրի մասին չկայ։ Աւարայրը հզօր Պարսկաստանի համար մոծակի խայթոցի պէս մի բան է եղել, այդ մեզ համար է, արդէն մէկուկէս հազարամեակ, մնացել որպէս արժանապատիւ լինելութեան հիմք։

Միւս գիտունները էլ, որ լսում էինք այդ մարդուն, ուրիշ «մոծակի խայթոցներ» յիշեցինք։

Սուլուխի, Բաշ-Ապարանի, Սարդարապատի, Թուրքեստանի, Կերչի, Ստալինգրադի կռիւներում թափուած մեր արիւնը յիշեցինք, պատերազմական թեմաներով կինոէպոպէաները, Չուխրայի բալլադը, Չխեիձէի զինւորի հօրը, Շեպիտկոյի «Վերելքը» ու էկանք կանգ առանք մեր՝ ճակատից

digitised by A.R.A.R.@

փիղ բերող գինուորի վրայ։ Բայց, աւա՜ղ, այս գինուորը ո՛չ Նուէր Սաֆարեանի Թամանցիներից էր, ո՛չ մարշալ Բաղրամեանի բանակից։ Այս գինուորի հասցէն՝ ո՛չ ռազմաճակատային, ո՛չ տան, չգիտէինք, չէինք լսում, որքան էլ տաղանդաւոր Մհեր Մկրտչեանը փորձեց համ ու հոտ, նկարագիր տալ նրան։

Բայց, յետոյ ի՞նչ, դրանից բացուեցի՞ն որդեկորոյս, աւերակուած անեցի դռները, այրիների, որբերի սրտերը։ Հարիւր-հազարաւոր լաւագոյն սերունդը, որ գնաց երկիրը պաշտպանելու եւ չվերադարձաւ, նորից յարութիւն առա՞ւ։ Թող որ նրանք չյիշուէին օտար պատմութեան դասագրքերում, մոռացուեցի՞ն, ծո՞ւխ դարձան։ Ի՞նչ անենք, օտարի ներմուծող հայեացքով նայենք ու քծծիծա՞գ տանք մոռացումի փաստի վրայ, թէ ներսից, յիշողութեան անմարելի կրակով բորբոքուն պահենք եղելութիւնը՝ մեր եղելութիւնը։

Եւ փիղ փրկելու քաղցր-մեղցր, փուչ բարութեամբ էլ չօծենք մեր կոյտ ու քեքուշ, տառապած ու յաղթած գինուորին, որ ուր էլ դրեց ոտքը՝ տուն, հող ու պատիւ պաշտպանեց այս երկնքի տակ եւ իր ազգի բացճակատ, մարդավայել ապրելու իրաւունքը նուաճեց։

Երեկոյ էր։

Մենք դեռ պտըտւում էինք շրջկենտրոնում։ Փակ դռները բացուել ու վառուող ճրագների (տեղին չէ «լոյսերը» բառը) աղքատութեան հետ մեզ ներս էին կանչում։ Անօթիած հիւրընկալութեան շունչերը մեզ քիչ յետոյ մոռացնել տուեցին ցերեկուայ անտէրունչութեան, օտարութեան զգացողութիւնները։

Համեստ ու համով ընթրիքի սեղանի շուրջը տեղաւորուել ու վսեմ մեր պապերի ժառանգները էինք զգում մեզ՝ «զարդարուած ու բեզարած», բայց խաղաղութեամբ լի հոգիներով։ Քննարկում էինք անյարմարաւէտ ու հնացած գործերի վերակառուցման, հիւրանոցի, բաղնիքի, հիւանդանոցի, մանկապարտէզի շինարարութեան, յուշարձանների վերականգնման, գիւղերից արտահոսքի դադարեցման, երիտասարդների օգտակար զբաղուածութեան, մանկավարժների պակասի, կուլտուրական հանգստի, Երեւանի հետ հողեւոր կապերի ստեղծման պրոբլեմները եւ սպասում էինք լուսաբացին, կարծես թէ այդ բոլոր կնճռոտ գործերը հենց վաղ առաւօտից պիտի սկսէինք ու աւարտին հասցընէինք։ Եւ քանի որ արանքում սա խաղաղութիւն էր՝ խեղաթիւրէն էլ մտածում ու հաւատում էինք, որ կ՚անենք։

Ժամանակը կանգ չի առել, կ՚անե՞նք, միայն թէ չմաղձոտուենք ու չյուսահատուենք, միայն թէ կարողանանք առաւօտները դիմաւորել արտոյտի պէս։

Մատենադարանի բարձրունքից մարդու հայեացքը միանգամից ընդգրկում է Հայկական լեռնաշխարհը՝ տանեկան, հզօր, մաքուր։ Եթերի ու հողի միանութեան անպատմելի գոյներով պարուրուած, որպէս պայծառացած ուխտաւոր վերադառնում ենք դէպի Քաղաք, դէպի աղմուկը, դէպի…

ԱԼՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@



## ԱՐՏԱՇԷՍ ԳԱԼԱՆԹԱՐԵԱՆ

*Արձակագիր, թատերագիր, թարգմանիչ եւ հրապարակագիր Արտաշէս Գալանթարեան ծնած է 16 Սեպտեմբեր 1931ին, Երեւան: 1954ին կ'աւարտէ Երեւանի Համալսարանի լրագրութեան բաժինը: Ուսանողական տարիներուն՝ ան նաեւ կ'աշխատի զանազան հաստատութիւններու մէջ՝ իբր ակումբի վարիչ, քարտուղար եւ բաժնի վարիչ:*

*1954–55 տարիներուն մաս կը կազմէ Հանրապետական ռադիոկոմիտէին՝ իբր սեփական թղթակից: 1955–69 տարիներուն յաջորդաբար մաս կը կազմէ «Սովետական Հայաստան»ի, «Երեւան»ի եւ «Գրական թերթ»ի խմբագրութեանց, նախ՝ իբր բաժնի վարիչ, ապա՝ պատասխանատու քարտուղար: 1970էն սկսեալ Ա. Գալանթարեան գլխաւոր խմբագիրն է ՀՍՍՀ մինիստրներու խորհուրդի պատկերասփիւռային եւ ձայնասփիւռային հաղորդումներու Կոմիտէի թատերական բաժինին:*

*Գաբրիէլ Սունդուկեանի անուան մրցանակին արժանացած Ա. Գալանթարեան գրած է շարք մը թատերախաղեր, որոնք բեմադրուած են Հայրենի բեմերու վրայ: Անոր ստորագրութիւնը կը կրեն մեծ ու փոքր 12 գիրքեր, որոնց նշանաւորներն են՝ «Խղճի գիշերային այցը», «Մարաթոն», «Բացէք ձեր աչքերը» եւ «Կատակերգութիւններ»:*

*Ա. Գալանթարեան ռուսերէնէ թարգմանած է արձակ շարք հատորներ:*

---

**Իմ սերնդի պատանեկութիւնն անցաւ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ իւրաքանչիւր ժողովի վերջում, անկախ այն բանից, թէ ինչ հարցեր էին քննարկւում, ելոյթ ունեցողներից ամէն մէկը պարտաւոր էր բացականչել. «Կեցցէ ժողովուրդների հանճարեղ առաջնորդ, անզուգական զօրավար, գիտութեան կորիֆէյ հայր Ստալինը»:**

---

**Այսօրուայ հայեացքով կարելի է այսօրուայ կեանքին նայել եւ հառաչելով ուրախանալ, որ ի վերջոյ բախտ ունեցանք հասնել այս օրուան: Եւ կարելի է գրել այսօրուայ մասին՝ համարձակ, անկեղծ ու հպարտ, գրել ճշմարիտը, առանց «ստալինեան» վերջաբաններ…**

---

**Համալսարանի մեր դասախօսներից մէկը ամենայն լրջութեամբ համոզում էր մեզ, թէ երբ Աղայեանը գրում էր *«ծիտը ծառին ծլվըլում է՝ ծիւ, ծիւ, ծիւ»*, դրանով նա ցարական դաժան գրաքննչութեան պայմաններում, գաղտագողի ողջունում էր յեղափոխութեան ծնունդը:**

digitised by A.R.A.R.@

ԱՐՏԱՇԷՍ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

# ՊԱՅՔԱՐԵԼ ԱՅՆ ԱՄԷՆԻ ԴԷՄ, ԻՆՉԸ ԾՆՈՒՄ Է ՊԷՏՔԸ ՉԱՐԱԳՈՐԾ

....*....

**— Եթէ փորձենք համագումարի բերել ձեր գրական ժառանգութիւնը՝ որպէս արդիական, հրատապ խնդիրներ արծարծող գրող, ձեզ լիովին բաւարարո՞ւմ է դրանց հասարակական ներգործութիւնը:**

*— Իմ սերնդի պատասխանատուութիւնն անցաւ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ իւրաքանչիւր ժողովի վերջում, անկախ այն բանից, թէ ինչ հարցեր էին քննարկւում, ելոյթ ունեցողներից ամէն մէկը պարտաւոր էր բացականչել. «Կեցցէ ժողովուրդների հանճարեղ առաջնորդ, անզուգական զօրավար, գիտութեան կորիֆեյ հայր Ստալինը»:*

*Եւ գրողներն էլ իրենց հերթին ճիշտ այդպէս էլ գրում էին՝ վերջում կեցցէներ հռչակելով առաջնորդին ու մեր երջանիկ կեանքին, մեծ վերափոխումներին եւ գրական կերպարներին: Ըստ որում գրական այդ կերպարներն անթերի պէտք է լինէին: Նրանք իրաւունք չունէին սխալուելու, իրենց կեանքից բացի ուրիշին սիրահարուելու, յուսահատուելու, պարտուելու, ինքնասպան լինելու: Նրանք պարտաւոր էին օրինակ ծառայել ու յաղթել: Միայն յաղթել:*

*Այդ մտայնութիւնը դեռ երկար ժամանակ իշխում էր նոյնիսկ «Կորիֆեյի» մահից շատ անց եւ չեմ կարող վստահ ասել, թէ հիմա [illegible] վերացել է այդ ժամանակների [illegible]: Իմ «Մարաթոն» վէպը ընթերցելուց յետոյ մեր աւագ գրողներից մէկն ասաց.*

*— Ափսո՛ս, քո գործն [illegible] չի՝ գնա, որովհետեւ հերոսդ փառաւորէն չի յաղթում:*

*Հիմա, երբ ինչպէս դուք էք յայտնում՝ համագումարի եմ բերում իմ գրական ժառանգութիւնը, տեսնում եմ, որ իմ հերոսներից ոչ մէկը բացայայտպէս ոչ մի [illegible] փառաւորէն չի յաղթում: Ոչ մէկը: Գուցէ պատճառն այն է, որ ես կեանքում, իմ շրջապատում երբեւէ չեմ տեսել, որ կարգին մարդը յաղթի: Գուցէ պատճառն այն է, որ ես մի տեսակ համակրանք չունեմ այդ այսպէս կոչուած յաղթողների նկատմամբ: Որովհետեւ, եթէ պատերազմ չկայ ու հայրենիքը վտանգի մէջ չէ, յաղթանակը միեւնոյն է, արիւնով է ձեռք բերւում: Իսկ ես դէմ եմ խաղաղ օրերին թափուած արեանը: Իմ կարեկցանքը նրանց կողմն է, ովքեր իրենց արդար հացն են վաստակում եւ միայն հացով չեն ապրում: Ովքեր չեն կարող անտարբեր անցնել ուրիշի ցաւի ու արցունքի կողքով, չեն կարող տանել անարդարութիւնը: Եւ կռւում են: Բայց այդ կռիւը ոչ թէ ինչ-որ որոշումների կատարումն ապահովելու համար է, ոչ թէ յանուն հերոսութեան ու յաղթանակի, այլ որովհետեւ ուրիշ անել չեն կարող լինել: Եւ աւելի յաճախ ծիծաղելի վիճակների մէջ են ընկնում, ծեծուած են դուրս գալիս կռիւներից, պարտւում են: Բայց, միեւնոյն է, [illegible] չպարտուելով՝ մնում են [illegible], որովհետեւ նրանց պայքարը ոչ թէ կոնկրետ յաղթանակների դէմ է, այլ այն ամէնի դէմ, ինչը չարիք է ծնում եւ չարագործ:*

*Ահա հենց այդ առումով էլ ինձ բաւարարում է այդ գործերի հասարակական հնչեղութիւնը:*

*Ես չեմ ցանկանայ այսօրուայ հայեացքով նայելով որեւէ բան փոխել կամ աւելացնել այդ գործերի մէջ: Դա ճիշտ ու ազնիւ չէր լինի ժամանակի նկատմամբ: Որովհետեւ իւրաքանչիւր գործ իր ժամանակին է ծնւում եւ ընկալւում: Լաւ թէ վատ: Ցանկացած սրբագրելը ու խմբագրելը կը յանգեցնէին կեղծիքի:*

*Այսօրուայ հայեացքով կարելի է այսօրուայ կեանքերին նայել եւ համայնքով ուրախանալ, որ ի վերջոյ բախտ ունեցանք հասնել այս օրուան: Եւ կարելի է գրել այսօրուայ մասին՝ համարձակ, անկեղծ ու հզօր, գրել ճշմարտութիւնը, առանց ստալինեան վերջաւորութիւնների, առանց անթերի ու սուտ գրական կերպարների, առանց [illegible] թաքցուած գոնէ այլաբանութեամբ, այլաբանօրէն ինչ-որ բան ասել, խորը թաքցրած ճշմարտութեան մի հատիկ, որ յաճախ ոչ ոք էլ չէր նկատում: Իսկ երբեմն էլ [illegible] նման վերածւում էր զաւեշտի: Ժամանակին մեր գրականագէտներից մէկը ամենայն լրջութեամբ համոզում էր մեզ, թէ երբ [illegible] գրում էր «Միտար ծառին ծլլում է՝ ծիւ, ծիւ, ծիւս», դրանով նա ցարական [illegible] գրաքննչութեան պայ-*

digitised by A.R.A.R.@

[illegible]

Թէ մեր այդ պատասխան ինչպէս էր [illegible], մինչեւ հիմա էլ գաղտնիք է ինձ համար:

— Մարդու հոգեկան կատարելագործման համար ձեր կարծիքով աւելի շատ սոցիալակա՞ն, թէ բարոյական խնդան է հարկաւոր: Մեր գրականութեան մէջ, արդեօք, չի՞ «թերակշռում» առաջինը, որն էլ բուլացնում է երկի հասարակական հնչեղութիւնը:

— [illegible]

Իմ կարծիքով սա միամիտ մոտեցում է:

— Ձեր կարծիքով մարդկային ոգին ցարեր ի վեր կրե՞լ է որակական փոփոխութիւն: Խօսքը կատարելագործման մասին չէ:

— Այո, կրել է: Եւ դրա հանճարեղ ձեւակերպումը Թումանեանն է տուել ընդամէնը մի քառակում.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիւ դառաւ Մարդասպան:
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչեւ Մարդը իր ճամբան:

[illegible]

— Ո՞րն է ձեր յաջորդ գիրքը:

— [illegible] «Սպիտակ գիրքը»:

[illegible] 1985–1986 թթ. [illegible] 1990 թուականին [illegible] 1989 թուա- [illegible]

digitised by A.R.A.R.@

# ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

∴

Միշտ էր լինի, որ պետական ծրագիրը ոչ թէ պարտադրի, այլ առաջարկի, տայ ընտրութեան իրաւունք: Առնվազն վերաբերում է ո՛չ միայն գրողների ստեղծագործութիւններին, այլեւ՝ ժամանակներին, որովհետեւ շատ յաճախ այնպէս է ստացւում, որ սովետական ժողովրդի ստեղծագործութիւնը (անունը մեր էլ չասեմ) յատկացւում է 4 ժամի փոխարէն հարկ է լինում անցնել 6. Նոյնիսկ 8 ժամում կամ աւելին ստեղծագործութեան փոխարէն ուսուցիչը գերադասում է անցնել մէկ ուրիշը: Մի՞թէ պիտի դրա համար ուսուցչին առնանք ապա կանգնեցնել: Մենք էլ, շատ յաճախ, գլխացաւանքից հեռու մնալու համար մատնանշում յղացնում ենք պետական ծրագրի պահանջը, բայց անցնում այլ բնում: Ինչո՞ւ ուսուցչին չտրուի այնքան իրաւունք, որ ի զուր նա կեղծիքի չդիմի: Թող տրուի միայն տարեկան ժամանակների քանակը ընդհանուր, ինչպէս նաեւ լեզուինն էլ եւ առաջարկուի սովետական գրողի մի քանի ստեղծագործութիւնները: Այդպէս ուսուցիչը ազնուօրէն կը վարուի մատեանի հետ, եւ կեղծիքն այլեւս իր բնոյթ չի մնայի: Մինչեւ ե՞րբ պիտի պետական ծրագիրն այդքան կաշկանդուած մնալ, երբ մենք վերակառուցման այսպիսի փուլում ենք ապրում, եւ երբ գրականութեան ուսուցիչը ամէնից առաջ կենդանի ուսուցիչ է:

**ԳԱՅԵԱՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ**

*(Երեւանի 26 կոմիտասի անուան հայագիտական թեքումով N° 10 դպրոցի հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի)*

### ԻՐԵՐԸ ԿՈՉԵՆՔ ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՈՎ

...Ես չեմ կարող մոռանալ այդպիսի մի առաջնորդի, որի խոսքը վճռական կատարուել էր: Պատմաբանական ալեկսանդրով գրողները նրան զուր չէր նկել: Յիշում եմ, զայրով երիտասարդական թերթի խմբագրութիւն, նա կարգադրում էր մեզ արգելել գրել հմայքներ բառը:

— Դուք սոցարմաններ:

— Ինչո՞ւ: Մարգիկը հայերէն է, գեղեցիկ է:

— Չեմ ինչ ասում եմ, այն էլ արէք: Սրանց նայէք, գեն վիճարկում են...

Մէկ ուրիշը արգելում էր խմբագրին ու ռեժիսորին, Սոսիկան Շահումեանին նուիրուած ֆիլմ նկարահանել հայ գեղանկարչի մի այնպիսանք վերարտադրող կինոնկարը, որտեղ պատկերուած էին յեղափոխական պայքարի մեծ բարեկամները՝ Լենինն ու Շահումեանը: Պատճառաբանութի՞ւնը: Ինչքան, կասկածում է Շահումեանը Լենինից մի գլխով բարձր է, իսկ դա արգելուած... չի՞ վնասի առաջնորդի հեղինակութեանը: Եւ նա նոյնիսկ յուշեց լսել մեր արդարացումը, թէ իրականում Շահումեանը Լենինից բարձրահասակ է եղել եւ որ դրանից այդ երկու կերպարանի գէճերը ամենեւին չեն նսեմանալ... Նոյնիսկ չեն էլ նկատել այդ տարբերութիւնը, յարգանքի նրանց յատկանիշը բխում էր յեղափոխութեան գործին նուիրուածութիւնից: Բայց եմ ուզեցել մամուլի հետ առընչուել գեն այն ժամանակ, երբ լրագրողներին գործից հեռացնում էին Սուսլինի անունը աղաւաղուած տպելու համար: Երբոլշեւիկ մամուլի աշխատողներին համարում էր խոստովող: Երեմենկոն՝ յանձնախմբի: Լրագրողին մէկ չէին ստանում անհատական, ինքնուրոյն մտածում եւ ամէնից կարեւորը՝ հրապարակային համարձակութիւն: («Գրական թերթ», 1988, թիւ 26):

**ԽԱՉԱՏԵԼ ՀԱՄԲԱՐԵԱՆ**

### ՑԱՒՈՒՆ ՄԱՐԴՈՒ

Արդարեւ, միայն երազել կարելի էր, այսպիսի խզճմտանք ու արտացոլ մտածման, այսքան մեծ պատասխանատուութեան, այսպիսի անխոնջ ծառայական մարդն, երբ ո՛չ միայն տարրական, այլեւ կիրարկւում են հրապարակայնութիւն եւ վերակառուցում բառերը: Դրէք՝ մարդկանց համար դա յատկապէս գեղեցկական է, որովհետեւ բաժակն գրողը հնուց անտի եղել է ճշմարտութեան, բարու մաքրագործի ու պաշտպան, հարկ եղած զէպքում կեանքո՛վ հատուցելով դրա համար:

Եւ ահա, ի չաւ՝ ճշմարտութեան վերադառնալով արժէքները, մեր օրերում սուր, խարանողաց հայեացքով նայելով մեր ներս ու դուրս, անհանգիստ՝ շատ բան փոխուած է, շատ բան էլ աւելին երէկ ասում է նորովի: Արդեօ՞ք ենք զգալու եւ ո՞ւր ենք գնում, ինչո՞վ էինք ապրում երէկ եւ ինչո՞վ այսօր:

**ԱՆԱՀԻՏ ՓԱՐՍԱՄԵԱՆ**

digitised by A.R.A.R.@



## ՍՕՍ ՍԱՐԳՍԵԱՆ

Խորհրդահայ թատրոնի եւ շարժապատկերի տի-րական դէմքերէն Սօս Սարգսեան ծնած է 24 Նոյ-եմբեր 1929ին, Ստեփանաւան։

1954ին կ'աւարտէ Երեւանի գեղարուեստա-թատերական հիմնարկի դերասանութեան բաժան-մունքը։ 1949–51 կը՝ գործէ Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոնին, իսկ 1954էն սկսեալ՝ Սունդուկեանի անուան թատրոնին մէջ։ Այդ թուականէն ի վեր հանդէս կու գայ նաեւ իբրեւ բե-մադրող, իսկ վերջին տարիներուն՝ նաեւ իբրեւ աշ-խոյժ յօդուածագիր։

Հայրենի թէ խորհրդային բեմերու վրայ, Սօս Սարգսեան կը մարմնաւորէ բազմաթիւ կերպար-ներ, որոնց գլխաւորներն են՝ Արտաշէս (Գ. Տէր-Գրիգորեանի «Վերջին մեխակներ» թատերախա-ղին մէջ, 1958), Զեմգիմով (Գ. Սունդուկեանի «Պէ-պօ»ին մէջ, 1966), Տոն Քիշոթ (Բուլղակովի «Դոն Կիխոտ»ի մէջ, 1968), Տիպալտ եւ Եագօ (Շէյքսփիրի «Ռոմէօ եւ Ժուլիէթ»ի՝ 1964 եւ «Օթելլօ»ի մէջ, 1969), Գրիգոր (Սարոյեանի «Խաղողի այգին»ի մէջ, 1971), Մոսակ Աւագեան (Զարեանի «Հայաստան»ին մէջ, 1981։

Սօս Սարգսեան նաեւ հանդէս կու գայ մեծ թէ փոքր պաստառի վրայ, մարմնաւորելով բազմաթիւ տիպարներ։ Հայրենի շարժապատկերի մէջ մարմ-նաւորած իր հերոսներէն նշենք գլխաւորները՝ Մկրտիչ («Եռանկիւնի»), Միլիցիայի ջոկից («Մենք ենք, մեր սարերը»), Ռուստամ Մկրտիչ («Հեղնար աղ-բիւր»), [illegible] («Քաոս»), Նահապետ («Նահապետ»), Զորի Միրօ («Զորի Միրոն»)։

1975ին կ'արժանանայ ՀՍՍՀ պետական մրցա-նակի։

Համատեղ պէտք է ապրենք մեր հսկայ երկրի հետ, սակայն չպէտք է մոռանանք, որ ամէն ժողովուրդ ունի իր դէմքը, իր ճակատագիրը, պատմութիւնը։

Ասում ենք Սարդարապա-տի ճակատամարտ, ասում ենք ժողովուրդը ելաւ, յաղ-թեց։ Բայց ղեկավար է ունե-ցել այդ ժողովուրդը, իր Մի-նինը, իր Պոժարսկին։

Մեր կողքին գաչաղներին հերոս են սարքում, մենք եր-դուեալ մեր հայրենասէր-ների սրբացած անունները վախենում ենք տալ։ Իրերը կոչենք իրենց անուններով։

digitised by A.R.A.R.@

Ս. ՍԱՐԳՍԵԱՆ

# ԾԱՌԸ՝ ԾԱՌԱՒ

*Պայմանները թելադրեցին, սուտն էլ շատ է վարակիչ՝ սովորեցինք սուտին ապրուստ տալ, ապրուստին՝ սուտ: Սուտ...: Գրիպի համաճարակի պէս մի բան, դժուար կանխուող ու երբ դառնում է համընդհանուր, ամօթը մեռնում է:*

*Ուրեմն չեղածը եղածի տեղ դնելը դարձաւ ապրելու նորմա: Կշեռք անելիս ամանի քաշը դուրս չհանեցինք, ապրանք շրանեցինք: Ազնիւ ու հին այդ պայմանը այս հին բառի նման մոռացուեց: Կշռուելիս մի երեքանոցով կաշառեցինք կշռորդին, թէ մի քանի քիլօ աւել գրի: Գրեց: Խաբեցինք, խաբուեցինք...: Բայց մեզ առանցը մեզ ծնող հողն է, ու նա գիտի՝ մեր քաշը մնաց նոյնը, չէ, չաւելացաւ: Հողից չենք ամաչում...:* «Այնտեղ՝ ուր մեղք են գործում շատերը, ոչ ոք հաշուի չի առնում. փոքր արարքները պատժւում են, մեծերը՝ պարգեւատրւում»: *Դեռ երբ է ասել Մաքիավելին:*

*Աշխարհում առաջինը լինելու համար հարստանալը դեռ քիչ է. օրինակելին աստղ էլ պիտի լինի ու ոչ միայն մարմնով, ու ոչ միայն չափորդների աստղը հնչիւններով...*

*Իսկ կեանքն ովկիանոսի պէս ծփում է իր բարդութիւններով ու քաշահարում մեր լուսանկարչական կեցուածքները:*

*Եկաւ կոմունիստների քանդօթերորդ համաժողովը: Հունը թողնելով նոյնը, կոմունիստները, խնդիր են դրել դասը մաքրել կեղտաջրերից, քանդել անմաքուր հոսանքների ճանապարհը: Ուզում են մեզ թմրութիւնից հանել, մանաւանդ կշեռքի գործը կարգաւորել: Կենտրոնում: Մենք հեռու ենք կենտրոնից, առայժմ ուրիշի արածն ենք քննում կուլիսներում: Երբ ենք բեմ դուրս գալու...*

«Օրէնք դարձնենք՝ իրերը կոչել իրենց անուններով, ամէն ինչի մասին դատել շիտակութեամբ»: *Գլխաւոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովի խօսքերն են: Սորվելու շատ բան: Բայց եւ* «սովորութիւնն՝ այդ բռնակալը...» *ակամայ միտք են գալիս Շեքսպիրեան այս խօսքերը, եւ էն ով է, որ առանց կռուի զիջելու է ձեռք բերած արտօնութիւնները, չէ, այս խնդրը դեռ շատ ջուր է ուզելու: Թող ուզի: Պատմական շրջադարձ է, վերակառուցում է: Համատանք: Մասնագիտականներս էլ վերակառուցւենք (եթէ ազնիւ ենք), մշակենք մեր սեփական կարծիքը (եթէ ուժ գտնենք հրաժարուելու արդէն ձեռք բերած...* «սովորութիւնից»*), ճշտենք ում կողմից ենք, իմանանք՝ ինչն է, որ մեզ է վերաբերում:*

*Ամէն ինչը:*

digitised by A.R.A.R.@

Տարիներ առաջ Արեւմտեան Բեռլինում միջազգային թատրոնի կոնգրեսին ես էլ էի մասնակցում: Թատերական մեծութիւններ Ժ.-Լ. Բարրոն, Բրեխտի աշակերտները, շատերը խօսում էին անիրաւուած պաղեստինցիներից, Լիբանանից, համամարդկային այլ պրոբլեմներից, եւ յատկապէս, եւ շատ կրքոտ պահանջում էին թատրոնից, որ ամենաանզիջում պայքար մղի հոգեւոր արժէքները ոչնչացողների դէմ, բռնութիւնը ապականողների դէմ: Էսթետութեան ոչ մի նշոյլ···

Համատեղ պէտք է ապրենք մեր հսկայ երկրի հետ, սակայն չպէտք է մոռանանք, որ ամէն ժողովուրդ ունի իր դէմքը, ճակատագիրը, պատմութիւնը: Իսկ նախճիրների միջով անցած, բացառիկ ճակատագրի տէր հայ ժողովրդի երկխօսութիւնը աշխարհի հետ կարեւոր կէտերում մնաց կիսատ: Համատեղ ապրելուց լաւ բա՞ն: Բայց արդեօք դա նշանակո՞ւմ է, ինչպէս ոմանք են կարծում, ամէն ինչ մոռացութեան տալ, եղած-չեղածը լցնել մի ընդհանուր կաթսայ, անանուն մի կերակուր եփելու համար: Նոր էջը, թէկուզ եւ «ոսկեայ», ընդամէնը մի էջ է, եւ ոչ երբեք գիրք···

Ինտերնացիոնալիզմը չի կարող նշանակել մոռանալ կամ հրաժարուել այն ամէնից, ինչը պատմականօրէն, կենսականօրէն քոնն է: Ինտերնացիոնալիզմը նախ եւ առաջ ազգամիջեան փոխյարաբերութիւնների սոցիալիստական էթիկա է, նրա նորմերի պահպանումը: Բոլորի համար պարտադիր: Մինչդեռ հանդիպում օրերին ժպտադէմ արտասանած ճառեր լսելիս միտք է գալիս գետնին հաւասարուած Ագուլիս հայոց քաղաքը, որի գերեզմանատան տապանաքարերի վրայ դմակաւոր ոչխարն աղ է լիզում՝ լիզելով է մաշում հազար տարեկան «գրագէտ քարը»: Լռում ենք, երբ տեղեակ չենք, երբ մերը չի, մեր շնորհքով ու քրտինքով չի կառուցուած, երբ անտէր ապրանք է ու եթէ ձեր ու մեր բարեկամ լինելուն խանգարում է՞ ոչնչացրէք···: Բաւ: Քաղցր ժպիտի համար շնորհակալ ենք ու բուռն ծափերով ամրապնդում ենք ժողովուրդների անխախտ բարեկամութիւնը···

Իսկ պատմութիւնը երբեմն վէր է ածւում պատառ չարագրանքի: Յօրինում են սեփականը, ձեռի հետ էլ մեզ խմբագրում: Եկուոր էք (ուրիշ մոլորակից ենք եկել, իջել Հայաստան), ձեր խաչքարը ձերը չի՝ մերն է, էդ գորգը մերն է, ձերը չի··· պատմութիւնն էս մէկինն է, ճարտարապետութիւնն՝ էն մէկինը···: Իսկ Շուշի քաղաքում Առաքելովների կառուցած հոյաշէն դպրոցը, Առաքելովի, որ ջրատար անցկացրեց քաղաքում, որ բարի գործեր շատ արեց, էն, որ մահանալուց առաջ խնդրել էր, թէ դագաղում ձեռքերս դրէք այնպէս, որ ափերս բաց լինեն, երեւան, որ մարդիկ տեսնեն, որ հետս ոչինչ չեմ տանում, ամէն ինչ թողնում եմ հարազատ քաղաքիս··· ժողովրդին···

Եկուոր ենք···: Դիցուք եկել ու նուաճել ենք··· «Ուրարտուն»: Վաթսունեօթ տարի առաջ ամէն ծէրից մեզնից կտրածն ու խլածը չենք կարողանում ետ առնել, երկու հազար տարի առաջ մեր նուաճածը, մեր Հայաստանը հիմա ո՞ւմ տանք, տիրոջը որտե՞ղ գտնենք, երկու հազար տարուայ պատմութիւնն ո՞ւմ նուիրենք:

Սրբագրում են, վերաձեւում, կարում-հագնում են եւ ուրիշի զգեստով ներկայանում աշխարհին: Թէ գնա՛ ու յիսուն տարի յետոյ ապացուցիր, որ սուտ է: Մեր աչքի առաջ ոչնչացնում են Անին, մենք լուռ մզկտալը դարձրել ենք ազգային բնաւորութիւն: Հակառակի պէս էլ այնքան ենք կիրթ ու դաստիարակուած (կամ անտարբեր ու ծոյլ), որ տեսնելով ուրիշի լկտիութիւնը ամաչում ենք նրա փոխարէն, լռում ենք մատաղացու ոչխարի սուրբ հնազանդութեամբ: Եթէ պատմութիւնը գիտութիւն է, ապա···: Ապա ո՞ւր են մեր գիտնականները: Երեւան, թէ Ուրարտու, Ուրարտու, թէ Հայաստան···: Հայ

digitised by A.R.A.R.@

գիտնականները, ինչպէս ասում են, մոլորուել են երեք նաճիների արանքում: Գողը, որ տանից լինի՝ եզը երդիկից կը հանեն…: Այսպէս:

Կամաց-կամաց մեզանից որը դառնում ենք մենք, կամաց-կամաց մեր մէջ էլ են բուսնում մեզ մեզանից հանողները (արգելում են նոյնիսկ յիշելը): Անշուշտ մեզանից ենք՝ չենք ուզել սարուել մնալ: Բայց դա մեր իրաւունքն է:

Արեւմուտքում յատուկ ինստիտուտներ կան ազգամիջեան մեր գործերն ուսումնասիրող: Սուր արմունկները գործի գցելը մի դէպքում, լռելն ու խեղճանալը՝ միւսում, տանում են գցում սոցիալիզմի հեղինակութեան վրայ: Պատկերը փչանում է:

Պատմութեան մէջ անձնական իմ գանձը իմ ապրած ժամանակն է: Սրա հետ է իմ հախ ու հաշիւը, իմ սէրը եւ ատը, իմ պատիւն ու պատասխանատուութիւնը, ուրախութիւնը, անմիջական ցաւը: Բայց կարելի է ապրել եւ դուրս լրթունքներով, եւ դրա պատասը բերանում ու չզգալ ո՛չ անցեալի, ո՛չ ներկայի կծուն, կարելի է ապրելու հրճուանքից պարզապէս արճիկ տալ, անմիտ ծուլ-ծուլ լինել…

Հարեւաններ ունենք՝ հացն ամբարել են վաղուց, հիմա գաթա են թխում: Ընդօրինակում ենք՝ մենք էլ ենք գաթա թխում. պակա՞ս էսթետներ ենք…: Հա, բայց լէն օրուայ գործերի հաւե՞լ ենք որ:

Հսկայ սառցաբեկոր է Տասնհինգ Թուականը, արիւնը միջին լերդացած այսբերգ, պատմական մեր ուղու վրայ: Հմուտ ցատկորդներ ունենք՝ վրայից ցատկում են, ճարպիկ շրջանցողներ ունենք, շրջանցում են, բայց Նա կայ՝ անդողդ, սառը արուեստի խացում է մեր յիշողութիւնը, մեր նաւի բնական ընթացքը խաթարում ու մոռանալու մասին կոչերը չէ, որ Նրան հալեցնելու են…

Ճշմարիտն այն է, որ պահանջին ծառայենք, պատմական իրադարձութիւններից բխող արդարադատութեամբ շարունակուենք…: Էսթետիզմը նեղլիկ կածան է՝ չեղ է գնում, ժողովրդի ճամբից մեզ դուրս է գցում…: Դերասան ես, Թատրոն-կինո, պէտք է նման լինես քեզ ծնող ժողովրդին: Ես ինչո՞ւ է քրաինը մէջքին ունեցածը քեզ համար հաց անում, տատուոնները էլ դեռ ուզում ես կաթ խմել՝ ուզարկում է…: Բայց ինչո՞ւ ես տանում՝ ժողովրդի անեկալիքների արտայայտող…

Անցնենք առաջ:

Հիմա միայն հերոսի մասին է: Մեր մէջ ապրող, որ ինքնահաստատուել է կեանքում, որ իրաւունք է նուաճել բարձրանալու բեմ: Բայց արտաքից վերցնենք, եթէ կեանքից բացակայ են, կամ այնքան են սառեցում, որ մեր խեղճ դրամատուրգները տեղները չեն գտնում: Իսկ միգուցէ լաւ չեն փնտռում. փնտռելն էլ մտածելու պէս ծանր գործ է…

Տարօրինակ է, որովհետեւ փոքր երկիր է, այսօր Հայաստանը՝ մեծ պրոբլեմներով՝ ճիշտ ու սխալ լուծուած, չլուծուած…: Պատմութիւն, ճակատագիր… ծով հարստութիւն ու չենք կարող չունենալ արուեստ՝ համամարդկային ընդհանրացումների համար, չեն կարող չլինել ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒԷՐ որդիներ: Վերջին հարիւրամեակը դոնէ խտացուած-քամած դրամատիկական նիւթ է, ողբերգական ճակատագրերի սիւժէներ: Ու թէեւ փոքր ազգ, բայց մեծ պատմութեամբ…

Հերոս, ուժեղ մարդ, անհատականութիւն, խիղճ, պատասխանատուութիւն…: Տրաբուած հարցեր, արգէլ բացած դրաքներ: Սեւան…: Ու ժող չի հերիքում՝ ափին կանգնած, սառած ձկները ոտքերից տակ չուա գաա, հայեացքով գտնես ջրի ծփանքի նախկին տեղը՝ ապիտակ եզրը: Չէ, չուտ չես գալիս-քեզ իրը մխիթարում ես, որ Սեւանի նախկին, ամէհի, ժեռոտ ափերը նրա բիւրեղ լիական վեհութիւնն ու չատաչող վայրկութիւնը շրջապատել են քաղցր-մեղցր

digitised by A.R.A.R.@

ծառ ու կանաչով. զարդարել սովորական մի «պեղատեսիլ», «բաղդրենական» լճակ: Մեր անկրկնելին նմանեցրինք: Ընդօրինակեցինք: Էժան ենք...

Չէ, չուռ չեմ գալիս, վախենում եմ սիրտս ցավից ճաքի, վախենում եմ այդքան եզրը Թոյն Թքի՝ արհամարհանքի ու վրէժի, վախենում եմ, որովհետև մարդ եմ, բանականություն ունեմ, բայց այդքան եզրին նայելով սեփական գլուխդ գառնուկ—կլոր առու է թվում քեզ այդ պահին...

Սևանին մահացու վերք ենք հասցրել ՄԵՆՔ: Մէկը չդացել է այդ միտքը: Մասնագիտական—արուեստագէտներիս մէջ առող չկայ՝ ո՛չ յղանար, ո՛չ գալարէր էն ձորը, որ Սևանը առաջի պես շուռ տանեց: Գինս չգրունց, կինս չներկարունց...: Ներե՛նք հայ գրամատուրգներին: Իրականում անողի ձեռքը բանող չի եղել:

## ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐ

Հայոց Ակադեմիայում «կարգինայների կոնկլավը» համբացել է, պապանձուել է, բայց հնարաւոր է ծափահարած լինեն...

Իսկ Սևանը ՆՐԱ, ԻՄ, ՔՈ կեանքի ժամանակահատուածում ծածանի բնակառաջի է դառնում: ԿԱՊՈՑՏ Սևանը գեղնականանայում է: Իսկութիւնն այս է: Այս ենք տեսնում: Երկիրը մի տասնամեակինը չի, մի սերունդինը չի, մի մարդունը չի...: Մենք մեր բաժին «ընչանը» կերանք: Անխելու է հօրն այն որդին, որի համար նա Հայոց փոքրիկ գետակներից կարմրախայտ է որսում դինամիտով, որ իր բալիկն ուտի: Անխելու է, քանի որ վաղը ինքն էլ իր բալիկի համար է ուզելու կարմրախայտ բռնի, բայց չի լինելու: Դինամիտով, քլորով, գործարանով սպանում են գետերը...: Ականջդ կանչի Թումանեանի Դեւ—Բեգ... Մեղա՛յ...

Կուռթան գիւղի առակ, Ղաշաղանի ձորում այգեպանն ինձ ասաց. «Առաւօտը ծէգին երկու հրաշք եղնիկ անտառից դուրս են գալիս դէպի գետը, ջուր խմելու: Նայում եմ, տատրս հեքիաթները միտս են գալիս...: Բայց մարդու բան չասես, չան ազգերը, որ տեղն իմացան, կը գան կը սպանեն, կը լափեն»...

Ու սպանողի ձեռքը բռնողը չկայ, երկրի հարազատ զաւակը չկայ...: Համարեա՛ չկայ իրականութեան մէջ, համարեա՛ չկայ արուեստում: Էկոլոգիական խնդիրները աշխարհը ցնցել են՝ մենք բաժ ենք հանում կիսաքաղքենի, կիսագիւղացի, կիսաչար, կիսաբարի արարածները: Փուճուր մարդկանց, պուճուր տառապանքներ...

Դրամատիկ թատրոնում՝ դրամատիկ վիճակ...

Միջին դարերում Սանդուխտի կաթողիկոսը արգելել է ժողովրդին թատրոն գնալ (յատուկ կոնդակով), Լուդովիկոսները Մոլիէրին վտարել են Փարիզից, Անգլիայի թագաւորները, ուսա արքաները հալածել են, օրէնքից դուրս են յայտարարել, վախեցել են անօթեւան, սոված դերասաններից: Ինչո՞ւ...

Սրանք մի բան են տեսել, որ ուրիշները չեն էլ նկատել, բարձրաձայն մի բան են ասել, որ միւսները մտածել են միայն: Քսաստուն տարի է թատրոնում եմ, չեմ յիշում, որ ՎԵՐՍԻՒՑ մի ներկայացում արգիլուի, մի ֆիլմ փակուի: Ինչ ենք ասում, որ արգելուի...: Մենք մեզ համար խաղում ենք գրուած-թխած պիեսներում: Լեռնային գիւղերն անդարձ աւերեցին, ասինք՝ այո, կեցցէ, իմաստուն է, խոշորացնենք գիւղերը: Ցեղոյ հակառակ որոշում ընդունուեց, էլի ասինք՝ կեցցէ...

Երեւանի Ալափնեակը, յիշում եմ, ընդունուեց որպէս ճարտարապետ—

digitised by A.R.A.R.@

տակած մաքի փայլատակում. քանդում է, պարզում է տեղանքը սխալ է ընտրուած: Հանճարեղ Թամանեանի հոյակերտ Հրապարակին կից դրւում է «Ռոսիա» կինոթատրոն, դիմացինն էլ կախովի պատշգամբներով հսկայ ու անհեթեթ մի շէնք, ասող չկայ՝ չի ասում, էս ինչ էք անում, Թամանեանն ախր կը նեղանայ...: Հարաւ-արեւմտեան զանգուածը...: Ոսկու գին ունեցող հողերն ինչո՞ւ են թաղւում ասֆալտի տակ...: Այս որոշումներն ընդունող մարդիկ իրենց գործից որքա՞ն են տեղեակ, մտահասու...: Չկայ այսպիսի հարց տուողը, հետաքրքրուողը, հակառակ գնացողը չկայ...

Չէ, մեր պաշտօնեաները պէտք է որ շատ գոհ լինեն հայ մտաւորականութիւնից, մեր ձեռից չնեղուեցին, մեր պատճառով նրանց ախորժակը չփչացաւ, հոգին չխռովեց, կասկած չընկաւ սրտները, թէ արդեօք ճի՞շտ են դրաւում իրենց տեղերը, բարոյակա՞ն է, առաքինի՞ է, ազգօգո՞ւտ է իրենց գործունէութիւնը...: Ու չնայած այն՝ վերը տուած դերասան-մտաւորականների յանդուգներն ենք՝ չհալածուեցինք: Ամէն մէկիս մի բան տուին, մի կոչում, մի պաշտօն, մեղայ ու ճոխ ենք գնում իրար հետ...

Մենք էլ ենք շնորհակալ...: Բայց ամէն մարդ տաղանդաւոր լինելու իրաւունք չունի...

Սովետաշէնի ճամբան բռնի, Գալինայի, մանր Աշտարակ, Ապարան, Ծաղկահովիտ Ալագեազի տիպային շէնքերը կարծես յատուկ ցուցադրում են տասը ճանապարհորդին բնանէ կամ մաթն վրան երկաթեայ անպաշտպան ճաղերով պատշգամբներ՝ աղեղ, անճաշակ, գորշ: Հասիր Սպիտակ: Սպիտա՞կ է որ...

Չերկարացնեմ: Ուր էլ գնաս՝ տիպային բնակելի շէնքեր, տիպային դպրոցներ, մանկապարտէզներ, տիպային գոմեր...: Տիպային մարաջաղ անճաշակութիւն:

Շրջանում ապրող մարդկանց համար իրենց կենտրոնը, շրջանի մայրաքաղաքն է (առաջիններում գիրք են ունեցել). այս հողերանութիւնը նկատի առնելով պէտք է կառուցել շրջկենտրոնը՝ աւանդները, բնաշխարհին ապրող երանգաւորումները չկորցնելով: Մեզ օրինակ՝ Սիսիանը, կամ Իջեւանը, վերջապէս աւանդական-դասական Գորիսը:

«Տանդ դարպասը քանդիր կամարակապ սարքիր...: Քաղաքիս պատկերը մուրտառում ես: Շինածդ դարպասը կա՛մ կամարակապ պիտի լինի, կա՛մ չպիտի լինի...», — Սերօ Խանզադեանն գրքում այսպէս է խօսում գործկոմի հետ քաղաքային նախագահը: Քաղաքի տէրը ՏԻՐՈՒԹԻՒՆ է անում...: Աւանդուած է կառուցել՝ «Դարու եւ ոչ՝ տարու համար»:

Ու թուանշերկու գոյնի քար ունենք- հարստութիւն, բնութեան պարգեւ, ինչպէս կ՚ասէր Ռաֆայէլ Իսրայէլեանը: Դրանք տեղը դնել է պէտք...: Քաղաքին տարբերութիւն է պէտք, որ դրուի՝ այնինչ թուականին, քաղաքապետ այնինչի օրօք, այնինչ ճարտարապետի ձեռամբ բարձրացաւ այնինչ շինութիւնը: Բարոյական մեծ պարտք ունենք՝ սերունդներին տալ այսօրուայ «հերոսների» անունները...

Իմ ծննդավայր Սովետաշէնը յայտնի էր կղմինդրէ կարմիր տանիքներով: Աչքդ շոյում էր ծառերի կանաչի հետ պար բռնած կարմրութիւնը: Ուզում եմ մեղմեմ խօսքս, բայց Սովետաշէնի ամէն թերացում իմ ցաւն է, ամէն յուշ՝ մի փուշ:

Ս. Շահումեանի հսկայ արձանը վիթխարի-շէնք թանգարանով դրուած է փոքրիկ քաղաքի միջնամասում: Երեւանին յարմար չափեր: Ճնշահեղձ է լի-

digitised by A.R.A.R.@

նում քաղաքը, ստորանում է մի տեսակ։ Ակամայ յիշում եմ նախկին տուն-թանգարանը, կղմինդրէ տանիքով, գեղեցիկ պարտէզով, ծաղիկների մէջ թաղուած մեծ յեղափոխականի համեստ, հրաշալի կիսանդրիով։ Պատմութիւն էր, յուշ–մատեան էր, ակնածանք...։ Շահումեանը ԱՅԴ տանն էր ապրել, ԱՅԴ պարտէզում էր կանգնել։ Նոր շէնքը հիմնարկ է...։ Թող ների թուլութիւնս, բայց չեմ կարող չյիշել Սանփանասեանի մաքուր փողոցները, փոքր, բայց միշտ աշխոյժ շուկան (հիմա շուկան տարել են ծայրամասում թաղերից, ամայել են տանուտրից, գաղափարներով են սնուել չքնաղ ոտքերը) եւ հին խանութների շարքը, դէպի ձորն իջնող մեծ սալաքար աստիճանները, աջից իրար կպած որ-հեստանոցները, դիմացը քարէ աղբիւրն՝ իր երկար գոգով, պղնձէ ստուիծի երախ ծորակով (այդպիսի արուեստով հիմա ով կը սարքէ Լոռուայ քաղաքում) եւ, վերջապէս, քարէ գլխին դրած եկեղեցին, որի վեհութեամբ հպարտ էր Լոռուայ հարթավայրի գրեթէ ամէն ծայրից։

Եկեղեցու զբաղեցրած տեղում, հին տապանաքարերի, խաչքարերի տե-ղում զօռ տալով խելքներին ու կառուցեցին... ռեստորան։ Լոռուայ ձորերը խնկարկուեցին քաբաբի հոտով...

Ձորերում, եթէ Լրագրողների փոխարէն (ի հարկէ, նոյնպէս քանդուած են) հիմա գործում է մի ճենճահոտ խորովարան–ճաշճանոց...։ Ու ասում են HOMO SAPIENS կը նշանակէ՝ մարդ բանական...

Լոռուայ ձորերում հիմա լրագրողներ չկան, հաճելի ոգեր՝ որքան ուզէք...

Հազարամեակներում յղկուած գիւտ էր Լրագրողը. հոգեբանութիւն, գեղագիտութիւն, հարիւրից աւել հայերէն բառ (որ ինչո՞ւ ենք կորցնում), էներգիայի խնայողութիւն, այլահամ մարդ...

Չէ, չկար անգամ այն հերոսը, որ կուրծքը դէմ անէր պապերի առեղծուա-ծի համար։ Մինչդեռ հնութիւնը կիրառական կենսագրութիւն է, երէկ՝ պատ-մուածք, այսօր՝ լեգենդ, վաղը՝ մարդուն հայրենիքի հետ կապող բարոյական կատեգորիա։ Սանդուղքի ներքեւի աստիճանը թէ քանդես հնութիւնը ու կը մնաս օդում կախուած...։ Աշխարհում ուժեղ քամիներ էլ են լինում...

Առանց հերոսի ի՞նչ պատմութիւն, ի՞նչ դրամա։ Բայց ախր ապրել է մեր մէջ Ռաֆայէլ Իսրայէլեանը, որի ստեղծումները պայքար են, հոսանքին հակա-ռակ մտածելակերպ, գործունէութեանը՝ կռիւ, որի հայրենանուէր կեանքը մի պիեսի, մի սցենարի նիւթ է։ Ո՞վ կը թափանցի այս հոգիների խորքերը՝ բեմ հանելու, կեանքին վերադարձնելու համար։

Առայժմ մեր հերոսին մեզ դրսից են մատնացոյց անում։ Կարապետեան Ճուարչը իրեն վտանգելով (ԿԱՄԱՒՈՐ) ուրիշների կեանք է փրկում, «ՀԱՅ-ՖԻԼՄԸ» թեմա է փնտրում...։ Թէ՝ դադարել ենք հաւատալ մեր հերոսանա-լուն, թէ՝ ծանր հիւանդացել ենք. անունն ի՞նչ դնենք...։ Ասենք ՑԻՆԻԶՄ-ախտ։

Ուրիշը մեր վարն անելու չի, ու գայթակղի փէշերից կախուելն ամօթ է։ Որքանով է ինքնանկախ գեղարուեստական մեր միտքը, որքանով ենք մենք մեզանով, այդքանով էլ կը հետաքրքրենք ուրիշներին։ «Գնա՛ եւ տես» ժա-պաւէնը պէտք է որ ռուս Էլեմ Կլիմովը նկարէր, պէտք է որ վրացիները «Զղջու-մը», մենք պէտք է որ «Նահապետը» նկարէինք...։ Այսօր Բրէդ Թերթ ենք նկարահանում։ «ՀԱՅՖԻԼՄ»ում։ Օտար նիւթով համամարդկային, համաշ-խարհային, գլոբալ հարցեր ենք լուծելու...։ Մեր հարց ու խնդիրը լուծել–պըր-ծել ենք։ Եւ հանրայայտ ճշմարտութիւնները յիշեցնող չկայ, ասող չկայ՝ ա՛յ ընկեր օտարամոլ, Ֆիլմը աշխարհահայեացք է, քաղաքական դիրքորոշում է, ժո-ղովրդի պատմութիւն է, ազգային հոգեբանութիւն է, դարդ ու ցաւ է...։ Ուրիշ տեղից բերածը քո տանը ընդամէնը անբան սուվենիր է...։ Առաջ գնանք...

digitised by A.R.A.R.@

Մեծ Ռուսիայի այսօրուայ մեծ քաղաքներից մէկն ապրում է՝ ինձ ոսս մարդուս բնաւ չի ուրախացնում, ենթադրենք, մի ժողովրդի դանդաղ, տառապաճանապարհ վերանալը, ոչնչանալը, հեռանկարը, նրա ամբողջական ձուլումը մի ուրիշ ժողովրդի հետ: Ինչպիսի՛ անձկութիւն կը գայ աշխարհ, ինչպիսի՛ ձանձրոյթ կը հեղեղի մեզ, եթէ մնար միայն մէկ լեզու, էսպերանտոյի նման: Ինչին է պէտք նման տաղտապան...

Ժողովուրդների բարեկամութեամբ նուիրուած տասնեակ ճառերն ու միտինգները, կարծում եմ, չեն կարող այնպէս ամրացնել փոխհասկացողութիւնը, եղբայրութիւնն ու սոցիալիզմի հիմքերը, որքան այս մի քանի տողը: Այսպէս դատելու, այսպէս մտածելու համար պէտք է ռուս ծնուել: Պէտք է լինել ռուս մտաւորական:

Հայաստանում ապրող ադրբեջանցի երեխան յաճախում է մայրենի լեզուով իրեն դպրոցը:

Թբիլիսում հայ մի ընտանիք մեզ հիւրընկալեց. նրա մասն երկու մանչուկ, սեւ աչքերով, առոյգ, սիրուն: Հետները խօսեցինք, չփոթուած աչքերը ճպճպացրին: Մայրը վրայ հասաւ.

— Երեխէքը հայերէն չեն գիտում (ինքը գիտի), վրացու դպրոց են գնում...: Էնդուր, վրացու դպրոցը մօտիկ ա:

Վրաստանում, Ադրբեջանում սփռուած կրճատուեցին հայկական դպրոցները: Մենք մեզ համար նեղանում ենք: Բայց ի՞նչ անեն մարդիկ, որ դու չես յաճախում: Զոռո՞վ տանիցեն: Առանց այն էլ վրացիները ամէն գնով պահում են հայկական թատրոնը: Զահէլ, հայրենասէր մէկը չկայ, մի ռեժիսոր, որ գնայ գլխաւորի այդ այնքան հարուստ աւանդներով թատրոնը: Դերասաններ էլ չեն գնում: Գեղարուեստա—Թատերական ինստիտուտի մտքով էլ չի անցնում նախաձեռնող դառնայ, Վրաստանում ապրող հայ երիտասարդներից մի նպատակային կուրս հաւաքի... մի խօսքով: Նոյնը՝ Ստեփանակերտի թատրոնը...: Հայոց մշակոյթի օջախներ, անտէր թողած գործեր...

Վերադառնանք մեր տուն...

Ճակատագիրը, փառք Սովետին, վաղուց մեզ ցաքուցրիւ չի անում, իսկ հայոց դպրոցներում երեխաների թիւը դժուար է աւելանում: Հարազատ հողի վրայ, Հայրենիքում: Հայ տիկինները գոնէ նախանձեն իրենց քթի տակ ապրող ադրբեջանուհի իրենց քոյրիկներին, որոնք տասից պակաս երեխայ չեն ծնում ու արժանանում «Հերոսուհի մայր» կոչմանը: Այդ մասին մեր տիկինները անշուշտ կարդում են «Սովետական Հայաստան» օրաթերթում: Իրաւի, իսկական հերոսութիւն, հայրենասիրութիւն: Իսկ մենք երեխայից շատ ու մեքենայ ունենք...

Հերոսուհի էլ չունենք: Ունենք մեր բանակում նշանաւոր կինոարտիստներ, իբր ինտելիգենտ կամ էմանսիպացիայի վայելող կանայք կարծենք...: Իսկ Աղբիւր Սերոբի կողքին կեանքը վտանգելով Սօսէն հրացան էր քաշում Էրգիրը փրկելու համար...

Երկրում արժէքների վերարժէքաւորում է գնում, դա պէտք է վերաբերի նաեւ ազգային հարցերին: Երկրում վերակառուցում է, թող դա կիսատ-պռատ չլինի, մեզ համար միայն խօսքով չլինի:

Մի հանդիպման ժամանակ Ռ. Վահանեանին հարց ուղղեցի՝ «Ուզո՞ւմ էք աշխարհի չեմպիոն դառնալ»: Դահլիճը, որ բացառապէս հայ մտաւորականներով էր լեցուն, հեգնօրէն հռհռաց: Կարծեցին աւելորդ էր՝ եթէ սկուտեղի վրայ հրամցնեն, կը վերցնե՞ս...: (Ի դէպ, Ռաֆիկի միջամտութեամբ չեմպիոնական գործերին հիմա էլ եմ հաւատում):

digitised by A.R.A.R.@

Հմուտ ձեռքերով արհեստին տիրապետողներ կան՝ մի ամբողջ կեանք սկզբնախաղեր են խաղարկում, ինչպէս շախմատում, միջնախաղ չեն մտնում, որ տեսնես արուեստում նրանց գինն ինչ է, արժէքն ինչ է...

Եթէ չի խիզախում դրամատուրգը, եթէ իրականութեան խորքերը չի մտնում թատրոնը, եթէ հեռուն տանող նպատակ չկայ ու չկայ ազգային դիրքորոշում, քաղաքական կազմակերպուած միտք, դերասանն ինչպէ՞ս գտնայ իր երկրի արժանաւոր քաղաքացին, ինչպէ՞ս դերասանը գտնայ։ Ամէն թատրոն ազգային է՝ ամէնից առաջ ազգային կեանքի պատկերումներով։ Այսպէս է ասել Յ. Թումանեանը։ Մեծի խօսք։

... Հայկական դիվիզիան հասաւ Բեռլին. Ֆաշիզմի դէմ. Եւրոպայում կռուող հայերն աւելի շատ զինուոր ունէին, քան Ամերիկան։ Կէսը չվերադարձաւ...։ Ողբերգական քանի՜ ճակատագիր, քանի՜ պիես կինոսցենար։ Սխրանք, խիզախում մի, ՍԱՐԴ լինելու քանի՜ օրինակ...։ Բայց Երկրորդ Համաշխարհայինի պատերազմի արհաւիրքները չպէտք է փարատուեն Առաջին աշխարհամարտի հայ ժողովրդի ողբերգութիւնները։ Արծուի՞ երգն է վերաւոր, թէ՞ ճնճղուկինը, ցաւը՝ ցաւ է, պէտք է ենթադրել նոյն անտանելի ցաւն են պատճառում տերերը։ Յիշենք Ֆրանց Կաֆկայի խօսքը։ Փոքր ազգի յիշողութիւնն աւելի փոքր չէ, քան մեծ ազգինը։

Հերոսը ժողովրդի ազատագրութեան համար ո՞ւր է զոհուել. քառասունհինգի՞ն, թէ՞ տասնհինգին, Արեւմտա՞ն ճակատում, թէ՞ Արեւմտեան Հայաստանում...

Մի կարգին արձան չունենք Անդրանիկի յիշատակին, մի ողջ ազգի արժանապատուութեան փրկող մարդու։ Ասում ենք Սարդարապատի ճակատամարտ, ասում ենք ժողովուրդը ելաւ, յաղթեց։ Բայց ղեկավար է ունեցել այդ ժողովուրդը, իր Մինինը, իր Պոժարսկին։ Հայրենիքի համար իրենց կեանքն են տուել այդ ղեկավար տղաները։ Ցարական սպայ են եղել...։ Ցարական բանակ է եղել, ցարական են եղել, բա ի՞նչ լինէին։ Պատմութեան այս էջը, ժողովրդի համար բախտորոշ պատմութեան էջերը ջնջելով, լռութեան մատնելով ի՞նչ նպատակ ենք հետապնդում։

Մեր կողքին դաւաճաններին հերոս են սարքում, մենք երդուեալ մեր հայրենասէրների սրբացած անունները վախենում ենք տալ։ Հայաստանի ամէն մի թիզ հողը հայ ֆիդայու արիւնով է ներծծուած։ Եղել են այդ մարդիկ, եղել է ազատագրական շարժումը, եղել են կամաւորները ռուսական բանակում, ու մի քիչ էլ նրանց ենք պարտական, որ այսօր կանք։ Մենք ինչու ենք թանաքով ջնջում արիւնով գրածը...։ Իրերը կոչենք իրենց անուններով։

Ժողովուրդը պէտք է լայնօրէն մասնակցի պետական գործերին (այսօրուայ գրուածքն է), պէտք է ամէն ինչին տեղեակ լինի։ Մանաւանդ իր ճակատագրին վերաբերող գործերին։ Աշխարհով մէկ, պետական մեքենայի թափ ու ժով Թուրքիայի կառավարութիւնը հակահայկական գործունէութիւն է ծաւալել։ Աննախադէպ լկտիութեամբ շուռ են տալիս պատմութիւնը, սեւը՝ սպիտակեցնում. ստով սեփական ժողովրդին թունաւորում, գցում մեր ջանին։ Հրապարակայնութեան այս դարում կցկտուր տեղեկութիւններ ունենք։ Սփիւռքի մի քանի լիարժէք հէնք ու սատարող չունեցող հայրենասէրներ, զուտ ազնիւ հոգու իրենց ուժերով փորձում են դիմագրաւել, մենք մեղաւոր քաշուել ենք մի կողմ, դրանց թողել անտէր։ Մեղաւոր...։ Մենք ենք կարծես զաւթել ուրիշի քաղաքներն ու գիւղերը...

Թուրքական բոլոր քարտէսներից վերացած է «Հայաստան» անուանումը։ Իննսուն տոկոսով փոխուած են հայկական բնակավայրերի անուա-

digitised by A.R.A.R.@

նումները: Ծունեակոյի ուսումնասիրութիւնների համաձայն գտնուին են հաստատեցրած հազար երեսունից վանք ու եկեղեցի: Թուրքական բանակի զինավարժութիւնների ժամանակ թնդանօթների համար թիրախ են ընտրւում հայոց վանքերն ու եկեղեցիները: Իսկ այն, ինչ չեն հասցրել ոչնչացնել, քանդել–հերքը կորցնել՝ տուրիստներին ներկայացնում են, որպէս վաղ միջնադարի սելճուկեան ժամանակաշրջանի օսմանեան ճարտարապետութեան նմոյշ:

Այս տողերը հրապարակել է բուլղարական «Отечествен фронт» օրաթերթը (1968 թ., Հոկտեմբեր 8):

Ապրիլի քսանչորսն է...: Մեր մամուլը ամփոփուած խօսում է մեր նահատակների մասին, կարդում ենք ու լուռ անցնում միլիոնաւոր նահատակների յուշարձանի կողքով: Լուռ...: Համազգային մեր սգի օրն է...: Բայց ինչո՞ւ, թէկուզ լուռ, չեն խոնարհւում պետական դրօշները, եւ եթէ չայցելես Ծիծեռնակաբերդ, ինչո՞վ կը զգաս, որ Հայաստանում այսօր սգոյ օր է:

Արտասահմանում յաճախ են նախատում, թէ՝ բաւական է խօսենք պատերազմի մասին, շատ տարիներ են անցել, մոռացէք...: Ո՛չ: Չպէտք է մոռանալ: Միլիոնաւոր զոհերը չեն լռում...: Ամէն մէկը մի մարդ է եղել, ծնուել է, որ ապրի: Սպանել են: Տասնհինգ թուականից յետոյ Թուրքական Ֆաշիզմը մոռացութեան տուեց: Լռելու, կոծկելու, սուտ ու կեղծիքի վարձը եղաւ գերմանական Ֆաշիզմի ծնունդը: Մեծ ակրութիւնների, գիտանոցաբանական մեծ խաղերի արդիւնքը եղաւ մեծ աւերածութիւն, արեան մեծ հոսք...: Ժամանակին ճիշտը չասացինք Սեւանի մասին, հիմա Բայկալն է նոյն փորձանքին եկել: Փորձն ու պատմութիւնը, ինչպէս յայտնի է, դասեր առնելու համար են, բայց դաս առնողը պէտք է ազնիւ լինի, գոնէ՝ ճշմարտախօս:

Կեանքի դասերից մէկն էլ քաղ էս այն է, որ անհատը պատմութեան մէջ մեծ դեր է խաղում, հասարակական ուժ է անհատը: Խնդիրն այն է, թէ ինչ ազդանշաններ է արձակում նա: Ինչ ազդանշաններ են արձակում մեր ընտրեալ գործող հերոսները...: Իսկ մեր հոգեւոր հայրե՞րը...

Այսօր թատրոնն ու կինոն աշխարհին մեզ ներկայացնողների առաջին շարքում են: Մեզ, մեր բնաւորութիւնը, կենցաղը, բարոյական մեր ըմբռնումներն ու կուտակումները, ապրելու մեր փիլիսոփայութիւնը: Ոչ մէկին չխաբենք, չներկայանանք աւելի լաւ, քան կանք: Սակայն ինչո՞ւ երեւանք աւելի վատ, քան կանք իրականում: Ամէն ինչ մեր մէջ է, ամէն ինչ սկսւում է մեզնից: Ներկայանալուց առաջ նայենք մեզ, մեզ հասկանանք: Մեր գլխով շատ բան է անցել, տեսնենք՝ ինչպէս ենք դուրս եկել...

Սենտիմենտալ (իմա՝ փոլնքառ) հարցեր ենք քննում մեր մէջ՝ ով է մեզ սիրում, ով չի սիրում: Օրհնորդի նման սիրի–սիրի ենք խաղում...: Ինքդ քեզ սիրիր: Տոներին գոնէ ազգային մի տարազ հագիր, սովորիր երկու ձայնով երգել, սովորիր խմբով երգել, մի երգը մինչեւ վերջ իմացիր, գիւղում տուն ես շինում (ապարանք), դու դարան-լողարան գիր մէջը, քո զուտ ազգային գործիքը նուագիր. Ջալալօղլու հին դպրոցը, ուր Թումանեան Յովհաննէսն է սովորել, դարձրու արքատեղի եւ ոչ թէ չիմարարար քանդիր, աւելի մեծ ով ունես: Երկրից դուրս ես գնում, քեզ պարկեշտ պահիր, «ԳՈՒՄ»ում գրաստ պէս մի բանդուք ի տես աշխարհի՝ ազգ ես ներկայացնում...: Ծուրիկ Վարդանեանը, բարձրացնում է, դու իջեցնում ես, Արամ Խաչատրեանը վեր է առնում, դու քաշում ես վար, Պարոյր Սեւակը սաւառնում պէս փայլատակում է, դու մէջքից ճարպն ես թափում աւելացնում...

Հարստանում ենք, հարստանում ու մէկի համար գտնում գրգռիչ պատառ. տալիս են գլխներիս ու խլում...: Մինչդեռ սուտած է՝ ՈՉ ՄԻԱՅՆ

digitised by A.R.A.R.@

*ՀԱՑԻՒ...: Այսօր քո պարծանքը էլի հոգեւոր կուտակումներն են՝ մի բան էլ դու աւելացրու:*

«Չենց այնպէս գոյութիւն ունենալու մէջ փառք չկայ,— *Թարթինարա-նատ Տաղորն է ասել*,— ժամանակները նոր են, ազատ սիրոյ գաղափարը հրաշալի, բայց պատիւն էլ վեհ գաղափար է: Վեհացնող»:

*Նորամանկի հաժրա ունենք. մենք էլ միամտաբար թէժացնում ենք: ԱՆՀԻԹԵԹ, ծիծաղելի, զաւեշտական բան...: Նորամանկ ազգը այսքան երկար, այսպէս հիմնովին կը կորսուէ՞ր, այսքան միամտաբար արան-դրան կը հաւատա՞ր, տանից ինչ կը կորցնէ՞ր: Բայց մեզ այդպէս գիտեն ու էլի ինչ-որ բաներ մեզ չհպչող, չբռնող...: Իսկ թէ ինչպէս ենք աշխատում, ինչքան ենք աշխատանակ, քանի քար ենք շուռ տալիս մի թիզ հող արարելու համար, երկու-երեք տասնամեակում ինչպէս կառուցեցինք մեր մայրաքաղաքը, ինչ գնով կանաչեցրինք մեր դաշտերը, քարի վրայ ինչպէս ենք ծառ անեցնում,— աշխարհին յայտնի չէ, այս մասին չգիտեն...: Ինչու ենք հողագնդով մէկ ցրուած, ինչու ենք դիւրագրգիռ, ինչու մինչեւ այսօր չի փակւում մեր վէրքը, ինչու ենք իրար հանդէպ[illegible] լաց լինում...: Ճշերիտն է յայտնի ու մեզը նաեւ մեզ ներկայացնող արուեստն է, արուեստագէտ մասնագիտականներին:*

*Հայրենազուրկ, սոված ու մերկ, բզկտուած ու խոշտանգուած ընկանք օտար ափեր: Պարզ է, որ մեզ լաւ չենք պահել, մեր արժանապատուութիւնը խոցուած, արորուած...: Լաւ չենք ներկայացել, բարձրութեան վրայ չենք եղել: Մեր ջլատուած երկիրը, ջլատուած հոգին, արահուած էութիւնը, ամէն գնով ապրելու ճիգերը, մեր համաշխարհային գաղթականութիւնը կարեկցանքից բացի նաեւ արհամարհանք են յարուցել օտարների մէջ: Համապատասխան կարծիք, վերաբերմունք:*

*Ուրեմն երեք անգամ լաւը պիտի լինենք այսօր, պէտք է վերընձականա-պէս վերադառնենք մեզ, մենք մեզնից լաւը լինենք, որովհետեւ հայ լինելը մեր խաչն է:*

*Այս ամէնով հանդերձ, մեր ժողովուրդը մի հրաշալի յատկութիւն ունի՝ հոսող ջրի նման կեղտերն ափովն է տալիս, ինքնամաքրւում է: Փչանում է, ճիշտ է, բայց տակն անընդհատ զուլալւում է...: Գնացողը թո՛ղ գնայ, ուրացողն՝ ուրանայ: Մենք հաւատանք նրա զուլալ հոսանքին, առողջ արմատներին...*

*Երկիրը քանդում է անմաքուր հոսանքների ճամբան: Մենք այս գործում յետ չընկնենք...*

*1987, Յունիս* — ՍՕՍ ՍԱՐԳՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@



## ԱՆԺԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Հրապարակագիր, թարգմանիչ եւ արձակագիր Անժիկ Յակոբեան ծնած է 1 Փետրուար 1929ին, Երեւան։ 1947ին կ'աւարտէ Երեւանի Յակոբ Յակոբեանի անուան դպրոցը։ 1947ին կ'ընդունուի Երեւանի Համալսարան, որուն բանասիրական ճիւղի Հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը կ'աւարտէ 1952ին։

1953–62 տարիներուն Ա. Յակոբեան կը պաշտօնավարէ «Աւանգարդ» օրաթերթի մէջ, նախ՝ իբր գրական աշխատող, ապա՝ իբրեւ բաժնի վարիչ։ 1962–66 կը վարէ «Պիոներ կանչ» թերթի պատասխանատու քարտուղարի պաշտօնը։ 1966ին կ'անցնի «Գարուն» ամսագիր, ուր յաջորդաբար կը ստանձնէ պատասխանատու քարտուղարի, գլխաւոր խմբագրի պաշտօնը։ 1986ի Փետրուարին կը նշանակուի «Գրական թերթ»ի գլխաւոր խմբագիր։

Ա. Յակոբեան հրատարակած է «Զուլալ առուակի պէս» պատմուածքներու գրքոյկը եւ թարգմանած՝ արձակ երկու գործեր։

●

Վերակառուցման ալիքը անհանդարտ, նոր թափ է առնում։ Ու մեզ ո՛չ միայն ոգեւորում է նոր գործերի, ո՛չ միայն ազատում է [illegible] ու շատ նախապաշարումներից, այլ մղում է աւելի խորհրդածութիւնների, մեր ոչ վաղ անցեալի իրադարձութիւնների, [illegible] վերագնահատութեան։

Շատ բան կարելի էր անել, եթէ լրագրողները հնար ունենային ազատ ու [illegible] առանց [illegible], առանց փոխզիջումների։ Ինչքան [illegible] յօդուածներ հանուեցին՝ համարներից եւ ինչքանները չյղացուեցին, հեղինակներին պատճառելով ամլութեան ծանր տառապանք։ Ինչքան մարդիկ [illegible] պատճառով՝ այդպէս էլ չգտան ինքնարտայայտման կերպն ու [illegible] իրենց իրենց մէջ։ Ինչքան բան տարան մեր կեանքից այսպէս կոչուած լճացման, ճահճացման տարիները։ Ինչքա՞ն բան կարող էինք անել բոլորս, որ չարեցինք, որ այդպէս էլ չկարողացանք անել։ Ձնհալը, որ սկսուել էր Ստալինի մահով (որի անուան [illegible] հերթապահելիս հալածուած ու հալածուած էինք [illegible]) կէս ճանապարհին մնաց, որովհետեւ, ճիշտ է, մեռել է Ստալինը, բայց ապրում է ստալինիզմը, մինչեւ այսօր էլ դեռ... [illegible] ապրում է երեւէ մեզանից ամէն մէկի մէջ։ Հասարակական [illegible] սկսել իրենից, նշանակում է [illegible] յաղթահարել այդ ամբողջը ինքն իր մէջ։

Եւ դեռ մարդիկ կան, որ կարօտով փնտռում են [illegible], ամէն տարի գներն իջեցնող երկրի կարգն ու [illegible], [illegible] կարճ ու [illegible] [illegible]. [illegible] ժամանակին [illegible]՝ կը [illegible], [illegible]՝ կը [illegible], [illegible] պահպանուած են [illegible]։ [illegible] էր պէտք, այս [illegible] մարդն [illegible] համար։ Իսկ ի՞նչ անել մինչեւ այսօր [illegible] մարդկանց [illegible] եւ գրանից [illegible] նոր [illegible], ի՞նչ [illegible] գրան, [illegible] կարծես [illegible] (մեր [illegible] է, գրեթէ է [illegible]... [illegible] այն է, որ մարդը ԿԱՊՈՅՏԱԼ էր եւ դեռ [illegible], որ [illegible] չէր [illegible], [illegible] էր, [illegible] ի՞նչ [illegible] [illegible] գրականները...

[illegible] երկրում եղա՞ւ որեւէ [illegible], որ [illegible] [illegible]։ [illegible] [illegible]-[illegible] [illegible], որոնց [illegible] էր եւ մեր «Գարուն»ը, հրատարակելով այն [illegible], [illegible], [illegible] հրապարակայնօրէն։ [illegible], [illegible] է, թէ [illegible] ու [illegible] հողը [illegible] ու [illegible] վարելու, [illegible] կը [illegible]...

Հրապարակայնութեան, ժողովրդավարութեան այս օրերին մարդիկ իրենց մասին են բարձրաձայնում ի [illegible] [illegible] [illegible]։ [illegible] չահ [illegible] [illegible], [illegible] նոր են [illegible], [illegible] մե՞զ [illegible] է [illegible], [illegible] նոր են [illegible], [illegible]...

ԱՆԺԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ

digitised by A.R.A.R.@



# ԱՆԱՏՈԼԻ ՌԻԲԱԿՈՎ

Խորհրդային տարեց գրողներէն Անատոլի Նաումովիչ Ռիբակով անցեալ տարի լոյս ընծայեց իր վէպերէն վերջինը՝ «Արբատի զաւակները», որ կարճ ժամանակի մը մէջ թարգմանուեցաւ երկու տասնեակէ աւելի լեզուներու եւ կը համարուի խորհրդային աշխարհին մէջ վերջին կոտրած գրական վերջին երեւոյթը։

«Արբատի զաւակները» վէպին գլխաւոր հերոսը Ստալինն է, ու թեման՝ ստալինականութիւնը։ Ըստ հեղինակին, գործին գտած ընդունելութեան գլխաւոր գրաւականը կը հանդիսանայ այն՝ որ «Ես իրերն ու մարդկանց կոչում եմ իրենց անուններով: Եթէ չեմ սխալւում, առաջին դէպքն է, ուր Ստալինը Ստալին է, Եժովը՝ Եժով, դաւաճանութիւնը դաւաճանութիւն է, ինտրիգը՝ ինտրիգ, խաբէութիւնը՝ խաբէութիւն, եւայլն»։

«Արբատի զաւակները» թարգմանուեցաւ նաեւ հայերէնի, Արմէն Յովհաննիսեանի կողմէ, որ այդ առթիւ ընդարձակ զրոյց մը ունեցաւ հեղինակին հետ։

«Բագին»ի այս թիւին մէջ գրութիւններուն ուղղակի արձագանգող քանի մը նիւթերին առնուած խորհրդածութիւնը առնուած է յիշեալ հարցազրոյցէն։

●

Այն, ինչ կոչում ենք 37 թուական, պայմանական բառ է, տարեթիւ չէ, օրացուցային բառ չէ, շատ աւելի լայն է, քան 365 օրը։ Մի ամբողջ շրջան ենք հասկանում։ Ու եղբայրասպանութեան հետաքրքրութիւնն այդ ժամանակաշրջանի հանդէպ ամէնից առաջ բացատրւում է նրանով, որ եղբայրասպանութիւնն ուզում եւ պահանջում է, որ իր հետ խօսեն որպէս մարդու հետ։ Եթէ անհատականացնենք մեզ եւ գնենք նրան, յաւագոյն դէպքում ընծիծաղով հեռանում ենք։ Չի ստացւում։ Ուրեմն եղբայրասպանութիւնն ուզում է, որ իր հետ մարդավարի խօսեն, իսկ մարդավարի կարելի է խօսել միայն ճշմարտութիւնն ասելով։

— Ստալինը նրանցից ստեղծեց կառուցել վարչարարական մեքենայից։ Ու դա, դասդասկայում միահեծան իշխանութեան նրա նպատակներին, երկրում տասնամեակներ մնալով՝ ապահովեց նրանց։ Մարդիկ ոչնչացին վախենալ, չխօսելով, լռել, մտածել, ձայն տալ հասարակութեան պառակտումներին։ Ստեղծում էր միայն ՆԱ. միւսները հրամայում էին ինքնուրոյնութիւնից, մարդկային-գեղեցիկ միակ մեկնիչը ՆԱ էր, միւսները պիտի կրկնէին։ Գաղափարները վերածուեցին դոգմաների։ Անհրաժեշտ այդ թւում եւ ինտերնացիոնալիզմի էութիւնը, իմաստը։ Կարողացա՞նք արդեօք Ստալինը ոչնչացնել ամէն ինչ։ Ոչ, երբ սկսուեց պատերազմը, մարդկանց հոգում յաղթութեան սուրբ մտածումը, կորցրածը։ Մարդը, որ երէկ ոտնակոխւած էր մտածել ընկերոջը, հասկացաւ, որ դա չէ միայն դաւաճանութեան կերպը։ Ու պատերազմն անցել եմ ծայրէ ծայր, պատերազմը գիտեմ ոչ որպէս ժուռնալիստ, կրտսեր հրամանատարից սկսել, մայոր աստիճանով վերջացրել եմ թէական։ Գեներալ Չույկովի հրամանատարութեամբ։ Երդ գվարդիական բանակի կազմում, որպէս գվարդիական մեր կորպուսի աւտոտրանսպորտի պետ։ Ու մենք չգիտէինք, թէ ինչ ասել է ռուս, ուկրաինացի, հրեայ, ղազախ, հայ, մոլդովացի կամ էստոնացի. բոլորս Հայրենիքի զինուորներ էինք։ Նշանակում է գնում, անհնարին էր արմատախիլ անել բնական մարդկային զգացումը։ Բայց թէ, յետոյ նորից ծայր առան անհեթեթ կալանաւորման տարիները Երեմենկոյի օրոք, որն խոցերի եւ համատարած տոտալիտարութիւնների տարիները։ Վերսկսին արժէքների ոտնահարումները, ամէն ինչ վերածուեց անարգանքի, յղութեան, այդ թւում եւ ինտերնացիոնալիզմը։ Որը հասարակութեան մէջ գաղափարական փակուղում է գոյանում, գլուխ են բարձրացնում ազգայնական դրսեւորումները, այդ թւում եւ նացիոնալիզմի արտայայտութիւնները։ («Գրական թերթ», 1987, թիւ 42)։

ԱՆԱՏՈԼԻ ՌԻԲԱԿՈՎ

digitised by A.R.A.R.@

Մ· ՈՒԼՅԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆ ԻՄ ՍՐՏՈՒՄ

*«Բագին»ի այս թիւով տրուած գրութիւններուն մէջ ընթերցողը յաճախ պիտի հանդիպի այն հաստատումին, որ ռուս մտաւորականները, [illegible] մեծիններուն [illegible] ուշադրութեան, Համայնավար կուսակցութեան 27րդ համագումարին հաշուետու զեկուցումին հրապարակայնութեան [illegible] ըլլան են հրապարակ ու բացուած ընթերցողին, պատկերացնելով անոր [illegible] խուսափին եւ [illegible] ու հա[illegible]:*

*Նաեւ այդ ձեւին գաղափար մը տալու համար ընթերցողին՝ կ'արտագրենք հեռատեսիլեան թատերական գործիչներու միութեան նախագահ Միխայիլ Ալեքսանդրովիչ Ուլյանովի հետ «Գրական թերթ»ի մէջ [illegible] հարցազրոյցը, որ [illegible] է այն [illegible], որ [illegible] կ'անդրադառնայ «Մա պիտի անել», եւ [illegible] աւելացնենք [illegible]:*

*Միխայիլ Ուլյանովը, որ «Իր [illegible] Ուլյանովն էր», [illegible] է այնպիսի [illegible], որոնք յար եւ նման են հայրենի մեր գրողներուն [illegible] [illegible]…*

● Միխայիլ Ալեքսանդրովիչ, այս ստեղծագործական տունը քսանհինգամյա պատմութիւն ունի, իսկ դուք, որ կարող էք, իհարկե, Հայաստանի «հնաբնակ» անուանուել, առաջին անգամ էք այստեղ գալիս: Ինչո՞ւ:

*— «Մեղաւորը» հայ բարեկամներս են, նրանք զբաղեցրին այս փոքրիկ ժամանակը «Թագուհու» կրկին բռնելով: Ահա, մոտ մեկ ամիս եմ եւ [illegible] քայլում ենք այս շարքում հողագործի վրայով, շնչում նրա կենարար օդը: Հայկական հիւրասիրութեամբ այլեւս չեմ զարմանում, բայց մարդկանց վերաբերմունքը յուզում է ինձ, ամէն մէկն իր պարտքն է համարում այնպէս անել, որ մեր հանգիստը լաւ անցնի: Անկեղծ եմ ասում, ես վաղուց այսպէս չեմ հանգստացել: Այստեղ ամէն ինչում բարութիւն ես զգում, մարդու մէջ, հողի վրայ, ջրում, օդում: Թէ ինչպիսի հաճելի զգացումներով եմ մեկնում, անհնարին է կիսել ընթերցողի հետ: Այստեղի հիւրասիրութիւնը բոլորովին այլ է:*

digitised by A.R.A.R.@

*Զարմանում էի, թէ ինչու է Դիլիջանը ձգում շատ մեծութիւնների․ կլիմայի ուժը չէ, ո՛չ, հայկական մարդասիրութեան ուժն է:*

*Այստեղ հանգստանալուց յետոյ ինքնաբերաբար սրտից շնորհակալութեան խօսքեր են բխում այս տանը կառուցողների ու պահողների, այդ թւում՝ նրա գլխաւոր «աշխեկէ» էդուարդ Միրզոյանի հասցէին: Սա մեծ աշխատանք է, ճիշտ աշխատանք: Ամէն արուեստագէտ պէտք էր «Միխայլովկան» ունենայ, որպէսզի ստեղծագործական պրոցեսը չընդհատուի, արդիւնքներ տայ:*

*Դիլիջանում ի՞նչը յուզեց ինձ, նահապետականութեան և քաղաքակրթութեան զուգորդումը: Ես եղայ Հաղարծինում և Գոշավանքում: Հին մշակոյթի այս յուշարձանները, որ պահւում են խնամքով ու գուրգուրանքով, վկայում են աշխարհի հնագոյն ժողովուրդներից մէկի՝ հայերի կառուցողական տաղանդը: Ինչ խաչքարե՛րը, այդ զարմանալի խաչքարե՛րը: Ես դրանք Հայաստանի այցետոմս եմ կոչում, դրանք այնպիսի արուեստ են, որ ցանկացած ազգի նախանձը կը շարժեն:*

**●Միխայիլ Ալեքսանդրովիչ, դուք մի քիչ էլ «մեր Ուլեանովն» էք: Եւ նշանակութիւն չունի՝ ներկայացմա՞ն էք գալիս, թէ՞ անձնական գործով, ձեր ամէն այցելութիւն մեզ ուրախութիւն է պատճառում: Դրա համար էլ, երբ ուշանում էք, կարօտում ենք ձեզ: Ձեր նախորդ այցելութիւնից արդէն չորս տարի է անցել:**

*— Շնորհակալութիւն, դա երևի նրանից է, որ ես էլ իմ հերթին Հայաստանն եմ շատ սիրում: Հայաստանն իմ սրտում յատուկ տեղ է զբաղեցնում: Դրանում առաջին հերթին «մեղաւորը» իմ լաւ բարեկամ Հրաչեայ Ղափլանեանն է՝ Հայաստանի թատերական գործիչների միութեան երկարամեայ նախագահը: Նրա հետ իմ ստեղծագործական և մարդկային կապերը երկար պատմութիւն ունեն: Ես խաղացել եմ և՛ Ղափլանեանի բեմադրութիւններում, և՛ հայ գործընկերների հետ, և՛ իմ՝ Վախթանգովի անուան թատրոնի հետ Երևանում: Այս այցելութիւնների ժամանակ է իմ մտերմութիւնը ամրապնդուել:*

**●Միխայիլ Ալեքսանդրովիչ: Թոյլ տուէք ձեզ դիմել նաեւ որպէս Համառուսական թատերական գործիչների միութեան նախագահի: Կ'ուզենայինք մի քանի խօսք ասէք այսօրուայ թատրոնի մասին:**

*— Ինչո՞ւ մի քանի խօսք: Շատ կ'ասեմ: Այսօրուայ թատրոնում, արուեստում և կեանքում ընդհանրապէս, բարդ պրոցես է ընթանում: Բայց նախ բեմարուեստի մասին, հիմա թատրոնում կարեւոր շրջադարձ է տեղի ունեցել: Դռները լայնօրէն բացուել են, այն դռները, որոնք տարիներով փակ էին, անե՛ք, բեմ ենք հանում 60–70 թուականներին գրուած ու փակի տակ դրուած պիեսներ:*

ՍՄԿԿ XXVII *համագումարը, կուսակցութեան Կենտկոմի պլենումները, ընկեր Գորբաչովի զեկուցումները, ելոյթները, ճառերը թարմ օդ են բերում մեզ՝ արուեստի աշխատողներիս: Բայց նաեւ պարտաւորեցնում են, որ մենք իմանանք՝ ինչպէս մտնել բացուած դռներով, ինչպէս բեմ բարձրանալ ու ճշմարիտ խօսք ասել հանդիսականին:*

*Հիմա ամենաընթեռնելի գրքերը թերթերն ու ամսագրերն են, ու նրան-*

digitised by A.R.A.R.@

ցում մենք չօշափում ենք շատ հարցեր. ճի՞շտ է, արդեօք, որ այսքան արագ ենք սկսում, գուցէ՞ նաեւ դեռ դանդաղ է, աւելի արագ պիտի լինի: Սրանք հարցեր են, որոնց պատասխան պիտի տայ նաեւ թատրոնը, որովհետեւ թատրոնը կոչուած է լինելու կեանքի դպրոցը:

Տեսականօրէն կարծես ամէն ինչ յստակ է, բայց գործնականում այդ ամէն ինչն այնքան էլ հասարակ չէ, ինչպէս փորձում կամ ուզում ենք պատկերացնել: Երկար ժամանակ մենք ուրիշ պայմանների էինք սովոր՝ վոլիւնտարիզմի: Մեզ ասում էին՝ սա պիտի անել, սա՝ ոչ: Դա խոչընդոտում էր զարգացման ընթացքը, արուեստագէտը հարկադրուած էր անել այն, ինչ ասում էին: Հիմա եկել է ժամանակը, որ արուեստագէտը ծառայի արուեստին, ժողովրդին, եւ ոչ թէ անի այն, ինչ կը պարտադրեն: Հիմա մեծ հնարաւորութիւններ են տրուել, մեծ հեռանկարներ բացուել:

Բայց տեսէք, հիմա էլ արուեստագէտները մի տեսակ կորցրել են իրենց, շատերն այլեւս չեն ուզում յարմարուել իրադրութեանը, բայց չեն էլ կարողանում «զտնել» մեր ժամանակակցի կերպարը: Դժուար պրոցես է:

Ի՞նչ պիտի անել: Իմ կարծիքով, պէտք է անցեալին նայել՝ այն ճիշտ բացայայտելով: Այո, բացայայտելով: Ոչ թէ՝ մեկնաբանելով: Պէտք է ընդմիշտ հրաժարուել անտարբերութիւնից, սեփական պատեանում մնալուց, յարմարուելուց, չերգել այն երգը, որը պարտադրում են քեզ: Ասում եմ՝ միայն անցեալի մեկնաբանութեամբ առաջ չենք կարող գնալ: Լաւ օրինակներ արդէն կան՝ «Արարատի զաւակները», «Նշանակում», «Սպիտակ զգեստներ», ահա, այս գրքերում, փնտռւում են այսօրուայ հարցերի պատասխանները: Մի մոռացէք, ստալինիզմի մամլակը մինչեւ հիմա էլ ճնշում է մարդկանց:

Թատրոնի կեանքում հետաքրքրական տեղաշարժեր են սկսուել: Սկսուել է մի համընդհանուր պրոցես, որը վերաբերում է բոլորին՝ Հայաստանին եւ Ռուսաստանին, Բելոռուսիային, Ուկրաինային: Տովստոնոգովը, Էֆրեմովը, Դանչենկոն, Ղափլանեանը, միւսները հիմա շատ լուրջ խնդրի առջեւ են կանգնած, ինչ անել խռոված հանդիսականին յետ բերելու համար: Թատրոնը դատարկւում է, որովհետեւ խաբուսիկ ներկայացումներ ենք տալիս, հանդիսականին հաց տալու փոխարէն ծամոն ենք տալիս, դեհ, նա էլ ծամում է, ծամում ու յոգնում, դէն գցում:

Հիմա մամուլը կարդալիս շատ բաներից եմ ապշում, կարծես դիտմամբ ամէն ինչ արած լինենք, որ վաղուայ մասին չմտածենք: Իսկ ինչպիսի՞ն է լինելու վաղուայ մեր նորը, անտառը, վէպը կամ պիեսը, արակարգը կամ կոմբայնը: Ահա «Նաուկա ի ժիզն» ամսագրի համարներից մէկն եմ կարդում: Բէկի վէպի մասին է, հեղինակը՝ դոկտոր Գուդովը, հարց է տալիս կարծես՝ էս ուր հասանք:

Այո, մենք չենք մտածել վաղուայ մասին, ու հիմա արդէն եկել է ժամանակը, որ պիտի անհրաժեշտ կերպով յայտարարենք այն ամէնի դէմ, ինչը մեզ խանգարում է: ՍՄԿԿ Կենտկոմը եւ քաղբիւրոն օգնում են, որ մենք ստեղծենք նաեւ բոլորովին այլ թատրոն: Բայց մէկ կամ մէկուկէս տարում չենք կարող ամէն ինչ յաղթահարել, սա մեծ ջանքեր պահանջող խնդիր է: Կը կարողանա՞նք լուծել, կ'ունենա՞նք նկուն, ճշմարիտ թատրոն, ճշմարիտ արուեստ:

Սարսափելի է լսել, որ չհաշուած մայրաքաղաքայինն ու էլի մի քանի ուրիշ թատրոններ հանդիսականի յաճախումը քսան կամ երեսուն տոկոս է կազմում: Ձեռքին ճար չունենալով, սրանք մեղքը բարդում են հեռուստատեսութեան վրայ: Ճիշտ չէ, հիմա լաւ ներկայացում դիր եւ տես ո՞նց են հեռուստա-

digitised by A.R.A.R.@

ցոյցը թողած՝ դահլիճ վազում: Վերջերս ես եղայ Միացեալ Նահանգներում: Տասնեակից ներկայացում նայեցի. պայտ աթոռի մասին խօսք լինել չէր կարող: Ինչ է, ամերիկեան հեռուստատեսութիւնը ճարդելու չի՞ գնում թատրոնի վրայ: Ի զուր են այդպէս գտնում: Եթէ պարզապէս խոստովանենք, որ թատրոնը դադարել է արդիւնաւէտ լինելուց, որ մենք դադարել ենք նրա բեմից ճշմարտութիւնը ասելուց, որ նրա բեմից մենք սիրում ենք սուտ խօսել: Սա՛ մէկ:

Երկրորդը, ցաւօք սրտի, պրոֆեսիոնալիզմի կորուստն է: Ամէն բան մի տեսակ շատ է հասարակացել: Կարծես անցած գնացին մեծ վարպետները, ու քանի որ նրանք այլեւս չկան, նշանակում է բեմում ամէն ինչ թոյլատրելի է դարձել: Հիմա ՍՍՀՄ ժողովրդական արտիստի, ասենք կոչումներն ու շնորհները այնքան են շատացել եւ դրա հետ մէկտեղ, բնականաբար, այնքան հասարակացել, որ թնդանօթով անգամ չես ճեղքի: Ամէն ինչ, դժբախտաբար, համահարթուել է, իսկ արուեստը հարթութիւններ չի սիրում, արուեստը այդ հարթութիւնների վրայ գագաթներ պիտի ունենայ, ինչպիսիք են, օրինակ, Տովստոնոգովը, Էֆրոսը, Օբրազցովան, Այթմատովը, Եւգենի Լեբեդեւը:

Եւ՝ երրորդ: Հանդիսականի դաստիարակումը: Ինչպիսի՞ հանդիսական պիտի գայ թատրոն: Այն հանդիսականը, որը հաւատում է քեզ: Վերջերս Կիրիլ Լավրովն ինձ ասաց, որ սոցիոլոգների հաշւումներով Լենինգրադի թատրոնների հանդիսականների ընդամէնը երեք տոկոսն են կազմել բանւորները: Լենինգրադի բանւորները ոչ մի մեղք չունեն. գնան, որ ի՞նչ տեսնեն բեմում:

Հապա փորձէինք ցածրորակ պիեսը ցոյց տալ Փափազեանին: Մեծ անհատականութիւնը, պարզ է, կը հրաժարուէր: Ցաւօք Փափազեանները կը թողնեն բեմը, հանդիսականը՝ դահլիճը: Իսկ Փափազեանները միշտ պիտի լինեն բեմում, որովհետեւ առանց նրանց ո՛չ բեմ կը լինի, ոչ էլ մարդ՝ դահլիճում: Եւ մենք օրըստօրէ աւելի կը փճացնենք հանդիսականի «ստամոքսը»:

**●Մի հարց եւս: Առաջիկայում հանդիսականի հետ ինչպիսի՞ հանդիպումներ էք ունենալու:**

— Վախթանգովի անուան թատրոնում Ռոբերտ Ստուրուան բեմադրում է Շատրովի պիեսը, որը վերաբերում է Բրեստի պայմանագրին: Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ յեղափոխութեան 70ամեակին նուիրուած այդ բեմադրութիւնում ես խաղալու եմ Վլադիմիր Իլյիչ Լենինի դերը:

**●Իսկ կինոյու՞մ:**

— Ռեժիսոր Նաումովը ֆիլմ է բեմադրում Բոնդարեւի «Ընտրութիւն» վէպի հիման վրայ: Նաեւ դրանով եմ զբաղուած: Միաժամանակ ստուդիայում սկսել եմ կարդալ «Կարամազով եղբայրները»:

**●Շնորհակալութիւն այս հաճելի զրոյցի համար: Շուտ-շուտ եկէք Հայաստան: Մենք ձեզ շատ ենք սիրում:**

— Ես էլ ձեզ եմ շատ սիրում, կ'աշխատեմ շուտ-շուտ գալ, մանաւանդ Դիլիջան, երբ հանգստանալու լինեմ:

ՄԻԽԱՅԻԼ ՈՒԼԵԱՆՈՎ

digitised by A.R.A.R.@



# ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ եւ հրապարակագիր Յովհաննէս Գրիգորեան ծնած է 7 Օգոստոս 1945ին, Լենինականի: 1970ին կ'աւարտէ Երեւանի Համալսարանը՝ ստանալով մաթեմաթիկական, լեզուաբանութեան եւ մեքենական թարգմանութեան մասնագէտի վկայական: 1970–71 կը պաշտօնավարէ «Երեկոյեան Երեւան» օրաթերթին մէջ՝ իբր թարգմանիչ: 1975էն ի վեր կը պաշտօնավարէ Հայաստանի գրողներու միութեան մէջ՝ իբր խորհրդական:

1974ին, իր «Ցարուբիւն» գործին համար Յովհ. Գրիգորեանի կը շնորհուի Ն. Օստրովսկիի անուան համամիութենական գրական մրցանակի վկայական եւ յուշամետալ, իսկ յաջորդ տարին կ'արժանանայ Հայաստանի լենինեան կոմերիտմիութեան դափնեկիրի կոչումին:

Յովհ. Գրիգորեան հրատարակած է չորս անուն քերթողագիրքեր, որոնք են՝ «Երգեր առանց երաժշտութեան», «Բոլորովին ուրիշ աշուն», «Անձրեւ մի տխուր առիթով», «Դանդաղ ժամեր»: Ան թարգմանած է նաեւ հինգ անուն հատորներ, իսկ իր բանաստեղծութիւններէն ոմանք թարգմանուած են ռուսերէնի, ֆրանսերէնի, անգլերէնի, ռումաներէնի եւ այլ լեզուներու:

1985ին, Մոսկուայի մէջ, ռուսերէնով լոյս տեսաւ Յովհ. Գրիգորեանի բանաստեղծութիւններու ժողովածուն՝ «Կորած Ամանակներ» խորագրով:

# ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՀ Է

●

Ու իրար գամած փորձութիւններն այն ատամումը, որն անցաւ մեր ուսադներէն, նախ մեր սերնդի գլխով, կրկնուելու գլխովում, արդիւնքը կը լինի տասնեակ բան գաման, կը լինի մահ՝ գիտութեան եւ արուեստի համար, գիւղատնտեսութեան եւ արդիւնաբերութեան համար, առողջապահական ամէն մի բանի համար, մարդկային նորմալ կեանքով ապրելու համար...

Ահա թէ ինչու կարդալով ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտէի թեզիսները, այնպիսի տպաւորութիւն եմ ստանում, որ կարդացածս ոչ թէ կուսակցական փաստաթուղթ է, այլ գեղարուեստական ստեղծագործութիւն, ոչ թէ շարքային, ոչ թէ հերթական, այլ այնպիսին, որը տարիներ շարունակ արգելքի տակ է եղել եւ հիմա, միայն հիմա թոյլատրուել է տպել ընթերցանութեան համար: Ինչպէս «Դոկտոր Ժիվագոն», «Չեվենգուրը», Նաբոկովի, Գումիլյովի, Զոշչենկոյի, Ախմատովայի, Ցվետաեւայի եւ էլի ու էլի բանաստեղծ գործի թարգմանութիւն անվայած գրողների մեծարժէք վէպերն ու վիպակները, պոէմներն ու բանաստեղծութիւնները...

Արդէն երրորդ տարին է, ինչ շատերի պէս գրողից վերածուել եմ մոլեգին ընթերցողի եւ վախի, արդ-նաքի, հրճուանքի, նոյնիսկ ցնծութեան խիստ պատանեկան, զեռեւս անմոռաց զգացումներից նոր ընթերցել եմ բացում «Նովի Միրի», «Զնամիայի», «Դրուժբա նարոդովի», «Օգոնյոկի», «Լիտերատուրնայա գազետայի» խորագրերից նոր համարը: Կարդալով ու մտածելով, որովհետեւ ամէն անգամ սպասում եմ, թէ այս որ է կ'ընդհատուի այս քաղցր երազը: Հրճուանքով, որովհետեւ խորագրերից նոր համար մի նոր հանդէս անուն է յայտնաբերում, արգելքների սուրբ սպասներից փրկած մի նոր տաղանդաւոր ու տառապած ստեղծագործութիւն: Ու ինչն է զարմանալին՝ տարօրինակ ու անհեթեթ ուրախութիւն եմ ապրում, կարդալով այնպիսի բաների մասին, որոնք սարսափից ու զայրոյթից պէտք ուրիշ զգացումներ շարժէին առաջացնէին նորմալ մարդու մէջ: Կարդում եմ, որ մեր երկրում հզօր մաֆիաներ են գործում եւ... ուրախանում եմ: Կարդում եմ, որ մեր քաղաքներում պրոֆեսիոնալ պոռնիկներ նոր օրէք են յայտնաբերել, եւ էլի եմ ուրախանում: Կարդում եմ, գնալով զօրանում է պայքարը մեր երկրատարածութեան մէջ բայց դրան հաշիշամոլութեան դէմ, եւ զարմանալի ուրախանում եմ... Ինչ խօսք, ուրախանում եմ, որովհետեւ արդէն քիչ էլ են մարդու աչք գնում եւ ասում են կայ այն, ինչ որ կայ... վաղուց գիտէինք, որ կայ, եւ չեն ասում չկայ, եւ ընդհանրապէս չի կարող լինել այն, ինչ-որ կայ... վաղուց գիտէինք, որ կայ...: Ուրախանում եմ նաեւ, որ հիմա այդ արտառոցը, ահաւոր սխալների դէմ շուրջ պայքար է սկսուել: Հիմա արդէն հաւատում եմ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Պատկերացնո՞ւմ էք. մեր երկրում, մեր կողքին կատարւում էր երէշաւորը, եւ մենք չգիտէինք։ Աւելի վատ, գիտէինք, բայց չէինք խօսում, եւ փորձում էինք այդ չարիք բոյնը փնտռել դրրսում, մեր սահմաններից անդին։

## ԷԴՈՒԱՐԴ ԱՒԱԳԵԱՆ

*Բանաստեղծ, արձակագիր եւ թարգմանիչ Էդուարդ Աւագեան ծնած է 19 Օգոստոս 1927ին, Թիֆլիս։ 1952ին կ'աւարտէ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը։ Տարի մը «Գիտելիք» ընկերութեան մէջ իբրեւ դասախօս պաշտօնավարելէ ետք, 1953–1954 հայոց լեզու կը դասաւանդէ Մոսկուայի գրողներու միութեան կեդրոնական տան մէջ՝ թարգմանիչներու խմբակին։ 1954ին կը վերադառնայ Երեւան եւ կը պաշտօնավարէ Հայպետհրատի մէջ, նախ՝ իբր սրբագրիչ, ապա՝ իբր խմբագիր։ Ներկայիս, «Սովետական գրող» հրատարակչութեան պատասխանատու գրականութեան ռուսաց խմբագիրն է եւ միաժամանակ՝ խմբագրութեան վարիչի տեղակալ։*

*Է. Աւագեան հրատարակած է շուրջ 20 գիրքեր, որոնց գլխաւորներն են՝* «Մենք ապրում ենք Կոնդում», «Մարդը մարդուն», «Կախարդական աշխարհ», «Հաւատ եւ սէր», «Զրոյց գարնան հետ» *եւ* «Մի կեանքը քիչ է»*.*

*Է. Աւագեան ռուսերէնէ եւ անգլերէնէ թարգմանած է աւելի քան 20 հատորներ, իսկ իր գործերէն շատեր թարգմանուած են ռուսերէնի, ուկրաիներէնի եւ այլ լեզուներու։*

Կորաւ անհատի նախաձեռնութիւնը, գլուխ բարձրացրին նախանձը, քինախնդրութիւնը, անձնիմ ու բացայայտ գրպարտանքները, որոնց զոհ դարձան հազարաւոր մտաւորականներ։

Եկել է ժամանակը, եւ այս բոլորի մասին խօսում է առանց վախի, հետեւաբար առանց քծնանքի, կեղծիքի, խաբէութեան։

digitised by A.R.A.R.@

ԷԴ. ԱՒԱԳԵԱՆ

# ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՆԱԵՒ ՅԵՏ ՆԱՅԵԼ

Մեր երկրի կեանքում կուսակցութեան XXVII համագումարից եւ յունուարեան պլենումից յետոյ, յիրաւի, մեծ փոփոխութիւններ են կատարւում, հրապարակայնութեան շնորհիւ բացատական, մեր աւանդոյթները խանգարող շատ երեւոյթներ են բացայայտւում, քննադատւում, վերացւում։ Բարձրաձայն, առանց երկնչելու ու վախի ասւում, գրւում է այնպիսի երեւոյթների մասին, որոնք մինչ այդ էլ կային, բայց լռութեան էին մատնւում։

Վերակառուցել նշանակում է նորից կառուցել, նորը կառուցել։ Վերակառուցողը ինքը՝ մարդն է։ Իսկ ինչպէ՞ս վարուել, երբ հենց ինքը՝ մարդը ունի հոգեկան վերակառուցման, վերափոխութեան անհրաժեշտութիւն։ Չէ՞ որ մարդկային հոգին շատ դժուար է վերափոխել, այն էլ կարճ ժամկէտում։

Մենք ամէն օր նայում ենք Սովետական հեռուստատեսութեամբ տրուող «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագիրը, «Վերակառուցման լուսարձակը», կարդում կենտրոնական կուսակցական-պաշտօնական ու գրական մամուլը, ամէն անգամ, չնայած շատ բան արդէն գիտենք, շատ բանի արդէն անտեղեակ ենք, բայց ամէն նոր լուրից ցնցւում ենք։ Վերջերս «Վերակառուցման լուսարձակով» հաղորդւում, որտեղ Թմրադեղեր սնուցող եւ դրանք տարածող մարդկանց մասին։ Պատկերացնո՞ւմ էք մեր երկրում, մեր հողերին կատարւում է հրէշաւորը, եւ մենք չգիտէինք։ Աւելի վատ, գիտէինք, բայց չէինք խօսում, եւ փորձում էինք այդ չարիքի բոյնը փնտրել դրսում, մեր սահմաններից անդին։ Մենք ինքներս, մեզ խաբելով, փորձում էինք խաբել հասարակութեանը։

Հապա ասպարէզում մի՞թէ չարիքները, կաշառակերութիւնը, նեթադաշտութիւնը, ընչաքաղցութիւնը եւ այդ նշւած ու չնշւած բացասական երեւոյթների հետ անհանդուրժելի․ անտարբերութիւնը, գործը անհետաձգելի ու գրեթէ անպատժելի հեղինակութիւնը։ Եւ պատասխանը պէտք է փնտրել ո՞չ թէ այսօրուայ մէջ, այլ՝ այն անցած տարիների, որը կուսակցութեան XX համագումարում կոչւեց «անհատի պաշտամունքի» տարիներ։ Մի ժամանակաշրջան, երբ ազնւութիւնը, նախաձեռնութիւնը, ղեկավարութիւնը, անձնահոգատարութիւնը եւ բազում այլ լաւագոյն մարդկային յատկանիշներ իրենց տեղը զիջեցին ՎԱԽԻՆ։ Եկաւ այնպիսի մի պահ, որ շատերը, այն մարդիկ, որոնք իրենց կեանքի ու արեան գնով էին ձեռք բերել մեր նորկան, կոչուեցին հակայեղափոխական, դաւաճան։ Ինչից ուժը, ազնիւները վախեցան, լռեցին, չարերը առաջ եկան ամբողջ նրանց վախից։ Նրանց հասարակ հաւատը, ծնունդ կառավարը։ Երկրի աւանդոյթները ինչ-որ տեղ խաթարուեց։ Ծաղրուեցին ու արհամարհուեցին այնպիսի գիտութիւնները, ինչպիսիք կիբեռնետիկան, գենետիկան էին։ Գովերգուեցին ու երկինք հանուեցին կեղծ գիտնականները։ Արեւեան գործը գիտնականութեան աստուած,

digitised by A.R.A.R.@

գրանով իսկ արգելակելով երկրի տնտեսական առաջընթացը: Հանդէս եկաւ Լեպեշինսկայան՝ բջիջների ծագման ու զարգացման իր կեղծ տեսութեամբ: Սկսուեց հալածանքը իսկական գիտնականների նկատմամբ: Այդ ժամանակը վերջերս լոյս տեսած իր «Զուբր» վէպում հիանալի է ներկայացրել Դ. Գրանինը: Գիտութիւնից հետ չմնացին գրականութիւնը, արուեստը, ընդհանրապէս կուլտուրան: Գրականութիւնը դարձաւ աշուղական գովերգների ու ներբողների մի անվերջանալի շարան, թատրոնն ու կինոն լցուեցին կեանքից կտրուած խամաճիկներով: Կորաւ անհատի նախաձեռնութիւնը, գլուխ բարձրացրին նախանձը, քինախնդրութիւնը, անանիմ ու բացայայտ գրպարտանքները, որոնց զոհ դարձան հազարաւոր մտաւորականներ: Ժամանակը այդպէս է ներկայացւում մեզ Ա. Ռիբակովի «Արբատի զաւակները» եւ Ա. Բեկի «Նոր Նշանակում» վէպերում: Այս բոլորը միայն գիտութեան, գրականութեան ու արուեստի բնագաւառներում: Հապա երկի՞րը, նրա տնտեսութի՞ւնը:

Լաւ է, որ հիմա այս բոլորին մենք նայում ենք որպէս անցեալ, բայց նայում ենք հոգեկան ու մարդկային մեծ կորուստներով: Եկել է ժամանակը, եւ այս բոլորի մասին խօսւում է առանց վախի, հետեւաբար առանց քծնանքի, կեղծիքի, խարէութեան:

Մեր նոր առաջընթացի ճշմարտութիւնը եւ ապագան առողջելու համար պէտք է, անհրաժեշտ է, նախ լաւ նայել: Նայել, խօսել հին սխալների մասին եւ այնպէս անել, որ այլեւս չկրկնուեն: Հիմա մենք արժանին պիտի մատուցենք այն գրողների, մարդկային հոգու իսկական ճարտարապետներին, որոնք այդ հոգու վրայից ուզում են քերել հին արատների ժանգը եւ գնալ առաջ: Ա. Ռիբակովի, Դ. Գրանինի, Ա. Բեկի կողքին գործում են գրողներ, որոնց միակ ցանկութիւնը այդ է: Այդ դժուարին ժամանակների մասին մեզ մօտ էլ է գրուել. յիշենք Մ. Արմէնի, Գ. Մահարու գործերը, յիշենք, որ թէ՛ նրանց արխիւներում եւ թէ կենդանի շատ գրողների մօտ կան գործեր, որոնք պիտի եւ անհրաժեշտ է, որ լոյս աշխարհ գան, յանուն մեր առաջընթացի: Յանուն մարդկային հոգու մաքրման:

Երբ մարդը գիտէ իր արատները, երբ մարդը լաւ է նայում ու տեսնում, կշռադատում է այն բոլորը, ինչը որ անցեալն է եղել չարեաց, նա այլեւս թոյլ չի տայ, որ հինը կրկնուի: Վերակառուցել, նշանակում է նորից կառուցել, նորը կառուցել: Մեր՝ գրողներիս, խնդիրն է պատգամել մարդկային հոգիներով, որովհետեւ երկրի առաջընթացը, հասարակական մթնոլորտի մաքրման գործը հենց իրենց՝ առողջ հոգով մարդկանց ձեռքի գործն է: Բայց միայն գրողների ջանքերը քիչ են եւ ուժերի չեն հասցնի, եթէ իրենք՝ մարդիկ չզբաղուեն իրենցով: Մարդ պէտք է կարողանայ հասկանալ իրեն, իր լաւ ու վատ կողմերը եւ կարողանայ ինքն իրեն մաքրել ճիշտ ծովի նման, որի մէջ չնայած թափւում են ե՛ւ պղտոր անձրեւները, ե՛ւ գետերի տիղմը, ե՛ւ նաւերի մուրն ու կեղտը, ինքնամաքրման հզօր օրէնքով նորից մնում է պարզ ու զուլալ: Մեր ժամանակների մարդն էլ պէտք է ծովի նման լինի:

ԷԴ. ԱՒԱԳԵԱՆ

digitised by A.R.A.R.@

# ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

Կուսակցական կոնֆերանսի ընթացքում տեղի է ունենում մարզերի եւ ռեսպուբլիկաների բուռն բանավէճ վերակառուցման հակառակորդների եւ կողմնակիցների միջեւ։ Ինչպէս ցոյց են տալիս կենտրոնական մամուլում տպագրուած նիւթերը, այդ բանավէճը կրում է սկզբունքային բնոյթ եւ վերաբերում է վերակառուցման լինել կամ չլինելու խնդրին։ Պահպանողական, բիւրոկրատական տարրերը պայքարում են հրաժարուել վերակառուցումից եւ վերադառնալ գէթ անցեալը, գէթ ստալինականութիւնը, [illegible] յայտարարելով, որ անցեալից հրաժարումը նշանակում է ժխտել անցեալ 70 տարիների նուաճումները եւ սովետական հասարակարգի սոցիալիստական էութիւնը։ Մինչդեռ խօսքը վերաբերում է սոցիալիզմի արմատական կատարելագործմանը։

Յետադարձ ճանապարհ չկայ։ Այդ ուժերը եւ նրանց ցանկութիւնները դատապարտուած են պատմութեան կողմից։ Վերակառուցումը հաստատուն ու վճռականօրէն մուտք է գործել սովետական հասարակարգի կեանքի մէջ, եւ խնդիրն այն անշրջելի դարձնելն է։

«Հայրենիքի ձայն», 1988, թիւ 18

## ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԲԱՂՁԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Երբեւէ, հրաշալի հասակ է պատանեկութիւնը՝ թռիչքներով ու վերելքներով, ընդոստ խանդավառութեամբ, ի հարկէ, նաեւ անխուսափելի սխալներով։ Եւ այսօր, երբ մեր երկիրը թեւակոխել է յեղափոխական վերափոխումների նոր շրջափուլ, պատահական չէ, որ կենսական վիճելի խնդիրների լուծումը շաղկապւում է ամէնից առաջ երիտասարդների հետ։ Թափանցիկութեան [illegible] եւ ընդգրկումով ժողովրդային այդ խնդիրները կարելի է ընդունել մի [illegible]՝ վերակառուցում կեանքի բոլոր ոլորտներում։ Սա է կուսակցութեան առաջադրած պահանջը, որը երիտասարդութեան համար մոբիլիզացնողն ինչպէս ՀԼԿԵՄ XXX, այնպէս էլ ՀամԼԿԵՄ XX համագումարները, ի մի բերելով նաեւ այն գաղերը, որոնց պէտք է բացել հրապարակայնութեան եւ վերափոխումների բարեբեր շունչը։ Անմնակարգութիւնը, թերեւս, ճշմարտութեան պահն է, որն օգնում է նոր սերնդին ընդառաջ [illegible] իրականութեան փաստերն ու երեւոյթները, [illegible] երկխօսութիւն վարելու իրենց ժամանակի հարցերի շուրջ, պայքար մղելու տարբեր բնագաւառներում [illegible] դէմ՝ ինչպէս [illegible], այնպէս էլ հետագայ խորացումն ու բարդացումը կանխելու նպատակով։ Ուշագրաւ է, որ կուսակցութիւնը հասունացած ամենադժուար պրոբլեմները ձգտում է լուծել ոչ թէ դիրեկտիւ որոշումներով, այլ դեմոկրատացման ճանապարհով, մարդկային գործոնի ակտիւացմամբ, ամենալայն զանգուածների ներգրաւմամբ։ Ո՛չ թէ տարբեր ամբիոններից ճառել վերակառուցման անհրաժեշտութեան մասին, ո՛չ թէ շտապեցնել վերափոխումների աստիճանական ընթացքը, այլ որոշակի գործով ու գործնականութեամբ ձեռնամուխ լինել նպատակային աշխատանքի։

«ԳԱՐՈՒՆ»

## ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է

Առանց լայն հրապարակայնութեան մեր հասարակութեան արմատական վերակառուցման այս կարեւոր նշանակալից անհրաժեշտութիւնը [illegible] է ժամանակի պահանջներին։ Այսօր արդէն գաղտնիք չէ, որ տարիներ եւս կուտակուել են իրօ՛ք դժուարին ու հրատապ պրոբլեմներ, որոնց շուտափոյթ լուծումը ժամանակի գերխնդիրներից ու շարքային աշխատաւորների պահանջներից պահանջւում է նոր մտածողութիւն, հոգեբանական նոր մտածելակերպ։ [illegible] ուսեցող փոքր ու մեծ երեւոյթների լուսաբանմանը։ Մեր իրականութեան մէջ առանձնահատուկ [illegible] արմատացած գիտակցական վարչահրամանական մեթոդները իրենց ուղղակի կնիքն են դրել նաեւ ժամանակի պահանջների վրայ, ծնունդ տալով հասարակութեան կեանքի ամէնից կենսական [illegible], ուժեղ գաղափարականութեան, պաշտօնական եւ, այսպէս կոչուած, ներքին դրամական[illegible] ամրապնդման, լուրջ ու կարեւոր եւ նոյնիսկ անհրաժեշտ հարցերի ու պրոբլեմների վերաբերեալ տարբեր կարծիքների ազատ արտայայտման հնարաւորութեան սահմանափակման եւ այլ երեւոյթների, որոնք անդրադարձան են նաեւ գիտակցութեան ազգային-[illegible] հասարակութեան կառուցման լինելութեան խնդիրներին։

Այսօր, ի հարկէ, պատկերը սկսում է փոխուել։ Այդ առաջացմանը համար գործուն դեր է հնարաւոր մեր ժամանակի լայն արդիական հրապարակումները։ Թէեւ դժուարին, ի հարկէ, ուժերն ունեն։ Սակայն մեր առաջական, հանրապետական թերթերը, ամսագրերը, ռադիոն ու հեռուստատեսութեան ծրագրերը։ Վերակառուցման ալիքը իր հզօր հոսանքի մէջ է առել հասարակութեան բոլոր անդամներին, գործնականութեան ... Օգնում են ժողովրդի միտքը, ձայնը, կամքը։ Օրէցօր մեծանում է մեր կեանքում առկայ բացասական երեւոյթների վերաբերեալ ո՛չ միայն լոկ ... երեւոյթների, այլեւ՝ օգնութեան անհրաժեշտութեան ու ձեռնարկումների անմիջական մարդկանց օրինական պահանջը։

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»

digitised by A.R.A.R.@



## ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

*Արձակագիր, թատերագիր եւ հրապարակագիր Վարդգէս Պետրոսեան ծնած է 9 Օգոստոս 1932ին, Աշտարակ։ 1954ին կ'աւարտէ Երեւանի պետական համալսարանի բանասիրական հիմնարկի լրագրութեան բաժինը։ 1954–1955 կը պաշտօնավարէ Նոր Բայազէտի (Ներկայիս՝ Կամօ) շրջանային թերթին մէջ՝ իբրեւ պատասխանատու քարտուղար, 1955–1957՝ «Սովետական Հայաստան» օրաթերթին մէջ՝ իբրեւ գրական աշխատող, 1957–1961՝ «Աւանգարդ» օրաթերթին մէջ՝ իբր պատասխանատու քարտուղար, ապա՝ իբր խմբագրի տեղակալ։ 1961–1966 կը վարէ «Պիոներ կանչ» թերթի գլխաւոր խմբագրի պաշտօնը, իսկ 1966–1975 կը ստանձնէ «Գարուն» ամսագրի գլխաւոր խմբագրի պատասխանատուութիւնը։*

*1975ի Մայիսին Վ. Պետրոսեան կ'ընտրուի Հայաստանի գրողներու միութեան նախագահ եւ այդ պաշտօնը կը վարէ մինչեւ 1988 Փետրուար։*

*15 տարեկան հասակին իր առաջին բանաստեղծութիւնը ստորագրած Վ. Պետրոսեան 1958ին կը հրատարակէ իր առաջին եւ միակ բերթողագիրքը՝ «Բալլադ մարդու մասին», որմէ ետք կը ստորագրէ շուրջ 10 արձակ հատորներ, որոնց գլխաւորներն են՝ «Անաւարտ դիմանկարներ», «Հայկական էսքիզներ», «Ապրած եւ չապրած տարիներ», «Վերջին ուսուցիչը». «Մենաւոր ընկուզենին». «Կրակէ շապիկ»։*

*Վ. Պետրոսեանի գործերէն ոմանք թարգմանուած են ռուսերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի, յապոներէնի, լիթուաներէնի, չեխերէնի, պուլկարերէնի, լեհերէնի, արաբերէնի եւ այլ լեզուներու։*

…Գաղափարական ոեւէ զենքավար պիտի կարողանայ իր տեսակէտները արտայայտել, եթէ պէտք է, նաեւ քաց, ուղղակի բանավէճում, պէտք է կարողանայ յաղթել ոչ թէ իր պաշտօնի, այլ ճշմարտացիութեան դիրքերից։

Մեր մտահոգութիւնը պիտի լինի, որ նախ՝ չարժեզրկուեն այդ մրցանակները, եւ ապա մրցանակ ստանայ բուն ստեղծագործութիւնը եւ ոչ թէ գրողի անձը՝ ինչպէս երբեմն պատահում է։

Կար ժամանակ, որ բՍփիւռքում Հայաստանի՝ նոյնիսկ իրական թերութիւնների ամէն մի արծարծում մենք որակում էինք «հակահայրենասիրութիւն» պիտակով։ Այսօր մենք ինքներս աւելի խիստ ենք խօսում մեր սխալների ու արատների մասին…

digitised by A.R.A.R.@

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

# ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀՈԳՍԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Ներկայ զեկուցումը վերջին տարիներին գրական արտադրանքի եւ, առհասարակ, մեր գրական պրոցեսի քննութեան նպատակադրում չունի: Վերակառուցման մեծ երեւոյթի անդրադարձը մեր բուն ստեղծագործութեան մէջ առաջադրայի խնդիր է, բայց գրական կեանքի, գրողների միութեան ստեղծագործական-կազմակերպական աշխատանքի բոլոր օղակների վերակառուցումն այսօրուայ անյետաձգելի հրամայականն է: Եւ մենք հասարակական ուժերով պիտի որոնենք այդ վերակառուցման ուղիներն ու միջոցները:*

∴

*Մեր երկիրը, լիովին, պատմական ժամանակ է ապրում:* «Վերակառուցման «կարգախօսում»,– *գրում է Մ. Ս. Գորբաչովը,*– կը վերածնուի ողջ հասարակութիւնը եւ ամէնից առաջ — ինքը՝ մարդը: Դա կը լինի նորոգուած հասարակութիւն»:

*Ընկեր Գորբաչովը նոյն այդ գրքում վկայակոչում է մի հին զրոյց: Թափառական մէկը մօտենում է մի խումբ մարդկանց, որոնք աշխատում են ինչ-որ շինութեան վրայ: Հարցնում է՝* «Այդ ի՞նչ էք անում»: *Մարդկանցից մէկը՝ նեարդային, ձանձրացած, պատասխանում է.* «Ինչ՞ն տես, առաւօտից իրիկուն այս անիծուած քարերն ենք քաշքշում»: *Մի ուրիշ մարդ, որ ծնկաչոք էր, բարձրանում է տեղից, ուղղւում եւ ասում հպարտութեամբ.* «Նայիր, տես, մենք տաճար ենք կառուցում...»:

*Վերակառուցումը, այո՛, տաճար կառուցողի հաւատ եւ նուիրում է պահանջում: Այդ պարագայում միայն մենք կը կարողանանք յաղթահարել, մասնաւորապէս, առօրեայ շրջանի բարդութիւնները, որովհետեւ տաճարը բարձրանում է քար-քարին դնելով միայն: Բարդութիւններից ամենադժուարինը, թերեւս, ինքներս մեզ յաղթահարելն է:*

*Վերակառուցման մթնոլորտ, բազմաշերտ երեւոյթը թեւակոխել է նոր, աւելի բարդ ու պատասխանատու շրջան: Այդ նոր փուլի հրամայական պահանջն է՝ խօսքի էներգիան վերածել գործի էներգիայի: Արդէն բաւարար չեն միայն հաւանութեան երգումները: Բաւարար չեն նաեւ «լճացման շրջանի» արատների պախարակումները: Գունաւոր ակնոցները սեւով փոխարինելը*

digitised by A.R.A.R.@

*դեռ չի նշանակում ընթանալ վերակառուցման առաջին շարքերում: «Նոր մտածողութիւն» չի նշանակում «նոր աշխարհայեացք», այլ նշանակում է մաքրել մեր աշխարհայեացքը գաղափարներից, քարացած սխեմաներից, պատկերա-ցումներից, լճացումից: Սա եւս հեշտ պրոցես չէ. մենք ամէնքս ինչ-որ չափով դեռ նոյնն ենք, իսկ ժամանակը փոխուել է — ու դրամա է, որի հետ մենք պէտք է հաշուի նստենք: Եւ ապա, վերակառուցման ալիքը ջրի երես հանեց նաեւ փրփուրի բաւական մեծ քանակութիւն: Երբ բացւում են երկար ժամանակ խցանուած ծորակները, նախ ժանգ է գալիս — գլուխները չկորցնենք այդ իրողութիւնից եւս:*

*Բնական է նաեւ, որ եղան մարդիկ, որ հապշտապ զարդարուեցին վերակառուցման լոզունգներով, անմիջապէս սկսեցին ուրիշ երգ երգել: Ուկրաինացի գրող Վլադիմիր Դրոզդը նման մարդկանց բնութագրում է դիպուկ եւ սպառիչ՝ «վերակառուցման առաջիկներ»: Մի քանի մէջբերում նրա յօդուածից. «Քծնանքի որոշ սիրուածներ այսօր աղմկում են հենց քծնանքի վտանգի մասին, կարիերիզմի դէմ որոշ տաղանդներ կարիերիզմի դէմ մղւող պայքարի առաջին շարքերում են...: Վերակառուցման նման «առաջիկների» համար ասենք. մարդիկ, որ «լճացման տարիներին» տանուլ փորձել են պահպանել իրենց մարդկային արժանապատուութիւնը, եղել ու մնում են «հաւի-պարզամիտներ»:*

*Մեզանից ով բոլորն են հրապարակայնութեան պահանջելի հնարաւորութիւնից օգտւում յանուն մեծ ճշմարտութիւնների, յանուն ժողովրդի, մեր դէպքում՝ գրականութեան բարձրագոյն շահերի: Քննադատութիւնը նրա համար չէ, որ աղ լցուի բաց վէրքին, այլ նրա համար է, որ բուժի այդ վէրքը: Ամէն ինչին դէմ լինելը դեռ չի նշանակում կողմ լինել կեանքի դեմոկրատացմանը: Քննադատել՝ նախ նշանակում է վերլուծել այսինչ մարդու, մեր դէպքում՝ գրողների միութեան, նրա ժամանակի պրակտիկ գործունէութիւնը, առանել արածն ու չարածը, ընդամէն կարողանալով բարձրանալ մանրուքներից, անձնական համակրանքից եւ հակակրանքից: Քննադատել՝ նշանակում է նաեւ առաջարկել, ճանապարհներ յուշել վիճակը, թերութիւնը շտկելու համար: Նման կեցուածքը կարեւոր է մանաւանդ մեր օրերում, երբ մենք գիտենք, որ այսպէս, ինչպէս առաջ՝ այլեւս ապրել չենք կարող, բայց ինչպէ՞ս պիտի ապրենք — շատ որոշ չենք պատկերացնում: Գրողների միութեան, մա՛նաւանդ վարչութեան իւրաքանչիւր անդամ իրեն ասէրը պիտի դդայ գրական կեանքի, որովհետեւ միայն հաւաքական ուժերով է, որ կը կարողանանք գործունէութեան ճիշտ բանաձեւի հասնել:*

*Իրենց զգալ են տալիս նաեւ այլ կարգի անցանկալի երեւոյթներ: Կան մարդիկ, որ մտածում են, թէ դեմոկրատիան այն է, երբ բոլորը համաձայնում են իր կարծիքին: Համաձայն չե՞ն, ուրեմն, թշնամի են՝ եւ ով ասելի, ով պակաս... վերակառուցման կուրսին...: Ո՛չ թէ միայն խօսքով, այլ ըստ էութեան դեմոկրատացումը ենթադրում է, առնուազն՝ 1) դիալոգ՝ հաւասարութեան սկզբունքով, 2) իրար հետ նաեւ համաձայն չլինելու կուլտուրա, 3) կասկածանք սեփական անսխալականութեան մէջ եւ յարգանք ընդդիմախօսի նկատմամբ: Մեր մտածողութեան եւ գործելակերպի, պարզապէս մարդկային վարքագծի դեմոկրատացման կարիքն ունենք ամէնքս՝ ե՛ւ ղեկավարները, ե՛ւ ոչ-ղեկավարները, ե՛ւ «վերեւը», ե՛ւ «ներքեւը»: Դա դժուարին, ցաւատանջ պրոցես է: Չի կարելի դանդաղել, բայց նաեւ անհնարին է այդ հոգեբանութեանը հասնել միանգամից:*

«Ինչպէս Դոստոեւսկու հերոսը՝ մենք միանգամից ուզում ենք «ողջ կապիտալը»,— *գրում է* «Լիտերատուրնայա գազետա».— մինչդեռ մեր

digitised by A.R.A.R.@

կեանքի դեմոկրատացումն այն ալորտն է, որտեղ «կապիտալը» կուտակւում է կոպեկ առ կոպեկ։

*Կ՚ուզենայի առ ելացնել — ո՛չ միայն դեմոկրատացման, այլեւ վերակառուցման ողջ գործի «կապիտալը» մենք պիտի կուտակենք կոպեկ առ կոպեկ։*

*Այսօր գլխաւորն այն է, որ ամէն մէկս ոչ այնքան խօսքով, որքան իրական գործով քուէարկի իր հաւատարմութիւնը վերակառուցման փոխման գաղափարներին։* «Վերակառուցման պրոցեսում,— *վերջերս գրեց* «Պրաւդա»ն,— ոչ հարկաւոր է յուսալքման եւ շփոթութեան մէջ ընկնել բացասական երեւոյթների դէմ-յանդիման, ինչպէս նաեւ հարկ չկայ երանուանքի՝ ամէն յաջողութեան դէպքում։

«Պրաւդա»յի *այս օթափ հարցադրումը խորապէս կիրառելի պիտի է համարել նաեւ մեր հանրապետութեան համար, մա՛նաւանդ, նկատի ունենալով արցի իրավիճակը, այո՛, ո՛չ հրճուանքի երանութեան թմբիրն է գործին օգուտ՝ փոքր կամ մեծ ամէն յաջողութեան պէպքում, ոչ էլ յուսալքման ու շփոթութեան էջատագը՝ բացասական երեւոյթների դէմ-յանդիման, որի մէջ ընկնում են՝ ոմանք անկեղծ մտահոգութեամբ, ոմանք, ցաւօք, ներքին չարախնդութեամբ։*

*ՍՄԿԿ Կենտկոմի յունուարեան պլենումի խորապէս ճշմարտացի, օթափանց քննադատութիւնից յետոյ մեր հանրապետութիւնը գերագոյն լարման ժամանակ է ապրում, ջանալով շտկել իրավիճակը։ Այո՛, վերակառուցման պրոցեսը — ո՛չ խօսքով, ո՛չ մաղթանքներով — մեզանում գնահւս չի գնում այնպէս, ինչպէս կ՚ուզենայինք։ Ցենուելով միայն ընտրողների հետ ունեցած իմ անձնական շփումների փորձի վրայ, կարող եմ ասել, որ մեզանում դեռ այլ են ծածկում բիւրոկրատիզմը, մարդկանց ցաւերի նկատմամբ փարչական խուլութիւնը, կաշառակերութիւնը՝ անգամ հոգեւոր գործունէութեան ոլորտներում, պրոտեկցիոնիզմը։ Կան չլուծուած սոցիալական բազում հարցեր, անտեսական մեխանիզմը դժուարութեամբ է յարմարւում նոր յարաբերութիւններին, ամսի մէջ է մնում տարիների իներցիան։ Իր զգալի մասով այս ամէնը նաեւ միութենական ցաւեր են, բայց քիչ չէ նաեւ մերը՝ սեփականը։*

*Այս անցանկալի վիճակը կարող է բարեփոխուել միայն համընդհանուր ջանքերով։ Այսօր դժուար չէ ճշմարիտ բառեր ասել. օդը լիքն է ճշմարտութեամբ։ Դժուարը ճշմարիտ ապրելն է։ Եւ ամէն մէկս այդ-բանը պիտի սկսի ինքն իրենից։ Սա, իհարկէ, բանական հարցադրում, ոչ մէկս չի վիճարկում, բայց անելը հեշտ չէ, մարդը մեքենայ չէ, որ մէկ մի շարժումով նրան փոխադրեն աշխատանքի, մտածողութեան, հոգեբանութեան ուրիշ ռեժիմի։*

*Հանրապետութեան գործերի վիճակի կուսակցական գնահատականը վերաբերում է նաեւ մեզ՝ Հայաստանի գրողների միութեանը, գրական մամուլին։ Մենք ամէնքս, բնականաբար, ուզում ենք, որ մեր գրական կեանքն աւելի առոք, արդար ու իմաստալից դառնայ, որ գրական մեր մթնոլորտում աւելանայ թթուածինը, քանի որ նման մթնոլորտը, այո՛, կարող է նպաստել որ ծնուեն նոր, տաղանդաւոր գրքեր։ Որպէսզի աւելի սերտ ու բարեկամական դառնան մեր զուտ մարդկային յարաբերութիւնները, բնականաբար, ո՛չ սկզբունքային զիջումների գնով, բայց նաեւ ինքներս մեզ հաշիւ տանք, որ մենք գրական մի ընտանիք ենք եւ պիտի շարունակենք ապրել, ստեղծագործել իրար հետ, եւ կայ ստեղծագործող մարդու տրամադրութիւն կոչուող մի առեղծուած — լաւ տրամադրութիւնը կարող է շարժման մէջ դնել Աստծուց մեզ տրուած ձիրքի առաւելագոյնը, վատ տրամադրութիւնը նուազագոյնի կը հասցնի մեր ունեցած ընդունակութիւնը։*

*Ուրեմն, կ՚ուզենայի յուսալ մեծ մտահոգութիւններով թելադրուած գործնական, կենսարուչակ խօսակցութիւն. ինչ չի արուած, ինչ սխալ է*

digitised by A.R.A.R.@

արուած, ի՞նչը կարելի էր աւելի լաւ անել, ի՞նչ նոր ոգին կարելի է ներարկել գրողների միութեան, գրական մամուլի երակների մէջ:

Այս հարցադրումների տրամաբանութեամբ ո՞ր խնդիրներն են ինձ մտահոգիչ թւում:

Մենք պիտի կարողանանք ճշգրտել գրողների միութեան գործունէութեան կողմնացոյցի սլաքի ուղղութիւնը, այն թեքելով դէպի բուն ստեղծագործական պրոբլեմները: Ցաւօք, վերջին տասնամեակներում մեր գործունէութիւնը ինչ-որ չափով տօնական-յոբելեանական, գրական զանգուածային միջոցառումների երանգ է ունեցել. դա համամիութենական «հիւանդութիւնն» է, «լճացման շրջանի» արտայայտութիւնն եւ շատ կողմերով թելադրւել է ՍՀՍՄ գրողների միութեան վարած գրական քաղաքականութեամբ: Սա բնաւ չի նշանակում, թէ անհապաղ պիտի հրաժարուենք մեր գործունէութեան այդ ուղղութիւններից: Այսպէս, մեզ յաճախ մեղադրում են զանազան յոբելեաններով տարուելու մէջ: Բայց ինչպէ՞ս վարուել, մանաւանդ, հաշուի առնելով մեր 1600ամեայ գրականութիւնը, մեր մշակոյթի շատ մեծերի նկատմամբ չմարած մեր պարտքերը: Միայն վերջին 2—3 տարում մենք կատարել ենք Արովեանի, Րաֆֆու, Վարուժանի, Սայաթ-Նովայի, Թէքէեանի, Մեծարենցի, Տէրեանի, Չարենցի, Պռոշեանի, Սեւակի, Շիրազի, մեր արդի գրականութեան նշանաւոր դէմքերի՝ Հ. Սահեանի եւ Ս. Խանզադեանի յոբելեանները: Ամէն մեծ յոբելեան ստեղծագործական-կազմակերպչական վիթխարի աշխատանք է պահանջում, ժամանակ ու նեարդեր: Ինչպէ՞ս վարուել, այսուհետեւ չանե՞լ նման յոբելեաններ...: Վերջին տարիներին մենք սկիզբ դրինք Թումանեանական, Իսահակեանական, Չարենցեան, Սեւակեան պոեզիայի տօներին՝ Լոռիում, Շիրակում, Չարենցաւանում, Սովետաշէնում, Բակունցեան օրերին՝ Գորիսում: Դա մեր հանրապետութեան տարբեր շրջաններում գրականութեան եւ արուեստի մթնոլորտ հրահրելու մտահոգութեամբ է թելադրուած, ուղղուած է նաեւ ամէն բան միայն մայրաքաղաքում՝ Երեւանում կենտրոնացնելու մտայնութեան դէմ: Այդ տօները աշխուժութեան ալիք են առաջացնում ժողովրդի մէջ, սէր եւ հետաքրքրութիւն խթանում դէպի մեր գրականութիւնը: Չանե՞լ այսուհետեւ...: Կամ՝ երկու տարին մէկ մենք անցկացնում ենք Թարգմանչաց տօն, որի նպատակն է պարբերաբար ի մի բերել մեր թարգմանչական գործի արդիւնքները, նաեւ համալրել մեր գրականութեան բարեկամների թիւը: Չանե՞լ այդ տօնը...: Թերեւս մենք նոր, աւելի թարմ եւ ճկուն ձեւեր պիտի մտածենք նման միջոցառումներին աւելի մեծ չափով ստեղծագործական բնոյթ տալու համար: Կ'ուզենայի խորհուրդ տայիք, առաջարկէիք, յուշէիք:

Այս ամէնի վրայ ձեր ուշադրութիւնը հրաւիրելով, ես, այնուամենայնիւ, գտնում եմ, որ մենք պիտի կրճատենք, մանաւանդ, գրողների տան միջոցառումների քանակը, հրաժարուելով երկրորդական, ոչ-կարեւոր, գրականութեան բուն խնդիրներից դուրս միջոցառումներից: Դա վերաբերում է զանազան երեկոյթներին, ցուցահանդէսներին, համերգներին: Միայն 1987 թուականին հարիւրից աւելի միջոցառում է անցկացուել, այսինքն՝ երեք օրը մէկ՝ միջոցառում: Տարիներ առաջ մենք դժգոհում էինք, որ գրողների տանը համարեա՛ ոչինչ չի կատարւում: Այսուհետեւ երեւի պիտի կարողանանք զսպել մեր ոգեւորութիւնը, մանաւանդ, այդ միջոցառումներին հազուադէպ են ներկայ լինում իրենք՝ գրողները:

Ուրեմն, ուշադրութեան կենտրոնում պիտի ունենալ ամէնից առաջ զուտ գրական, ստեղծագործական հարցերը, որոնց լուծումից է գոյանում գրական մթնոլորտ կոչուող երեւոյթը: Այդ մթնոլորտի կարիքը զգում ենք մենք ամէնքս: Ցաւօք, տարիների ընթացքում հենց այդ գրական մթնոլորտն

digitised by A.R.A.R.@

է, որ դժուար է գոյանում: Գնալով նուազեցին զուտ ստեղծագործական քննարկումները, ասաց, ազնիւ բանավէճերը: Նկատի ունեմ ե՛ւ մամուլը, ե՛ւ կենդանի քննարկումները: Լուրջ, մասնագիտական վերլուծութիւն են պահանջում ե՛ւ գրողի, ե՛ւ գրքի արժէքաւորումը, ե՛ւ գրողի, ե՛ւ գրքի նկատմամբ քննադատական մօտեցումը: Ցաւօք, երկու դէպքում էլ նման վերլուծական մօտեցումը առայժմ մնում է իբրեւ երազանք: Այդ լուրջ վերլուծութիւնը շատ յաճախ փոխարինուել է անկիրք, մակերեսային մի ժանրով, որ մամուլում կոչւում է գրախօսութիւն, հիմնականում՝ գովասանական, կենդանի քննարկումներում՝ ասեղի վրայ զրոյց, յաճախ՝ բամբասանք: Իսկ հատուկենտ քննադատական ելոյթները, ցաւօք, երբեմն թելադրուած են անձնական մոտիւներով:

Գրական կենդանի մթնոլորտի գոյացման համար կարեւոր առաքելութիւն ունեն գրողների միութեան ժանրային խորհուրդները: Մի շարք խորհուրդների (արձակի, թարգմանական, քննադատութեան, մանկական) հաւաքոյթները բաւական արդիւնաւոր են, միւսները դէպքից դէպք, բայց նոյնիսկ լաւագոյն դէպքում ցանկալի մթնոլորտը չի գոյանում: Մենք քիչ ենք կարդում իրար, խորհուրդների երեկոյթները հազիւ 20–25 մարդ են հաւաքում, հիմնականում՝ քննարկուող հեղինակի համակիրներին: (Ի դէպ, վաղուց ժամանակն է ստեղծել երգիծանքի խորհուրդ. թերեւս նրա հաւաքոյթները աւելի մարդաշատ լինեն:

Հարկաւոր է որոնել ստեղծագործական քննարկումների աւելի ինտիմ ձեւեր, եւ ամէն անգամ պարտադիր չէ լեփ-լեցուն սրահ՝ բեմ-դահլիճ բարիկադով բաժանուած: Հարկաւոր է այնպիսի մթնոլորտ, երբ գրողն ուզենայ թէկուզեւ 10–15 մարդու համար կարդալ իր անտիպ գործը, մտերմիկ շրջանակում խօսել իր մտայղացման մասին, լսել իր ընկերների կարծիքը: Չէ՞ որ մենք պարզապէս կարիք ունենք իրար:

Բանավէճ չի ստացւում նաեւ մամուլում:

Ամենաթարմ օրինակը՝ թարգմանութեան եւ քննադատութեան հարցերին նուիրուած բանավէճերը «Գրական թերթ»ում: Նրանցից առաջինը շարունակւում է հիմնականում պարզապէս Ալ. Գրինի գրքի թարգմանութեան մանրուքների շուրջը, միւսը դարձաւ մեր մի քանի քննադատների հին վէճերի վերակենդանացման առիթ, արտայայտման եղանակով՝ ոչ-բարեկիրթ, երբեմն պարզապէս կոպիտ եւ վիրաւորական:

Քննադատութեան ազատութիւնը բնաւ էլ փոխադարձ ոչնչացման, իրար ճակատի այլեւայլ պիտակներ փակցնելու, ընդդիմախօսի մտքերը աղաւաղելու, կամայական մեկնաբանութիւնների վարժանք չէ: Քննադատութեան արուեստը ընդդիմախօսին վիրաւորելու, անուանարկելու մէջ չէ, այլ լուրջ վերլուծութեան: Իսկ եթէ ընդդիմախօսը ինչ-որ տեղ վրիպել է, դա պիտի ցոյց տալ, ոչ թէ չարախնդութիւն: Անհրաժեշտ է, որ գրական մամուլի ղեկավարները գիտակցեն մամուլի դեմոկրատացման, հրապարակայնութեան եւ մամուլը անօրինող մարդկանց պատասխանատուութեան բարձրացման փոխկապակցուած լինելու դիալեկտիկան: Մամուլի ազատութիւնը, այո՛, պատասխանատուութիւն է: Արդէն ոչ ոք խմբագիրներից չի պահանջում՝ խորհրդակցել, համաձայնեցնել, բայց դա նշանակո՞ւմ է, որ նրանց գործը հեշտացաւ...: Մամուլի ազատութիւնը նշանակո՞ւմ է, որ հեղինակների բերած ոչ մի քաղուածք կամ փաստ չպիտի ստուգուի, որ պիտի թոյլ տրուի անձնական կրքերի սանձազերծում: Նման «ազատութիւններ» վերջերս նկատւեցին «Գրական թերթ»ում:

Վերափոխման կարիքն ունի խմբագրութիւնների աշխատանքի ոճը: Չի կարելի անվերջ տանել-բերել հեղինակներին, կերակրել նրանց սնամէջ խոս-

digitised by A.R.A.R.@

տումներով, քաջութիւն եւ երբեմն գուցէ նաեւ իմաստութիւններ չունենալով սկզբունքային, պրոֆեսիոնալ խօսակցութեան համար։ Տպել-չտպելը խմբագրութեան իրաւունքն է, բայց պատասխանը պէտք լինի հիմնաւորուած, այդ պատասխանը պիտի տրուի որոշակի ժամանակի սահմաններում եւ չպի-տի վիրաւորուի գրողի, հեղինակի արժանապատուութիւնը։

Նման վարուելակերպի դրսեւորումներ կան, մասնաւորապէս «Գա-րուն» ամսագրում։ Վերջերս համանման մի ուրիշ փաստի մասին լուրջ խօ-սակցութիւն գնաց «Литературная Армения» ամսագրի ընկերների հետ։ Մամուլի ինքնուրոյնութիւնը նշանակում է՝ գրական աշխատողից սկսած մինչեւ խմբագիր — այլեւս վերեւ չնայել, սկզբունքային պատասխանը ուրիշի վրայ չգցել, լիիրաւ պատասխանատու զգալ ամէն ինչի համար։

Նման իրավիճակի պայմաններում առանձնապէս կարեւորւում է խմբագրական կոլեգիաների դերը։ Գրական մամուլը նրանք են ստորագրում, եւ դա պարզ ձեւականութիւն չէ։ Կոլեգիաների անդամները, որոնք մեր աչքի ընկնող գրողներն են, քննադատները, պէտք է լիիրաւ տէր եւ պատասխանա-տու զգան իրենց թերթի կամ ամսագրի համար։ Ցաւօք, ոչ բոլորն են այդպէս վերաբերւում։ Խմբագրական կոլեգիան է, որ պէտք է որոշի թերթի կամ ամ-սագրի գլխաւոր ուղղութիւնը եւ որեւէ լուրջ հրապարակում անպայման պի-տի անցնի նրա հաւաքական կարծիքի բովով։

Համագումարից համագումար ընկած ժամանակամիջոցում գրական պրոցեսի, գրական կեանքի պրոբլեմների քննարկման գլխաւոր համաժողով-ները վարչութեան պլենումներն են։ Ցաւօք, մա՛նաւանդ ստեղծագործական հարցերին նուիրուած պլենումներ մենք քիչ ենք գումարել։ Չնայած Լենինա-կանում եւ Հրազդանում, ընթերցողների լայն մասնակցութեամբ, անցկաց-րած մեր երկու պլենումները բաւական կենդանի էին, սուր, այնուամենայնիւ դրանցով չէր կարելի բաւարարուել։ Այս տարուայ գարնանը նախատեսուած պլենումը, որ պիտի քննարկէր դպրոցներում գրականութեան եւ լեզուի դա-սաւանդման կարեւոր հարցը, ո՛չ մեր քարտուղարութեան ցանկութեամբ ու կամքով, ցաւօք, փոխարինուեց նախագահութեան եւ լուսաւորութեան մի-նիստրութեան կոլեգիայի միացեալ նիստով։ Ճիշտ է, այդ քննարկումը անցաւ բաւական սուր, կենդանի ու գործնական, բայց պլենումի մթնոլորտն այլ էր լինելու, մա՛նաւանդ, մենք ծրագրել էինք պլենումին մասնակից դարձնել գրականութեան աւելի մեծ թուով ուսուցիչների։ Կարծում եմ, որ քարտուղա-րութիւնը, անձամբ ես, այս հարցում չկարողացանք հանդէս բերել սկզբուն-քայնութիւն, պլենումը պնդելու հաստատակամութիւն։

Եկող տարի մենք ծրագրում ենք ստեղծագործական երկու պլենում՝ նուիրուած 70–80ական թուականների գրական սերնդին եւ գրական մամու-լին։ Իսկ գուցէ ուրի՞շ, աւելի կարեւոր պրոբլեմներ քննարկենք։ Ո՞ւմ յանձ-նարարել զեկուցումները կամ թերեւս պլենումի անցկացման նոր, աւելի ճկուն եւ թարմ ձեւե՞ր մտածենք։ Մենք առաջարկում ենք, օրինակ, զեկու-ցումները նախապէս տպագրել գրական մամուլում կամ բազմացնել, տալ պլենումի մասնակիցներին, այդ դէպքում — մարդիկ նախապէս պատրաստ կը լինեն լուրջ խօսակցութեան։ Որպէսզի որեւէ բանավէճ նպաստի գրական պրոցեսին, կրկնում եմ — մենք պիտի մշակենք իրար հետ նաեւ համաձայն չլինելու կուլտուրա, այնպէս անենք, որ կարծիքների, տեսակէտների ամենա-սուր բախումն անգամ կողմերին չհասցնի անձնական թշնամանքի, փոխադարձ ծխտման, գաղափարական պիտակների։ Պէտք յիշել՝ սխալ վէճի մէջ, որքան էլ տարօրինակ թուայ, մեղաւորը նա է, ով աւելի խելօք է, որովհետեւ խելօքն է, որ պիտի ընդհատի անիմաստ վէճը։

Հրատարակուելը գրողի գլխաւոր հոգսն է, ուրեմն՝ գրողների միու-

digitised by A.R.A.R.@

*թեան կարեւոր հոգսերից մէկը: Վերջին տարիներին մեր հրատարակչական հնարաւորութիւնները բաւական ընդլայնուել են: Եթէ մինչեւ 1976 թուականը մենք ունէինք ընդամէնը մէկ, այն էլ ունիվերսալ հրատարակչութիւն՝ «Հայաստան», այսօր ունենք երեքը: Կարծում եմ արդարացի կը լինի արձանագրել, որ «Սովետական գրող» եւ «Արեւիկ» հրատարակչութիւնների ստեղծման գործում վճռական են եղել գրողների միութեան թափած ջանքերը: Այս հրատարակչութիւնների ստեղծմամբ եւ Հրատպետկոմի շնորհակալ գործունէութեամբ զգալիօրէն աւելացել է գեղարուեստական գրականութեան տեսակարար կշիռը, այսօր այն կազմում է տարեկան 240 անուն, 2500 մամուլ, տասնից թարգմանական գրականութեան (ես նկատի ունեմ միայն «Սովետական գրողն» ու «Արեւիկը»): Մեր գրողներն արդէն հնարաւորութիւն ունեն տպագրուելու երեք հրատարակչութիւնում: Բնականաբար, Հրատպետկոմի եւ հրատարակչութիւնների հետ գրողների միութիւնն ունի ամէնօրեայ յարաբերութիւններ, դա արտայայտւում է՝ նախ հրատարակչական պլանների քննարկումով: Վերջերս, նախագահութիւնը շատ գործնական մթնոլորտում քննարկեց «Արեւիկ» հրատարակչութեան 1989 թուականի պլանը, առաջիկայում կը քննարկուի «Սովետական գրողի» պլանը: Բնականաբար, մշտապէս մենք զբաղւում ենք նաեւ առանձին գրքերի ճակատագրերով — գրողը ո՞ւր պիտի դիմի, առաջին հերթին՝ իր միութեանը...*

*Հրատարակչական գործը, երկրում առհասարակ, վերափոխման, նորացման, աւելի ճկուն դարձնելու կարիք ունի: Դա այսօր քննարկւում է լրջօրէն: Գլխաւոր հոգսը պիտի լինի կրճատել ձեռագիր — հրատարակչութիւն — ընթերցող ժամանակամիջոցը, դրա լաւագոյնը 3 տարի է, շատ դէպքերում, մասնաւորապէս երիտասարդ, նոր անունների համար, այն ձգւում է մինչեւ 5–7 տարի: Պէտք է, ի վերջոյ, հասնել իւրաքանչիւր տարուայ պլանում ներգրաւային մամուլների որոշակի քանակի պաշտօնական սահմանմանը, որպէսզի կարեւոր պրոբլեմներ շօշափող, նոր ստեղծուած ստորագրուող գրքերը, նաեւ երիտասարդ գրողների առաջին գրքերը աւելի շուտ հասնեն ընթերցողին:*

*Շարունակում է ցածր մնալ գրողների բացարձակ մեծամասնութեան նիւթական վաստակը: Տարիներ առաջ մենք այդ վիճակը վերլուծելու մի փորձ արեցինք, եւ պատկերն ուղղակի յուսահատական էր, մասնաւորապէս, որեւէ տեղ չաշխատող, միայն գրական աշխատանքով ապրող գրողների ամսական միջին վաստակը 75–80 ռուբլի էր: Անհրաժեշտ է լրջօրէն մտածել մամուլավարձը բարձրացնելու ուղղութեամբ:*

*Այսօրուայ վիճակով մեզանում գրողի վարձատրութեան չափը մեծապէս կախուած է մնում գրքի բարձր տպաքանակից: Նախ՝ կատարելագործման, բարեփոխման կարիք ունի տպաքանակների սահմանման բուն մեխանիզմը: Ամենաանկողմնակալ մոտեցման դէպքում անգամ այստեղ անհնար է բացառել կամայական, քմահաճ մոտեցումը: Թերթի տպաքանակը սահմանել՝ համաձայն ընթերցողի պահանջի՞ (հաշուի առնելով ո՛չ միայն «Հայգիրքի» անդեկանքները, այլեւ՝ գրադարանների եւ գրախանութների վիճակագրութիւնը): Կամ թերեւս այլ նախնական տպաքանակ, որի սպառուելուց յետոյ նոր միայն... կամ թերեւս փորձ կատարուի հրատարակչական պլանի համաձայն նախ բաժանորդագրութի՞ւն անցկացնել...*

*Համենայնդէպս, տպաքանակների անընդհատ բարձրացումը գրողների վաստակի կայունացման ռեալ ճանապարհը չէ, մանաւանդ, մեր թղթային հնարաւորութիւններն էլ սահմանափակ են: Թերեւս պէտք է մտածել գրքերի գները բարձրացնելու՞ մասին, որպէսզի տպագրուող գիրքը կարողանայ փակել կատարուած ծախսը, մանաւանդ, որ վերջին տարիներին նկատելիօրէն թանկացան թուղթը եւ պոլիգրաֆիական միջոցները: Գրադարանների ցանցի*

digitised by A.R.A.R.@

մեր տառատութեան պայմաններում անպայման սեփական գիրք ունենալը բնաւ էլ կենսական անհրաժեշտութիւն չէ։ Եւ յետոյ, արդա՞ր է գրքի գինը որոշել միայն թղթի եւ կազմի որակի, պոլիգրաֆիայի ցուցանիշներով։ Չէ՞ որ պիտի նշանակութիւն ունենայ նաեւ բուն ստեղծագործութեան արժէքը եւ թէ այդ գրքին ընթերցողի ո՛ր մասն է սպասում։

Կարծում եմ, որ գրող-ընթերցող հաւասարման աւելի ճշգրիտ պատասխանն ունենալու համար օգտակար կը լինի, եթէ «Գրքերի աշխարհ» ամսաթերթը պարբերաբար ապագրի գրախանութներում, պահեստներում կամ գրադարանների դարակներում անշարժ մնացող գրքերի ցանկը։ Որեւէ գրքի մասսայական պահանջարկը գնահատէ նրա գրական արժէքի վերջնական վաւերաթուղթը չէ, բայց փաստ է, որի հետ իրաւունք չունենք հաշուի չնստելու։ Գրքերը, այնուամենայնիւ, լոյս են տեսնում ընթերցողի համար։

Այո՛, մենք ամէնքս երեւի դեռ նոյնն ենք մնացել, իսկ ժամանակը փոխուել է. սա հասկանալի դրամա է, որի հետ պէտք հաշուի նստենք։ Իներցիայի օրէնքը դաժան իրողութիւն է։ Կրկնում եմ՝ մարդը մեխանիզմ չէ, որ մասամբ մի շարժումով նրան փոխադրես աշխատանքի, մտածողութեան եւ գործելակերպի նոր ռեժիմի։ Թերեւս տարբեր չափերով, բայց իներցիայի օրէնքը ամէն մէկիս մէջ գործելու է դեռ բաւական երկար։

Այդ իներցիան իրեն զգալ է տալիս նաեւ գրողների միութիւն — վերադաս մարմիններ յարաբերութիւններում։ Մեր ժամանակը պէտք է թելադրէր ստեղծագործական միութիւնների նպատակամէտ գաղափարական ղեկավարութեան նոր, աւելի բաց եւ ճկուն մեխանիզմ։ Անցած տասնամեակներում յարաբերութիւնները խստօրէն ստորադասուած էին միութեան ղեկավարներին, մեծ մասամբ առաջին դէմքերին, վերեւում այսինչ բանը կ'ասեն, նա էլ ձեւեր կը գտնի անելու։ Այդ մեխանիզմին յարմարուել էին նաեւ միութեան անդամները, հասկանալով իրենց ղեկավարների վիճակի բարդութիւնը։ Բայց ապրիլեան պլենումից յետոյ կուսակցութիւնը վճռականօրէն հրաժարուեց ստեղծագործական միութիւնների վարչական ղեկավարութեան նման մեխանիզմից։ Նշանակո՞ւմ է, որ կուսակցութիւնն առհասարակ հրաժարուեց գաղափարական ղեկավարութիւնից, բնա՛ւ։ Բայց այդ ղեկավարութիւնն արդէն պիտի զուրկ լինի պաշտօնական առանձնաշնորհների պայմանով պատերից, եւ գաղափարական սուէ ղեկավար պիտի կարողանայ իր տեսակէտներն արտայայտել, եթէ պէտք է, նաեւ բաց, ուղղակի բանավէճում, պէտք է կարողանայ յաղթել ոչ թէ իր պաշտօնի, այլ ճշմարտացիութեան դիրքերից։

Ինչ վերաբերում է ստեղծագործական միութեան եւ գրական մամուլի ղեկավարներին՝ նրանք էլ, իրենց հերթին, պէտք է ուժ եւ կարողութիւն ունենան տեղի չտալու, ի զօրու լինեն պաշտպանելու գրողի, գրքի, գրականութեան ճշմարտութիւնը։ Արդէն անցած պիտի համարել այն ժամանակները, երբ մեր սխալ գործելակերպը կարելի էր արդարացնել վերեւից ստացած ցուցմունքով։ Անհրաժեշտութեան դէպքում գրողների միութեան ղեկավարութիւնը պէտք է կարողանայ ձեւաւորել եւ ամենայն վճռականութեամբ արտայայտել գրողների հաւաքական կարծիքը, եթէ հարցը վերաբերում է գրողի կամ գրքի ճակատագրին։ Վերջերս մեր վարչութեան նախագահութիւնը համապատասխանօրէն անդրադարձաւ Ս. Խանզադեանի «Անդրանիկ» եւ Բ. Ուլուբաբեանի «Սարդարապատ» վէպերի տպագրութեան ձգձգման խնդրի պատմութեանը։ Մենք նաեւ դիտողութիւններ արինք, արտայայտեցինք ցանկութիւններ, որ կ'ուզենայինք հաշուի առնէին յարգելի հեղինակները։ Բայց միահամուռ ընդունուած եզրակացութիւնն այն էր, որ այդ գրքերը պէտք է լոյս աշխարհ գան։

Մեր գրական կեանքի մի քանի այլ խնդիրների մասին։

digitised by A.R.A.R.@

Վերջին տասնամյակում մեր նշանավոր գրողներից երկուսը՝ Գ. Էմինն ու Հր. Մաթևոսյանը, արժանացան ՍՍՀՄ պետական մրցանակի, 31 գրող՝ Հայաստանի պետական մրցանակի: Եթե ավելացնենք նաև ԳՄ ամենամյա մրցանակի 52 և Հայաստանի կոմերիտմիության 12 դափնեկիրներին, ապա մեր ավագ և ջահել գրողների վաստակը կարծես թե գնահատված է, և դժգոհելու առանձին հիմք չկա: Բայց ով է գրողի կամ գրքի մասին գոյացած տեսակետը, որ արտահայտվում է մրցանակի շնորհումով, միշտ չէ, որ համընկնում է գրողի՝ իր մասին ունեցած կարծիքի հետ, և այս կամ այն մրցանակի առաջադրումը կամ շնորհումը միշտ էլ կարող է վիճաբանության լինել: Եվ, ուրեմն, լրջորեն պետք է մտահոգվել այս մրցանակաբաշխությունները դեմոկրատացնելու, ընթերցողի կարծիքն ավելի հաշվի առնելու, քննարկումների ժամանակ թեր ու դեմ տեսակետների արտահայտման ավելի լայն հնարավորություններ տալու մասին: Մեր մտահոգությունը պետք լինի, որ նախ՝ չարժեզրկվեն այդ մրցանակները, և ապա՝ մրցանակ ստանա բուն ստեղծագործությունը և ոչ թե գրողի անձը՝ ինչպես երբեմն պատահում է:

Համանման մի քանի հարց ևս: Ինչպես գիտենք Մոսկվայում ստեղծված է յանձնախումբ՝ ՍՍՀՄ գրողների միության նոր կանոնադրություն մշակելու համար: Կանոնը, ժամանակները փոխվել են, մեր բազմալեզու գրականության ներսում խմորվել է նոր իրավիճակ, հասունացել են նոր պրոբլեմներ:

Այս կապակցությամբ՝ մի նկատառում, որ կ'ուզենայի ուշադրության արժանանար: Միութենական ընդհանուր կանոնադրություններից զատ՝ թերևս անհրաժեշտ է ունենալ նաև ազգային գրողների միությունների կանոնադրություն: Չեմ կարող խոսել մյուս հանրապետությունների «զանգակատներից», բայց, հայ գրականության իրավիճակը նկատի ունենալով, դա երևի արդարացի պահանջ է: Գրողների հանրապետական միությունները տարբերվող ստատուս ունեն, բայց չէ՞ որ արդի հայ գրականությունն ստեղծվում է ոչ միայն Հայաստանում: Մենք գրողներ ունենք Ռուսաստանում, Վրաստանում, Ադրբեջանում: Ինչո՞ւ նրանք ավելի ուղղակի ստեղծագործական կապ չպիտի ունենան մայր գրականության հետ: Այսպես, ավելի ճիշտ չէ՞ լինի, որ երկրատարած հայ գրողը, որտեղ էլ նա ապրելիս լինի, գրողների միության մեջ ընդունվի Հայաստանում (նույնը պետք վերաբերի, անշուշտ, Հայաստանում ապրող ադրբեջանցի գրողներին, թող նրանց՝ գրողների միության անդամ ընդունելու հարցը լուծվի Ադրբեջանում): Եվ ապա, արդի հայ գրականության կարևոր մասն է սփյուռքահայ գրականությունը: Դեռևս 1947 թվականին, Հայաստանի գրողների Բ. համագումարում, գրողների մեր միության յուրահատկական նախագահը՝ Ավ. Իսահակյանը հռչակեց «Մեկ ժողովուրդ, մեկ գրականություն» իմաստուն բանաձևը: Մենք Երևանում լայնորեն տպագրում ենք սփյուռքահայ գրողներին, նրանց մասնակից դարձնում մեր համագումարներին, կատարում նրանց յոբելյանները (վերջերս կատարեցինք նույնիսկ Բեյրութի «Շիրակ» ամսագրի երեսնամյակը), մենք կապեր ունենք սփյուռքահայ գրական տարբեր ընկերակցությունների հետ: Այս ամենի արտամարտնությամբ ինչո՞ւ, օրինակ, չի կարող լինել Հայաստանի գրողների միության սփյուռքահայ անդամի ստատուս՝ թեկուզ, մեր ակադեմիաների արտասահմանյան անդամների իրողության օրինակով:

Եղբայրական մեր միւս հանրապետություններում, հավանաբար կան համանման կամ այլ պրոբլեմներ, ինչո՞ւ, ուրեմն, այդ ամենը չի կարող արտահայտվել և ամրապնդվել ազգային գրականությունների միությունների սեփական կանոնադրության մեջ: Կարծում եմ, որ նման ցանկությունը բնավ անբնական չէ և բխում է լենինյան ազգային քաղաքականության ավելի

digitised by A.R.A.R.@

բիւրեղացման պահանջից, որ առաջադրեց կուսակցութեան XXVII համագումարը:

Մեր կարեւոր հոգսը պիտի լինի գրական նոր սերունդը: Սակայն, անկեղծ լինելու դէպքում, պիտի խոստովանենք, որ մենք պատրաստ չենք ճանաչում նորերին: Մեր քննադատութիւնն իր վերջին տասը-տասնհինգ տարին ծախսեց բացատրելու այն սերնդի վրայ, որ հրապարակ իջաւ 70-ական թուականների սկզբներին եւ այսօր արդէն 40–45 տարեկան է դառնում: Ընդ որում, զբաղուեց հիմնականում այդ սերնդի բանաստեղծներով: Նրանցից յետոյ հրապարակ իջած սերունդը, թերեւս՝ սերունդները, փաստօրէն վրիպեցին մեր քննադատութեան, մամուլի, մեր ամէնքի ուշադրութիւնից: Անգամ «Գարուն» ամսագիրը իր պարտքը չի համարել լրջօրէն զբաղուելու նորերի գրականութեամբ, թէպէտ գլխաւորապէս հենց այդ ամսագրի էջերում են երեւում նոր անունները: Ինքնաքննադատութեան կարգով խոստովանեմ, որ ես ինքս շատ մշուշոտ պատկերացում ունեմ նորերի մասին, մասնաւորապէս վերջին 6–7 տարում հայտնուածների կարգով, հետեւել նրանց ստեղծագործական խմորումներին, ինձ համար դժուար է դատողութիւններ անել նրանց բերած լոյսի ու ստուերի մասին: Որքան ինձ յայտնի է, վարչութեան մեր միւս քարտուղարները եւս լաւատեղեակ չեն նորերի ստեղծագործութեանը, նրանց մտահոգութիւններին, հոգսերին: Ես գայթակղութեան կոչ չէ, որ ուզում եմ անել: Նրանց պիտի վերաբերուել խորագոյն լրջութեամբ, յարգանքով, պահպանելով գրական ընտանիքի սկզբունքը: Մի քանի ամիս առաջ ես սրտաբաց զրոյց ունեցայ երիտասարդ գրողների մի մեծ խմբի հետ, խնդրեցի կարդալ իրենց բանաստեղծութիւնները, պատմել մտայղացումների, ծրագրերի մասին: Նրանց մէջ իրապէս շնորհալի մարդիկ կան: Բայց ինձ ցաւ պատճառեց, որ նրանք շատ քիչ են գրում, դժուար են արձագանգում մեր յեղափոխական ժամանակի դրդիչներին: Թէպէտ հասկանալի, բայց ցաւալի էր նրանց դժգոհութիւնների չլսուածը, խմբագրութիւններ, հրատարակչութիւն, աւագ գրողներ...: Ուզում եմ մէջբերել նոյնպէս երիտասարդ մի գրողի խօսք. «Մենք դժգոհ ենք, եւ պարզւում է, որ մեր ցաւերի մէջ «մեղաւոր են ամէնքը» — աւագ սերունդը, գրողների միութիւնը, բոլորը, միայն թէ ոչ մենք: Ապշեցուցիչ է, թէ մենք ինչպէս ուժ չունենք խոստովանելու մեր ոչ այնքան ազնիւ կեցուածքը: Երբ մենք հաւաքւում ենք, գիտէ՞ք, թէ ինչի մասին ենք խօսում — ո՞վ քանի գիրք ունի, ինչքան է տպաքանակը: Իմ սերնդի ողբերգութիւնն այն է, որ մենք չենք ուզում մեզ տեսնել այնպէս, ինչպէս որ կանք իրականում...: Մեզնից ոմանց կարծիքով միակ բանը, որ խանգարում է վերակառուցման կուրսին, դա... Մոլդավիայի գրողների միութիւնն է եւ նրա թերթը»: Ինչպէս պարզ դարձաւ, այս դառը խոստովանութեան հեղինակը մոլդաւիացի երիտասարդ գրող է: Մի կողմ թողնելով երիտասարդ մարդու ինքնախարազանման ծայրայեղ կիրքը եւ արհեստական զուգահեռ չանցկացնելով մոլդաւիացի եւ հայ երիտասարդ գրողների մտածողութեան եւ հոգեբանութեան միջեւ, նաեւ ընդունենք, որ անպայման ուրախալի է նման սթափ, ազնիւ կեցուածքը, եւ հայեացքի նման ուղղութիւնն օգտակար կը լինի ամէնից առաջ իրեն՝ երիտասարդ գրողին: Նիկոլայէ Վիերուի այս «խոստովանութիւնը» ես կ'ուզենայի հասցէագրել մեր գրականութեան մէջ երբեմն միայն առաջին քայլերն անող մեր որոշ երիտասարդների, եւ այդ ոչ նրա համար, որ կ'ուզենայի նրանց հետ պահել աւագ գրողներին կամ գրողների միութեանն ու գրական մամուլին ուղղուած քննադատական բանկումներից:

Այո՛, մենք պարտաւոր ենք մեծագոյն ուշադրութեամբ հետեւել նորերի գրականութեանը, նկատենք ու խրախուսենք յիրաւի տաղանդաւոր մարդ-

digitised by A.R.A.R.@

կանց: Բայց երիտասարդներն էլ յարգանքի նոյն զգացումը պիտի ունենան աւագների նկատմամբ, չմոռնան, թէ իրենցով է սկսում ամէն բան եւ եթէ վէճ ունեն նախորդ սերունդների հետ (իսկ դա բնական է, նոյնիսկ ցանկալի), ապա այդ վէճը վարեն ամէնից առաջ իրենց ստեղծած գրականութեամբ, փորձեն անել այն, ինչ, իրենց կարծիքով, չեն արել նախորդները, անեն աւելի ազնիւ, աւելի խորքով, աւելի տաղանդով, եթէ կարող են: Կարծում եմ, որ սխալ չի լինի խորհուրդ տալ «Գարուն» ամսագրին՝ եկող տարի լայն խօսակցութիւն բացել նորերի գրականութեան շուրջ, եւ թերեւս, նպատակայարմար կը լինի ամսագրի այդ հնարաւոր խօսակցութիւնն ի մի բերել հենց գրողների միութեան պլենումում:

Գրողների միութեան գործունէութեան կարեւոր ուղղութիւններից մէկն էլ մեր գրականութեան արժէքները ռուսերէն, եղբայրական միւս լեզուներով, ինչպէս նաեւ արտասահմանում ներկայացնելու աշխատանքն է: Այս հարցում էական տեղաշարժեր կան: Միայն վերջին 6–7 տարում թարգմանուել է աւելի քան 120 գիրք: Եթէ մինչեւ 1976–77 թուականները միութենական «Սովետսկի պիսատել» հրատարակչութիւնը, օրինակ, հայ գրականութիւնից ամէն տարի տպագրում էր 3–4 անուն, վերջին տարիներին այդ թիւը տատանւում է 9ից 13ի միջեւ: Կարծում եմ հարկ չկայ մանրամասնելու, որ այդ առաջքայլն իրականացել է նաեւ մեր քարտուղարութեան ջանքերով: Ռուսերէն թարգմանութիւնների ծաւալի նման ընդլայնումը, բնականաբար, ճանապարհ հարթեց նաեւ միւս հանրապետութիւններում եւ արտասահմանում մեր գրականութեան աւելի տեսանելի ներկայութեան համար: Այս առումով կ'ուզենայի մի անհրաժեշտ բացատրութիւն տալ. մեր երկրի տարբեր հանրապետութիւններում եւ արտասահմանում հայ գրողների առանձին գրքերը թարգմանւում են բացառապէս այդ երկրների հրատարակչութիւնների ընտրութեամբ: Եթէ ռուսերէնով հրատարակուած գիրքը հետաքրքրութիւն է յարուցում, նրանք պլանաւորում են եւ միայն անհրաժեշտութեան դէպքում դիմում մեր գրողների միութեանը, ինչ-ինչ օգնութիւն ակնկալելով:

Ինչ վերաբերում է գրողների միութեան համակարգում վերջին տարիներս ստեղծուած թարգմանական մեր խմբին, կ'ուզենայի իմանայիք հետեւեալը, այդ խումբը հիմնականում ժողովածուներ է կազմում՝ եթէ պահանջ կայ, կազմակերպում է տողացի թարգմանութեան գործը: Արդէն լուրջ կապեր են գոյացել զանազան երկրների հրատարակչութիւնների հետ, գրողների միութիւնում մենք այսօր ունենք տողացիների հսկայական պաշար: Կ'ուզենայի առանձնայատուկ շեշտել Գրիգոր Նարեկացու «Մատեան»ի լիակատար տողացի թարգմանութիւնը ռուսերէն, որն իրականացուեց Մատենադարանի անմնացորդ համագործակցութեամբ: Այդ տողացիի հիմքի վրայ 1985ին եւ 1986ին Մոսկուայում եւ Երեւանում լոյս տեսան պոեմի գեղարուեստական երկու տարբեր թարգմանութիւն: Այդ տողացին հիանալի հիմք է լինելու գալիք բոլոր թարգմանութիւնների համար, մա՛նաւանդ, որ Մատենադարանի եւ մեր ջանքերով միութենական «Ակադեմիա» հրատարակչութիւնը շուտով լոյս աշխարհ կը հանի տողացի այդ լիակատար թարգմանութիւնը՝ ծանօթագրութիւններով, գրականագիտական-պատմական լուրջ ներածականով:

Ծաւալի առումով հաւանօրէն դժգոհելու էական հիմքեր չկան: Մեզ պիտի այսօր մտահոգի թարգմանութեան որակի խնդիրը, ամէնօրեայ աշխատանքը մեր գրականութեան թարգմանիչների հետ: Այստեղ շատ անելիք կայ: Մերձբալթեան հանրապետութիւնների օրինակով՝ Հայաստանի գրողների միութիւնը, Երեւանի համալսարանի հետ միասին, պէտք է հասնեն այն բանին, որ Երեւանում, ի վերջոյ, երկարաժամկէտ դասընթացներ բացուեն թարգմանական երիտասարդ ուժերի համար: Եթէ մեր բոլոր հանրապետու-

digitised by A.R.A.R.@

թիւններում չինեն հայերէնին տիրապետող թարգմանիչներ, կամաց–կամաց կը վերանայ տողացիից կատարուող թարգմանութեան ոչ այնքան ցանկալի պրակտիկան: Մենք պիտի մտահոգուենք արտասահմանեան մեր թարգմանիչների համալրումով: Կ'ուզենայի տեղեկացնել, որ Մոսկուայի Գորկու անուան գրականութեան ինստիտուտի բարեացակամ աջակցութեամբ եկող տարի մենք մտադիր ենք Երեւանում բացել նման դասընթաց՝ 16–20 արտասահմանցի երիտասարդ թարգմանիչների համար, երկու–երեք տարուայ տեւողութեամբ:

Այսուհետեւ, էլ պէտք է կարեւոր համարել արտասահմանից, եղբայրական հանրապետութիւններից առանձին գրողները Հայաստան հրաւիրելու պրակտիկան: Իմ խօսքը ոչ թէ տուրիստական ուղեւորութիւնների մասին է, այլ ստեղծագործական նպատակ հետապնդող: Կեանքը ցոյց է տալիս, որ միայն նման լուրջ ներթափանցումներն են (ժողովրդի պատմութեան, մշակոյթի, ազգային բնաւորութեան խորքերը) ստեղծագործական հասուն պտուղներ տալիս: Կարող եմ վկայակոչել յոյն Միցոս Ալեքսանդրոպուլոսի, բուլղար Վլադո Սամսոնովի, վրացի Ռեւազ Ջափարիձէի՝ Հայաստանին նուիրուած գրքերը: Երեք գրողների այցելութիւնն էլ իրականացաւ գրողների միութեան նախաձեռնութեամբ եւ ջանքերով:

Պէտք է ընդլայնել եւ խորացնել Հայաստանի գրողների միութեան ու գագակի կապերը արտասահմանեան գրողների միութիւնների ե հրատարակչութիւնների հետ: Այսպէս, արդէն նախնական համաձայնութիւն է ձեռք բերւած եկող տարի աշնանը Հայաստանում նորվեգական գրականութեան, իսկ 1989ին՝ Նորվեգիայում հայ գրականութեան օրեր անցկացնելու մասին: Այս այցելութիւններին կը նախորդեն փոխադարձ թարգմանութիւններ: Նման բանակցութիւններ վարւում են նաեւ Դանիայի գրողների միութեան հետ: Սիրիայի գրողների միութեան հետ համատեղ մենք ծրագրում ենք իրականացնել հայ պոէզիայի անթոլոգիայի հրատարակութիւն Դամասկոսում եւ արաբական պոէզիայի անթոլոգիայի՝ Երեւանում:

Մենք անթոյլատրելի դանդաղկոտութեամբ ենք զբաղւում մեր գրական ժառանգութեան՝ Հայաստանի ընթերցողին մինչեւ այժմ անյայտ էջերի ճակատագրով: Նման էջեր կան անգամ Թումանեանի, Իսահակեանի, Չարենցի, Մահարու, Սեւակի, Կոստան Զարեանի, առաւել մեծ չափով՝ Յովհ. Շիրազի ժառանգութեան մէջ: Մեծ են մեր պարտքերը յատկապէս արեւմտահայ եւ սփիւռքահայ գրականութեան առաջ: Այս հարցերը գրողների միութիւնը մէկ անգամ չէ, որ յամառօրէն փորձել է հասցնել անօրէն մարմիններին: Ուրախութեամբ տեղեկացնելով, որ ի վերջոյ, դրական լուծում է ստացել Լեւոն Շանթի նոր հրատարակութեան, ինչպէս նաեւ Համաստեղի, Ն. Սարաֆեանի, Արամ Հայկազի գրքերի հրատարակութեան հարցը, դա ընդամէնը սկիզբ պիտի նկատել: Մեր ընթերցողին, ի վերջոյ պիտի հասնի Երուանդ Օտեանի «Փանջունի»ն՝ հայ երգիծական գրականութեան թերեւս ամենաշքեղ փայլատակումը, պէտք է մտածենք նաեւ Ա. Ահարոնեանի, Նիկոլ Աղբալեանի, Սիման Սիմոնեանի, այսօր ապրող Մուշեղ Իշխանի, Յակոբ Կարապենցի արժէքաւոր էջերի հրատարակութեան մասին: Իմ յիշատակած (նաեւ չյիշատակած) գրողների ստեղծագործական–գաղափարական գնահատականը բնականաբար միանշանակ չէ: Բարդ, հակասական է եղել նաեւ նրանց մարդկային–քաղաքացիական վարքագիծը, եւ այդ ամէնը կարիք ունի մեկնաբանութեան՝ առանց որեւէ ստուեր թաքցնելու: Մեր վերաբերմունքը պիտի արտայայտուի լուրջ առաջաբանների մէջ: Բայց գրքերը պիտի տպագրուեն. մենք իրաւունք չունենք որդեգրելու «պատմական յիշաչարութեան» կեցուածք, այլ պիտի ելնենք այն միակ ճշմարիտ դիրքորոշումից, որ իւրաքանչիւր հաւասար արժէք

digitised by A.R.A.R.@

պատկանում է ողջ հայ մշակոյթին եւ այդ մշակոյթի գլխաւոր պահապանը Սովետական Հայաստանն է։

Այս հարցերի լուծման որոնումներում մեզ համար խորապէս ուսանելի պիտի լինի այն, ինչ կատարւում է այսօր ռուս գրականութեան մէջ (Նկատի ունեմ Վ. Նաբոկովի, Գ. Գումիլյովի, աւելի վաղ հրատարակուած Ի. Բունինի եւ ուրիշ շարք, հակասովետական ճակատագրի ռուս գրողների երկերի հրատարակութիւնը)։

Կ'ուզենայի, թէկուզ հակիրճ, մի քանի խօսք ասել Սփիւռքի նկատմամբ մեր վերաբերմունքի մասին։ Միջազգային յարաբերութիւններում մեր կուսակցութեան հռչակած նոր մտածողութեան պայմաններում մենք պէտք է նոր վերաբերմունք մշակենք դէպի Սփիւռքը, վերանայենք ոչ քիչ հնացած պատկերացումներ, հրաժարուենք մաշուած ստերէոտիպներից։ Ամենից առաջ՝ մենք պէտք է ճանաչենք Սփիւռքը՝ իր խորքային երեւոյթներով, տեղաշարժերով, խմորումներով։ Երկար ժամանակ Սփիւռքը մեր պատկերացումներում ներկայացել է երկու գոյնով՝ հայրենասիրական ճակատ եւ Դաշնակցութիւն։ Բայց չէ՞ որ Սփիւռքը կենդանի օրգանիզմ է, եւ մանաւանդ, վերջին 15–20 տարում ձեռք է բերել բազում նոր, մեզ անծանօթ կամ քիչ ծանօթ գոյներ, ներքին խմորումներ կան ազգային-քաղաքական բոլոր հոսանքներում, քաղաքական ծանօթ կուսակցութիւններից զատ գոյացել են կազմակերպական նոր միաւորումներ։ Մենք պիտի ճանաչենք այդ խճանկարը։ Կար ժամանակ, որ Սփիւռքում Հայաստանի՝ նոյնիսկ իրական թերութիւնների ամէն մի արծարծում մենք որակում էինք «հակահայրենասիրութեան» պիտակով։ Այսօր մենք ինքներս աւելի խիստ ենք խօսում մեր սխալների ու արատների մասին, նաեւ այն սխալների, որոնց մասին Սփիւռքն ահազանգում էր... երէկ։ Բայց Սփիւռքի ընդդիմութեան նկատմամբ մեր հին կեցուածքի իներցիան շարունակում է իրեն զգալ տալ։ Պէտք է կարողանալ հրաժարուել հին բառապաշարից՝ նաեւ դաշնակցութեան ընդդիմութեան պարագայում։ Ո՛չ, Դաշնակցութիւնը իր քաղաքական արմատական հարցադրումներում, իր լիդերների պրակտիկ վարքագծում չի հրաժարուել անցեալի բեռից։ Եւ, այնուամենայնիւ, մենք պիտի հաշուի նստենք այն իրողութեան հետ, որ սփիւռքահայութեան զգալի մի զանգուած շարունակում է մնալ Դաշնակցութեան ազդեցութեան ոլորտում, շատ յաճախ չկիսելով այդ կուսակցութեան քաղաքական դոկտրինան։ Եւ ապա, այդ կուսակցութեան ուղղակի կամ միջնորդուած հովանու տակ գործում են բազմաթիւ դպրոցներ, մշակութային, մարզական միութիւններ։ Մի՞թէ սփիւռքահայութեան այդ զանգուածը, որ ընդգրկուած է յիշեալ միութիւններում, դպրոցներում, պիտի զուրկ մնայ մայր հայրենիքի ուշադրութիւնից։ Անցեալի իներցիան շարունակում է ճնշել այնպէս, որ այսօր էլ, Սփիւռք մեկնող մեր մարզիկներին, մա՛նաւանդ, մտաւորականներին, մեզ մօտ, խորհուրդ չի տրւում այցելել նաեւ այդ դպրոցները, մշակութային կամ մարզական միութիւնները, ակումբները։ Նման պարագայում, թող թոյլ տրուի հարցնել, մենք այդ ինչպէ՞ս պիտի կարողանանք մղել մեր գաղափարական բանավէճը։ Հայաստանեան մամուլը համարեա՛ չի անդրադառնում սփիւռքահայ մամուլին, նրանից արտատպումներ չի անում, ի տարբերութիւն սփիւռքահայ մամուլի, որ գնալով աւելի լայն տեղ է տալիս հայաստանեան մամուլի նիւթերին։ Մենք անտարբեր ենք մնում նոյնիսկ այն դէպքերում, երբ մեր իրականութեանը համակրող կամ կասկածող ոեւէ մտաւորական կամ ազգային գործիչ, մա՛նաւանդ, հայրենիք այցելելուց յետոյ հանդէս է գալիս սկզբունքօրէն փոխուած տեսակէտներով, սթափ ու անկողմնակալ, երբեմն պարզապէս հիացումով գրում մեր իրականութեան մասին։

Մենք, բաւ էութեան, չգիտենք սփիւռքահայ մամուլը, անտեղեակ ենք

digitised by A.R.A.R.@

մնում նոյնիսկ այն հրապարակումներին, որ վերաբերում են մեր իրականութեանը, ժառանգութեան, մշակոյթին, գրականութեանը։ Մեզանից ամենատեղեկները անգամ Սփիւռք են մեկնում շատ քիչ խմացութիւններով, անպատրաստ որեւէ տարրկայական խոսակցութեան. էլ չեմ ասում՝ գաղափարական լուրջ բանավէճի։ Այս բացը լրացնելու համար նախ երեւի մեր մամուլը պիտի արտատպումներ անի, սփիւռքահայ մամուլի ընտրութիւններ հրապարակի։ Եւ ապա՝ հնարաւոր չէ՞, թէկուզ սահմանափակ տպաքանակով, հրատարակել բիւլետէն, որ պարբերաբար կը ներկայացնի Սփիւռքի մամուլի, թէկուզեւ ընտրովի համայնապատկերը։

Մի խօսքով՝ սփիւռքահայութիւնը մեր ժողովրդի կէսն է եւ, օրէց-օր զօրացող կապերի, փոխադարձութիւնների շնորհիւ, Սփիւռքը պարզապէս ներթափանցուած է Սովետական Հայաստանի իրականութեան, մեր առօրեայ յարաբերութիւնների, անգամ կենցաղի մէջ, եւ մենք ուրեմն լրջմիտ վերաբերմունք պիտի մշակենք սփիւռք-հայրենիք կամրջի նոր ժամանակներում։

Էկոլոգիայի գոյապահպանութեան կենսատու հարցերը, որ այսօր մեր ողջ երկրի կարեւորագոյն հոգսերի կենտրոնում են, մեր մի քանի հոգու համար ուրուագծուած են աւելի սուր, երբեմն, ճակատագրական գոյներով։ Հանրապետութեան մի շարք վայրերում վիճակը պարզապէս աղէտալի է։ Մտահոգութիւնը մեր վաղուայ օրուայ մասին յաճախ սուր, յուսահատական ձեւեր ու չափեր է ընդունում, որ չպիտի տարօրինակ կամ զարմանալի թուայ։ Մանաւանդ, ճշգրիտ ինֆորմացիայի բացակայութիւնը կարող է նաեւ չափազանցութեան ու խուճապ առաջացնել, ուրեմն, չմեղադրենք, այլ հասկանանք եւ տէր կանգնենք այդ շարժմանը։

Մենք գիտենք, որ այսօր կուտակուած ծանր պրոբլեմների մեծ մասը անցեալ տասնամեակների սխալների տրամաբանական արդիւնքն է։ Սեւանայ լճի մակարդակի արհեստական իջեցումը, Հայաստանը «մեծ քիմիայի հանրապետութիւն» դարձնելու հակագիտական, անբարոյ, չփախենանք ասելու՝ յանցաւոր ծրագրի անշեղ իրականացումը եւ ուրիշ այլ սխալներ կանխորոշեցին այսօրուայ աղէտալի իրավիճակը։ Մենք գիտենք նաեւ, որ վերջին տասնամեակում քիչ բան չի արուել անցեալի այդ ծանր բեռը թեթեւացնելու համար։ Սկզբունքային շրջադարձը եղաւ՝ հրաժարումը մեծ քիմիայի հետագայ զարգացման կուրսից եւ հանրապետութեան էկոնոմիկայի գլխաւոր ուղղութիւնների ճշգրտումը՝ մեքենաշինութեան եւ էլեկտրոնիկայի զարգացման գերակայմամբ։ Սրբագրուեցին նաեւ մի շարք կոնկրետ սխալներ, կասեցուեց Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի, ինչպէս նաեւ ատոմակայանի երկրորդ հերթի կառուցումը, փակուեց Երեւանի այլումինի գործարանի էլեկտրոլիզի արտադրամասը, բաւական մաքրուեց Ալավերդու օդային աւազանը։ Այս ամէնը չի կարելի չտեսնել։ Արդէն ստորագրուած է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը եւ շուտով «Նաիրիտ» կոմբինատում վերջապէս կը կասեցուի քլորոպրենային կաուչուկի հին, վնասակար արտադրութիւնը՝ Երեւանի էկոլոգիական ծանրութեան գլխաւոր յանցագործը։ Յիշեալ ճակատագրական սխալների ուղղումը հնարաւոր դարձաւ միութենական կառավարութեան հոգատարութեան շնորհիւ, մեր հանրապետութեան ղեկավարութեան վերջին տարիների եռանդուն ջանքերով։ «Կաուչուկ — 1»-ի արտադրութեան կասեցումը հնարաւոր դարձաւ նաեւ մեր մամուլի, մասնաւորապէս «Լիտերատուրնայա գազետա» թերթի յամառ հետեւողականութեան շնորհիւ։

Եւ, այնուամենայնիւ, ժողովուրդը նոր, աւելի արմատական լուծումներ է ակնկալում։ Համաժողովրդական այս մտահոգութիւնը գործի վերածելու մէջ քիչ բան չեն անում մեր գրողները, մամուլը, մասնաւորապէս, «Գրական թերթ»ը։ Գրողների միութիւնը, իբրեւ մէկը մեր ժողովրդի հո-

digitised by A.R.A.R.@

գեւ որ կենտրոններից, այս շարժմանը պէտք մասնակցի աւելի որոշ ու կազմակերպուած: Վերջերս, վարչութեան նախագահութիւնում մենք լսեցինք Ջորջ Բալայեանի հաղորդումը «Բայկալեան շարժման» մասին: Ինչպէս յայտնի է, միջազգային այդ շարժման յաջորդ համաժողովը որոշուած է անցակցնել եկող տարի աշնանը, Հայաստանում, եւ նուիրուած պէտք լինի Սեւանի պրոբլեմներին: Մենք այսօրուանից պէտք զբաղուենք այդ կարեւոր համաժողովի անցկացման հոգսերով: Նախագահութեան մեր յիշեալ նիստում միահամուռ որոշում ընդունուեց դիմել Հայաստանի կառավարութեանը՝ Սեւանայ լճի ափերին գործող բոլոր հանգստեան տները, ուսումնական կայանները, ճամբարները, հասարակական սննդի օբիեկտները ժամանակաւորապէս փակելու առաջարկով: Ժամանակաւորապէս — մինչեւ կոյուղու կոլեկտորի շարքի մտնելը: Մենք պատրաստակամութիւն յայտնեցինք առաջինը դադարեցնել Սեւանայ լճի ափին գտնուող մեր ստեղծագործական տան գործունէութիւնը:

Մեր գրողները այսուհետեւ եւս պէտք զբաղուեն էկոլոգիական պրոբլեմներով, բայց զբաղուեն իմացութեամբ, ճշգրիտ ինֆորմացիայի հիմքի վրայ, նաեւ այն սթափ գիտակցութեամբ, որ այդ պրոբլեմների լուծումը մէկ օրուայ գործ չէ: Մեր գրական մամուլը շատ աւելի լրջութեամբ պէտք մօտենայ էկոլոգիական բնոյթի հրապարակումներին, միայն էմոցիան, որքան էլ ազնիւ ու արդարացի լինի, բաւարար չէ:

Կայ էկոլոգիական պրոբլեմի միւս երեսը — «կուլտուրայի էկոլոգիան», այսինքն՝ վտանգուած է ո՛չ միայն բնութիւնը, այլեւ՝ մշակոյթը: Այս հարցում եւս մենք սրուած տագնապ ունենք նաեւ մէկ ուրիշ առումով — մեր մշակոյթի յուշարձանները սփռուած են ոչ միայն Սովետական Հայաստանի տարածքում: Մենք յաճախ ցաւով ու դառնութեամբ մտածում ենք, գրում Արեւմտահայաստանում մեր պատմական յուշարձանների աւերման, կործանման փաստերի մասին: Այս հարցում մենք համարեա՛ անօգնական ենք: Բայց չէ՞ որ հայ մշակոյթի շատ յուշարձանների վիճակն անմխիթարական է նաեւ մեր հայրենիքի՝ Սովետական Միութեան սահմաններում: Աղէտալի վիճակում են Հին Ջուղայի գերեզմանատան հրաշալի խաչքարերը, Ագուլիսի վանքերը, Ծիծեռնավանքը, շատ յուշարձաններ՝ լեռնային Ղարաբաղում: Մի՞թէ այս վիճակն ուղղելու մէջ եւս մենք անօգնական ենք: Կ'ուզէնայի քննարկման կարգով ներկայացնել մի առաջարկ: Աւելի ճիշտ չէ՞ լինի, որ սեւէ ազգային մշակոյթի յուշարձանի խնամքը, պահպանութիւնը, վերականգնումը, ինչ տարածքի վրայ էլ այն գտնուի, պետականօրէն վերապահուի տուեալ մշակոյթի տէր հանրապետութեանը: Մինչեւ վերջ արդար լինելու համար ընդունենք, որ եթէ, ասենք, եղբայրական Ադրբեջանում մեր յուշարձանների վերականգնման բուռն ցանկութիւն անգամ լինի, դա դժուար պէտք լինի իրականացնել գուցէ մասնագիտական տեսանկիւնով: Ես համոզուած եմ, որ այս հարցի անօրինումը միութենական բարձր միջամտութիւն է ենթադրում, փոփոխութիւն-յաւելում յուշարձանների պահպանութեան օրէնքի մէջ: Կարծում եմ, որ այս գաղափարը, որ վերաբերում է, ոչ միայն հայ մշակոյթին, մենք կարող ենք գիտական լուրջ հիմնաւորումով ներկայացնել միութենական անօրէն մարմինների ուշադրութեանը:

Մեր գրական կեանքի վերակառուցման կարեւոր լծակներն են ԳՄ վարչութիւնը, նախագահութիւնը, քարտուղարութիւնը:

Վարչութեան մասին ես արդէն ասացի: Մենք միայն դէպքից դէպք ենք հրաւիրում նախագահութեան նիստեր, մինչդեռ նախագահութիւնն այն օղակն է, որտեղ պէտք քննարկուեն գրական կեանքի բոլոր արմատական խնդիրները եւ այդ քննարկումների արդիւնքով է, որ պէտք գտնուի մեր գործունէութեան համակողմանիօրէն ճշգրիտ բանաձեւը: Նախագահութեան

digitised by A.R.A.R.@

քննարկմամբ պիտի առաջադրուէին նաեւ թեկնածութիւններ՝ գրական աշխատանքի կարեւոր բնագաւառներում:

Մեր քարտուղարութեան աշխատանքի արմատական թերացումն այն է, որ գրական առօրեայի լարուածութեան ոլորտի մէջ մենք յաճախ բաց ենք թողնում գրական պրոցեսի եւ մթնոլորտի զարկերակը: Առօրեան յաճախ խեղդում է մեզ՝ յորելեաններ, հիւրեր, գրողների անհատական հոգսեր, գեկուցումներ, ելոյթներ եւ, յանկարծ, պարզւում է, որ ուշադրութիւնից վրիպել են հենց... արմատական հարցերը: Նման իրավիճակը չի կարելի նորմալ համարել: Եթէ հասարակական ուժերով մենք չկարողանանք հետեւել գրական պրոցեսին, չկարողանանք նկատել նոր միտումներ, նոր, երիտասարդ անուններ, մնացած, թէկուզեւ լարուած, հոգատար աշխատանքը կարող է բնաւ չկարեւորուել:

Իմ զեկուցումն ուզում եմ աւարտել նոյն տրամադրութեամբ, որով սկսեցի: Մենք, իրօք, բախտորոշ ժամանակներ ենք ապրում եւ մեզանից ամէն մէկն առանձին, գրողների միութիւնն իր հաւաքականութեան մէջ, պիտի վերակառուցման այդ ոգին քուէարկի ո՛չ միայն գրողական տաք խօսքով, այլեւ՝ նախ եւ առաջ ճշմարիտ վարքագծով, իր գործի գերագոյն պատասխանատուութեամբ: Ինչ աւելի որոշակի վերաբերում է մեր հանրապետութեան այսօրուայ իրավիճակին, ապա մենք թերեւս ապրում ենք մեր ազգային պատմութեան բախտորոշ մի շրջան: Կարողանանք վեր կանգնել անձնական մեծ ու փոքր զատնութիւններից, վէճերից ու տարաձայնութիւններից՝ յանուն մեր ժողովրդի քաղաքական առողջութեան, յանուն նրա վաղուայ օրուայ: Մենք ինքներս մեզ պարզապէս պիտի զրկենք իրաւունքից՝ այլ կերպ մտածելու եւ գործելու:

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@



## ՄԵՂՍԱՔԱՒՈՒԹԻՒՆԻ ՊԵՏՍ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

●

Վահագն Դաւթեանի պէս փառաւոր ու հռչակաւոր ու ճանաչուած բանաստեղծը (գոնէ նրա տաղը, թւում է, որից բաց չին(ը)ին բոլոր դռները) մեր օրերում ստիպուած է խոստովանել, որ ինքը ոչ մի կերպ չի կարողացել ազատագրուել ներքին զգացումներից: Այս խոստովանութիւնը պէտք է ողջունել բոլոր ազդեցիկ հեղինակութիւն եւ ահագնալի կարեւորութիւն ստանայ բոլոր նրանց համար, ովքեր գործի բերումով չփչուած են այսօր գրական մուտք անող 20–25 տարեկաններին հետ, որոնցից շատերը այն մարդուց՝ ջահել յղացուած հոգիներն են, որ վաղը կարող են հոգեւոր յենարաններ դառնալ հասարակութեան համար: Այն հասարակութեան համար, որն այսօր աղքատ կարիք ունի բարոյականութեան վերականգնելու եւ իր ամբողջ ծաւալով ապրելու է բարոյականութեան քարոզներով:

Մենք վերջապէս պէտք է բարձրաձայն խոստովանենք մի դառն ճշմարտութիւն եւս, որ Եղիշէ Չարենցից յետոյ այս հողի վրայ ստեղծագործած ոչ մի բանաստեղծ չի կարողացել բացարձակապէս ազատ լինել ներքուստ, երբ նստել է սպիտակ թղթի առաջ: Սա մենք պէտք է ընդունենք ոչ թէ այն պատճառով, որ կոյր էինք, չէինք տեսնում եւ հոգին ենք հաւատարիմ Չարենցից յետոյ ստեղծուած մեծ ու փոքր արժէքները, այլ որովհետեւ դա մեզ պէտք է այսօր եւ մեկընդմիշտ հասկանալու համար, որ ժամանակակից երիտասարդները բարեբախտութիւն ունեն ձերբազատ լինել ՆԵՐՔԻՆ [illegible]: Բայց ուրախանալու փոխարէն ես շուրջս հակառակն եմ տեսնում. կարծես բոլորը յատուկ միտումով իրենց նպատակ են դրել երիտասարդների մէջ եւս մշակել հոգեբանական արգելակներ: Նոյնիսկ հիմա են գործեր ներծծուած՝ այսօր արդէն ծիծաղելի պատճառաբանութիւններով: Առանց հասկանալու, որ դա յղի է վաղը ընդհանրապէս պոեզիա չունենալու վտանգներով: Սրանք կոնկրետ անհատների անհեռատեսութեան ու սխալների արդիւնք չեն, այլ համընդհանուր հոգեբանութիւն է, որ շատ դժուար է անցք տալ:

Անցեալ տարի «Լիրիկուհի-Երեւան» ստեղծագործութեան օրը Եղիշէ Չարենցի արձանի առաջ իրենց ստեղծագործութիւնները պիտի կարդային երիտասարդ բանաստեղծները, բայց յանկարծ պարզուեց, որ նրանք իրաւունք չունեն, քանի որ այդ գործերը վաղօրօք չեն ներկայացուել «հաստատման»: Այսինքն, կարելի է կարդալ միայն ապացուցուած, ուրեմն եւ թոյլատրելի գործերը: Եւ այս վիրաւորական անվստահութիւնը բաւական էր, որ ոչ մի երիտասարդ թոյլ չտար մասնակցել միջոցառմանը: Եթէ նրանք ասէին՝ ինչ ուզում էք կարդացէք, նրանք ի՞նչ պիտի անէին: Այդ լսողները իրենց խեղճ ու կրակ գրական թոթովանքներով պիտի թունաւորէին մօտակայ տրամադրութեան մէջ փայլատակող երեւակայութեան: Սա ի՞նչ անհեթեթ զգուշաւորութիւն է. վախեցած վարորդի նման աջից-ձախից արգելակում են մեր ընթացքը իրենց հնարաւոր վթարներից խուսափելու համար: Կարծես մենք այս ժողովրդի որդիները չենք, այս հասարակութեան անդամները չենք, վերջապէս, այս պետութեան քաղաքացիները չենք: Մինչեւ ե՞րբ պիտի արուեստագէտների նկատմամբ վերաբերմունք մշակուի կասկածամտութեան հիմքերի վրայ՝ գեղարուեստական արժանիք չափանիշներով: Մինչեւ ե՞րբ պիտի պատահական չինովնիկները որոշեն հեղինակ բանաստեղծութեան ճակատագիրը:

Պարոյր Սեւակի «Եղիցի լոյս»ի հրատարակման տխուր պատմութիւնը արդէն հազար անգամ օրինակ են բերել, արդէն հազար անգամ հրապարակներէն մէջն են խօսել իրրեւ ապացոյց, որ վաղը դուրս էր վտանգաւոր գաղափար գալով, իրրեւ ապացոյց այն բանի, որ արդիւնաւէտ սկզբունքով աշխատել ընդհանրապէս չի կարելի: Առաւե՛լ եւս չի կարելի, երբ գիտակցութեան մարդ է կանգնած եւ ստանալիք՝ չի կարելի, երբ գիտակցութեան արուեստագէտ է կանգնած եւ հարիւրապատիկ չի կարելի, երբ գիտակցութեան փոքրութիւն ժողովրդի արուեստագէտ է կանգնած եւ հազարապատիկ-միլիոնապատիկ չի կարելի, երբ գիտակցութեան պարտուած ժողովրդի արուեստագէտ է կանգնած, որի նախադեպերն առանց էլ էլ գերլարուած են:

Օրինակներ շատ են բերուել, բայց դրանից գոնէ մէկը դաս եղե՞լ է: («Գարուն», 1988, թիւ 2, էջ 18):

ԱՐՄԷՆ ԴԱՐԻԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ժամանակն է, որ մենք եւս լիաձայն խօսենք այն անձանց ողբերգութեան մասին, որոնք հայ գրականութեան պատճառեցին ո՛չ միայն 1915, այլեւ՝ 1937 թուականը, որը մահուան ու աքսորի դատապարտեց շատերին…

…Մենք զարմանալիօրէն շատ հեշտ ենք կորցնում մեր ազգային ոգին խորհրդանշող արժէքները, նոյնիսկ տարածութիւն չունենալու պայմաններում:

…Մեր կեանքի այս վերափոխիչ ժամանակներում եւս, անհրաժեշտ է բարձր պահել ճշմարիտ գրականութեան ու արուեստի, նաեւ գրողի ու արուեստագէտի արժանապատուութիւնը…

## ԴԱՒԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ

*Գրականագէտ եւ գրաքննադատ Դաւիթ Գասպարեան ծնած է 17 Հոկտեմբեր 1947ին, Երեւան: 1970ին կ'աւարտէ Երեւանի պետական համալսարանի բանասիրական հիմնարկի հայկական բաժինը:*

*1971ին Դ. Գասպարեան կ'աշխատի Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Մ. Աբեղեանի անուան բանասիրական հիմնարկի հայկական բաժինին մէջ՝ իբրեւ գիտաշխատող: 1974ին,* «40–70ական թուականների սովետահայ պոեզիայի տաղաչափությունը» *թեմայով աւարտաճառ պաշտպանելէ ետք՝ կը ստանայ գիտութիւններու թեկնածուի տիտղոսը: 1975–1978 կը պաշտօնավարէ Հայաստանի գրողներու միութեան մէջ՝ իբրեւ գրական խորհրդատու, 1978–1980՝ «Գա*րուն» *ամսագրի մէջ՝ իբրեւ գրականագիտութեան եւ քննադատութեան բաժնի վարիչ, 1980ին՝ «Սովետական գրող» հրատարակչութեան մէջ՝ իբրեւ աւագ խմբագիր: 1977ի ընթացքին տպագրուած իր յօդուածներուն եւ* «Սովետահայ գրականության տարեգրություն» *գիրքին համար կ'արժանանայ Հայաստանի Լենինեան Կոմերիտմիութեան «Տարուայ լաւագոյն ստեղծագործութիւն» մրցանակին:*

*Դաւիթ Գասպարեան ցարդ հրատարակած է* «Սովետահայ գրականության տարեգրություն. 1957–1975» *(Հ. Գալստեանի համահեղինակութեամբ),* «Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը», «Բանաստեղծության ոգին», «Եղիշէ Չարենց եւ 1920ական թուականների պոեզիան» *եւ* «Ժամանակ եւ շարժում» *հատորները:*

digitised by A.R.A.R.@

Դ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

# ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ԹԵԼԱԴՐԱՆՔԸ

●

Վերակառուցման հզօր շունչը, հրապարակայնութեան եւ դեմոկրատացման վերափոխիչ միտումները նոր ճանապարհներ են նախանշում անտեսական, հասարակական-քաղաքական, գրական-մշակութային լճացումից ու ճգնաժամից երկիրը դուրս բերելու ուղղութեամբ: Անհրաժեշտութեան թելադրանքով եկել է երկար սպասուած պահը, երբ կարելի է անկաշկանդ խօսել տարիներ շարունակ լռութեան դատապարտուած ու չլուծուած խնդիրների մասին: Եւ նորից, ինչպէս շրջափուլային ամէն մի կարեւոր պահի, առաջին գծում են գրողներն ու արուեստագէտները: Հրապարակւում են առաջատար կուսակցական եւ գրական կենտրոնական մամուլի էջերում նրանց տպագրած ծանրակշիռ յօդուածները, որոնց մտահոգութիւնը երկրի բախտն է, յանիրաւի անտեսուած կամ մերժուած գրական-մշակութային արժէքների վերահաստատութիւնը:

Վերակառուցման ալիքը իր շունչը տարածել է նաեւ Հայաստանում: Վախուորած, կէսբերան, մէկուսի խօսակցութիւններին կոլեկտիւների ժողովներում եկան փոխարինելու քննադատական բաց ելոյթները, որոնց մտահոգութիւնը մէկն է՝ համարձակութիւնը ներքաշել նոր վերակառուցումների մէջ, կտրել մարդկանց ներքին եռանդից դրկող, իրենց իրաւունքների համար պայքարելուց յետ պահող-յարմարուողականութիւնը, բացել նրանց լեզուն, որպէսզի մարդիկ ասեն այն, ինչ մտածում են եւ ոչ թէ այն, ինչ պահանջւում է: Այդ վտանգաւոր լռութիւնն էլ մարդկանց կարել էր իրարից, խզել նրանց քաղաքացիական ջիղը: Ամբիոններից ելոյթ էին ունենում հռետորներ, որոնք իրենք էլ չէին հաւատում իրենց ասածին, գահլիճները անտարբերօրէն ծափահարում էին սովորոյթի ուժով: Եւ աստիճանաբար կեանքից ու մարդկային յարաբերութիւններից հեռացաւ ճշմարտութիւնը. այն, ինչը պէտք առողջ պահէր միտքը, անաղարտ՝ վարքը, օրինակելի՝ բարոյականութիւնը: Դրսից թափանցեցին անտարբերութիւնը, աշխատանքի հանդէպ անհոգի վերաբերմունքը, վրայ տուեցին քծնանքը, հաճոյախօսութիւնը, անվստահութիւնը, աչքակապութիւնը, ծառայամտութիւնը, այն ամէնը, ինչը դէմ է ճշմարտութեանն ու արդարութեանը: Շատ դէպքերում անտեսուեցին կամ չքացուեցին այնպիսի բարոյական յատկանիշներ, ինչպիսիք են առաքինութիւնը, արժանապատուութիւնը, սկզբունքայնութիւնը, ազնուութիւնը, արդարամտութիւնը, անանձնականութիւնը, կարգապահութիւնը...: Դրանց փոխարէն սուտն ու կեղծիքը աւելի յաճախակի լցուեցին մարդկային յարաբերութիւնների մէջ եւ նրանց զարկերակին դիւանագէտ, ճարպիկ, երկերեսանի, շող-

digitised by A.R.A.R.@

քի սուրմա Թագնոզ» մի նոր Միքիտան Սարս: Եւ հիմա երկիրը կանգնած է թէ՛ անհատապէս իւրաքանչիւր մարդու մէջ եւ թէ բոլորի մէջ միաժամանակ արտաքսուած ու ծեծուած ճշմարտութիւնը վերականգնելու դժուարութեան առջեւ: Որովհետեւ միայն ճշմարտութիւնը կը բերէ այն ցանկալի մթնոլորտը, ուր իւրաքանչիւր ազնիւ մարդ իրեն վիրաւորուած չի զգայ եւ ցանկացած անազնիւը մազուած չի ծիծաղի նրա վրայ: Ժամանակը ասպարէզ էր հանել կեղծ հերոսներ, օրապակաս խանդավառութիւն ու դրանց կողքին՝ քանդուող կառուցքներ, փլուզուող շինութիւններ, աշխարհի չալակը բարձրացող կարիճ տղաներ, անտնտեսական, բարոյական անկում: Բայց նոյն այդ օրերին ապրում ու աշխատում էին նաեւ ազնիւ ու տոկուն մարդիկ, որոնց ձայնը, սակայն, միշտ չէ, որ անց էր հասնում, որոնք միշտ չէ, որ օրինակ էին բոլորի համար: Եւ, փառք Աստծոյ, որ այս նոր շարժումը չի կրում միջնադարեան բնոյթ, թէեւ ոմանք կը ցանկանային այն վերածել հալածանքի կամպանիայի, այլ կոչուած է արմատապէս վերափոխելու մեր կեանքը:

Շատ բան իմացանք այս օրերին եւ աւելացաւ տագնապի ու ցաւի զգացումը: Մամուլը ահաւոր փաստերով զուժում է, որ միայն 1970ական թթ. Ռուսաստանում քայքայուել է 40.000 գիւղ, իսկ անտառները անխնայաբար հատելու հետեւանքով վերջին 25 տարում ցամաքել էին Բայկալ լիճ լցուող 150 սիբիրեան գետ ու գետակ: Ըստ որում, գիւղերի քայքայումը Ռուսաստանում սկսուել է 1950ական թուականներից: Ամայացած գիւղերի ընդհանուր թիւն ստանալու համար 40.000ին դեռ ինչքա՜ն պէտք է գումարել: Սա ողբերգութեանը համարժէք թուաբանութիւն է: Բայց եւ այդ ողբերգութիւնն էլ ունի իր սկզբնապատճառները: Գաղտնիք չէ, որ սիբիրեան բազմաթիւ գիւղեր լցուած էին անմեղ աքսորականներով, որոնք եւ քաշում էին անտեսութիւնների լուծը: Իսկ երբ նրանց առջեւ բացուեցին ազատութեան դռները, բնական է, որ նրանք պիտի բռնէին տունդարձի ճանապարհն: Այլ հանգամանքների թւում (արդիւնաբերութեան զարգացում, եւայլն) դա եւս չպէտք է անտեսել:

Գիւղերի ամայացումը նաեւ մեր հանրապետութեան հոգսերից է: 1950ական թթ. լեռնային շատ գիւղեր վերադաս մարմինների կարգադրութեամբ իջեցուեցին հարթավայր: Այդ գիւղերում մարդիկ ապրել, իրենց հողն էին հերկել եւ այդ հողը յիշատակներով սրբացրել դարեր շարունակ: Պատճառաբանութիւններն այն էին, որ գիւղերի համար լեռներով մէկ դժուար է ճանապարհներ բացել, դժուար է բնակչութեան կենցաղային, աշխատանքային կարիքները հոգալ: Եւ տեխնիկական զարգացման այս դարում գտնուեց ամենահեշտ միջոցը՝ գիւղացուն կտրել իր դարաւոր արմատներից, իր հող ու ջրից եւ... արդիւնաբերականացնել: Դրա համար էլ այսօրուայ գիւղացին, քաղաքներում իր միրգն ու կանաչեղէնը վաճառելուց յետոյ, իր հետ տանում ու տուն է տանում հաց, միս (եթէ ճարի), կարագ (եթէ աւելի գնով որեւէ մէկից «չեկ» գնած լինի), պանիր, անգամ՝ կարտոֆիլ ու կաղամբ...: Եւ սա ուղիղ գծով չի՞ կապւում գիւղերի ամայացման խնդրութեան հետ: Հիմա նախնական աշխատանքներ են տարւում 140 լեռնային գիւղ վերականգնելու հնարաւորութիւններն ուսումնասիրելու ուղղութեամբ: Թէ ինչ արդիւնք կը տայ դա, դեռ հարցական է:

Այսօր շատ ենք խօսում արտագաղթի մասին: Բայց կայ նաեւ ներքին արտագաղթ, որը եւս շատ մտահոգիչ է: Ե՛ւ հեռաւոր գիւղերից, ե՛ւ անգամ Արարատեան դաշտից քանի՜-քանիսն են վաճառում իրենց տուն ու տեղը եւ մշտական բնակութեան մեկնում դէպի Հիւսիսային Կովկաս, Կրասնոդարի ու Ստավրոպոլի մարզերը, դէպի Միջին Ասիա եւ էլ ո՜ւր ասես: Ինչո՞ւ, որովհետեւ գիւղացին, նախ, ապրուստի աղբիւր է որոնում: Իսկ մեր իշխանութիւն-

digitised by A.R.A.R.@

ները «Հերոսաքաղաքի» քանդեցին բոլոր ջերմոցները, տեղական նախագահներն էլ անհող ընտանիքներին հասանելիք հողատարածութիւնը երբեմն ո՛չ թէ յատկացնում են, այլ՝ վաճառում: Եւ դա այն դէպքում, երբ երեք տասնամեակ առաջ գիւղացին բուն Արարատեան դաշտում ո՛չ միայն իր տնամերձն էր մշակում, այլեւ ունէր օժանդակ հողատարածութիւն:

Արարատեան դաշտավայրից Երեւան բերող ճանապարհն անցնում է «Նայիրիտ» քիմկոմբինատի խողովակաշարերի տակով, ծուխ ու մրի միջով:

1960ական թթ. կէսերին, երբ գործում էր 11ամեայ միջնակարգ ուսուցման ծրագիրը, այդ ձեռնարկութեանը մօտիկ գտնուող թաղամասերի աշակերտները դպրոցում ուսանելու վերջին երեք տարիներին արտադրական պրակտիկան անց էին կացնում քիմկոմբինատում: Դա նշանակում էր շաբաթուայ մէջ մէկ ամբողջ օր լինել այնտեղ: Պատանիներին, կոմբինատի բանուորների հետ մէկտեղ, որպէս «դեղ» քիմիական թունաւորման դէմ, մէկական շիշ ձրի մածուն էին տալիս: Բայց այդ «շռայլութիւնը» շատ ծանր անդրադարձաւ ոմանց առողջութեան վրայ:

Իսկ առաւօտեան, լուացքը հաւաքելիս, բակի տանտիրուհիները երբեմն միաբերան գրեթէ նոյնն էին ասում. «Էս անտէրն էլի բաց են թողել»: «Անտէրը» մեր հասկացողութեամբ մուրն էր, որ նստում էր լուացքի վրայ եւ ապականում սպիտակեղէնը: Նախապէս ոչ ոք չգիտէր, թէ շաբաթուայ ո՞ր օրը ծուխը բաց կը թողնեն, որ զգուշանային: Իսկ բաց էին թողնում գաղտնի, գիշերը: Այդ օրուայ լուացքը բոլորն էլ ստիպուած էին լինում նորից լուանալ: Երբ անձրեւ էր գալիս, ջրհորդաններով տանիքներից սեւ մրաջուր էր լցւում փողոցները, իսկ չորանալուց յետոյ քամին սեւ մրափոշի էր շաղ տալիս բոլորի վրայ: Եթէ Գ. Մահարին ապրէր այդ թաղամասում, դժուար թէ գրէր.

Մանկութիւն իմ ոսկեծամ,
Մանկութիւն իմ, որ անցար
Նո՞ր ծլած արտից…

Այդպէս շատերի մանկութիւնն անցաւ սեւ մրաջրերի ու թունաւորւած օդի մէջ: Իսկ կուտակուած գազերի յաճախակի պայթիւններից ցնցւում էր ամբողջ տունը, բաց ու խուփ էին լինում բոլոր դռները, փշրւում էին ապակիները՝ ասես ռմբակոծութիւնից յետոյ:

Մարդկանց առողջութեան մասին, մեծի ու փոքրի աչքերից հոսող արցունքների մասին, որոնք, յամենայնդէպս, զգացմունքներից չէ, որ առաջացել էին, կոկորդում առաջացող չոր խեղդոցի մասին, վաղաժամ ծերացող, ժամկէտից շուտ թոշակի անցնող մարդկանց մասին այն ժամանակ ոչ ոք չէր մտահոգւում: Թւում էր, թէ այդպէս էլ պիտի լինի: Տասնամեակներ շարունակ այսպէս թունաւորուել են մեզանից շատերը, մինչեւ որ սկսեցին արցունքակալել նաեւ քաղաքի կենտրոնում ապրողների աչքերը…: Եւ հիմա, բաւականին ուշացումով, կարծէք խօսքը գործի վերածելու ճանապարհին է:

Վերակառուցումը որոշակի խնդիրներ է առաջադրում կեանքի առանձին բնագաւառներին, այդ թւում՝ նաեւ գրականութեանը: Վերջին տարիներին մէկ անգամ չէ, որ սթափեցնող խօսքեր են ասուել գրողների, քննադատների, գրական կազմակերպութիւնների ու մամուլի ղեկավարների հասցէին: Տնտեսական լճացումը, բարոյական արատները գրականութեան մէջ եւս իջեցրել էին գեղարուեստականութեան չափանիշները: Դրա արդիւնքը եղաւ միջակութեան ապահով ծանծաղուտը, գրական առանձին երկերի գնահատութեան հարցում ցուցաբերուած կամայականութիւնը, առանձին գրողների ու քննադատների հանդէպ դրսեւորուած միտումնաւորութիւնը: Այստեղ եւս նկատ-

digitised by A.R.A.R.@

ւեց հեռացում պատմականութիւնից ու ճշմարտութիւնից, գրան փոխարինող բազմաթիւ արատներով՝ սկսած անտարբեր բարեհոգութիւնից, վերջացրած խմբակայնութեամբ, համակիր—ծանօթ—բարեկամ հովանաւորչական համագործակցութեամբ։ Այդ իսկ պատճառով սովետական ամբողջ գրականութիւնը իր պատմութեան բաց ու փակ էջերով եւ ժամանակակից ընթացքով կանգնած է լուրջ վերանայումների առջեւ։

Ժամանակն է, որ մենք եւս լիակայն խօսենք այն անասելի ողբերգութեան մասին, որը հայ գրականութեանը պատճառեց ո՛չ միայն 1915, այլեւ՝ 1937 թուականը, որը մահուան ու աքսորի դատապարտեց շատերին եւ վախ ու սարսափ տարածեց բոլորի մէջ։ Մ. Ս. Գորբաչովը այդ մասին շատ որոշակի է ասել. «Մենք երբեք չենք կարող եւ չպէտք է ներենք կամ արդարացնենք այն, ինչ եղել է 1937–1938 թուականներին։ Երբե՛ք։ Դրա համար պատասխանատու են նրանք, ովքեր այն ժամանակ գտնւում էին իշխանութեան գլուխ…։ Մենք գիտենք, թէ ինչի վերածուեցին 37–38 թուականները, թէ դա ինչպէս հարուածեց կուսակցութեան կադրերին ու մտաւորականութեանը, զինուորական կադրերին»։

1983ին, մեծ դժուարութիւններ յաղթահարելով, գրականութեան ինստիտուտը տպագրեց Զարենցի անտիպ երկերը, որոնցում ժամանակի ու մարդու ծանր ողբերգութիւնն է։ Այդ էջերը դեռեւս լոյս չեն։ Գրողի դիւանում կան չհրապարակուած ոչ քիչ թուով գեղարուեստական գործեր, գրառումներ, որոնք մեր դարի խոշորագոյն բանաստեղծներից մէկի սրտի ու մտքի միջով անցած վաւերագրեր են։ Ահա, եկել է Զարենցի վաստակին ամբողջացնելու օրը, եւ մենք չպէտք է յապաղենք։

Բերնեբերան անցնելով, այսպիսի պատմութիւն է հասել։ Ստիպելով, որ Բակունինը իր ձեռքով փորի իր գերեզմանափոսը, նրան «ուղեկցող» «երեք հրացանակիրներից» մէկը, ըստ օրինաց կարգի, դիմել է նրան, իմանալու մահապարտի վերջին ցանկութիւնը։ Բակունինը մի ծխախոտ ծխելու ժամանակ է խնդրել, մինչ կրակահերթը կը մարէր երկնքում առկայծող նրա կեանքի աստղը։ Երբ ծխախոտի կրակը հասել է կոթունին եւ անհնար է եղել այն մատներով բռնել, նա գետնից վերցրել է երկու չոփ, ծխախոտը մինչեւ մարելը մի կերպ պահել դողդողացող ու այրուող շուրթերին եւ ներս քաշել դառը ծխի վերջին քուլան։ Ո՞վ պիտի պատասխան տայ նրա չապրած տարիների համար…

Բռնատիրութեան վկայութեամբ մեծ գրողի երկու ծաւալուն վէպերը՝ «Կարմրաքարը» եւ «Խաչատուր Աբովեանը», առգրաւուած են եղել։ Ո՞ւր են այդ վէպերը։ Մեր ռուս գործընկերները ժամանակին շատ բան կարողացել են պահել—պահպանել եւ այսօր, ահա, հանում են ասպարէզ։ Իսկ մենք, ինչպէս Զարենցը կ'ասէր՝

Կանգնած ենք ահա ապագայի հանդէպ
Զարմանալի՛ բերեւ, զարմանալի՛ անդէմ՝
Մերկութեան պէս տկլոր ու անանցեալ…

Զարենցի ակնարկած ապագան մի ինչ-որ չափով գուցէեւ հենց այսօրուայ ներկա՞ն է…

Այսօր պիտի ըստ ամենայնի խօսենք նաեւ այն ծանր ողբերգութեան մասին, թէ ինչո՞ւ գրասեղանի առջեւ նստելու փոխարէն Մահարին պիտի հեռաւոր վայրերում հորթ արածացնէր եւ երբ վերահսկիչին յիշեցնէր իր գրող լինելու մասին՝ արժանանար ոչնչացնող հեգնանքի։ Նա երկար ճանապարհ կտրեց երկու անգամ։ Առաջին անգամ մեղադրուեց որպէս ահաբեկիչ, որը իբր թէ «մտադիր է մահափորձ կատարել Բերիայի դէմ եւ Հայաստան անջատել

digitised by A.R.A.R.@

*Սովետական Միութիւնից»: Այդ անհիմն մեղադրանքը նրա վրայ նստեց 11 տարի: Կենցաղային դաժան պայմաններին աւելանում է եւ գրական մարդու ծանր ողբերգութիւնը.* «Թուղթ ու մատիտ չունեայ ես այդ... տարիների ընթացքում,– *գրում է Մահարին* «Ինքնակենսագրական»*ի մէջ եւ ցաւով շարունակում.* «Բայց անաշխատ էլ չմնացի: Աշխատեցի ես բահով, սղոցով, կացինով, եղանով, երկաթէ ձողով, աշխատեցի կոմբայնի եւ սերմնացանի վրայ եւ երբ ձեռներս թուլացան, բրուտների համար ոտքով ցեխ հունցեցի»:

*1947ի Օգոստոսի 20ին Մահարին վերադառնում է Երեւան: Կայարանից ոտքով մտնում է քաղաք, որը նրա բացակայութեան տարիներին շատ էր գեղեցկացել.* «Մի՞թէ ես խանգարում էի, անցաւ մտքովս, եւ սիրտս լցուեց արցունքով...: Ո՞ւր գնալ: Մայրս մահացել էր...: Կինս ամուսնացել, շուրջս անծանօթ մարդիկ էին»:

*Այդ օրերին, նա ինքնախոստովանութեան անկեղծութեամբ գրում է.*

Թէ ունէի ես մեղքեր, քաւե՞լ եմ վաղուց,
Թէ անմեղ եմ հալածուել, մի՛ նայիր խոժոռ,
Չէի՞ վերջին պոետը Գառնառեան թաղում,
Բայց անունս պղտորուեց օրերի փոշում...

*Զարմանալի է, սակայն, որ նա դեռեւս լրիւ չէր քաւել իր «մեղքերը»: 444 օր յետոյ նրան նորից ստիպում են բռնել Սիբիրի ճամբան: Կրասնոյարսկի երկրամասի Կուռայ գիւղում նա ցմահ աքսորական էր, եւ 323 գոճիների «խմբապետը»: Բայց այս անգամ Սիբիրը երկու մխիթարութիւն էլի տալիս է նրան՝ Անտոնինայի սէրը եւ թուղթ ու գրիչ:*

*Մահարու ճակատագիրը 1937ին չսպանուած, բայց ժամանակակցութեան դատապարտուած միլիոնաւոր մարդկանց ճակատագրի ցայտուն պատկերն է...*

*Այս ամէնը կարծէք քիչ էր, հիմա էլ...: Արդէն 22 տարի է, ինչ տպագրուել էր նրա հինգհատորեակի առաջին հատորը, չորրորդը լոյս է տեսել 1979ին, իսկ վերջինը չկայ ու չկայ: Ինչո՞ւ...: Դեռեւս ընթերցողին անծանօթ են նաեւ նրա ժառանգութեան շատ ու շատ էջեր, այդ թւում նաեւ պատմուածքներ, որոնք վերաբերում են աքսորի տարիներին: Բայց չէ՞ որ դրանք հիմա արդէն կարելի է հրապարակել մամուլում, գրքերով...: Ինչո՞ւ ենք յապաղում:*

*Մարդկային ճակատագրեր... մենք երբեմն մոռանում ենք այդ մասին, բառի ու տողի, «ֆակտուրայի» ու «պոետիկայի» յետեւից ընկած գրական տեսադաշտից կորցնում կենդանի մարդուն: Ահա այն ճակատագրերից մէկը եւս: Այն տխուր տարիներին մեր լաւագոյն քննադատներից մէկը՝ թոքերի հիւծախտով տառապող, ծանր հիւանդ Յարութիւն Սուրխաթեանը «հակայեղափոխական յանցագործութիւնների համար» դատապարտւում է 10 տարուայ ազատազրկման: Աքսորավայր չհասած, ճանապարհին, գնացքի մէջ 1938 թ. նա կնքում է իր մահկանացուն եւ հողին յանձնւում Կանսկի անուանով անյայտ կիսակայարանում: Իսկ նրա կինը 20 տարի շարունակ դիմումներ էր գրում պետական մարմիններին՝ նախ ապացուցելու ամուսնու անմեղութիւնը եւ ապա՝ տեղեկութիւններ ստանալու նրա մասին: 20 տարի շարունակ նա հանդիպում է քար անտարբերութեան եւ ամուսնու մահուան մասին տեղեկանում միայն... 1957 թուականին:*

*Այսօր մանրամասն պիտի խօսենք նաեւ այն մասին, թէ այդ ինչպէ՞ս եղաւ, որ նոյն 1936–1937–1938 թթ. տաղանդաւոր գրողներից շատերը արժէ–*

digitised by A.R.A.R.@

ձէ պնդակ ընդունեցին իրենց կրծքերին կամ բռնեցին աքսորի ճանապարհը, իսկ տաղանդով և նուիրումով յամենայնդէպս աւելի մեծ կէսը չունեցողները ոսկեզօծ չքանչաններով զարդարեցին իրենց կուրծքը։ Եւ ի՞նչը զրկեց ինքնասպանութիւն գործելու Եսենինին ու Մայակովսկուն, ի՞նչ բախտ ու ճակատագիր վիճակուեց Գորկուն։ Հետագայ տարիներին անկայուն դարձած չափանիշների անկումը (1937–1940ական թթ. աշուղական «պոեզիան», 1948–1953 թթ. անկոնֆլիկտայնութեան տեսութիւնն ու կեանքի զունազարդումը, 70–80ական թթ. միջակութեան զրոհը) արդեօ՞ք այս դէպքերից յետոյ չսկըսուեց։ Արդեօ՞ք պատմականութեան խախտումը չէր այս ամէնի պատճառը։

1932 թ. Չարենցը ի մի էր բերում իր գրական 20ամեայ վաստակը, կանգնած էր «Գիրք ճանապարհի»ի տպագրման նախաշեմին, բայց, ահա, նրա «ակտիւ» ժամանակակիցներից մէկը «Գրական թերթ»ում (1932, N°2) նրան այս տողերով «Բաց նամակ...» ուղղեց. «Անցել է երկու տարի դու ոչինչ չես տուել: Արդեօք դու ընդունակ չե՞ս ըմբռնելու եւ ապրելու վերակառուցման շրջանի հերոսական էպոխան»: Այս խօսքերն ասում էր ձիրքով անհամեմատ համեստ գրողը եւ ասում էր հանճարին։ Այս ամէնը, արդեօք, չնախապատրաստեց՞ն չափանիշների խախտումն ու գրական արդարութեան ոտնահարումը։ Հակառակ դէպքում այդ ինչպէ՞ս եղաւ, որ ուժեղները դուրս մղուեցին գրականութեան ու կեանքի ընթացքից (հետագայում միայն իրենց փառքի պատուանդանին բարձրանալու համար), իսկ թոյլերը դարձան տէր ու տիրական։

Ժամանակն է, որ մենք լիաձայն խօսենք նաև այն արգելքների մասին, որոնք դրուեցին, նախ, Չարենցի «Գիրք ճանապարհի», ապա եւ Սեւակի «Եղիցի լոյս» ժողովածուների առջեւ։ Երկու գրքերն էլ լոյս տեսան «խոցւած սրտով»: Չարենցն էլ տարհանւած «Աքիլլե՞ս, թէ՞ Պիերօ» պոեմը փոխարինեց նոր գործերով: Իսկ Սեւակի գիրքը ընթերցողին հասաւ յետմահու, վերատպաձուած էջերով, երբ դեռ երկու տարի առաջ տպագրուած պատրաստ էր տպաքանակը։ Արդեօք Սեւակի ողբերգական մահուան դրդապատճառներից մէկն էլ այն ծանր բարոյական մթնոլորտը չէ՞ր, որ ստեղծուել էր նրա շուրջ (այդ մթնոլորտի ստեղծողներից ոմանք այսօր արդէն նրա մասին յուշեր ու յօդուածներ են գրում եւ զարդարւում նրա անունով)։ «Եղիցի լոյս»ը բարոյական բարձր սկզբունքների եւ մեծ ճշմարտութեան այն պատգամներն էր բերում, ինչի այսօր մեզ կոչում է մեր նոր կեանքը։ Սեւակի առածը այս էր.

Մենք ուզում ենք գործի լեզո՛ւն...
Բայց ո՛չ իբրեւ երկանք սուտի
Ու ջրաղաց խաբէութեան...

Ինչպէս Չարենցի, Բակունցի, Մահարու, Սեւակի ստեղծագործութեան մասին արուած ակնարկներից երեւաց, մեր գրողների գրական ժառանգութեան հանդէպ, որն ազգային աւելի մեծ հարստութիւն է, քան Զոդի ոսկին, Քաջարանի մոլիբդենը կամ Ալավերդու պղինձը, մենք շատ անփոյթ ենք վարւել ու վարւում։ Գրական առասպելներից մէկը յուշում է, որ երբ Անգլիայի թագաւորներից մէկին հարց են տուել, թէ ընտրութեան դէպքում ինչի՞ց կը հրաժարուի՝ Հնդկաստանի՞ց, թէ՞ Շեքսպիրից, նա, երկար մտածելուց յետոյ, ասել է, որ ինչքան էլ մեծ լինի կորուստը, այնուամենայնիւ, կարելի է Հնդկաստանից ձեռք քաշել, բայց Շեքսպիրից՝ երբեք, քանի որ Շեքսպիրը ազգային ոգին է, իսկ առանց ոգու տարածութիւնը հէչ բան է։ Իսկ մենք զարմանալիօրէն շատ հեշտ ենք կորցնում մեր ազգային ոգին խորհրդանշող արժէքները, նոյնիսկ տարածութիւն չունենալու պայմաններում։

digitised by A.R.A.R.@

*Այդ վերաբերմունքին զոհ չգնա՞ց, արդեօք, նաեւ Րաֆֆու ժառանգութիւնը: Յայտնի է, որ Լոնտոնից 1947 թ. մեծ գրողի հարսը՝ Կորմիկ Րաֆֆին, ուղարկել է Րաֆֆու դիւանը: Այն Մոսկուայում ստացուել է 1947ի Դեկտեմբերին, ծանրոցը կշռել է 91 կիլոգրամ: Այդ մասին տեղեակ են եղել Հայաստանի համապատասխան անձինք: Բայց ուշացմա՞ն, թէ՞ անփութութեան պատճառով, երեք ամիս «բոլոտում» մնալուց յետոյ, Րաֆֆու դիւանը անհետացել է: Հետագայ տարիներին գրականութեան ինստիտուտի եւ գրականութեան ու արուեստի թանգարանի աշխատակիցների որոնումները արդիւնք չեն տուել: Գուցէ հանրապետութեան ղեկավարութիւնը, հնարաւոր բոլոր միջոցները գործելով, մի նոր փո՞րձ կատարի այդ թանկարժէք էջերը յայտնաբերելու ուղղութեամբ: Թէ չէ, շատ դժուար է հաշտուել այն մտքի հետ, որ դրանք վերջնականապէս կորած են:*

*Եւ, ընդհանրապէս, հոգեւոր արժէքների կորուստի դէմ պիտի պայքարել պետական խիստ միջոցներով՝ լինեն դրանք գրադարաններից անհետացող գրքեր, մամուլի հաւաքածոներ, գրողների դիւաններից պակասող ձեռագրեր, թէ թանգարաններից վերացող արուեստի ստեղծագործութիւններ ու հնագիտական արժէքներ: Այդ դէպքում ի՞նչ տարբերութիւն կարող է լինել ծխախոտ կամ հրուշակեղէն-մակարոնի կոմբինատների աշխատողների եւ մտաւորական մարդկանց միջեւ: Եթէ առաջինները ծխախոտ ու շոկոլադ են գողանում, ապա երկրորդները անվերադարձօրէն թալանում են ժողովրդի հոգեւոր գանձերը:*

*Ժամանակն է, որ հրապարակաւ խօսենք նաեւ այն արժէքների մասին, որոնց վրայ տարբեր պատճառաբանութիւններով կա՛մ արգելք է դրուած, կա՛մ դրանք դուրս են դրական-մշակութային լայն շրջանառութիւնից: Խօսքը վերաբերում է Ռ. Զարդարեանի, Ն. Աղբալեանի, Լ. Շանթի, Դուրթ Անտանունի, Համաստեղի, Մ. Իշխանի երկերին, Ե. Օտեանի* «Ընկեր Փանջունի» *վէպին:*

*Ռ. Զարդարեանի* «Ցայգալոյս» *ժողովածուն 15.000 տպաքանակով Երեւանում վաճառքի հանուեց 1959 թ., բայց գիրքը նոր էր գրախանութ հանել, երբ «վերեւից» եկող կարգադրութեամբ այն հաւաքուեց, չհասաւ ընթերցողին: Ո՞վ գիտէ, գուցէ կրակի ճարակ դարձաւ: Գրքի պլանաւորումն ու տպագրութիւնը տարիներ է տեւում: Այդ պլանները նայում, ստուգում են բոլոր վերադաս օղակներում, ընդհուպ մինչեւ Մոսկուայում: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ բոլորը յարմար գտան գրքի տպագրութիւնը, իսկ մի զրպարտչի նամակը առիթից հաւաքել այն: Մի՞թէ պետական գործի մէջ զրպարտիչները դեռ այդքան կշիռ ունեն:*

*Երկար տարիներ է, ինչ դրական կարծիքներով հրատարակչական դարակներում շարունակում է փոշիների մէջ ծուարել Գառնիկ Քալաշեանի ժողովածուն, որն այս հրաշալի քառատողի հեղինակն է.*

Երանի ձեզ, որ պիտի գաք՝
Մեզնից պայծառ, մեզնից ժպտուն...
Մենք մեր տան մէջ օտար եղանք,
Դուք տիրաբար մտէք մեր տուն...

*Այս ամէնը վկայում են, որ այնքան էլ ճիշտ չէ «դատարկ թղթապանակների» մասին մեր գրական շրջանակներում տարածուած թիւր կարծիքը: Թերեւս ոմանք այդպէս ասում են, որ հեշտացնեն իրենց գործը, աւելորդ գլխացաւանք չստեղծեն իրենց համար: Եւ դա այն դէպքում, երբ մեր խմբագիրներն ու հրատարակիչները գրականութեան համար շատ օգտակար էջեր կարող են գտնել Ե. Չարենցի, Գ. Մահարու, Լեռ Կամսարի, Մ. Գալշոյեանի, Յ. Շիրազի,*

digitised by A.R.A.R.@

Գ. Սեւակի եւ յիշատակուած ու չյիշատակուած շատ այլ հեղինակների գիւտներում, ինչպէս նաեւ հէնց այսօր իսկ մամուլի որոշ ղեկավարների կողմից մերժուող ժամանակակից հեղինակների թղթապանակներում։

Ահա այսքանից յետոյ պիտի մտածենք նաեւ այն մասին, թէ ինչո՞ւ է գրականութեան մէջ դժուարութեամբ իր ճանբան բացում լիարիւն կեանքով ապրող ժամանակակից մարդը, որը պիտի գար ու խօսէր ճշմարտութիւնից։ Թուցէ նրա համար, որ կեանքում է՞լ է նա իր ճանբան դժուար բացում։ Ահա այստեղից է գալիս գրական երկերի մի մասի մէջ նկատուող սխեմատիզմը, կեանքի անհարկի գունազարդումը, անկենդանի պակաս, մանրաթեմայնութիւնը։ Այդպէս ընթում ու արդարախօս հերոսին երբեմն փոխարինելու են գալիս նրանց տեղապահ-խրատուիլակները։ Բայց եւ այս ընթացքում ազգային ու սոցիալական կեանքի ճշմարտախօս հերոսը, ինչպէս նաեւ հոգեբանական ներունակ մեծ ուժ ունեցող հերոսը չկորաւ։ Նա իր մերթ տառապագին, մերթ զմզահ ձայնը հնչեցրեց ոչ-քիչ թուով գրական երկերում։ Իսկ այսօր նա պիտի ոտից գլուխ կանգնի գրականութեան կենտրոնում։ Այսօր հէնց նրա՛ ժամանակն է։ Այսօր նաեւ արդի հայ գրականութիւնը հիմնաւորապէս վերագնահատելու ժամանակն է։ Եւ հեղինակների ստեղծագործութեան բուն արժէքը բացայայտելուն բնաւ չպէտք է խանգարեն նրանց գիրքն ու պաշտօնը։ Պաշտօնայարգութիւնը տարիներ շարունակ տանտատակ տուեց գրականութեան պատիւը, դէմքը, չափանիշները։ Ուզբեկստանում ո՞վ կը յանդգնէր Շ. Ռաշիդովին, որը ոչ միայն Կենտկոմի առաջին քարտուղարն էր, այլեւ, ոչ-բարով, արձակագիր, չյիշատակել գրականութեան առաջատարների շարքում։ Նոյնիսկ մի քանի անգամ նրա թեկնածութիւնն առաջադրուել է երկրի գրական բարձրագոյն պարգեւների յաւակնորդների ցուցակում։ Իսկ մի՞թէ այդպիսիները քիչ են մեր իրականութեան մէջ։

Ժամանակն է ի մի բերելու արձակի, պոեզիայի, քննադատութեան, գրական այլեւայլ հարցերի շուրջ արտայայտուած կարծիքները, որոնք միշտ չէ, որ եղել են օբյեկտիւ ու երբեմն բխել են ո՛չ թէ բուն գրական երկի գեղարուեստական արժէքից, այլ եղել են համակրանքների ու խմբակայնութեան տուրք։ Վերականգնումը նաեւ նոր ընդհանրացումների է մղում։

Իսկ մենք ի՞նչ էինք անում։ Քննադատ Վ. Նովիկովը հաշուել է, որ 1977 թ. կենտրոնական գրական մամուլում տպագրուած 591 գրախօսութիւնից բացասական է եղել... սոսկ 3-ը։ Այդպիսին էր նաեւ մեր գրական մամուլը։ Օրինակ, «Գրական թերթի» 1981 թ. Յունուարից մինչեւ 1982 թ. Մարտ ամիսն ընկած 64 համարներում տպագրուել է 80 գրախօսութիւն՝ բոլորն էլ դրական շեշտով։ Իսկ դիտողութիւններն արուել են լուրջ թերացումներն անտեսող այսպիսի «քաղաքավարութեամբ». «Ժողովածուն, ի հարկէ, զերծ չէ թերութիւններից», «Կարելի էր խօսել նաեւ մէկ-երկու ոչ-էական պակասութիւնների մասին», «Ընթերցողի սեղանին է բանաստեղծութիւնների մի ժողովածու, որն, ի հարկէ, կարիք է զգում նաեւ քննադատական խօսքերի» («Գրական թերթ» 1981, №№ 38, 44, 47)։

Ահա այսպէս եկաւ չափանիշների անկումը, այսպէս խորացան «յատկապէս գաղափարա-բարոյական ոլորտում» նկատուող այն անցանկալի երեւոյթները, որին նպաստեցին նաեւ մեր գրական մամուլի որոշ ղեկավարներ։ Այս հարցն առանձնապէս սուր է արծարծւում, որովհետեւ այսօր աւելի լուրջ խնդիրներ են դրուած գրական մամուլի առջեւ։ «Պրավդա»յում (1987 №220) տպագրուած «Ստեղծագործական միութիւն» առաջնորդողում գրական կազմակերպութիւններից պահանջւում է «գրական մամուլի ղեկավարութեան բարելաւում», խնդիր է դրւում «միաւորելու գրականութեան եւ արուեստի աշխատողների շարքերը հայրենասիրական մեծ գործերի շուրջ»։

digitised by A.R.A.R.@

*Եկել է երկար սպասուած այն պահը, երբ մեր կեանքի ինչ-ինչ օղակներում արմատակալած «բիւրոկրատական ցենզուրային» պիտի փոխարինի իրօք որ «դեմոկրատական ցենզուրան»: Սա բաց ու անկեղծ խօսակցութիւնների ժամանակն է, երբ հայեացք ուղղելով մեր հասարակութեան, նաեւ գրականութեան ու մշակոյթի անցած ճանապարհին, պիտի կարողանանք յանդգնել պատմականօրէն անհրաժեշտ հետեւութիւնների: Հակառակ դէպքում պահը բաց կը թողնենք եւ մեր ներկան չի խմատաւորուի այն մեծագործութիւններով, որին կոչ է անում ժամանակը: Դեռ աւելին, մենք ո՛չ միայն անհրաժեշտ հետեւութիւնների չենք յանգում, այլեւ որոշ գրողների ու քննադատների եռանդուն ջանքերով կարծէք յետընթաց ճանապարհ ենք բռնել՝ յարութիւն տալով քննադատութեան 1930-ական թթ. տարածուած ամենատարածաւոր մեթոդին՝ գռեհիկ սոցիոլոգիզմին, որը մերկապարանոց սխեմաներից այն կողմ չէր տեսնում գրականութիւնը: Այդպիսիների դէմ էին ժամանակին պայքարում Չարենցը, Բակունցը, Մահարին: Չարենցը հենց այդ մտաւոր աղքատիկացների աչքերին նայելով էլ արձակում էր իր խօսքի նետերը.*

Օ, դո՛ւ, ճայիրեան մարքսիզմի չստեր
Հագած փիլիսոփա,
Օ, դո՛ւ, պատահմամբ սերտած մտքերի
Մի խղճուկ գերի…

*Մեր օրերում դեռեւս կենդանի է նաեւ հաճոյակատար, պաշտօնեայարգ, ծառայամիտ քննադատութիւնը, որը շարժում է գրական հանրութեան խիստ զայրոյթը: Թէ՛ գռեհիկ սոցիոլոգիզմ եւ թէ քննադատական յարմարուողականութիւնը այսօր այլեւս անելիք չունեն:*

*Մեր հասարակարգի ձեւաւորման առաջին իսկ օրերից առաջնային տեղ է յատկացուել գրական ու մշակութային գործին: Դրանով բարձրացել է նաեւ գրողի ու արուեստի բնագաւառի մարդկանց հեղինակութիւնը, նրանց խօսքի հասարակական հնչողութիւնը: Այդ ամէնը չկորցնելու համար այսօր, մեր կեանքի այս վերափոխիչ ժամանակներում եւս, անհրաժեշտ է բարձր պահել ճշմարիտ գրականութեան ու արուեստի, նաեւ գրողի ու արուեստագէտի արժանապատուութիւնը եւ ոչ թէ միջակութեան թուային գերակշռութեամբ համահարթել ամէն ինչ:*

*Ելոյթներից մէկում Մ. Շոլոխովն ասել է, որ պէտք է խորտակել մեր կեանքի չինովնիկացած, բիւրոկրատացած ապարատը, որպէսզի գրողը ո՛չ թէ գլուխ ծռի պաշտօնեայի առաջ եւ խնդրելու պէս քծնի, թէ յարգելի Իվան Իվանովիչ, ես, գիտէք, այսպիսի մի հարցով եմ համարձակուել դիմել Ձեզ, այլ նրա մօտ մտնի մարդկային արժանապատուութիւնը չվիրաւորող հպարտ քայլուածքով եւ ասի՝ ընկե՛ր Իվանով, անհրաժեշտ է շտապ լուծել այս կամ այն հարցը:*

*Դրա համար անհրաժեշտ է, որ իր հեղինակութեան բարձր դիրքերում մնայ գրողի ստեղծագործական եւ քաղաքացիական արժանապատուութիւնը: Դա նաեւ գրողի մասնագիտական պատուախնդրութեան անհրաժեշտութեան թելադրանքն է:*

**ԴԱՒԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ**

(«Գրական թերթ», *1988, թիւ 4)*

digitised by A.R.A.R.@



Շատ մեծ բան է, երբ կարող ես առանց վախենալու ասել քո մտածածը, քո կարծիքը, քո վերաբերմունքը կեանքի երեւոյթներին, չվախենալով, թէ կարող են դրա համար քեզ ինչ-որ տեղ նեղը գցել:

Իմ սերունդը, օրինակ, որ իր ստեղծագործական առաջին քայլերն էր անում այդ ծանր տարիներին, իմ կարծիքով, ամենադժբախտն է եղել իբրեւ գրական սերունդ:

Կային մարդիկ, ովքեր այսօր յաւ բանաստեղծներ, ընդհանրապէս մշակոյթի մարդիկ կը լինէին, բայց, ցաւօք, զոհ գնացին անհատի պաշտամունքին:

## ԱՂԱՒՆԻ

*Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ եւ հրապարակագիր Աղաւնի (աւազանի անունով՝ Աղաւնի Գրիգորեան) ծնած է 15 Յուլիս 1911ին, Արեւմտեան Հայաստանի Կարսի մարզի Տայշար գիւղը։ 1930ին կ'աւարտէ Լենինականի մանկավարժական հիմնարկը։ 1930–51 յաջորդաբար մաս կը կազմէ* «Գիտեր կանչ», «Աւանգարդ», «Կոլխոզնիկ», «Գրական թերթ», «Սովետական Հայաստան» *թերթերուն եւ Երեւանի ռադիոհաղորդումներու խմբագրութիւններուն, ապա կը պաշտօնավարէ Արտասահմանեան երկրներու հետ բարեկամութեան եւ մշակութային կապի Հայկական ընկերութեան մէջ։*

*1928ին, Աղաւնի կը տպագրուի առաջին անգամ ըլլալով, Լենինականի* «Բանուոր» *թերթին մէջ։ 1930էն սկսեալ ան կը հրատարակէ 25է աւելի հատորներ եւ գրքոյկներ, որոնց նշանաւորներն են՝* «Երեւանեան երգեր», «Շիրակ», «Ճամբորդների զօղանջը» եւ «Բարի լոյս, Արեգ»։ *Ան նաեւ թարգմանած է շուրջ 5 հատորներ, իսկ իր* «Շիրակ» *վէպը լոյս տեսած է նաեւ ռուսերէնով։*

*Աղաւնին պարգեւատրուած է «Աշխատանքային կարմիր դրօշի» եւ «Պատուոյ նշան» շքանշաններով։*

digitised by A.R.A.R.@

# ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գրականութեան եւ կուլտուրայի զարգացման համար խաղաղ մթնոլորտում հեռանկարներ են բացւում: Կուսակցութիւնը ՍՄԿԿ Կենտկոմի գլխաւոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովի միջոցով եւ նրա շնորհիւ փորձում է վերադարձնել կորցրած շատ բարի աւանդոյթներ, ամէնից առաջ՝ հրապարակայնութիւնը: Շատ մեծ բան է, երբ կարող ես առանց վախենալու ասել քո մտածածը, քո կարծիքը, քո վերաբերմունքը կեանքի երեւոյթներին, չվախենալով, թէ կարող են դրա համար քեզ ինչ-որ տեղ նեղը գցել: Համեմատաբար աւելի երիտասարդ սերունդը երջանիկ է նրանով, որ չի տեսել անհատի պաշտամունքի բռնութիւնները, երբ զգուշանում էիր քո միտքն ու մտածմունքը բարձրաձայն ասել: Իմ սերունդը, օրինակ, որ իր ստեղծագործական առաջին քայլերն էր անում այդ ծանր տարիներին, իմ կարծիքով, ամենադժբախտն է եղել իբրեւ գրական սերունդ: Մենք զգուշանում էինք մեր երգերուց, մեր զգացմունքները բացայայտելուց, գահամարւում էր քաղքենիութիւն: Եւ մեր մէջ, գրականութեան մասին մեր սերնդի մէջ, շատ բան մեռաւ: Մի բան է, երբ կարկուտ խփում է հասած արտին, բոլորովին այլ բան, երբ կանաչ արտն է խփում: Մենք կանաչ արտ էինք…: Հիմա, երբ յիշում եմ անհատի պաշտամունքի զոհ գնացած գրողներին, նրանց յարատեւող վաստակը, տեսնում եմ, որ նրանք իրենց թողածի, ստեղծածի բազմապատիկն ու հզօրագոյնը կը ստեղծէին, եթէ ճակատագիրն այլ կերպ դասաւորուէր: Ինչպէս, օրինակ, Չարենցը, Բակունցը եւ, ինչո՞ւ ոչ, մեր վրացի ընկերներից Պաոլօ Եաշվիլին, Տիցիան Տաբիձէն…: Այո՛, կորուստները միայն մերը չէին: Ռուս եւ այլազգի գրողներից շատերն են զոհ գնացել այդ դաժան ժամանակին: Նոյն զառը բաժակին արժանացաւ ադրբեջանցի մեր գրչընկերներից մէկը՝ սքանչելի բանաստեղծ Միքայէլ Մուշվիգը: Այս բոլորը չեմ ասում հին վէրքերը քանդելու համար, այլ ա՛յն բանի, որ այդ ամէնը այլեւս չկրկնուի՛, [illegible]: Այո, այդ ամէնը չպէտք է կրկնուի: Այդ գիտակցութիւնը գրողին պարտաւորեցնում է գրել, գրականութեամբ պայքարելու յանուն վեհ գաղափարների:

Մտածում եմ տարիների համագումարի իմ լաւագոյն ստեղծագործութիւններից մի յագեցած, ծանրակշիռ ժողովածու ներկայացնել, ուր տեղ կը գտնեն այնպիսի գործեր, որոնք գրուել են ժամանակին, բայց հրապարակ չեն հանուել: Դրանք թէ՛ արձակ, թէ՛ չափածոյ գործեր են, էսսէներ, յուշեր…: Իսկ յիշելու բան եւ ունեմ, շփուել եմ Չարենցի, Բակունցի, Շիրվանզադէի հետ, Սահարու, Միքայէլ Արմէնի եւ այլոց հետ ընկերներ ենք եղել: Եւ այդ ամէնը՝ ամէն մի յիշւող պատմուող գրուող, մի պատառիկ, մեր պատմութիւնն է: Կային մարդիկ, ովքեր այսօր յայտնի բանաստեղծներ, ընդհանրապէս մշակոյթի մարդիկ կը լինէին, բայց, ցաւօք, զոհ գնացին անհատի պաշտամունքին: Օրինակ՝ Սուրէն Թարխանը: Իսկ Եղիշէ Չարենցը, [illegible] Դեմիրճեանը Մեծ Հայրենականում ընկան…: Այսօր նրանց մեր կողքին չլինելը մեզ պարտաւորեցնում է աւելի՛ն անելու, նաեւ նրանց փոխարէն: Կան մարդիկ, ովքեր մտածում են եւ դեռ այդ մասին ասում բարձրաձայն, թէ երբ բաւական է, հերիք է անցեալի մասին խօսելը: Ո՛չ, եւ էլի՛ ոչ: Բաւական չէ՛, եւ չի՛ կարող լինել: Այդ ամէնի մասին խօսելը եւ զգաստացնում է մեզ, մշտարթուն պահում:

Գալիք տարում մտադիր եմ «Սովետական գրող» հրատարակչութեանը յանձնել տարիների իմ ստեղծագործական բերքի ընտրանին՝ մի քանի հատորով: Այնտեղ կը զետեղուեն ընթերցողին յայտնի «Շիրակ»ը, «Միշտ կանչող ձայներ» ժողովածուն, որ ՀՍՍՀ պետական մրցանակի արժանացաւ, բաւական թուով բանաստեղծութիւններ, պատմուածքներ, գրական յօդուածներ, եւ այլն…

Գրականութեան բարգաւաճումը, այո, պայմանաւորուած է խաղաղութեան գոյութեամբ: Ես շատ եմ գնահատում ընկեր Գորբաչովի՝ խաղաղութեան համար գործի դրած ազնիւ ջանքերը:

Ես, որ տեսել եմ պատերազմը, աւելի՛ եմ գնահատում խաղաղութիւնը:

ԱՂԱՒՆԻ

digitised by A.R.A.R.@



## ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ

*Արձակագիր եւ լրագրող Մարգօ Ղուկասեան ծնած է 17 Ապրիլ 1927ին, Լենինական։ Մինչեւ 7րդ կարգ կ'ուսանի Լենինականի թիւ 10 միջնակարգ դպրոցին մէջ։ 1941–1945 տարիներուն կ'աշխատի Երեւանի Հայկական գեղարուեստական արուեստանոցին մէջ՝ իբրեւ նկարչուհի, միաժամանակ ուսանելով Երեւանի թիւ 41 երեկոյեան բանուորական միջնակարգ դպրոցին մէջ, զոր կ'աւարտէ 1945ին։ Ապա կը յաճախէ Երեւանի պետական համալսարան, որուն բանասիրական հիմնարկի բաժինէն շրջանաւարտ կ'ըլլայ 1950ին։*

*1950–1957 կը պաշտօնավարէ «Պիոներ կանչ» թերթին մէջ՝ իբրեւ գրական աշխատող, իսկ 1957–67՝ իբրեւ բաժնի վարիչ։ 1967ին մաս կը կազմէ «Գարուն»ի խմբագրութեան՝ մինչեւ 1975 իբրեւ բաժնի վարիչ, 1975–79 տարիներուն՝ իբր պատասխանատու քարտուղար, որմէ ետք վերստին կը ստանձնէ բաժնի վարիչի պատասխանատուութիւնը։*

*1975էն սկսեալ, «Գարուն» ամսագրի մէջ իրեն վստահուած պատասխանատուութեան զուգահեռ՝ կը դասաւանդէ Երեւանի «Կ. Մարքսի անուան պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակական մասնագիտութիւններու ֆակուլտետի» լրագրութեան բաժնին մէջ։*

*Մարգօ Ղուկասեանի պատմուածքները, ակնարկներն եւ յօդուածներն բնարոշ էջեր ամփոփուած են «Բաց ցամաքի երկու միլիոն հարցերով» եւ «Նախնիների շառաւիղը» հատորներուն մէջ։*

Վերջին տարիներիս շատ ենք գրել ու լսել՝ անտարբերութիւն, որը չարիքից: Անհատի պաշտամունքից յետոյ ոչ բոլորը կարողացան թօթափել «շղթաները», եւ օդում ու գրչի ծայրին մնաց նոյն կաշկանդուած, միանըման, խեղդուկ շունչը:

Թերթերում իւրաքանչիւր պարբերութիւնից յետոյ մենք երկար հանդիպեցինք «բուռն, երկարատեւ ծափահարութիւնների»: Եւ հիմա, ինչքան ծանր է խոստովանել, որ երիտասարդական ուժը մեծ մասամբ ծախսուել է դարձեալ կեղծիքը պանծացնելու վրայ:

Ի դէպ՝ շնորհեալների մասին: Նրանք քիչ են, բայց կեանքի աղը նրանք են: Շնորհեալներին պէտք է պահպանել, որովհետեւ նրանք են կեանքը գեղեցկացնողը եւ առաջ մղողը:

digitised by A.R.A.R.@

Մ. ՂՈՒԿԱՍԵԱՆ

# ԱՀԱ ԵԿԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԸ

*Թթուածին կլանելու համար տարածութիւն պէտք է բացել:*

*Անխուսափելի մտորումներ: Չգիտեմ նոյնիսկ ինչից սկսել: Թերեւս մարդկանց անտարբերութիւնի՞ց: Վերջին տարիներս շատ ենք գրել ու լսել՝ անտարբերութիւն, որը չարիք է ծնում: Լրագրողները եւս անմասն չմնացին այդ չարիքից: Անհատի պաշտամունքից յետոյ ոչ բոլորը կարողացան թօթափել «շղթաները», եւ օդում ու գրչի ծայրին մնաց նոյն կաշկանդուած, միանման, խեղդուկ շունչը: Մի՞թէ անտարբերութիւն չէ, երբ ճշմարտութիւնը մամուլում լիարժէք չի տւում, կիսատ-պռատ է տւում կամ բոլորին թաքցնում է: Անտարբերութեան աւելի վտանգաւոր տեսակ կարո՞ղ է լինել:*

*Խոստովանենք, մարդիկ նախ սովորած էին դառնալ անտարբեր, ձեւանալ անտարբեր, գրել անտարբեր եւ, մանաւանդ, գրուածքի հանդէպ մնալ անտարբեր, քանի որ այդպէս ապրելն աւելի ապահով էր: Իսկ յետոյ, սարսափահար, դարձաւ սովորոյթ, անհատ մարդկանցից անցաւ դէպի բազմութիւնը եւ կամաց-կամաց հասարակութեան շատ անդամների ներքաշեց իր մէջ:*

*Պատմեմ մի դէպք. Համալսարանի նախավերջին կուրսում էի: Երեկոյեան ժամը 9ին դուրս եկանք եւ ինչ՝ բժշկական ինստիտուտից սկսած մինչեւ «Պլանի գլուխ» երկու շարքով բանւորներ էին կանգնած: Անսովոր էր: Ուսանողները կատակելով, ուրախանալով՝ պա՛հ-պա՛հ-պա՛հ, այս որտեղի՞ց այսքան բանւոր, բարի գիշեր մաղթեցին, անցան բանւորների արանքով, ցրուեցին տները: Այդ նոյն գիշեր արթնացայ աղիողորմ լացի ձայնից: Ականջ դրեցի, սարսռացի, զգալով, որ տարբեր տներից են լսւում ձայները.* «Շորերդ հագէք, քաղաքում խլրտում է ընկեր: Ամիրբեկենց, սրանց, նրանց, նրանց աքսորում են...»:

*Ամիրբեկի աղջիկը՝ Նազիկը, իմ մտերիմ ընկերուհին էր: Միայն իրենց տան՝ երկու տղամարդ կանգնած էին, իսկ իրենք լալով շորերն էին հաւաքում: Նազիկը սառած-նստած էր: Ես էլ լաց լինելով, սկսեցի օգնել Նազիկի մօրը, կապոցների մէջ դնել այն, ինչ մայրը կարեւոր էր համարում: Ախր, ինչի՞, ինչի՞ համար,— լալով հարցնում էի ես: Տղամարդկանցից մէկն էլ իր հերթին ինձ հարցրեց.*

*— Դու կոմերիտակա՞ն ես:*

*— Այո,— ասացի,— կոմերիտական եմ:*

*— Դէ՛ որ կոմերիտական ես, ձայնդ կտրի:*

digitised by A.R.A.R.@

Արիւնս սառեց երակներումս նրա ձայնի սառնութիւնից ու աչքերի մետաղափայլից: Նշանակում է, եթէ կոմերիտական ես, սիրտդ պէտք է քա՞ր լինի: Գութը պոկում էին մարդկանց սրտից: Իսկ գութ չունեցող մարդու սիրտը որեւէ բանի համար կը ցաւի՞: Մարդուն ստիպում էին շրջապատի հանդէպ անտարբեր դառնալ: Չէ որ անտարբեր մարդն աւելի ապահով վիճակում էր, միամտաբար, աւելի ենթարկուող, ուրիշներին դիմացաւանք չէր դառնում: Այդ գիշերը եւ լուսաբացին, յաջորդ ամբողջ օրը իմ տեսած բանտատարները եւ չտեսած հազարաւոր բանտատարները հանրապետութեան բոլոր գիւղերից ու քաղաքներից «քաղհանած» արած մարդկանց՝ ընտանիքներով հասցրին երկաթուղային կայարան, ապրանքատար վագոններին ի պահ: Հարեւաններից մէկին յաջողուել էր մի տոպրակ չոր հաց մտցնել Ամիրբեկեանց «քոչի» մէջ, աննկատ մնալով «տանողներից»:

Հազարաւոր սրտեր, յոյսեր ու հաւատներ խորտակուեցին այդ գիշեր. նրանցը՝ որ վագոնների մէջ գնում էին անհասցէ ճանապարհներով:

Եւ հազարաւոր սրտեր կուչ եկան, հոգիները սեղմուեցին, լռեցին՝ նրանցը, որ տեսան այդ ամէնը եւ ոչ մի բացատրութիւն չստացան:

«Տանողներից» շատերը գուցէ եւ չգիտէին, թէ ինչո՞ւ են տանում: Նրանց հրամայուած էր: Դա եւս սարսափելի էր, իրագործել մի հրաման, որի էութիւնը փակ է քո համար: Երեսունինը տարի է անցել, բայց ականջներումս է՝ «Դու կոմերիտակա՞ն ես» հարցը եւ աչքերիս առաջ է Աբովեան փողոցով իջնող բանտատարների շարանը, ու նրանցից մէկի մէջ, վարորդի խցիկին կռթնած հարսն ու փեսան, հարսի գլխին՝ պսակի քողը:

Դա 1949 թուականն էր: Ինչ խօսք, մարդկանց սիրտը «քարացնելու» միջոցառումները շատ վաղուց էին կիրառւում, եւ տասնամեակների ընթացքում այնքան խոր հետք թողեց, այնքան վախ ներշնչեցին, որ հիմա, թէեւ «բռնէ-բռնէի» ժամանակներն անցել են, բայց ենթագիտակցութեան անտեսանելի շերտերում նստուածքը դեռ կայ. ուրիշի դժբախտութեան դէպքում մարդիկ աշխատում են վանել իրենց խղճահարութիւնը նոյնիսկ, ասելով. եթէ խղճամ, իմ գլխին եւս կու գայ:

Ինչ սարսափելի բան. մարդու գութը ծածկուած է եղել կամ զոհուել ավտոմաթարից, իսկ ինքը ցաւակցողներին ասում է՝ եթէ ես ուրիշի չխղճայի, այս դժբախտութիւնն ինձ չէր պատահի: Բայց չէ՞ որ մարդիկ այդպէս մտածելու համար եւս մեղաւոր չէին, քանի որ ժամանակներ են եղել, երբ, եթէ ոչ իրենց, ապա ծնողների գթասրտութիւնը դատապարտւում էր օրէնքը կիրառողների կողմից. եթէ դու նրան պաշտպանում ես, համարում ես, որ նա արդար է, ո՛ւր քեզ, գնա՛ նրա կողքը նստիր:

Մամուլի աշխատողն էլ, չէ՞ որ, այդ ամէնը տեսնում ու իր մաշկի վրայ զգում էր: Նրա ձեռքը թուլանում էր: Կտրած ձեռքով մարդն ի՞նչ կարող է գրել՝ հազիւ, մի կերպ ուղղւում էին երեւոյթները՝ յանկարծ մի բան դուրս չգայ, իր գրածը իր դէմ չուռ չգայ: Ճշմարտութիւնը թաքցւում էր, եւ մամուլը հեղեղւում էր անատամ ու անկիրք խօսքի տեղատարափով:

1949 թուականը շատ նոր ժամանակ է: Դրանից առաջ՝ 1936–37 թթ. դպրոցահասակները մի ա՜յլ մթնոլորտում էին մեծանում: Երբեք չպէտք է մոռանալ՝ մանուկ հոգու վրայ դրուած կնիքը դժուար է ջնջել: Կեանքի հանդէպ մարդու վերաբերմունքը նախապատրաստւում է շատ վաղ հասակից: Եւ հասուն տարիքում նրա մտքի պայծառութիւնն ու ստեղծագործական թափը պայմանաւորուած է նաեւ մանկութեան տարիների ապրածով:

Երկրորդ կամ երրորդ դասարանում էի: Լենինականի 10րդ դպրոցի աշակերտ: Դրատախտակի վերեւում փակցուած էր Մարքսի մեծադիր նկարը, փառահեղ մօրուքի մէջ՝ ձիաւորի պատկեր: Կողքի դասարանում, էնգելսի

digitised by A.R.A.R.@

Նկարն էր, մօրուքի մէջ՝ ատրճանակով նշան բռնած մարդ:

Չծիծաղէ՛ք:

Մենք՝ մանուկներս, այնքան վառ, միաժամանակ այնքան հիւանդագին երեւակայութիւն ունէինք, շրջապատում կատարուածը մեզ այնպէս էր մտրակել, որ ուզածդ Ֆանտաստ գրողը գլուխը քարովն էր տալու մեր երեւակայութեան համեմատութեամբ: 25–30 երեխայ, հաւաքուած Մարքսի նկարի առաջ, իրար ցոյց էին տալիս մօրուքում «խճճուած» ձիաւորի պատկերը: Մենք գիտէինք, որ դասակարգային թշնամու մասը խառն է դրա մէջ: Դասամիջոցներին երամի նման թափւում էինք կողքի դասարանը, տեսնելու ատրճանակով նշան բռնածին: Իսկ դասի ժամանակ իրար ականջի փսփսում էինք, աչքով ունքով ցոյց են տալիս մեզ բաժին ընկած նկարը, նոր պատկերներ գտնում: Ուսուցիչը՝ իբր չէր նկատում: Եթէ նկատէր ու բարձրաձայն մի բան ասէր, գիտցէք՝ երեխաներ, դրատախտակին նայէք եւ ոչ Մարքսի նկարին, հնարաւոր էր, որ ուսուցչին մեղադրէին աշակերտների ուշադրութիւնը մարքսիզմի գաղափարներից շեղելու մէջ: Չէ որ երեխաները տանը պատմում են դպրոցի նորութիւնները, իսկ ծնողները կարող էին իրենց վերաբերմունքը ցոյց տալ:

Դժբախտութիւն է, երբ ճշմարտութեան ի յայտ գալու գաղտնի շրջանը երկար է տեւում: Մենք ինչքան երկար ծափահարեցինք՝ կեղծիքը պանծացնելու համար: Յիշում եմ, թէ ինչպէս համալսարանի մեծ դահլիճում դղրդում էին «փոթորկալի ծափերը», երբեմն այնքան երկար էինք «յոտնկայս» ծափահարում, որ ոտքներս թուլանում էին, բայց ով սիրտ կ'անէր առաջինը նստել: Թերթում իւրաքանչիւր պարբերութիւնից յետոյ մենք երկար հանդիպեցինք «բուռն, երկարատեւ ծափահարութիւններին»: Եւ հիմա, ինչքան ծանր է խոստովանել, որ երիտասարդական ուժերը մեծաւ մասամբ ծախսուել է դարձեալ կեղծիքը պանծացնելու վրայ:

Լրագրողներս նաեւ շատ երկար հաշուեցինք առաջնորդի անուան տառերը, որպէսզի, ինչպէս ընդունուած է ասել, յանկարծ սխալ «չգնայ»: Բանաստեղծը նրան արեւն էր պարգեւել իբրեւ «յաղթանակի շքանշանն»: Եւ ժողովուրդը հնչուն այդ խօսքը լսում էր յուզումով ու պատկառանքով: Դեռ յետոյ, երբ ճշմարտութեան ժամանակը յաղթէր կեղծիքի ժամանակին, ժողովուրդը պէտք է հիասթափուէր, ու անտարբերութեան ձեւ մի շերտ ակլանար, որովհետեւ պարզուելու էր՝ հաւատը, խոր հաւատը ուզուրպատորի է նուիրաբերել:

Եւ կորուստների նժարը պէտք է աւելի ծանրանար:

Լուսանկարներ, լուսանկարներ: Թերթերը հեղեղուած էին: Մանկական թերթի առաջին էջն ամբողջութեամբ գրաւուած էր, իսկ երկրորդ, երրորդ, չորրորդ էջերում հերթապահն ու սրբագրիչը հաշւում էին անուանատառերն ու մէկ էլ, հօպ, կէս գիշերին հերթապահութեան համարում՝ աւարտին բռնւում է սխալը, մազ էր մնացել, որ Ի.Վ. Ստալինի փոխարէն «գնար» Վ.Ի. Ստալին: Յաջորդ օրը, խմբագրութեան պատին փակցուած էր շնորհակալութիւնը՝ «Զգօն եւ աչալուրջ աշխատանքի համար»: Սխալ, որը սոսկ ուղղագրական չէր, այլ առիթ՝ գլխով պատասխան տալու:

Ի դէպ, դրանից մի քիչ ուշ, այդ նոյն տպարանի արճճով յագեցած օդում, լինոտիպ մեքենայի առաջ նստած էր նիհար, բարձրահասակ մի երիտասարդ, որն իր ուսանողութիւնը համատեղել էր տպարանի աշխատանքին: Շատերն էին գնում լինոտիպի արտագրամաս, յատուկ նրան նայելու, որ սիրտ էր արել գրել «Ահնիձոր»ը: Այդ ժամանակ շատերը դեռ չգիտէին, որ խմբագիրը ստիպուած թողնելու է իր պաշտօնը, որովհետեւ ճշմարտացի գործ էր տպագրել: Իսկ ինքը՝ հեղինակը, այսօր արդէն ՍՍՀՄ պետական մրցանակի

digitised by A.R.A.R.@

գափնեկիր Հրանտ Մաթեւոսեանը, դեռ երկար էր կանչուելու պատասխանատուութեան՝ իր չափը չիմանալու համար:

Այսօրուայ երիտասարդութիւնը, յատկապէս երիտասարդ գրողն ու լրագրողը, պէտք է իմանան այս ամէնը, պէտք է իմանան եւ արժէքաւորեն վերականգնման ընձեռած հնարաւորութիւնները: Նաեւ այդ ամէնը իմանալով է, որ պէտք է հասկանան, թէ ի՞նչն էր մամուլի գորշութեան եւ փակուածութեան պատճառը: Ի՞նչն էր պատճառը, երբ իշխանականացուած կեղծիքները պատկերացրած անելուց յետոյ էլ, կային մարդիկ, լրագրողներ, որ, օրինակ, Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի մասին գրուած յօդուածն սկսում էին այսպէս, «Ծուխն էր ելնում պայլան-պայլան եւ ցեմենտը պարկերով գնում էր դէպի շինարարութիւնն»: Ինչո՞ւ նա չգիտէր, որ այդ ծուխը ոչ թէ հրճուանքի առիթ է, այլ բնական միջավայրի հաւասարակշռութիւնը խախտող պատճառ:

Ժամանակաւոր յաղթանակները, թուացեալ ձեռքբերումները պանծացնելու սովորոյթը շատ ուժեղ է: Մէկ անգամ եւս ասենք՝ ոչ բոլորը կարողացան ազատուել դրանից: Եւ մինչ անտառն ու առողջարանային գօտին մեծ շառաւղով ձեռքից գնում էին (հիմա էլ դեռ գնում են) մինչ մի կողմից մարդիկ բողոքում էին ծխի դէմ, ապականման դէմ, միւս կողմից «պայլա՜ն-պայլա՜ն» փուքերով գովաբանում էին առերեւ յաղթանակները, չտեսնելու տալով խորքային պարտութիւնները:

Հիմքը պէտք է ամուր լինի: Ամէն ինչի հիմքը, շէնքի, բարոյականութեան, խօսքի...: Ես տեսել եմ ու գրել Ալեքսանդր Թամանեանի կառուցած թատրոնի հիմքերի մասին, տեսել եմ ու գրել Երեւանի Աջափնեակ թաղամասի անհիմք շէնքերի մասին: Երկուսն էլ հայ շինարարի ձեռքով են ստեղծուած: Բայց ինչ հակադրութիւն: Թամանեանի ստեղծագործական հիմքն, իրօ՛ք, յագեցուած էր հայ շինարարութեան եւ համաշխարհային կառուցողական փորձի ձեռքբերումներով: Մօտ քսան մետր խորութեամբ գետնի տակ գնացող թատրոնի զերօ կէտում կանգնած դիտում էի ոսկերչի հմտութեամբ եւ պողպատի ամրութեամբ կառուցուած բետոնէ հիմքերը, որոնց մասին ինձ ուղեկցող մասնագէտն ասում էր. «Հազար տարուայ համար է հաշուած»: Եւ հենց այնտեղ յիշում էի, թէ ինչպէս Աջափնեակի տասներեք-տասնհինգ տարուայ կառուցուած տներում մարդիկ բաց աչքով էին գիշերները լուսացնում, առաստաղի ճաքերի, պատերի ճաքերի ու փխրուն հիմքերի պատճառով: Չէ՞ որ Աջափնեակի կառուցողները Թամանեանի պէս նախորդ ունէին (էլ չենք խօսում հայ շինարարութեան պատմութեան մասին), ի՞նչ անցաւ-դարձաւ: Չմոռանանք, սակայն, Թամանեանին եւ նրա յետնորդներին բաժանում էր այնպիսի մի երեւոյթ, որը, թերեւս, կարելի է որակել որպէս բարոյականութեան տարբեր սկզբունք:

Թամանեանը աւազը լուանալ էր տալիս, որպէսզի մաքուր աւազը մտնէր շաղախի բաղադրութեան մէջ: Նա այլ կերպ չէր կարող: Նրա բարոյականութիւնը թոյլ չէր տալիս որեւէ զիջողութիւն՝ շինարարութեան կանոններից: Նրա համար անցնող ժամանակը այնպիսի արժէք էր, որի ընթացքում պէտք էր մնայուն արժէքներ թողնել: Նոյնիսկ ամենադաժան պայմաններում նա իրեն թոյլ չէր տալիս այլ կերպ վարուել: Սակայն յետոյ, առանց խղճի խայթի, մարդիկ անուն, պաշտօն, պարգեւներ վաստակեցին ոչ միայն առանց աւազը լուալու, այլեւ առանց աւազի ու ցեմենտի պատեր շարելու եւ հիմքեր կառուցելու համար: Եւ, առհասարակ, նուաճումների մասին թմբկահարողներն աւելի բարձր գնահատուեցին, քան իսկական կառուցողները:

Չափազանց դժուար է տարրալուծել այն երեւոյթները, որոնք հասունանալով անգնահատելի կորուստներ պատճառեցին մեր երկրին, մեր ժողովրդին: Այն ամէնը, ինչ արւում է կիսատ-պռատ, ինչ՝ առերես ճիշդ է, բայց

digitised by A.R.A.R.@

րատ էութեան սխալ, մինւ նոյն է, վերջը, ինչպէս ժողովուրդն է ասում՝ ջրի երես է ելնելու: Մեր հանրապետութեան բնութիւնը այսպիսի կորուստներ չէր ունենայ, եթէ կառուցողները հնարաւորութիւն չունենային, կիսատ-պռատ գործարանները յանձնելու համար փոխանցիկ դրօշներ եւ պարգեւատրումներ ստանալ, քիմիական գործարանների մաքրման կայանները չկառուցած՝ կարմիր ժապաւէնը կտրել: Իսկ դրանից յետոյ՝ արի ու տես, որ... կարող է պատահել այնպիսի միջադէպ, որի մասին հիմա պատմելու եմ:

Անցեալ տարի ամռանը ՍՍՀՄ գրողների միութեան Մերձմոսկովեան Պերեդելկինօ ամարանոցում էի: Զրոյցն այն մասին էր, որ առողջարար է թէյը պատրաստել վայրի բոյսերի խառնուրդից,— եղինջ, մորու եւ սեւ հաղարջի տերեւ, երիցուկ եւ դաղձ:

— Դաղձ որտեղի՞ց ճարենք,— ասաց թարգմանչուհի Էլլա Բրագինսկայան:

Մենք մի քանի անգամ զրուցել էինք, եւ ես, որ համակրել էի նրան, ուրախացած ասացի.

— Էլլա Բրագինսկայա, ես կ'ուղարկեմ, մեզ մօտ դաղձը շատ է:

— Ո՛չ,— ասաց նա, կտրուկ,— ձեզ մօտ ամէն ինչ յագեցուած է դաղով ու թունաւոր նիւթերով, շնորհակալ եմ առաջարկի համար, բայց չուղարկէք:

Կարծես անսպասելի ապտակ ստացայ: Շունչս կտրուեց: Մի պահ կարկամեցի, յետոյ ասացի.

— Ոչ ամէն տեղ, հեռու գիւղեր կան...

Իսկ նա, թէ՝

— Ես երկու անգամ եղել եմ Հայաստանում, արգենտինացի գրողների հետ, իբրեւ թարգմանչուհի, համարեա՛ ձեր բոլոր քաղաքներում եղել եմ:

Նա գիտէր Երեւանի օդի մասին, Սեւանի եւ իշխանի ողբերգութեան մասին, գիտէր Ալավերդու, Կիրովականի մասին:

Ինչքան էլ որ սիրտս խոցուեց, բայց ես գոհ էի, որ նա ասաց իր մտածածը եւ ոչ թէ՝ «զգացուած եմ, կանխաւ շնորհակալ եմ», իսկ ստանալուց յետոյ դէն նետէր: Միաժամանակ, ես հասկացայ, թէ մեր հանրապետութեան մտաւորականութիւնը ինչքան երկար է լռել ու յետոյ էլ, երբ սկսել է, ինչքան անարդիւնաւէտ է աշխատել, քանի որ չի կարողացել ոգեկոչել այն բոլոր ուժերը, որոնք, միասնաբար, գիտականից մինչեւ պետական-հասարակական գործիչ, պէտք է պահպանէին ո՛չ միայն մեր օդը, հողն ու ջուրը, այլեւ մեր համեստ ու գեղեցիկ, անմահական բոյրով ու բուժիչ յատկութեամբ օժտուած դաղձը:

Ինչո՞ւ իմ մտորումների մէջ ի պաշտպանութիւն դաղձի այսքան խօսք ասուեց: Դա անխուսափելի էր: Եղել են ժամանակներ, երբ իւրաքանչիւր ոք ընդհանուր գծի վրայ ընկած գնում էր: Ուղղ գծից դուրս դրեցիր՝ վերջացաւ: Համահարթեցման շրջան էր: Խօսքայինը, ճշմարիտը ընդյատակ էր անցել: Երբեմն նոյնիսկ ամբողջ գործարանի շահն էր հակադրւում նոյն քաղաքի բնակիչների շահին (հիմա էլ դեռ այդպէս է), հետեւաբար եւ՝ հենց գործարանի շահին: Ասածս մանրամասնեմ:

Տարիներ առաջ ՀՍՍՀ ստորգետնեայ եւ վերգետնեայ ջրերի պաշտպանութեան պետական կոմիտէի նախագահի տեղակալի մօտ էի: Հեռախօսազանգ: Զարմացած լսում էի, թէ ինչպէս բազմիցս կրկնւում է նոյն նախադասութիւնը. «Ինչպէ՞ս ստորագրեմ, երբ նորմաները չեն համապատասխանում պահանջուածին»:

Զանգը «Նաիրիտից» էր: Նրանք պնդում էին ստորագրել գրութիւնը, որ, իբր, շրջապատը՝ օդը եւ ջուրը, չեն աղտոտւում, որպէսզի յաւելեալ վճարը կարողանան ստանալ: Ես, ի հարկէ, չիմացայ, տեղեկանքն ստորագրուեց, թէ

digitised by A.R.A.R.@

*ոչ, բայց որ մի կողմը յամառօրէն հրաժարւում էր, իսկ միւսը յամառօրէն պահանջում, ակամայ ականատես եւ ականջալուր եղայ:*

*Շատ դժուար է հասկանալ այն մարդկանց հոգեբանութիւնը, երբ երեւութական չափը պաշտպանելով, աչքի տակ են տալիս հասարակութեան խօսքային չափը:*

*Խօսքի եւ գործի անհամապատասխանութիւն:*

*Հասարակութիւնը աւելի մեծ թշնամի կարո՞ղ է ունենալ, քան այս: Մենք ունենք հրաշալի օրէնքներ, որոնք, եթէ բծախնդրօրէն կիրառուէին (եւ կիրառուեն), տնտեսական, թէ բարոյական հողի վրայ աւելի ամուր կանգնած կը լինէինք: Ծանր է այն գրողի կամ լրագրողի վիճակը, որը ուսումնասիրելով դիցուք թէ «ՀՍՍՀ հողային օրէնսգիրքը», երես առ երես հանդիպում է այդ հումանիստական, արժէքաւոր, օգտակար օրէնքների խախտմանը: Նա համեմատում է օրէնքը եւ իրականութիւնը եւ ափ ի բերան է մնում... իրականութիւնից: Երկնս ծանր է նրա վիճակը, երբ գրում է այդ խախտումների մասին, տպագրում, իսկ «չնկատելու քաղաքականութիւնը» սառը ջուր է լցնում նրա եռանդի ու լաւատեսութեան վրայ: Տարիներ շարունակ այսպէս է եղել: Բայց ահա եկել են ժամանակներ, երբ յոյս է ծագում՝ օրէնքի պահանջը եւ իրական վիճակը պէտք է աստիճանաբար մօտենան իրար եւ միաձուլուեն: Մեր կեանքի յաղթանակներից յաղթանակը այդ է լինելու:*

«Մի վախեցէք պատերազմից եւ ռումբից: Վախեցէք բարոյական անկումից: Ամենասարսափելին այս է»: *Սրանք Մարիետա Շահինեանի խօսքերն են, ասուած 1978 թուականի Սեպտեմբերին, Հայաստանի գրողների միութեան մեծ դահլիճում: Այսօր, երբ կարդում եմ նրա խօսքից հատուկտոր գրառումներս, նորից ու նորից համոզւում եմ, թէ կեանքի մեծ փորձով եւ տաղանդի ուժով օժտուած գրողը ինչպիսի կրքով էր զգուշացնում կեղծիքից ու ճշմարտութեան կոչում մեզ՝ հայ գրողներիս ու լրագրողներիս:*

-«Ի՞նչն է ամենակարեւորը գրողի աշխատանքում, ինչ ապրում ես, տեսնում ես, զգում ես, պէտք է հաղորդես ընթերցողին: Գրողը վախենալու իրաւունք չունի: Նա պէտք է ասի այն, ինչ մտածում է»:

*Այդ օրերին, Մարիետա Շահինեանը կարդացել էր Լենինի նամակներից մէկը, որի մէջ ասուած էր.* «Այլախոհներին պէտք է պահպանել, նրանք են, որ նկատում են մեր սխալները: Նրանք մեզ շատ են հարկաւոր»: *Այս աւելուց յետոյ, կարծես ինքն իրեն, Մարիետա Սերգէեւնան ասաց. «Այլախոհ, այսօր ինչքան թարմ է հնչում»: Դա 1978 թուականն էր: Տասը տարի անց, մամուլում բացայայտ պէտք է խօսուէր՝ քանի-քանի ընդունակ ու մտածող մարդիկ զրկուեցին ստեղծագործելու հնարաւորութիւնից, ընկնելով «այլախոհ» պիտակի տակ:*

*— Հարբեցողութիւն, կաշառք, կեղծիք, այլասէրութիւն: Ի՞նչ անել այս մթնոլորտում: Ասել ճշմարտութիւնը: Ժողովրդի մէջ ճշմարտութի՛ւն ներարկել: Մի առաջնորդուէք ժամականի կարճ հաշուածով: Այլ նկատի ունեցէք մեծ ժամանակը, որի մէջ միայն ճշմարտութիւնն է մնում: Չի կարելի կեղծել ժամանակը: Պէտք է հեռուն նայել: Քանզի դարերի մէջ մնում է միայն ճշմարիտ գրականութիւնը:*

*Վերընթերցելով այս տողերը, ես խորապէս համոզւում եմ, որ Մարիետա Շահինեանը կանխազուշակում էր այսօրուայ օրը՝ վերակառուցումը եւ հրապարակայնութիւնը: Ահա եկել է ժամանակը:*

*Եւ այն, ինչում մարդիկ թերացել են անցեալում, պէտք է լրացնեն այսօր, քանի որ այդ թերացումները մեզ՝ թերացողներիս, այնքան չեն վնասելու (թէ մի կերպ համարուել ենք, եւ թէ ապրելու ժամանակ քիչ է մնացել), ինչքան, այսօր տակաւին անպաշտպան, մեր մանուկ սերնդին: Նրանց մէջ քա-*

digitised by A.R.A.R.@

*նի՛-քանի՛ շնորհեալներ են լինելու, որոնց մտքի եւ հոգու ուժով պէտք է խորանան ու հարստանան մեր ժողովրդի արուեստը, գիտութիւնը, գրականութիւնը, եւ պատմութիւնն իր երկարաձգեայ ճանապարհը պէտք է պատուով ընթանայ։*

*Ի դէպ՝ շնորհեալների մասին։ Նրանք քիչ են, բայց կեանքի աղը նրանք են։ Շնորհեալներին պէտք է պահպանել, որովհետեւ նրանք են կեանքը գեղեցկացնողը եւ առաջ մղողը։ Նկարիչ, երաժիշտ, գրող, գիտնական...։ Չէ որ տաղանդը քչերին է տրուած։ Մինաս Աւետիսեանի թաղման ժամանակ չեխ հայագէտ Լուդմիլա Մոսոլովայի հետ քայլում էինք կողք-կողքի։ Նա ասաց․* «Չկարողացանք պաշտպանել տաղանդաւոր զաւակին։ Պարոյր Սեւակ, Մինաս Աւետիսեան։ Մէկ էլ ե՞րբ ենք ունենալու»։ *Նրա ձայնի կշտամբական երանգը, վիշտը, ափսոսանքը այսօրուայ նման եմ յիշում։ Աշխատանքի բերումով առիթներ ունեցել եմ շփուելու հասարակութեանը մեծ ծառայութիւն մատուցած, գիտութեան մէջ ներդրումներ ունեցող եւ դեռեւս մեծ անելիքներով ծանրաբեռ մարդկանց։ Ծանր է, երբ տեսնում ես, որ յորովայնէ շնորհեալ մէկի ճանապարհը պատնէշւում է։ Այդ մէկն իր ուժն ու կորովը նուիրել ու նուիրելու էր մեր ընդհանուր գործին։ Սակայն՝ խոչընդոտ։ Երբեմն պայքարը աւարտւում է նրանով, որ նշանաւոր գիտնականը թողնում-հեռանում է։ Այդպէս պատահեց համաշխարհային հռչակի տէր բուսաբան Արմէն Թախտաջեանի հետ։ Նա գնաց Երեւանից, եւ լենինգրադցիներն ասացին․* «Շնորհակալութիւն հայերին, որ մեզ պարգեւեցին Արմէն Թախտաջեանին»։ *Երբեմն էլ անհաւասար պայքարը ողբերգական վախճան է ունենում, ինչպէս եղաւ Մեխանիկ Կարապետ Զորանեանի դէպքում, երբ մեծարժէք յայտնագործութեան հեղինակը տարիներով ստիպուած էր պատի մէջ պատուհան փորել, գոռալու համար․* «Օ՛դ տուէք, օ՛դ»։

*Պատասխանատուութիւն։ Այս յատկութիւնը մարդու հետ չի ծնւում, այլ դաստիարակւում է։ Մարդը ունենում կամ չի ունենում պատասխանատուութեան զգացում, նայած թէ ինչ մթնոլորտում է ապրում-մեծանում, ինչ մարդկանցով է շրջապատուած լինում։ Մեր ժողովրդի պատմութեան մէջ մնայուն օրինակներ շատ կան, երբ մարդը ունենում է պատասխանատուութեան խոր զգացում եւ դա՛ ի շահ ժողովրդի է ծառայում։ Կան նաեւ հակառակ օրինակներ։ Առաջիններից ուզում եմ բերել մի օրինակ, որը թէեւ մօտ 300 տարուայ վաղեմութիւն ունի, բայց իմ վրայ անջնջելի տպաւորութիւն է թողել։*

*Տարիներ առաջ, Պոլսի պատրիարքութեան վերաբերեալ նիւթեր կարդալիս, հանդիպեցի Գրիգոր Պատրիարքին՝ Շղթայակիր մականուամբ․*

«Գրիգոր Պատրիարք՝ շղթայ մը կ՚անցընէ վիզէն եւ կ՚ուխտէ այդ շղթան չհանել, մինչեւ որ Երուսաղէմի մեծագումար պարտքը վճարուի։ Ութ տարի շարունակ այն շղթան համբերութեամբ կրելէ վերջ, Գրիգոր Շղթայակիր, Կարապետ Ուլնեցի կաթողիկոսի հրամանով, 1726ին միայն կը հանէ զայն»։

*Տեսնո՞ւմ էք։ Մականունները երբեմն ինչքան խոր հիմքեր են ունենում։ Գրիգոր Շիրվանեցին իր պարտքը կատարելուց յետոյ միայն հանում է շղթան։ Եւ ազատ է այլեւս։ Գրողը, սակայն, յաւիտենական շղթայակիր է։ Նրա պարտքը երբեք չի մարւում։ Քանի նա ապրում է, եւ քանի ի վիճակի է գրիչ բռնել, նա պարտական է իր ժողովրդին։ Գրողի կոչումը աստուածային շղթայ է, ուստի եւ նրա կրողը իրաւունք չունի անժամանակ հանելու կամ շղթայի ազնիւ նիւթը փոխարինելու կեղծ համաձուլուածքով։*

***ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ***

digitised by A.R.A.R.@



## ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

*Բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր Ռազմիկ Դաւոյեան ծնած է 3 Յունիս 1940ին, Ապարանի շրջանի Մեծ Փարնի գիւղը: 1958ին կ'աւարտէ Լենինականի բժշկական ուսումնարանը, ապա՝ 1964ին՝ Երեւանի Վ. Բրյուսովի անուան ռուսական մանկավարժական հիմնարկի լեզուագրական բաժանմունքը:*

*1963–1970 կ'աշխատի «Գրական թերթ»ի խմբագրութեան մէջ: 1970–1977 մաս կը կազմէ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի անձնակազմին՝ իբրեւ աւագ խորհրդական: 1977էն սկսեալ կը պաշտօնավարէ ՀՍՍՀ ԳԱ արուեստի հիմնարկի մէջ:*

*Ռ. Դաւոյեանի առաջին բանաստեղծութիւնը լոյս կը տեսնէ 1957ին, Լենինականի «Բանուոր» թերթին մէջ: Ան ցարդ հրատարակած է աւելի քան 10 քերթողագիրքեր, որոնց գլխաւորներն են «Ռեքվիեմ», «Մեղրահաց», «Կեղեւը բաց արա», «Ձաք սալերը» եւ «Պղնձէ վարդ»: Ան նաեւ հրատարակած է վիպակ մը՝ «Թորոս Ռոսլին»:*

*Ռ. Դաւոյեանի բնորոշ քերթուածներէն ոմանք թարգմանուած են ռուսերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի, լեհերէնի, չեխերէնի, հունգարերէնի եւ այլ լեզուներու: Ան նաեւ արժանացած է Հայաստանի լենինեան կոմերիտմիութեան դափնեկիրի մրցանակին՝ 1971ին:*

---

**Մի՞թէ մենք իսկապէս այդքան զուտ էինք, որ ընդօրինակում էինք մեր պաշտօնական կեղծիքն ու անպաշտօն վախը, եւ մեր լուսաւորիչներին իրաւունք էր վերապահուած լուսաւորել միայն վարձու լապտերներով:**

---

**... Դեռեւս անտիպներ կան Թումանեանի, Իսահակեանի, Չարենցի արխիւներում: Իսկ սփիւռքահայ գրականութեան այսօրուան լաւագոյն հեղինակներից ոմանք ուղղակի անծանօթ են Սովետական Հայաստանի ընթերցողներին:**

---

**Բացայայտ սխալ են իմ այն հայրենակիցները, որոնց թւում է՝ հեռանալով ընդդարձակում են Հայաստանի սահմանները: Հայրենիքում ապրել եւ ստեղծագործելով է մեծանում հայրենիքը՝ ամէն իմաստներով:**

digitised by A.R.A.R.@

Ռ. ԴԱՒՈՅԵԱՆ

# ՀԱՅ ՄԻՏՔԻ ՄՇԱԿՈՅԹԻ ՖԵՆՈՄԵՆԸ

●

*Հիմա արդէն անվիճելիօրէն պարզ է, որ հրապարակայնութեան պայմաններում որքան աւելի շատ ենք խօսում մեր ո՛չ թէ «մասնակի թերութիւններին» (ինչպէս շատերը փորձում են առողջ ընթացքը դէպի հին, հիւանդ հունը ծռել), այլ՝ մեր* անփոխարինելի կորուստների *մասին, որքան աւելի բաց աչքերով ենք նայում այն ահռելի անդունդին, որտեղ թաղուած են մեր «առաջընթացն» ու «շէնշող վերելքը», այնքան աւելի լաւատեսութեամբ է համակւում ժողովուրդը եւ գօտեպնդւում է վերապրելու յոյսով: Հազարամեակներով այսպէս է եղել մարդկային գոյութեան բնականոն ընթացքը:*

*Թէեւ «Վերակառուցման լուսարձակը» երկրի վրայ շրջում է դեռեւս երկչոտօրէն եւ, մեր կորուստների խոր արմատները լուսաւորելու փոխարէն, յաճախ գրեթէ երկրորդական թերութիւններ է հանում արեւերես, սակայն կենտրոնական մամուլն իր զօրաւոր մատներով երբեմն շօշափում է արմատները, եւ ցաւի ալիքներ են բարձրանում:* Հարկաւոր է յիշել, որ այդ ցաւի ալիքները փակուած էին մարդկանց ներսում եւ աւերում էին նրանց բարոյապէս, ֆիզիքապէս, հոգեպէս, ու նաեւ նիւթապէս:

*Հիմա յոյսը, թէեւ կրկին երկչոտօրէն, բայց կամաց-կամաց տեղաւորւում է այնտեղ, որտեղ աշխարհի, ստեղծմանը նախորդող մութ ջրերի նման ծփում էին այդ ձայնազուրկ ալիքները: Կոլեկտիւացման, 37 թուականի, պատերազմի ու յետ-պատերազմեան շրջանի անհաշուելի զոհերն ու զրկանքները տարած ժողովրդին հարկաւոր է ինքնարտայայտում. Նա պիտի կարողանայ իր միջից դուրս մղել տասնամեակներով լերդացած կործանարար ազդակը, որպէսզի նրա տեղը վերջապէս արարման երաժշտութեամբ լցուի: «Վերակառուցման լուսարձակը» պտըտւում է երկրի վրայ, բայց արի ու տես, որ յաջողութեամբ նրանից դեռ կարողանում են խուսափել ո՛չ միայն առանձին մարդիկ ու մարդկային խմբեր, ո՛չ միայն ղեկավարներ ու մինիստրութիւններ, այլեւ՝ նոյնիսկ առանձին մարզեր ու հանրապետութիւններ: Անծրագիր ապրելու թմրեցուցիչ անդորրում մենք մեր տնտեսութիւնը յանձնել ենք պլանաւորողներին եւ մարակներն առած չրխկացնում ենք՝ կենսունակութեան ու աշխատանքի պատրանք ստեղծելու ակնյայտ միտումով: Մինչդեռ, եթէ դադարեցնենք ինքնահիացման կամ ինքնամերկացման ճառերը, տեղը կը մնայ անորոշութեանը դէմ առած մարդը, որ ո՛չ ինքն է պատկերացնում իր անելիքը, ոչ էլ մէկ ուրիշը, որ նրան ասի: Հէնց այդ պատճառով էլ չենք դադարեց-*

digitised by A.R.A.R.@

նում ճառերը: Նրանք, ովքեր պիտի գա անէին, սոսկ այդ մտքից յոգնում, ժանձրանում, թերեւս նաեւ զարհուրում են, էլ ո՞ւր մնաց՝ դիմէին գործնական քայլերի, անցը ի՞նչ են գնելու, ինչ գնելու էին, իրենց թւում է, ոչնչացրել են լրիւ: Բայց ընդունենք, որ սրա մէջ նաեւ բնականոն ընթացք կայ, հոգեւոր աշխարհում յեղափոխութիւնը միանգամից սրանչելի օրինակներ արձանագրեց, եւ մենք՝ հայերս, մեզ զգացինք եղբայրական մեծ ընտանիքի ո՛չ թէ կորցնող, այլ շահող անդամը՝ լիարժէքօրէն մերը համարելով Ռուսաստանի դարակներում փակուած գրքերն ու այլ դարակներում մնացած կինոնկարները, որոնք իրենց մէջ ազնուօրէն ներփակած դաժան, բայց թանկագին պատմութեան հետ լոյս աշխարհ եկան: Ինչպէս շնչակտուր սպասում էինք, այդպէս լիաթոք շնչեցինք ու... կանգ առանք: Իսկ մե՞րը: Մի՞թէ մենք իսկապէս այդքան զուրտ էինք, որ ընդօրինակում էինք միայն պաշտօնական կեղծիքն ու անպաշտօն վախը, եւ մեր լուսաւորիչներին իրաւունք էր վերապահուած լուսաւորել միայն վարձու լապտերներով: Մենք ինչո՞ւ չենք ստեղծել մեր չապագրութիւնը, որ տուեալ ժամանակի իսկական պատմութիւնը պիտի լինէր: Այս հարցը չի ձեւակերպւում՝ իբրեւ անցեալի վերագնահատութիւն, այլ ձեւակերպւում է՝ իբրեւ ապագայի գործունէութեան ծրագիր: Չենք ստեղծել, որովհետեւ՝ կա՛մ մեր ակրերն էին այնքան դաժան, որ ստեղծել փորձողներին ենթարկում էին անմարդկային զրկանքների եւ կամ էլ զրկանքների մէջ մեր միտքը ամլանում է: Այս վերջինն ուղղակի ծիծաղելի է, որովհետեւ հայ գրիչն ու պատմիչը, հայ բանաստեղծն ու փիլիսոփան ինչ ստեղծել են՝ ստեղծել են զրկանքների մէջ: Ա՞յս է ձեր ուզածը: Ախր, սա ի՞նչ սկզբունք է, որով ապրում ենք մենք, ինչո՞ւ ենք ինքնագոհ պտտւում ինքներս մեր շուրջը՝ երբ արդէն «սանձահարել» ենք «անսանձներին»՝ կտրելով նրա հացն ու ջուրը, փակելով նրա երկինքն ու ասպարէզը:

Այդ հոգեւոր ամլութիւնը, որ հենց ինքներս ենք մեր ձեռքով կազմակերպել մեզ համար, այսօր էլ դեռ շարունակւում է՝ քանի մեր յանիրաւի տուժածներին իրաւունք է տրւում մխիթարուել միայն ուրիշների արդարութիւնը վերականգնուած տեսնելու օրինակով: Գրողների մեր համագումարը թող անցնի այնպէս, ինչպէս նախատեսուած է՝ «առանց աղմուկի եւ աւելորդ կրքերի բորբոքելու», իսկ եթէ այդպիսի բանի կարիք ունենք, Մոսկուայում կը խօսեն, դու էլ կը լսես, եթէ անհատի պաշտամունքի դաժան տարիներ են եղել, կենտրոնական մամուլն ամէն օր գրում է, կարդացէք՝ որքան ուզում էք, իսկ եթէ շատ էք ուզում, որ հայերէն կարդաք, մենք մարդիկ կ'ուղարկենք Մոսկուա, նրանց հետ հարցազրոյցներ կ'անեն, կը տպենք՝ կարդացէք, միայն թէ այնտեղ չէք գտնի այն խորքն ու սրութիւնը, որ դրուած են նրանց մոսկովեան հարցազրոյցներում:

Մենք երկրորդուած ենք, երկրորդականացուած ենք, ածանցեալ մի բան: Հայոց մտքի տեսակը ճանաչում չի գտնում, չի գործում իբրեւ միաւոր: Իսկ պարզից էլ պարզ է, որ լեզուն ու մշակոյթն են բնորոշում ազգի հոգեւոր կերտուածքը, դիտութիւնը չի բնորոշում: Եթէ Չեքիջեանի երգչախումբը կայ՝ իբրեւ ազգային երգարուեստի նմոյշ, ապա՝ մեր ազգային հին երգի բազայի վրայ, կամ՝ եթէ մեր նկարչութիւնը մի կարճ ժամանակ առաջատար զարգով միութենական ասպարէզում, ապա՝ տաղանդին անհատների գերմարդկային ճիգերի շնորհիւ, որոնք եռանդուն կերպով իրենց կապն էին փնտռում մեր ազգային նկարչութեան ակունքների հետ: Եւ, այնուամենայնիւ, այս բոլորը կայուն չէ, քանի որ այդ բոլորի, ինչպէս նաեւ թատրոնի, կինոյի, անգամ ճարտարապետութեան բազիսը հանդիսանում է խօսքը: Եւ նկատի ունեմ հայոց լեզուամտածողութիւնը, քանի որ, կրկին յիշենք, ամէն բան նախ ծնւում է մարդու մտքի մէջ եւ յետոյ միայն գտնում է իրականութիւն: Մինչդեռ

digitised by A.R.A.R.@

մտքում ծնունդն արդէն իրականութիւն է, անգամ՝ եթէ բարձրաձայն չասուի, բայց նա պահանջ ունի ձեւ ստանալու, արտայայտուելու: Հայոց մտքի ստեղծարար տեսակը ծնուելով ու չարտայայտուելով, ըկանքի ենթարկուեց այդ դաժան մարտում. հիմա հարկաւոր է նրան գուրգուրանքով ոտքի հանել, ինչպէս կոչ է անում կուսակցութիւնն այսօր՝ հրապարակայնութեան ու վերակառուցման քաղաքականութեամբ: Իսկ մենք ցուցափորէն ուշանում ենք եւ՛ որոշումներ ընդունելիս, եւ՛ իրագործելիս: Մենք մեզ համարում ենք Արեւելքի եւ Արեւմուտքի հանգոյց եւ բացասական բաներն իրագործում ենք արեւմտեան արագ գործարարութեամբ, իսկ դրականները քնեցնում ենք արեւելեան ծոյլ ու դանդաղ կեանքի թմբիրի մէջ: Մենք թողնում ենք, որ հայ ընթերցողը խօսքի ազատութեան իր քաղցը յագեցնի օտար նիւթի վրայ, ապազգային կերակուրով, իսկ իրեն ընդունի իբրեւ դեսերտ, մինչդեռ ճիշա հակառակը պիտի լինէր՝ ելնելով հայոց բնատնիքի մաքրման, կազմակերպման ու ամբողջացման շահերի դիրքերից: Այն, ինչ հայ ընթերցողին ենք տուել Լեւոն Շանթի, Յակոբ Օշականի, Համաստեղի գործերից, նրանց ահռելի վաստակի մի չնչին մասն է կազմում միայն, իսկ Աւետիս Ահարոնեանը, Դաւիթ Անանունը եւ ուրիշներ դեռ սպասում են իրենց «հերթին»: Այս ընթացքում կարող էր արդէն հրատարակուած լինել Մաղաքիա Օրմանեանի «Ազգապատում»ը, որ թէեւ հայոց հոգեւոր կեանքի միակ անընդմէջ պատմութիւնն է, բայց իր մէջ աշխարհիկ կեանքի ուշանչելի պատմութիւններ է պարունակում եւ ընթերցւում է յափշտակութեամբ: Այս բոլորն ասելով, ի նկատի ունենանք, որ դեռեւս անտիպներ կան Թումանեանի, Իսահակեանի, Չարենցի արխիւներում: Իսկ սփիւռքահայ գրականութեան այսօրուան լաւագոյն հեղինակներից ոմանք ուղղակի անծանօթ են Սովետական Հայաստանի ընթերցողներին:

Ահա, թէ ինչ պատկեր ունի հոգեւոր վերակառուցումը մեզ մօտ՝ Հայաստանում: Տասնամեակներով կուտակուած վախը յամառում է, տեղի չի տալիս, իսկ նրանք, ովքեր ստեղծել են դա, թէեւ բարձրաձայն չեն կարողանում տապալել հրապարակայնութեան կողմնակիցներին (իրաւունք չունեն), բայց բազմանշանակ հայեացքներով չարունակում են քաշքշել հրէշին, որ նա չհառանջի: Մի՞թէ այլեւս պարզ չէ, որ ընդվզողները ո՛չ թէ հայրենիքի դաւաճաններ էին, այլ՝ իսկական հայրենասէրներ:

Եթէ կաշառակերութեամբ ու բացայայտ գողութեամբ ապրող տարբեր աստիճանաւորման եւ հասարակութեան տարբեր խաւերից բաղկացած մի ստուար զանգուած զուտ քծնծացով ու թերհաւատութեամբ է նայում վերակառուցմանը, դա, թէեւ անընդունելի, բայց հասկանալի է, հասարակութեան թոյլ տուած պայմաններում նրանք ձեւաւորուել են իբրեւ այդպիսին՝ թալանողներ եւ մտքի ու հոգու ճորտացման պայմաններում «ձեռք բերածն» աշխատում են չկորցնել, քանի մտածում են (եւ դա նրանց մտածելու ունակութեան գագաթն է, նաեւ՝ միանգամայն իրաւացի), մտածում են, թէ ուրիշ որեւէ բանի համար, որ իրենց հասարակութեան լիարժէք անդամը պահէր, իրենք անպէտք են: Նրանք, ինչ խօսք, պարզապէս իրաւացի չեն: Նրանք լաւ գիտեն, որ իրենց թալանածով իրենց մի քանի սերունդ կը գոյատեւէ (անշուշտ միայն ֆիզիքապէս) եւ իրենց տեսակը պաշտպանելու համար վերակառուցմանը դէմ են դուրս գալիս, որ էլի կուտակեն՝ էլի սերունդների համար...: Ես ուզում եմ նրանց միամիտ մտահոգութիւնը ցրիւ տալ, ասելով, որ յաւիտենութեան համար կուտակել չեն կարող, մինչդեռ «նիւթի բարձրութիւնից» նրանց արհամարհանքն իրենց ցեղակիցների վրայ, հոգեւոր աշխարհում նիւթապէս աղքատ ապրող իրենց եղբայրների վրայ, աղատատել չկարողացող իրենց հարազատների վրայ կարող է յաւիտենական, ասել է, թէ՝ կործանարար ատելութիւն ստեղծել իրենց հանդէպ: Ժողովուրդը հազար անգամ իրաւացի

digitised by A.R.A.R.@

է՝ «Քամու բերածը քամին էլ կը տանի»: Աւել է, թէ՝ Թալանածն ապառնի է: Անապատի մասին նրա՞նք գիտեն՝ գարրնի որդի գարրին, չինարարի որդի չինարարը, հողագործի թոռ հողագործը, հայթուխի ծառանց հայթուխը, դերձակի քուռակ դերձակը, որ… լափողի ծառանց լափողի համար ամէն տեսակի զգեստ պիտի կարի…: Այս խօսքիս վրայ շատ իրական պատկերացնելով, թէ ի՞նչ է կատարւում մարդկային հասարակութեան մէջ, գրեցի՝ «լափողի ծառանց լափողի համար պատանք պիտի կարի…» եւ խմբագրին էլ «պատանք» բառը ջնջեց, տեղը գրելով «զգեստ», յիշելով, որ այդ բառն իսկի էլ տեղին չի, տխուր խորհրդածութիւնների տեղիք է տալիս: Այո, ուզում եմ ասել, թէ ճիշտ նոյն ձեւով էլ հասարակութիւնը ներում է նրանց, իսկ նրանք արհամարհում են նաեւ այդ ներողամտութիւնը: Բայց չէ՞ որ կը գայ օրը, երբ այլեւս չի ներւի:

Ես ուշադրութեամբ եմ կարդում կուսակցութեան ամէնօրեայ յայտարարութիւնը՝ «Յեղափոխութիւնը շարունակւում է»: Սա միանշանակ յայտարարութիւն է, այսինքն՝ ո՛չ թէ նոր յեղափոխութիւն ենք սկսում, այլ շարունակում ենք. ուզում եմ աւելի մանրամասնել, այսինքն՝ արեան այն բաժինը, որ պարտադիր թափւում է յեղափոխութեան ժամանակ, մենք տուել ենք, դեռ ուելիով: Իսկ հիմա պիտի փորձենք չափել չեղուած ընթացքը, որ նոյնպէս անհաշուելի կորուստներ է պատճառել մեզ: Հիմա պաշտօնից հեռանալը կործանման հաւասարազօր համարելը նոյնպէս մեր այլանդակ ապրելաձեւի փաստերից է, մարդու ոչ լիարժէքութեան ցուցանիշը. կաղապարը նրա բովանդակութիւնն է, կաղապարից դուրս ինքը գոյութիւն չունի: Մարդու արժէքը բարձրացնելով միայն կարելի է արմատախիլ անել այդ արատաւոր մտածողութիւնը: Իսկ մարդու արժէքը բարձրացնել հնարաւոր է միայն նրա հոգեւոր աշխարհը մաքրելով ու հարստացնելով, նրա ընչաքաղցութեան իմաստազրկութիւնը բացայայտելով, բայց մինչ այդ, կամ, որ նոյնն է՝ դրան հասնելու համար, պէտք է ամէնից առաջ վերականգնել պետական վերաբերմունքը ազնիւ աշխատաւորի եւ ազնիւ մտաւորականի հանդէպ, քանի որ կենդանի օրինակն է ամենազգայուն դաստիարակիչը:

Անկեղծ ասած, ես չէի հաւատում, որ դժբախտութիւնից դուրս գալու համար, այսքան իրական հնարաւորութիւն ստեղծելու պայմաններում, այսքան յամառ ու տեւական պայքար կը սկսուի: Ինձ թւում էր՝ մարդիկ անհամբեր սպասում են դրան, եւ ձեռք ձեռքի տուած, իրար օգնելով, պիտի փորձեն վերացնել գէթ այն արատութիւնները, որոնք մութ ու մռայլ տարերքի մէջ ոտնակոխ տալով, «առաջ էին սլանում», չգիտեմ, թէ՝ ուր: Բայց հիմա հասկանալով իմ յիշած զանգուածի թերահաւատութիւն ցուցադրելու պատճառները, ինձ զարմանալի է թւում, որ դրա սուտերը շշուկներով տարածւում է նաեւ ժողովրդի մէջ, եւ ժողովուրդն էլ ընդունում է այդ շշուկները, քանի որ մի տեսակ կորցրել է աշխատելու դարաւոր ու աշխարհապաշտպան վարժութիւնը. «Ո՞ւմ է պէտք, ազնիւ աշխատանքը մեր իրականութեան մէջ չի գնահատւում»: Գնահատողները պիտի սա հասկանան, եւ եթէ խեղաթիւրուած են վերակառուցում, թող սկսեն հենց դրանից՝ արժանին արժանաւորապէս գնահատելուց ու վարձատրելուց: «Սովետական Հայաստան» թերթի վերջին համարներից մէկում արձակագիր Գ. Չէյթունցեանը մտահոգութիւն է յայտնում, թէ հրապարակայնութեան պայմաններում Հայաստանից արտագաղթել ցանկացողների դիմումների քանակը շատացել է եւ դա կապում է նաեւ արժանին արժանաւորապէս չգնահատելու հետ: Սա համազգային մտահոգութիւն է, եւ՝ իրաւացի: Հին տարուայ ամռանը ես Ամերիկայի Միացեալ Նահանգներում էի եւ Վաշինգտոնում ՍՍՀՄ դեսպանատան աշխատակցի հետ զրուցելիս, լուրեր էի առնում ՍՄԿԿ Կենտկոմի յունիսեան պլենումի աշխատանքներից: Դեսպանութեան քարտուղարն անհատական նախաձեռնութեան օրէնքի մասին

digitised by A.R.A.R.@

*յայտնելիս, ժպտալով ասաց, թէ ինքը կարծում է, որ հայերն իրենց նախաձեռնութեամբ կարող են գերազանցել բոլորին, վկայ՝ ամերիկահայութիւնը, որ շատ կարճ ժամանակում իր հունարով մեծ յաջողութիւնների է հասնում: Նոյնիսկ նրանց, որ արտագաղթել են Հայաստանից, կորած համարել չի կարելի: Թէ ի՞նչ յաջողութիւնների են հասնում հայերն Ամերիկայում եւ ինչպէս են ապահովում իրենց նիւթականը, սա առանձին խօսակցութեան նիւթ է, բայց որ անկեղծ զրոյցի պահին նրանք բաց են անում եւ ցոյց են տալիս իրենց սրտերի վրայ ծանրացած ահռելի քարը, սա միանգամայն ճշմարտութիւն է: Շատ չուտով նրանք հասկանում են, որ իրենց կեանքը զրկուել է բովանդակութիւնից, եւ դա այնպիսի մի վիշտ է, որ ամէն մէկին չես բացատրի եւ ամէն պատահածի ցոյց չես տայ: Այդ պատճառով էլ երբեմն խփւում են ինքնարդարացման պատերին, երբեմն էլ են չպրտւում դէպի ցինիզմի կրկէսը, բայց իրականում ապրում են Հայաստանի հանդէպ անասելի կարօտի վիճում: Ճիշտ կամ սխալ, նրանք գրեթէ համոզուած են, որ իրենց կեանքը պիտի աւարտեն Հայաստանում: Սակայն արժէ յիշատակել, որ իսկական հայրենատէրներն այդպէս չեն վարւում, եւ խօսքս հաստատելու համար, ուզում եմ մէջբերել Պլուտարքոսի նշանաւոր արտայայտութիւնն՝ իր ծննդավայր փոքրիկ քաղաքի մասին, որ սազական կը հնչի մեր փոքրիկ հայրենիք Հայաստանի վերաբերեալ: Պլուտարքոսը Դեմոսթենեսի վարքագրութեան մէջ խօսելով մեծ քաղաքներում կատարուող մեծ գործերի մասին, գրում է՝* «Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ապրում եմ մի փոքրիկ քաղաքում եւ որպէսզի այն աւելի չփոքրացնեմ, պիտի շարունակեմ այսուհետեւ էլ այնտեղ ապրել...»: *Բացայայտ սխալ են իմ այն հայրենակիցները, որոնց թւում է՝ հեռանալով ընդարձակում են Հայաստանի սահմանները: Հայրենիքում ապրելով եւ ստեղծագործելով է մեծանում Հայրենիքը՝ ամէն իմաստներով:*

*... Եթէ ես սեւեռուեմ այն մտքի վրայ, որ Երեւանի աղտոտուած օդի մէջ նստած, ատոմակայանը կողքիս, անցեալի ու երէկուայ անասելի կորուստների բեռը ուսերիս, գրիչ եմ բարձրացնում՝ իմ ժողովուրդին բարի խօսքեր ասելու եւ այդ խօսքերը չեմ գտնում, ուրեմն՝ պէտք է դռները փակել, իջեցնել վարագոյրները, լոյսերը մարել եւ աշխարհի հետ հաշիւները համարել փակուած: Սակայն գիշերով անգամ Երեւանի առատաբուխ լոյսերով ցոլցլում են Արարատ լեռն ու համայն Հայաստանի սահմանները, եւ մեր ժողովրդի համար իմ մէջ զօղանջում են յաւիտենութեան հետ կապուած նշանակելի բառեր, որոնք շատ չուտով կը զօղանջեն զէնքերից մաքրուած աշխարհի վրայ, Երեւանի մաքրուած օդում է համայն հայութեան մաքրամաքուր հոգիներում, առանց տարբերութեան՝ ե՞ս կ՚ասեմ այդ բառերը, թէ՞ իրենք:*

*ԽԱՉՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ*

*1987 թ.*

digitised by A.R.A.R.@



Մի՞թէ կարելի է մոռանալ, երբ շէյքսպիրեան օրերին Անգլիա պէտք է մեկնէր հայ բեմի, սովետական բեմի Օթելլոն՝ նրան շռայլակեցին Անգլիա: Ինչպիսի՞ դառնութիւն ապրեց մեծ դերերգակը:

## ՎԱԼՏԵՐ ԱՐԱՄԵԱՆ

Սոսկալի եւ վիրաւորական է, երբ զգում ես, որ հանդիսատեսն ինքը չի եկել թատրոն, այլ նրան բերել են:

*Արձակագիր եւ թարգմանիչ Վալտեր Արամեան ծնած է 15 Յուլիս 1909ին, Վաղարշապատ (այժմ Էջմիածին) քաղաքը։*

*1932ին, Վալտեր Արամեան կ'աւարտէ Երեւանի Համալսարանի լեզուագրական բաժինը։ Երկար մը կ'աշխատի Միքայել Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ, ապա կը նուիրուի զուտ գրական աշխատանքներու։*

*Վալտեր Արամեան ստորագրած է 15 անուն մեծ ու փոքր գործեր, որոնց նշանաւորներն են՝* «Ցայգայի օրէնքը», «Ռուսա, որդի Արգիշտիի», «Ընկած ծառը», «Միթէ քոյրը եղ գարճան», «Վերադարձ», «Զարմանալի տարիներ», *որոնց առաջին երկուքը լոյս տեսած են նաեւ ռուսերէնով, առանձին հատորներով։*

*Վալտեր Արամեան ռուսերէն թարգմանած է նաեւ զանազան ժողովուրդներու հեքիաթներ, պատմուածքներ ու վիպակներ, որոնք ամփոփուած են իրեն հատորներու մէջ։*

Առայժմ մենք շատ ենք կորցրել եւ քիչ գտել:

digitised by A.R.A.R.@

Վ. ԱՐԱՄԵԱՆ

# ԵՍ ԹԱՏՐՈՆ ԳՆՈՒՄ ԵՄ, ԲԱՅՑ

*Բոլորովին պատահականութեան արդիւնք պէտք է համարել այն, որ բանաստեղծներու, գրագէտներու, քննադատներու ու հրապարակախօսներու կողքին՝ կանխող էջերուն անց արուած է բացառապէս պաստառի ու բեմի ներկայացուցիչներուն՝ հանրածանօթ արուեստագէտներ Սերգէյ Փարաճանովի, Սոս Սարգսեանի եւ ռուս դերասան Միխայիլ Ուլեանովի խորհրդածութիւններուն: Ու եթէ մինչեւ հոս յիշեալ արուեստագէտները իրենք կը խօսին իրենց եւ այլոց ստացած ամրացնող հարուածներուն մասին, հետագայ էջերուն դրող Վոլտեր Արամեան կը պատկերացնէ բեմի ուրիշ երկու ներկայացուցիչներու՝ Արման Կոթիկեանի եւ Վահրամ Փափազեանի կեանքէն առնուած որոշ դրուագը, որոնք բեղուն ու երջանիկ գործունէութեան մը վրայ լոյս նետել ուզեն, իրենց կարգին՝ կը վկայեն արուեստագէտներուն ահագնացող կարգադրութիւնը խօսող ստալինեան ու պրեժնեւեան հարստահարող լուծին մասին...*

*Ուշացումով բացեց տան դուռը.*

*— Այդ դո՞ւ ես, մամ՛ը, մամ՛ը: Ինչ լաւ է, որ եկար,— ասաց:*

*Գրասեղանի վրայի Թղթերի կոյտի մէջ կորած լուսամփոփը հազիւ էր լուսաւորում սեղանին դրուած գրքերից մէկի բաց էջը: Արմանը նայեց ինձ ակնոցի վերեւից, ժպտաց, նստեց աթոռին, մատը դրեց գրքի բաց էջի վրայ.*

*— Նայիր, նայիր, դու աս լաւ գիտես, անշուշտ, դեռ տասնինը թուականներին սեւս ինչ է գրել Եղիշէ Չարենցը Կարինէ Քոթանճեանի մասին.*

«Թէ Կարինէ Քոթանճեանին տեսնէք Կարսի փողոցներում —
Ասէ՛ք նրան՝ Չարենցն ասաւ — մնաս բարո՛վ. մնաս բարո՛վ»

*Ես ուզում եմ քեզանից լսել, դու գիտես, ի հարկէ, թէ որտե՞ղ է մեռել Կարինէ Քոթանճեանը եւ նա մատը վերցրեց բաց գրքի էջի վրայից եւ մանկան հետաքրքրութեամբ լայն բացած աչքերը յառեց ինձ վրայ:*

*— Այո, գիտեմ,— ասացի:*

*— Կարո՞ղ ես ասել ինձ,— նա նորից նստեց աթոռին, գրիչն էր փնտրում, որ ասածս գրի առնէր:*

digitised by A.R.A.R.@

— Գրել հարկաւոր չէ,— ասացի ես նրան,— Կարինէ Քոթանճեանը կենդանի է, կայ:

Արմանը նորից ուշքի կանգնեց.

— Էհ, կատակելու բան չկայ,— ասաց,— ես յիրիկական մի բանաստեղծութիւն եմ գրել, ուզում եմ երկու տողը ճշտուած լինի: Ասածդ հիմա ճշմարի՞տ է, թէ՞ ուրիշից լսածդ ես կրկնում:

— Այնքան է ճշմարիտ, Արման, որ եթէ ցանկութիւն ունենաս, ես քեզ կը տանեմ նրա տուն, եւ դու նրան կը տեսնես, հետը կը խօսես:

— Ո՞ւր պիտի տանես ինձ, Կա՞րս, թէ՞ Թոխմախ գէօլ:

— Քեզ կը տանեմ Ազատութեան փողոցի նոմեր չորս տունը:

Արմանը զուարթացաւ, նա չէր սպասում իրեն անհանգստացնող այս հարցի այսքան պարզ լուծմանը:

Երեք օր յետոյ իմացայ, որ Արմանն արդէն շատերին է ասել, թէ Կարինէ Քոթանճեանը ողջ է, թէ ինքը շուտով տեսնելու է նրան, հետը խօսելու:

Դերասանների մի մեծ խումբ հաւաքեց Արմանը, նրանց հետ էր նաեւ Խաչիկ Դուշանեանը, ուսուցիչներ կային, կինոյի աշխատողներ: Գնացինք Ազատութեան փողոցի չորրորդ տունը: Մէկ յարկանի, գետնի վրայ կառուցուած շատ հին տուն էր, որտեղ Կարինէ Քոթանճեանը զբաղեցնում էր երկու սենեականոց մի բնակարան: Կարինէն ինքը դուրս եկաւ փողոց եւ դիմաւորեց մեզ փողոցում: Երբ տեսաւ հաւաքուած դերասաններին, շփոթուեց: Բոլորն էլ հերթով մօտեցան նրան, գրկեցին, համբուրեցին ճերմակ ծամերը եւ արդէն կնճռոտած ձեռքերը: Բոլորն էլ յուզուած էին անսպասելի հանդիպումից: Իսկ Արման Կոթիկեանը, մի քանի քայլ հեռու կանգնած՝ նայում էր Կարինէ Քոթանճեանին անթարթ աչքերով ու տեղից չէր շարժւում: Կարինէն նկատեց նրան եւ ինքը մօտեցաւ, գրկեց նրա վեր բարձրացած ուսերն ու մեղմ ձայնով ասաց.

— Չափէն աւելի ուրախ եմ, սիրելի Արման Կոթիկեան, քեզ այսքան մօտիկից տեսնելու համար:

Արմանի աչքերը թրջուեցին. ո՞վ գիտէ, ինչ էր մտածում նա այդ պահին:

Կարինէ Քոթանճեանն իր տարիքի համեմատ թարմ էր ու գեղեցիկ, առանձնապէս գեղեցիկ էին մնացել նրա կրակոտ աչքերը, ջերմ ու հմայիչ: Գեղեցիկ էր նրա ձայնը, խօսում էր հանդարտ, ժպտալիս էլ այտերի վրայ փոսիկներ էին գոյանում: Կանացիութիւնը դեռ չէր կորցրել Կարինէն: Նրանք համարեա՝ գրկախառնուած անցան տան շեմից:

Փոքրիկ հին տնակը լցուեց դերասանների աղմուկով: Բոլորն էլ միանգամից ուզում էին խօսել:

— Սպասէք, սպասէք, սիրելիներս,— ասաց Կարինէն,— ես հասկանում եմ, դուք հիմա Եղիշէին էք փնտրում, նա միշտ էլ այստեղ է, բայց ես նրանից համարեա՝ ոչինչ չունեմ, բացի մի նուիրական բլուզից, որ տարիներ շարունակ հագնում էինք փոխէփոխ՝ մէկ ես, մէկ ինքը, կարեւոր այցելութիւնների ժամանակ,— ասաց, մտաւ վարագոյրի ետեւը եւ քիչ յետոյ դուրս եկաւ ուկրաինական թեք օձիքով բլուզը հագին:

Դերասանները երկար մնացին նրա տանը: Կարինէն հիւրասիրեց նրանց: Նրանք Չարենց արտասանեցին, Դուշանեանը յուշեր պատմեց: Ժան Էլոյեանը կարդաց «Խմբապետ Շաւարշը»: Կարինէն արտասւում էր, նրա լացն անգամ գեղեցիկ էր:

— Կարինէ՛, դու տեսած կա՞ս այդ խմբապետ Շաւարշը,— հարցրեց Արման Կոթիկեանը, որ նստած տեղը մոմի նման վառւում էր:

digitised by A.R.A.R.@

— Ես համոզում էի խմբագրելու Շուարշի նախատիպ Շուարշին: Լավ է, որ հիմա կարող եմ մոտավորապես ներկայացնել ձեզ,— մի պահ լռեց Կարինեն և ապա շարունակեց,— մարդ-երևույթն առհասարակ անկրկնելի է. Կը զարմանաք երևի, եթե ասեմ, որ խմբագրելու Շուարշի նախատիպը կիրթ մարդ էր, էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտած: Նա Եղիշէի մոտ մարդկանցից էր և ինքն իր մասին ասում էր. «Հաւերի հետ քուն եմ մտնում, աքաղաղների հետ արթնանում»: Ահա և նախատիպ Շուարշի լուսանկարը:

Նա սեղանին դրեց ժամանակից դեղնած մի լուսանկար, որտեղից մեզ էր նայում հանդարտ, խաղաղ ու երազկոտ դեմքով մի տղամարդ:

— Բոլորովին նման չէ,— արտաբերեցին բոլորը միասին:

— Խմբագիր Շուարշը Եղիշէի բորբոքված ուղեղի արգասիքն է,— շարունակեց Կարինեն,— խենթացած, խելքը ասես կորցրած, յախուռն ու ահաւոր դժբախտ մարդու կատաղությունն ու ցասումը թուրք դահիճների դեմ, որոնք Հայերի դեմ ունեցած իրենց անզորությունից կատաղած՝ կանանց, երեխաներին ու ծերունիներին էին կոտորում:

Հրաժեշտի պահին Կարինէն յանկարծ սարսափած ճչաց.

— Աստուած մի արասցէ, որ ձեզանից մէկն ու մէկը վաղը չլինի,— ես չեմ դիմանայ այդ ցաւին:

Աւա՜ղ, չարերը պակասեցին, զարմանալի արագութեամբ անցան-գնացին, եւ Կարինէ Թոթանճեանը իսկապէս չդիմացաւ այդ ցաւին:

Նրա թաղմանը Արման Կոթիկեանը երեխայի պէս լաց եղաւ:

Արմանը հիւանդ էր, գնացինք տեսութեան. տունը տիպիկ ինտելի-գենտ մարդու օջախ էր՝ գրքեր, լուսանկարներ, նշանաւոր նկարիչների գոր-ծերը պատերից կախուած: Մի հին կոմոդ, կարծեմ նաեւ «Զինգեր» տեսակի կարի մեքենայ, խալի, մետաքսէ ծածկոցներ, բարձեր, մութաքաներ: Ժան Էլոյեանը, ձեռքերը խոթած գրպանները, քայլում էր սենեակներում եւ նայում պատերին ու առաստաղին: Յանկարծ մի տեղ կանգ առաւ, մատը վեր ցցեց եւ զարմացած նայեց պատին:

— Ի՞նչ է, Ժան, այդ ինչ ես տեսել պատի վրայ,— հարցրեց Արմանը:

— Դատարկ տեղ եմ տեսնում, Արման: Այդ ինչ նկար ես իջեցրել պա-տից, որ տեղն այդպէս դատարկ է մնացել:

Արմանը քթի տակ խնդաց, նայեց շուրջը, սպասեց, որ կինը դուրս գայ սենեակից, նոր միայն ասաց.

— Այստեղ երկար ժամանակ կախուած էր կնոջս ամուսնու լուսանկա-րը: Այ կնիկ — արդէն ասել էի շատ անգամներ — այս մարդը մեղք է, ո՛ր մեղ-քի համար ենք սրան այսպէս պատժում: Տասը տարուց աւել է այս պատից կախուած՝ գիշեր-ցերեկ մեզ է նայում, հանէ պատից, ամօթ է: Կինս լսում էր ինձ, բայց լուսանկարը հանել չէր ուզում: Եւ, վերջապէս, մի օր էլ հանեց: Ի՞նչ արեց՝ չգիտեմ, բայց պատի վրայ այդ լուսանկարի տեղը մնաց:

— Հանիր, այդ տեղն էլ հանիր, Արման, տեղը թողնելը տղամարդու գործ չէ: Լենինականցիները եթէ տեսնեն, վրադ անեկդոտ կը կպցնեն:

— Դու չկպցրի՞ր հիմա,— ծիծաղեց Արմանը: Ժան Էլոյեանը շարու-նակում էր շրջել սենեակներում եւ նայել պատերին ու առաստաղին:

Այդ զուսպ, պետական խոստովանութեան հասած՝ դերասան, բանաս-տեղծ, թարգմանիչ Արման Կոթիկեանը կեանքից հեռացաւ իր հետ գերեզման տանելով իր շնորհքների, տաղանդի մեծագոյն մասը: Նա փաստօրէն բեմ չու-նեցաւ, որտեղ կարող էր ցուցադրել իր տաղանդի մեծութիւնը, կինոէկրան չունեցաւ իր մեծութեան համեմատ: Նա կարծէք մէկ անգամ իջել էր Ցակոբ

digitised by A.R.A.R.@

Պարոնեանի, Երուանդ Օտեանի ովկիանոսային նաւերից, մնացել ցամաքի վրայ եւ նորից նաւ վերադառնալ չէր կարողանում՝ ովկիանոսային նաւերը գետերին չէին մտնում: Նա սպասում էր առափնեայ ուղղութիւնների վրայ, նա երազում էր Շանթի «Հին աստուածները», Հաուպտմանի «Ջրասոյզ զանգը» եւ գիտէր, որ երազանքներին սահման չի լինում: Նրա համեստութիւնն ու բարոյական բարձր յատկանիշները թոյլ չէին տալիս սողալ, խնդրել կամ կռանալ որեւէ կաշառակերի: Նա փաստօրէն մնաց կուլիսների ետեւում, գնաց դէպի կինոն, յոյս ունենալով, որ այնտեղ կարող է պէտք լինել: Բայց այնտեղ էլ տեղ չտուեցին, օգտագործեցին միայն փոքրիկ, էպիզոդիկ դերերում, չվստահեցին, չհասկացան այդ մեծ դերասանին, թէ՞ հասկացան, բայց չուզեցին: ԻՆՉՈ՞Ի չուզեցին:

Այս ԻՆՉՈՒՆ պատասխանելով պէտք է արտասանել հիմա, բարձր ձայնով: Այս հարցն անպատասխան չպէտք է մնայ, որովհետեւ վերաբերում է նաեւ մեր կոմեդիայի ժանրի շատ դերասանների, որոնք այդպէս էլ մնացին արուեստի կէս ճանապարհին եւ ապրուած բաւարարուեցին եղածով: Նրանց մի մասն էլ, ճիշտ է, բեմեր ստացան, բայց խաղացին օրուայ չարիքները ծաղրող պիես-«յօդուածներում» եւ զաւեշտական բեմադրութիւններում, որտեղ նրանցից պահանջւում էր միայն արտասանել տափակ սրախօսութիւններ, բթացած անեկդոտներ, իրենց հոգուն անյարիր յօդուածներ:

Մեր աչքերի առաջ անցաւ-գնաց Թատրոնի ոսկէ սերունդը, հայ բեմի վիթխարի մեծութիւնների ընտրանին, որ պատիւ կը բերէր աշխարհի մեծամեծ բեմերին եթէ յայտնուէին նրանց վրայ: Մի՞թէ կարելի է մոռանալ, երբ շէյքսպիրեան օրերին Անգլիա պէտք է մեկնէր հայ բեմի, ողբերգական բեմի Օթելլոն՝ նրան չուղարկեցին Անգլիա: Ինչպիսի՞ դառնութիւն ապրեց մեծ ողբերգակը: Մի՞թէ հնարաւոր է ներել, ներողամիտ լինել այն անձանց նկատմամբ, որոնք նոյնիսկ արժանի չհամարեցին մի քանի մետր կինոժապաւէն նուիրել եւ նոյն Փափազեանին նկարել ժապաւէնի վրայ, ձայնագրել կամ մի ամբողջական ֆիլմ նկարել նրա խաղացած դերերից: Այդ բանը կարող էր անել թատերական ինստիտուտը եւ պահել որպէս ոսկէ ֆոնդ իր ուսանողների համար: Չարեց: Նրա խաղը կը տեսնէին, ձայնը կը լսէին: Այնքան հեշտ բան է հիմա մեր օրերին նման բան իրականացնել, բայց չարուեց: Փափազեանին, Հրաչեային, միւսներին, կարելի էր կենդանի պահել ո՛չ միայն ուսանողների, այլեւ՝ փարբերի համար, մարդկութեան համար: ԻՆՉՈ՞Ի չարուեց, ո՞ւմ կարելի է ուղղել այս հարցը, որպէսզի պատասխան ստացուի:

Սրանից մի երկու ամիս առաջ երիտասարդ արձակագիրներից մէկը մի գաղտնիք յանձնեց ինձ եւ խնդրեց, որ պահպանեմ այն: Վահրամ Փափազեանը բարկութեան պահին ասել է նրան. «Մանչս, մենք անհետ պէտք է կորչենք, եւ այդ մեղքը փաթաթուելու է Հայկինոյի վզին: Ի՞նչ բան է մեր դարում կինոժապաւէնը, ամենասովորական մի ապրանք, որը վաճառքի է հանւում նոյնիսկ խանութներում: Ով կ'ուզի, նա էլ կ'առնի: Հայկինոն խնայում է, բայց այն ստեղծուած է նկարելու եւ ոչ թէ խնայելու համար, չեն նկարում»:

Զայրոյթը՝ զայրոյթ, բայց փաստն աններելի է: Ես հիմա չեմ ուզում թուել մեր մեծերին առանձին-առանձին, նրանք կարծես բոլորն էլ միասին գնացին: Դերասաններ քիչ ունենք, բայց ունենք դերասաններ ուսուցանող ինստիտուտ: Եթէ դերասան էլ ունենք, ապա թատրոնն է իջել թերթային, կենցաղային յօդուածներ բեմականացնելու աստիճանին: Ռեժիսորներն աշխատում են կեղծ պաթոսով լցնել, ճիչերով ու աղմուկներով հարստացնել

digitised by A.R.A.R.@

մեր մեծերի բեմերը, կարծելով, որ եթէ շատ աղմկեն, փոր պատռելու չափ բղաւեն, դրանով կը համոզեն, որ տաղանդաւոր են:

— Մեր վիճակն աւելի ծանր է,— ասաց մի լուրջ դերասան,— հանդիսատես չունենք, չեն գալիս: Ներկայացումները նայելու համար՝ աւտոբուսներով բերում են շրջաններից՝ կոլտնտեսութիւնների, սովխոզների կամ պրոֆմիութիւնների նախօրօք գնած տոմսերի հաշուին: Եւ ահա մենք վարագոյրների ետեւից նայում ենք դահլիճին, յետոյ նաեւ բաց բեմից, եւ ո՜վ սարսափ, կարծէք դահլիճը դատարկ լինի: Երեւում է, որ նրանք չգիտեն ինչու են եկել, մենք էլ չգիտենք ինչու ենք խաղում: Ի հարկէ, մեր խաղը չի ստացւում, նրանք էլ ննջում են դահլիճում կամ զրուցում իրար հետ:

Եւ ահա այս քաոսի մէջ կորչում է դերասանը, կորչում է նաեւ իսկական թատերական հասարակութիւնը, որ այնքան հարուստ եւ տաղանդաւոր էր Երեւանում: Թատրոնն առանց իր մշտական հանդիսատեսի նոյնն է, թէ մանուկը զրկուի իր սնուցող մօրից: Թատրոն եւ հանդիսատես կապը գրեթէ կտրուած է մեզանում: Սոսկալի եւ վիրաւորական է, երբ զգում ես, որ հանդիսատեսն ինքը չի եկել թատրոն, այլ նրան բերել են: Եւ այդ հազարամեայ թատրոնի դռների, մուտքերի մօտ, կուլիսների ետեւում ծերանում ու աղաւում են գուցէ եւ տաղանդաւոր դերասաններ, որոնք յանձնարարութիւններ չունեն, որոնք մի օր կարող էին մի նոր Հրաչեաներ ու Գուլազեաններ դառնալ:

Մենք նաեւ տաղանդաւոր ռեժիսորներ ունենք, բայց չենք ուզում անուանել նրանց, գուցէ այդ նրանից է, որ սեպ է խրուած Թատրոնի եւ Կինոյի ռեժիսորների միջեւ: Կարծէք արուեստի տարբեր, նոյնիսկ օտար ճիւղեր լինեն դրանք, որ իրար հետ չեն առընչւում: Թատրոնի եւ կինոյի միջեւ վիհ է առաջանում եւ քանի գնում, այնքան աւելի վտանգաւոր է դառնում այդ վիհը հէնց իր՝ թատերական մշակոյթի համար: Կինոն մեքենայացուած է, նա կարող է առաջ անցնել, հնարքներն ու տեխնիկան շատ է նրանում, արագութիւնը մեծ է, բայց այն զրկուած է թատրոնի հնարաւորութիւնից եւ ազդեցութեան չափից: Ինձ թւում է այս արուեստները իրարից չպէտք է շատ հեռանան: Հենրիկ Մալեանը, նաեւ Արման Մանարեանը իրաւացի են, երբ փորձում են հաստատ կամուրջ գցել այդ անջատման վիհի վրայ: Բայց մի օր նրանք էլ կարող են անուշադիր դառնալ մեր կորչող արժէքների փրկութեան գործում: Առայժմ մենք շատ ենք կորցրել եւ քիչ գտել:

ՎԱԼՏԵՐ ԱՐԱՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@



## ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ

*Ծնած է 24 Յունուար 1947ին, Երեւան։ 1970ին աւարտած է Երեւանի Համալսարանի բանասիրական ֆակուլտետի լրագրական բաժինը։ Առաջին բանաստեղծութիւնը լոյս կը տեսնէ 1962ին, «Պիոներ կանչ» թերթին մէջ։ 1979–81 թուականներուն կ'աշխատակցի Հայաստանի գրողներու միութեան մէջ՝ իբրեւ գեղարուեստական գրականութեան քարոզչական բիւրոյի տնօրէնի տեղակալ։ 1981էն ի վեր «Գրական թերթ»ի բանաստեղծական բաժնի վարիչի պաշտօնը։*

*«Դէպի տունը երգի» բանաստեղծական ժողովածուի համար՝ Սամուէլ Կոսեան արժանացած է ՀԼԿԵՄ Կեդրոնական մրցանակին։*

*Լոյս ընծայած է բանաստեղծական երեք ժողովածուներ «Գոյներ», «Դէպի տունը երգի» եւ «Լուսաբացի թռչուն»։*

*Սամուէլ Կոսեան կատարած է նաեւ շարք մը թարգմանութիւններ՝ ռուսերէնէ եւ լիտվերէնէ։*

**Թերեւս յոգնել ենք հրամաններից, եւ ժամանակ է, սովորենք արարել ինքներս մեր հրամանով, բնական համարելով մեր իւրահատուկ քայլն ու արարմունքը։ Սա է ամենադժուարը, դրժուար, որովհետեւ սխալ է կարծել, թէ իրենք հեշտութեամբ կը զիջի։**

**Նրանց մեթոդները ծանօթ են մեզ, այդպէս մենք երկար ենք ապրել, համարեա՛ անբարոյականութեան հասցրնելով մարդկանց խաբելը, թէ վաղն ամէն ինչ լաւ կը լինի։**

**... Ստալինիկներն իրենց հրահանգավարչարարական բարձունքից իրենց ներկայացնում էին անառարկելի եւ անբնարկելի, իրենց ուժեղ զգալով ոչ թէ անհատականութիւնների, այլ ենթակաների, ճնողների ու շողոքորթների շրջապատում։**

digitised by A.R.A.R.@

# ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՋԻՂԸ

★

Հիմա մենք փորձում ենք վերագտնել, վերադառնալ յինքնեան ակունքներին, եւ մեր նպատակը իրական եւ ազդեցիկ կը լինի, եթէ այն հիմնաւորելու պատուաստենք մեր հողում ու օդում, այլ ոչ թէ ենթարկուենք նրան, որպէս դրսից արուած պարտադիր հրամանի: Թերեւս յոգնել ենք արդէն հրամաններից, եւ ժամանակն է, սովորենք արարել ինքներս մեր հրամանով, բնական համարելով մեր իւրաքանչիւր քայլն ու արարմունքը: Սա է ամենադժուարը, դժուար, որովհետեւ սխալ է կարծել, թէ հինը հեշտութեամբ կը զիջի: Անցեալի անէրի զինադրութիւնը, յամառութիւնն ու երազանքը՝ տանել նեղ կաղապարների, դեռ կենսունակ է, պատրաստ մանեւրելու ամենատարբեր պայմաններում անգամ: Նրանց մեթոդները ծանօթ են մեզ, այդպէս մենք երկար ենք ապրել, համարեա՝ անբարոյականութեան հասցնելով մարդկանց խաբելը, թէ վաղն ամէն ինչ լաւ կը լինի: Այնպէս ենք անջրպետել խօսքը գործից, որ հեռ ենք գցել ո՛չ միայն անհատականութեան գաղափարը, այլեւ խորթացել ենք քաղաքական ամենապարզ ըմբռնումներն անգամ: Առօղ գաղափով՝ հաւ-հաւ ենք գնացել, բայց այդ բոլորը մեր կենսագրութիւնից իւելով, քանիցս ջնջելով բիւրոկրատների չրաղացքին: Նման պայմաններում ակնկալել ուելիքն, քան եղել է, միամտութիւն է, անօգուտ կարճատեսութիւն: Ճիշդ է Այթմատովը, թէ ազատ քաղաքացիներով հասցրէ թէ հնարաւոր լինի հարուստ հասարակութիւն կառուցել: Բայց մենք հեռուոգատկանօրէն գա էինք ուզում անել, մեր բոլոր խնդիրը հասցնելով համարեա՝ աբսուրդի: Եւ սառցում էր այնպէս, որ պայքարում էինք ոչ թէ աղքատութեան, այլ հարստութեան դէմ, որպէս, գոյութեան օրինաչափութիւն, ընդունելով նոյն դասը: Եւ ամէնը փակ, տեսակ պարզած մի քանի պինդ անձնականութեան ըղոընդներ՝ «Ամէն ինչ մարդու համար», «Յանուն մարդու», եւ այլն: Զարմանալի է, որ բոլորս էլ գիտէինք, որ դա է ճիշդը՝ մարդու համար, բայց երեւի ունէն էր քիչ կամ չանկութիւնն էր նուազ, որ դեմոկրատական այդպէս էլ չկարողացաւ ազատուել յանուղներից: Իսկ դեմոկրատիա, թէկուզ բուտաֆորիկ, անհրաժեշտ էր, պարզապէս անխուսափելի: Եւ ահա յայտնւում էին որոշումներ յանուն որոշումների, ռեֆորմներ յանուն ռեֆորմների եւ բոլորը՝ միաձայն ընդունուած: Իսկ մեխանիզմը շարունակում էր գործել հին ռեժիմով: Դեռ ուշ էին: Արուեստ եւ գրականութիւն, որոնք ամբողջութեամբ դեմոկրատիայի համարեա՝ դրօշակակիրներ էին, ռոմանտիկ նախաձեռնութեան քարտեզը մարմնացումներ: Հաշիւի նման գրանք փորձում էին վարդագոյնել իրականութիւնը, իդէալականացնել անճանաչ գործունէութեան սահմանները: Միաժամանակ եւ միաձայնակ, այդ ստեղծագործութիւնները գուրկ էին բարդութիւններից: Ահա որտեղ ձեռնարկութիւնն է

դայիս միւսներից ոչինչով աւելի չընկնող մէկը: Կոլեկտիւում գործերն այնքան էլ լաւ չեն, բայց բոլորը հաշտուել են եղած վիճակին, իսկ ահա այս մէկը չի ուզում հաշտուել համատարած ձեռնարկութեան հեգինակութեան: Դժուար է նրա գործը. մարդիկ վարժուել են լճացմանը եւ գիտակցում են ներքուց մինչեւ վերջին ատրճանակութը: Բայց մեր հերոսը ընկճուողներից չէ: Եւ մէկը միւսի ետեւից, ասես հրահանգով, բոլորը յուում են բիւրոկրատիզմի իրենց զէնքերը, անսպառ ճշմարտութեան եւ արդարութեան ձայնին: Այդ ստեղծագործութիւնները հենց այսպէս էլ վերջանում են՝ յաղթանակով: Իսկ իրականում… արդեօ՞ք նախաձեռնող եւ արդիւ մարդիկ ողբերգութիւններ ապրեցին, բիւրոկրատական եւ քաղքենի թշնամիներից, լռեցին ասպարէզը, անցք զիջելով բազմաթիւ յաջողակ ֆրազաբաններին: Այս կորուստների չափն էլ հնարաւոր չէ ճշտել, որովհետեւ ստալինեանները իրենց գործն անում էին ճշմարտութեան եւ արդարամտութեան անունից, որովհետեւ ստալինեաններն իրենց հրահանգաւորագիտական քարոզներից իրենց ներկայացնում էին անսասանելի եւ անփոխարինելի, իրենց ուժեղ գլխով ոչ թէ անհատականութիւնների, այլ ենթակաների, քծնողների ու շողոքորթողների շրջապատում: Եւ հենց այդ օրերին էլ կարծիք ունենալն անկասկած գործօն մեծապէս դաւհանալի եւ նոյնքան անվտանգ, առանց գրանցման, օրէնքի ուժ ստացան: Ստալինեանները ամէն ինչ անում էին, որպէսզի «ենթակաները» գցեն ու ընդունեն իրենց առաջնայնութիւնը եւ գանում էին հարկերը, հեռարձակողները, չէ՞ որ մեծ փորձ կար արդէն: Եւ օր-օրի, կրկնելով իրենց բարգաւաճման ասպիճանից, սառել չեն գործեն էին թերկանշարում երկրի յաջողութիւնները, օր-օրի, աշխատասպանող առաջընթացի աճեմին ասել խարխլելով թէ երկրի անտեսութիւնը եւ թէ հոգեւոր դէմքը: Երկար տարի է անցել այդ ողբերգական պլենումից, վերակառուցման եւ երկիրը դեմոկրատացման ուղիով տանելու ծրագրի հրապարակումից: Ճշմարտն է փոխուել այս տարիներին, սակայն այսօր էլ չի կարելի փաստ լինել, թէ թուլացել են բիւրոկրատների ու քաղքենիների դիրքերը եւ արդեօ՞ք վաղը նոր սառցեններ եւ բրեժնեւներ չեն ծնուելու: Ահա թէ ինչու անհրաժեշտ է, որպէսզի կուսակցութեան համամիութենական XIX կոնֆերանսը բեկումնային լինի՝ թէ՛ կուսակցութեան պատմութեան եւ թէ պետութեան համար, գործնականօրէն քննարկուի եւ կոնկրետ պլաններ մշակի՝ ի շահ վերակառուցման յաղթանակի: Ժամանակն է, որպէս-

ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## ԶԳՈ՛ՅՇ ԵՂԷՔ, ՄԱՐԴԻ՛Կ...

[illegible]

[illegible]

Ես իմ կեանքը տարայ, որպէս վէրք ու դրօշ.
Ու բարձրացայ յամառ՝ մթին անդունդն ի վեր,
Ես թրծեցի հոգիս տարտարոսի հրով՝
Որբի նման անօգ եղայ, որբի պէս վեհ:

Անարցունք ու անլաց՝ ես կորցրի ամէնն՝
Ինչ իմաստն էր կեանքի, կախարդանքը նրա:
Թողի, որ մկները իմ գրքերը ծամեն,
Մտայ մի անանուն ու ահաւոր մրափ...

Ու երբ ես զարթնեցի տասնեօթամեայ քնից,
Ու երբ քայլամոլոր նորից աշխարհ մտայ,
Չկար արդէն դեւը, նա, որ մի գլխանի՝
Միլիոն գլուխ կերաւ ու մավզոլէյ մտաւ:

Իշխում էր չուգունէ սապոգաւոր Ներօ
Երեւանի վրայ բիրտ ու անբարտաւան,
Տքնում էր սրբազան Քանաքեռի լեռը,—
Կանգնել էր իր արձանն օտար մի մարդասպան:

Ու առաջին անգամ հայ բանաստեղծը նենգ
Նրա փառքը երգեց քսու եւ լորձնաշուրթ,
Զոհեց խիղճ ու հոգի, ծախեց քնար ու երգ,
Գրչի տեղ նա թռնեց բանսարկութեան դաշոյն:

Այդ նրան նա երգեց, ժա՛նտ դահճին՝ որ պոկեց
Ժողովրդի սրտից Խանջեան մի Աղասի,
Չարենց մի Եղիշէ, Ալեքսանդր մի Բակունց,
Լուսէ զաւակներին Գորիսի եւ Ղարսի...

Նա կռնակից խփեց, երբ զոհերը իրա
Նստած էին անել, մթին զնդաններում,
Ու սողոսկեց նրանց պատուանդանի վրայ
Որպէս հտպիտ ու գող, որպէս մանր Ներոն:

Կեանքից ստացայ ես արեւ ու քնար,
Ու կողոպտուած, խլուած գարունների ուժով
Ես ճչում եմ հիմա, որքան ունիմ հնար,—
Զգո՛յշ եղէք, մարդի՛կ, նայէք շուրջը ուշով:

Զգո՛յշ եղէք, մարդի՛կ, դեռ ապրում են նրանք
Վրէժխնդիր մաղձով, դժգոհ ու ոխակալ՝
Նրանք երազում են Քանաքեռի վրայ
Նրա ստուերը սեւ ծանր չուգուն հագած:

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

digitised by A.R.A.R.@

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈԹ

Հրապարակայնութեան երեւոյթին նուիրուած *«Բագին»*ի ներկայ համարին կազմութեան ընթացքին, եւ աւարտին հասած օրերուն՝ Պէյրութ հասան հայրենի մամուլէն նոր թիւեր, որոնց մէջ ստորագրուած գրութիւններէն ոմանք եւ, յատկապէս ծանօթ արձակագիրներ Ռուբէն Յովակիմեանի եւ Յովհաննէս Մելքոնեանի վերլուծումները պէտք է հոս տեղ գտնէին, բայց դժբախտաբար այս հնարաւորութիւնը պակսեցաւ մեզի:

Եւ որովհետեւ խնդրոյ առարկայ յօդուածները փորձառական եւ վերլուծական նոր տուեալներ կ'աւելցնեն, հրապարակայնութեան անունով տեղի ունեցող անկիւնադարձային երեւոյթին վրայ, *«Բագին»*ի յետագայ թիւերու մէջ ընթերցողին պիտի հաղորդենք յիշեալ դէմքերուն խորհրդածութիւնները եւս, ինչպէս նաեւ ուշագրաւ այլ նշմարներ:

---

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ　　　　ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

### Մ Ա Լ Խ Ա Ս

## Ձ Ա Ր Թ Օ Ն Ք

### (ՎԷՊ — Բ. ՀԱՏՈՐ)

- Պէյրութ, 1988, 538 էջ, «Համազգային»ի Վահէ Սէթեան տպարան։

---

## ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ

## ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

- Անթիլիաս, 1988, 849 էջ, տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ, վերհրատարակութիւն։

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

| | |
|---|---|
| Հատավաճառ | 100 Լ. Ո. |
| Տարեկան բաժանեգին | 1000 Լ. Ո. |

ՍՈՒՐԻԱ

| | |
|---|---|
| Հատավաճառ | 25 Ս. Ո. |

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

| | |
|---|---|
| Տարեկան բաժանեգին | 40 Ամերիկեան տոլար |


باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

PAKINE

REVUE MENSUELLE
LITERAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



B. P. 80896 - Beyrouth - Liban
Tél. 266740 —


digitised by A.R.A.R.@